



ISSN 1829-2992

# Ա Կ ՈՒ Ն Ք

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԶՅՈՒՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(7)



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

## Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(7)

ԵՐԵՎԱՆ

---

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2013

Գլխավոր խմբագիր՝

*պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ*

Խմբագրական խորհուրդ՝

*Գրիշա Ալեքսանի Ղարիբյան* – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

*Պետրոս Հովհաննեսի Հովհաննիսյան* - պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր  
*Հարություն Ալեքսանի Մարգարյան* – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Հենրիկ Մուշեղի Աբրահամյան* – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
*Ռաֆիկ Ասքանազի Նահապետյան* – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Սամվել Արշավիրի Առաքելյան* – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ  
*Հայկ Մկրտիչի Դերձյան* – իրավագիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Հենզել Գերասիմի Մանուչարյան* – քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր  
*Աննա Գրիգորի Ասատրյան* - արվեստագիտութ. դոկտոր, պրոֆեսոր

*Սամվել Պարզևի Մուրադյան* – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
*Սեդա Քերոբի Գասպարյան* – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Մեյրան Արտուշայի Ջաքարյան* – փիլիս. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր  
*Մելսիկ Պարզևի Մկրտունյան* – հոգեբանութ. դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու / Խմբ. խորհուրդ՝  
Գ.Ա. Ղարիբյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան. – Եր.:  
ԵՊՀ հրատ., 2013 թ. – 226 էջ:

ՀՀ ԲՈՀ-ի 13.03.2012թ. որոշմամբ «Ակունք» ժողովածուն բավարարում է ԲՈՀ-ի պահանջները և ճանաչվում ընդունելի ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար:

© ԵՊՀ հրատարակչություն, 2013 թ.

© Հեղ. խումբ, 2013 թ.

# Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆՈՒ ՏԵՂԸ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (Ծննդյան 125 - ամյակի առիթով)

### ԱՇՈՏ ՆԵՐՄԻՅԱՆ, ՖԵՂԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայոց ազատամարտի, ՀՅ Դաշնակցության, Հայաստանի առաջին Հանրապետության և սփյուռքահայ հանրային - քաղաքական կյանքի հազվագյուտ մեծություններից է Կարո Սասունին, որի ծննդյան 125 ամյակն է լրանում այս տարի: Նրան կարելի է բնութագրել որպես ազատամարտիկ, քաղաքագետ և դիվանագետ, պետական գործիչ, պատմաբան և աշխարհագրագետ, գրող, հրապարակախոս և գրականագետ:

Երբ այսօր, տասնյակ տարիների հեռավորությունից փորձում ենք խորանալ նրա գործունեության մեջ<sup>1</sup>, համոզվում ենք, որ մեր պատմության որոշ ողբերգական իրադարձություններից միզուցե հնարավոր լինել խուսափել, էթե չանտեսվեին Կ. Սասունու, ինչպես նաև նրա նման մտածող մի քանի գործիչների (Արամ, Ռուբեն, Սեպուհ և այլն) քաղաքական դիրքորոշումները:

Կարո Սասունին ծնվել է 1888թ. հուլիսի 15 - ին Սասնո Խուլբ գավառակի Ահարոնք գյուղում՝ Սամիկոնյանների իշխանական տոհմից սերված Ղազարի և հերոսուհի Աննայի(Աննա Մայրիկ) ընտանիքում: Նա Ղազարի ութը զավակներից վեցերորդն էր: Իր իսկ արտահայտությամբ՝ ծնողների ստեղծած «ծով հարստության» մեջ աչք բացած Կարոն կոչված էր գնալու ծուռ Դավթի ճանապարհով՝ «իրենց թաղի հավերն ու ընկույզները քարկոծելով և կամ հոր հրացանը ձեռքը՝ սարերու վրա որսորդության ելնելով»:

1896 - 97թթ. - ին փոքրիկ Կարոն սովորում է իրենց գյուղում գտնվող Հայոց Միացյալ Ընկերության դպրոցում, որը դժբախտաբար կառավարության որոշումով շուտով փակվում է, բայց Ղազարի ջանքերով դառնում է նախակրթարան: Կարոն շարունակում է սովորել այնտեղ: Սակայն, նրա գլխավոր ուսուցիչը մայրն էր, որն առաջինը Կարոյի հոգում արթնացրեց բռնապետության դեմ ըմբոստանալու ձգտումը:

Հայրենի գյուղի չորսամյա նախակրթարանն ավարտելուց հետո Կարո Սասունին իջնում է Մուշ քաղաք՝ ուսումը շարունակելու նպատակով(1901թ.):

1901թ. աշնանից նա սովորում է Մշո Մուրադ - Մխիթարյան վարժարանում, որը շրջանի միակ միջնակարգ դպրոցն էր: Կ. Սասունին Մխիթարյան դպրոցում սովորում է հինգ տարի, մինչև 1906 - ը՝ աչքի ընկնելով ուսումնասեռչությանը, բացառիկ ընդունակությամբ և չարաճչիությամբ միաժամանակ: Նրա Մուշում ուսումնառության տարիներին, մինչև 1904թ.- ը, Տարոնը և Սասունը ազ-

<sup>1</sup> Կարո Սասունու կյանքն ու գործունեությունն ամբողջությամբ ներկայացնելու առաջին փորձը կատարել է Ա. Ներսիսյանը: Տես *Աշոտ Ներսիսյան*, Կարո Սասունի, Երևան, 2005, նույնը, Երևան, 2009:

գային - ազատագրական պայքարի տենդագին աշխատանքների մեջ էին: Ուստի պատահական չէ, որ տարվելով այդ պայքարի գաղափարով, նա անդամագրվում է ՀՅԴ կուսակցությանը(1904թ.): Մասունի 1904թ. հերոսական և միաժամանակ ողբերգական իրադարձությունների արդյունքում Կ. Մասունու՝ ազատագրական պայքարի վերաբերյալ ըմբռնումները դառնում են ավելի հստակ և տրամաբանված:

1906թ. ամռանը Կ. Մասունին կրկին դառնում է հայրենի տուն՝ Մխիթարյան վարժարանի շրջանավարտի վկայականը ձեռքին, «մտավորականի և ուսուցչի հովեր առած»: Եղբոր՝ Աբրահամի առաջարկով նա նույն թվականին մեկնում է Տիգրանակերտ, ուր ուսուցչություն է անում Ս. Սարգիս եկեղեցու նախակրթարանում: Իր նոր առաքելության մեջ Կ. Մասունին իրեն փայլուն է դրսևորում: Իր իսկ խոստովանությամբ դաս տալը նրա համար գերագույն հաճույք էր, դասի ընթացքում նրա ապրումները «հոգեկան պատարագի կը նմանեին»: Մեկ տարվա ընթացքում Կ. Մասունին այնքան է սիրվում և հայտնի դառնում, որ արդեն հաջորդ տարի, 1907 - ին որպես ուսուցիչ հրավիրվում է Տիգրանակերտի ամենամեծ Ս. Կիրակոսի վարժարան, «որ ուներ 1400 երկսեռ աշակերտներ, մոտ 36 ուսուցիչ - ուսուցչուհիներ և 6000 կտոր գրքերով մեծ գրադարան մը»: Նույն թվականից, որպես դաշնակցական, նա նաև կազմակերպչական աշխատանքներով, որոնց մեջ մտնում էին՝ ա) զենքերի գաղտնի ներմուծումները և զինումը, բ) որպես հեղափոխականներ՝ լեռներից քաղաք ապաստանած փախստականների կյանքի ապահովումը, գ) բանտարկված ընկերների և հերոսների նկատմամբ հոգածությունը, դ) կորովի երիտասարդներից խմբերի կազմակերպումը: Սակայն, դժբախտաբար, 1908թ. սկզբներին Կ. Մասունին մատնության հետևանքով ձերբակալվում է և արտաքսվում է հայրենի գյուղը՝ Ահարոնք: Շատ չանցած նա կրկին գաղտնի կերպով անցնում է Տիգրանակերտ, ուր և դիմավորում է 1908թ. երիտթուրքական հեղաշրջումը: Դրանից հետո նա անցնում է Կ. Պոլիս, ուր ապրում է 1908 - 12թթ. ընթացքում: Այս տարիներին նա բարձր առաջադիմությամբ ավարտում է Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանը (1909թ.), միաժամանակ ակտիվ մասնակցություն է դրսևորում Ռոստոմի առաջարկով ստեղծված ՀՅԴ ուսանողական միության աշխատանքներին, որի վարչության անդամ էր: Միության օրգան «Երկունքի» էջերում նա հոդվածներ է տպագրում Ռիվարեց կեղծանունով:

1909թ. Մասունին ընդունվում է Կ. Պոլսի իրավաբանական համալսարանը: 1912թ. աշնանը, երբ պատրաստվում էր տալ համալսարանն ավարտելու համար մնացած միակ քննությունը, Ս. Զավարյանը նրան առաջարկում է որպես ՀՅԴ գործիչ մեկնել Տարոն և Մասուն: 1912թ. հոկտեմբերից մինչև 1913թ. օգոստոսը, երբ նրան փոխարինելու է գալիս Ռուբենը, Կ. Մասունին գործում է Մուշ - Մասունի (Դուրան - Բարձրավանդակ) կենտրոնական կոմիտեում: Այս կարճ ժամանակահատվածում Կ. Մասունին կարողանում է վերստին կյանքի կոչել զինման գործը, որը Սահմանադրությունից հետո բարձիթողի վիճակում էր և իր շուրջ համախմբել Տարոնի և սասնո հին մարտական ուժերին՝ ֆիդայիներին:

Երբ սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, Կ. Մասունին, որը վերստին անցել էր Կ. Պոլիս և ավարտել համալսարանը, 1914թ. հոկտեմբերին մեկնում է Թիֆլիս: Նա իր հետ նամակներ է տանում, որոնք արտահայտում էին Կ. Պոլսի ընկերների մտահոգությունը՝ հոգուտ ռուսական զորքերի կամավորական շարժում սկսելու կապակցությամբ: Սակայն արդեն ուշ էր. Հայ քաղաքական

ուժերը վերստին ցատկել էին ռուսական քաղաքականության խարխուլ և վտանգավոր լաստի վրա:

Ռուսական գորքերի կողմից Բասենն ու Ալաշկերտը գրավելուց հետո, 1914թ. նոյեմբերի սկզբներին Հայոց Ազգային բյուրոն Բասեն է ուղարկում մի խումբ, որի մեջ էին Կ. Սասունին, Կորյուն Ղազազյանը, Մինաս Մակարյանը և ուրիշներ: Այդ խմբից կազմվում է Բասենի վարչությունը, որը փաստորեն տեղի ոչ պաշտոնական վարչական ղեկավար մարմինն էր: Վարչության խնդիրների մեջ էին մտնում՝ ա) բնակչության օգնության կազմակերպումը, բ) ժողովրդին քողարկված ձևով կառավարելը, գ) ժողովրդական միլիցիայի կազմակերպումը, դ) հողային խնդիրների լուծումը:

Հիշատակված ուղղություններով բոլոր խնդիրները հաջողությամբ լուծվում են, բայց դժբախտաբար ռուսական կեղծ նահանջը կիսատ է թողնում սկսված գործը: Նույն սկզբունքներով Կարո Սասունին գործում է նաև Մանազկերտում, փորձելով դնել ապագա Հայաստանի հիմքերը՝ ստեղծելով ընդհատակյա ղեկավարման մարմիններ:

Իսկ ռուսական 1915թ. հուլիսյան կեղծ նահանջի օրերին նա ապահովում է Բուլանուխ - Մանազկերտից նահանջող հայության թիկունքը:

1916թ. սկզբներին ռուսական գորքերը գրավում են Արևմտյան Հայաստանը: Սասունին նույն թվականի մարտին անցնում է Մուշ, ուր կարևորագույն աշխատանքներ է տանում եղեռնից մազապուրծ հայության բեկորների հայթայթման, հայրենի եզերքի վերընձյուղման համար: Նրա ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հազարավոր հայեր են գտնվում և տեղաբաշխվում լքյալ բնակավայրերում: Ստեղծվում են նաև զուտ հայկական զինված կազմավորումներ: Ցավոք 1916թ. հուլիսին ռուսական գորքերի հերթական կեղծ նահանջը կիսատ է թողնում այս աշխատանքները ևս:

1917թ. ռուսական Փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծվում է Թուրքահայաստանի կոմիսարիատը: Ընդհանուր կոմիսար է նշանակվում գորավար Ավերիանովը, իսկ նրա տեղակալ՝ Հ. Ջավրիևը: Թրքահայաստանը բաժանվում է չորս նահանգների՝ Վասպուրականի, Էրզրումի, Տրապիզոնի և Տարոնի: Կարո Սասունին նշանակվում է Տարոնի նահանգապետ, ծագումով հրեա Նիկոլենկոյի օգնականը, փաստորեն նահանգապետ, քանզի վերջինս նստում է Թիֆլիսում: Տեղական իշխանությունն իրականացնում էր Կ. Սասունին, որի նստավայրն էր Խնուսը:

Տարոնի նահանգի վարչական և կուսակցական գործերը արդյունավետ ընթացքի մեջ էին, երբ տեղի ունեցավ 1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումը, որին հետևեց ռուսական ճակատի արագ քայքայումը: Նահանջող ռուսներին հաջորդեց թուրքերի առաջխաղացումը, որի հետևանքով Սասունին հերոս ժողովրդի բեկորների հետ նահանջեց Արևելյան Հայաստան: Նա կարևորագույն նպաստ ունեցավ Էջմիածնի, Աշտարակի և Թալինի թաթար բնակչության հալածման և նրանց բնակավայրերում արևմտահայության տեղավորման գործում: Իսկ Թալինի բերդի գրավման կազմակերպումը նրա կողմից 1918թ. մայիսի 5 - ին կարևոր նշանակություն է ունենում Սարդարապատի ճակատամարտում հայության հաղթանակի համար: Սարդարապատի թուրքական բանակը գրկվում է Արագածի թաթարական ուժերի օժանդակությունից: Կ. Սասունին փաստորեն հանդիսանում է Հայաստանի հայացնողներից Ռուբենի և Արամի հետ մեկտեղ, նոր պետականության արարումից առաջ:

1919թ. հունվար - հուլիս ամիսներին Կ. Սասունին կուսակցական - կազմակերպչական աշխատանքներով լինում է Կ. Պոլսում և Իզմիրում: Վերադառնալով Հայաստան, նա հունիսի 21 - 23 - ին տեղի ունեցած ընտրություններում ընտրվում է Խորհրդարանի պատգամավոր:

Որպես պետական գործիչ՝ նա այն կարծիքին էր, որ անհրաժեշտ է ստեղծել կուսակցական դիկտատուրա՝ ներքին և արտաքին թշնամիների դեմ պայքարելու համար, որոնք խարխլում էին ՀՀ հիմքերը:

Երբ 1920թ. մայիսի 5 - ին ստեղծվում է Բյուրո - կառավարությունը, Սասունին շատ չանցած նշանակվում է Շիրակի նահանգապետ: Մինչև այդ, նա Ռուբենի և Սեպուհի հետ համախորհուրդ՝ ճնշում է Ալեքսանդրապոլի մայիսյան խռովությունները և ազատում այն բոլշևիկներից:

Մինչև Հայաստանի խորհրդայնացումը Կարո Սասունին վճռական քայլեր է իրականացնում Շիրակի նահանգի վարչական գործերի կարգավորման, կուսակցական կառույցների ամրապնդման, կաշառակերության վերացման առումներով: Իսկ 1920թ. սեպտեմբերին սկսված հայ - թուրքական պատերազմի օրերին ջանք ու եռանդ չի խնայում թուրքական առաջխաղացումը կասեցնելու ուղղությամբ:

Մեծ է Կարո Սասունու դերը Փետրվարյան ապստամբությանը կազմակերպված ընթացք հաղորդելու գործում: Նա էր մշտեցիների, խնուսցիների և սասունցիներ դեպի Աշտարակ, Էջմիածին և ապա՝ Երևան շարժվող ուժերի հրամանատարը: Իսկ Հայրենիքի փրկության կոմիտեի գործունեության շրջանում ներքին գործոց նախարարն էր:

Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո սկսվում է նրա կյանքի վտարանդիության շրջանը, որի ընթացքում նա շարունակում է իր հայապահպան և ազգանվեր գործունեությունը: Այն իր մեջ ներառում էր կրթական, հրատարակչական, հրապարակախոսական, պատմագիտական և քաղաքական ոլորտներ: Անհնար է գրել հայ ազատամարտի, Հայաստանի առաջին Հանրապետության, սփյուռքահայ հասարակական - քաղաքական կյանքում ՀՅԴ ունեցած գործունեության պատմությունը, անտեսելով Կ. Սասունու թողած հոգևոր հարուստ ժառանգությունը:

Կ. Սասունին վախճանվեց 1977թ. օգոստոսի 11 - ին, 89 - ը տարեկան հասակում: Ավարտվեց կյանքը մի մեծ մարդու, որն հանդիանում է դարավոր կորուստից հետո հայոց նոր պետականության արարողներից մեկը:

**Ашот Нерсисян, Федик Казарян – Место Каро Сасуни в национальной борьбе армян и в деле создания армянского государства (к 125-летию со дня рождения).** – В статье представлена краткая биография Каро Сасуни, где указывается на роль, которую он имел в деле организации армянской национально – освободительной борьбе и в создании армянского нового государства. А так же оценивается его роль в социально - политической жизни армянской диаспоры.

**Ashot Nersisyan, Fedik Gazaryan – The Place of Karo Sasouni on the Armenian Liberating fight and in Creating of the Armenian State System (on his 125<sup>th</sup> anniversary).** – The article the brief biographical sketch of Karo Sasuni, also his important role on the organization of Armenian national fight for freedom and in the creation of Armenian new state system. Also his big role is appreciated in the sphere social and political lif of the Armenian diaspora.



# 1885 – 1908 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԱՆԴՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

## ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Խորհրդային տարիներին միակուսակցական իշխանությունները տարու էին դրել և թույլ չէր տալիս ուսումնասիրել Կոմկուսից բացի այլ կուսակցությունների պատմությունն ու օբյեկտիվորեն գնահատել նրանց գաղափարական էությունը: Այդ դժվարին ու պատվաբեր գործը կատարվում էր Մփյուռքում<sup>2</sup>, իսկ անկախության վերանվաճումից հետո՝ նաև հայրենիքում<sup>3</sup>: Գրվել ու, համոզված եմ, կգրվեն տարաբնույթ շատ աշխատություններ, որոնք կպարզաբանեն լուսաբանման կարիք ունեցող շատ հարցեր: Սակայն այդ թեմայով ստեղծված աշխատույթ

<sup>2</sup> **Ղարքինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947: **Ճիզմեճեան Մ. Գ.**, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցության, Ֆրեզնո, 1930: **Ղազարեան Վ.**, Արմենական կուսակցություն, Պեյրուֆ, 1985: **Ղազարեան Վ.**, Ուղեցույց և համառոտ պատմություն ՌԱԿ-ի, Պեյրուֆ, 1978: **Անդրեասեան Ա.**, Պատմություն ՌԱԿ-ի Ամերիկային արևմտեան շրջանի, Լոս-Անձելոս, 1981: **Յափուճեան Ա.**, Համառոտ պատմություն ՌԱԿ կազմության, Գահիրե, 1977: **Ուզունեան Հ.**, Արևմտեան ազգային պայքարին ծագումը Արմենական կուսակցության մեջ և ՌԱԿ-ը իր 60-ամյակին, Լոս-Անձելոս, 1986: **Չորմիսյան Լ.**, Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմության, հատոր Բ. (1878-1908 թթ.), Պեյրուֆ, 1974 և «Կուսակցություններ», Պեյրուֆ, 1965: **Իզմիրլեան Մ.**, Դատումներ մեր հարյուրամեա հեղափոխության մասին, անձնական հուշերուս ընդմիջումեն, հատ. 1, 2, Պեյրուֆ, Ե., 1991: **Վարանդեան Մ.**, ՀՀ Դաշնակցության պատմություն, հատ. 1-ին, Փարիզ, 1932: **Ռուբին.** Հայ լեղափոխականի մը յիշատակները, (1887-1915 թթ.), հ. հ. Ա, Բ, Գ, Դ, Ե, Լոս Անձելոս, 1951, 1952, Ե., 2012: **Գյուլալյան Գ.**, Հայ քաղաքական մտքի պատմությունը և Դաշնակցությունը, «Դրօշակի» հրատ, Փարիզ, 1947: **Փափազյան Վ.**, Իմ հուշերը, հ. Ա., Պոսթրն, 1950: **Տասնապետյան Հ.**, ՀՀ Դաշնակցությունը իր կազմութենէն մինչև Ժ ընդհանուր ժողով (1890-1924), Աթենք, 1988: Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության, (Քառասներոր շարք), նվիրված Հ. Յ. Դ. 113 ամյակ., խմբագիր Հ. Քյուրքչյան, Ա. Բ. Գ. Դ. Հատորներ, (հրատարակության թվականները նշված չեն): ՀՅԴ Վարսունամեակ (1890-1950), կազմեց **Մ. Վրացեան**, Պոսթրն, 1950: Պատմություն Ա.Դ. Հնչակեան կուսակցության, 1887-1962, խմբագիր **Ս. Վիստր ուսուցչապետ**, Ա. հատոր, Պեյրուֆ, 1962: Գանգրունի Հ., Հայ հեղափոխությունը Օսմանեան բռնատիրության դեմ (1890-1910), Պեյրուֆ, 1973:

<sup>3</sup> **Լեռ.** Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, Փարիզ, 1934: **Խուրշուլյան Լ. Ա.**, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Ե., 1964: **Ավետիսյան Վ. Ա.**, Հայ հասարակական մտքի զարգացման Մարքս-Լենինյան փուլի սկզբնավորումը, Ե., 1976: **Բարսեղյան Խ. Հ.**, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, գիրք երկրորդ, Ե., 1967, 1975: **Համբարյան Ա. Ս.**, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990: **Վարդանյան Հ.**, Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե., 1967: **Դալարյան Գ. Լ.**, Ռամկավար ազատական կուսակցության պատմություն 1921-1940, գիրք առաջին, Ե., 1990 և գիրք 2-րդ, Ե., 2007: **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920թթ.), Ե., 1998: **Կոստանդյան Է. Ա.**, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005: Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914թթ.), **Է. Ա. Կոստանդյանի** խմբագրությամբ, Ե., 2003: **Խուլզինյան Գ.**, Հ. Յ. դաշնակցության քննական պատմություն, ակունքներից մինչև 1895թ. վերջը, Ե., 2006: **Ներսիսյան Ա.**, Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմություն (1898-1908 թթ.), հ. Բ., 2008: **Մարգարյան Ս. Թ.**, Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2009: **Հովհաննիսյան Գ.**, Հնչակյան կուսակցության պատմություն (1887-19151 թթ.), Ե., 2012:



յունները գրվել են առանց որևէ միասնական հայեցակարգի, ուստի և, որևէ կերպ համակարգված չեն: Յուրաքանչյուր հեղինակ ավել կամ պակաս չափով անպայման տուրք է տվել կուսակցականությանը, չնկատելով սեփական նույնիսկ ակրն-հայտ սխալներն ու բացթողումները, հաճախ հանիրավի մեղադրանքներ է հնչեցրել այլ ուժերի ու քաղաքական կառույցների հասցեին: Այդ կարևոր բացը լրացնելու, մասնավորապես, 1885-1908 թթ. պատմական ժամանակահատվածին նրվիրված աշխատությունները քննարկելու ու վերլուծելու, դրանք անկողմնակալ ու պատմագիտական մոտեցումներով ներկայացնելու անչափ դժվարին նպատակն է հետապնդում նաև սույն հոդվածը, որը մեր նախորդ ուսումնասիրությունների 4 օրգանական շարունակությունն է՝ մեկ քայլ առաջ:

Հայ ազատագրական պայքարի 1885-1908 թթ. փուլի ընթացքում (ինչպես նաև մեր գոյակեփվների հետագա բոլոր տարիներին – Ս. Ս.), անկասկած, ամենամարդաշատ, ամենահզոր ու մարտունակ ուժը ՀՅԴ-ն էր: Կուսակցություն, որն իր թերացումներով ու թույլ տված սխալներով հանդերձ մեր ազատագրական պայքարի թիվ մեկ առաջնորդող ուժն էր, քաղաքական ղեկավարն ու, ինչ որ տեղ Հայոց եկեղեցուն զուգահեռ պետականության գործառույթներ իրականացնող ուժը:

Լինելով հայ ազատամարտի առաջատար քաղաքական կազմակերպությունը, Դաշնակցություն կուսակցությունը, բնականաբար, առավել չափով պետք է քննական վերլուծության ենթարկել իր անցյալը, վեր հաներ բոլոր ռազմավարական և մարտավարական նրբերանգները՝ իրենց գնահատելի և թերի կողմերով, որպեսզի բացատրություն տար այն հարցերին, թե ինչու հնարավոր չեղավ կատարել ծրագրվածը և թե արդյոք արդյունավետ էր իր ընտրած ազատագրական պայքարի ուղին: Հիշյալ ժամանակահատվածի պատմության վերաբերյալ, հատկապես քաղաքական վտարանդիության շրջանում, Դաշնակցությունն ստեղծել է հսկայածավալ գրականություն, բայց, ինչպես մյուս բոլոր կուսակցությունների դեպքում, նա նույնպես, ընդհանուր առմամբ, խորությամբ հաշվեկշռի չի ենթարկել իր անցյալը և անաչառորեն ի մի չի բերել իր կողմից թույլ տրված այն սխալները, որոնք ճակատագրական հետևանքներ ունեցան հայության համար: Ակրն-հայտ ու հստակ է մի ցավալի փաստ՝ մենք կորցրեցինք Արևմտյան Հայաստանը, որն ամբողջովին հայազրկվեց: Սակայն իրական մեղավորներին դատապարտելուց ու անարգանքի սյունին գամելուց, Թուրքիային յուրաքանչյուրն իր չափով ու իր ձևերով օժանդակած մեծ տերություններին քննադատելուց բացի, հարկավոր է նաև, որ քաջություն ունենանք սեփական սխալները խոտովանելու համար, որից միայն ու միայն կշահենք և կապահովագրենք մեզ ապագայում դրանք կրկնելուց:

Այս աշխատանքը, որը նվիրված է վերոնշյալ ժամանակահատվածում մեր ազատագրական պայքարը ՀՅԴ գործիչների պատմագիտական մտքի գնահատմանը, ամբողջական լինելու հավակնություն չունի: Քանի որ գիտական հոդվածի սահմանները թույլ չեն տալիս ամբողջությամբ ներառել այն բոլոր աշխատությունները, որոնք ստեղծվել են այս կուսակցության անդամ պատմաբանների կամ

<sup>4</sup> *Մարգարյան Ս. Թ.*, Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2009, 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2010, Հայ ազգային ազատագրական պայքարի 1885-1908 թթ. փուլը ինչպիսի գործիչների գնահատմամբ, (հրատարակման փուլում է), մեկ տասնյակից ավելի հոդվածներ, որոնք վերջին երկու-երեք տարում տպագրվել են հայրենի ծանրակշիռ գիտական ամսագրերում:

պատմագիտական կարևորագույն հայեցակարգեր մշակած ազատագրական պայքարի նշանավոր դեմքերի կողմից: Կներկայացնենք միայն հիմնարար այն աշխատությունները<sup>5</sup>, որոնք հիմք են հանդիսացել հայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ դաշնակցական հայեցակարգեր մշակելուն և որոնք այսօր էլ արդիական են ու դուրս չեն եկել շրջանառությունից:

Ճշմարտությունը պահանջում է շեշտել, որ այսօր էլ գրեթե ոչինչ չի փոխվել այն հայեցակարգային մոտեցումներում, որոնք ժամանակին ներկայացրել է դաշնակցության տեսաբաններից Մ. Վարանդյանը: Միևնույն ժամանակ, մեր օրերում դեռևս ամբողջ խորությամբ չեն ընկալվել այն հայեցակարգային մոտեցումները, որոնք ժամանակին նրբանկատորեն արել է այս շրջանի թերևս ամենախորը վերլուծող Ռուբեն Տեր Մինասյանը, ում հուշերն առանց վարանելու կարելի է համարել հայ ազատագրական պայքարի հանրագիտարան, անշուշտ ոչ այդ բառի հանրահայտ և դասական իմաստներով:

ՃՅԴ նշանավոր գործիչ, կուսակցական պատմաբան ու իրատես վերլուծաբան Մ. Վարանդյանի աշխատությունն ունեցել է մի քանի հրատարակություններ: Մեր հետաքրքրության ոլորտում գտնվող հիմնախնդրին Դաշնակցության հայտնի տեսաբանն անդրադարձել է իր նշված աշխատության առաջին հատորում և երկրորդ հատորի առաջին երկու գլուխներում<sup>6</sup>:

Աշխատության «Յառաջաբանում» Մ. Վարանդյանը խոստովանում է, որ մասնավորապես 1890թ. հետո հայ ազգային ազատագրական պայքարի պատմությունը շարադրելը «վիթխարի աշխատանք» է պահանջում և ամեննին հավակնություն չի դրսևորում իր ուսումնասիրությունը ժամանակի բոլոր հարցերի պատասխանը կամ վերջնական խոսք համարելու: Ավելին, իր կատարած աշխատանքը նա նույնիսկ համարում է հակիրճ և ոչ ամբողջական գրվածք: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասենք, որ այդ ինքնախոստովանությունը հեռու չէ ճշմարտությունից, սակայն, որպես ՃՅԴ կուսակցության մղած ազատագրական պայքարի ամփոփ պատմության շարադրման առաջին փորձ, այն կարելի է հաջողված համարել:

Ընդգծենք, որ Մ. Վարանդյանն ամեննին հանդես չի գալիս որպես իր կուսակցության անցած պատմական ուղու քննախույզ վերլուծող, այլ՝ ավելի շուտ նա յուրահատուկ և ինքնատիպ ոճով պատմող է: Շարադրանքում զգացմունքի բաժնեչափն ավելի շատ է, իսկ քննադատական մոտեցումը գրեթե բացակայում է: Ավելին՝ հատկապես Դաշնակցության որդեգրած մարտավարության և ռազմավարության հետ այնտեղ անհամաձայնության որևէ նշույլ անգամ չկա: Սա, ինչ խոսք, բնորոշ կարող է լինել կուսակցական տեսաբանին, բայց ոչ երբեք համահայկական շահերով առաջնորդվող պատմաբանին: Իրականում, Մ. Վարանդյանին չի էլ կարելի պատմաբան համարել, նա ավելի շատ հուշագրող-տեսաբան-

<sup>5</sup> Քանի որ մոտ ապագայում պատրաստվում ենք հրատարակել այս հարցերին նվիրված առանձին մենագրություն, որտեղ վերլուծված են ՃՅԴ բոլոր նշանավոր գործիչների աշխատությունները, ապա այս հոդվածում կանդրադառնանք միայն ՃՅԴ անդամ նշանավոր այրերից Մ. Վարանդյանի հայտնի աշխատության վերլուծությանն ու կկատարենք տեսական ընդհանրացումներ որքան որ թույլ կտան սույն աշխատության մեջ տեղ գտած հայեցակարգային տեսակետները:

<sup>6</sup> Տես *Միքայել Վարանդեան*, Ն. Յ. Դաշնակցության պատմություն, հ. 1-ին, Փարիզ, 1932, հ. Բ, Գահիրե, 1950, նաև՝ Երևան, 1992: Հիմնականում օգտվել ենք աշխատության հայաստանյան հրատարակությունից, սակայն թուրքիմացություններից ու սիպլներից գերծ մնալու համար հաճախ համեմատել ենք նաև Փարիզում և Կահիրեում լույս տեսած տարբերակները:

փիլիսոփա է: Նրա մոտ դեպքերի նկարագրություններին հետևող ընդհանրացումներ եթե կան էլ, ապա՝ ավելի շատ դրանք տեսաբան-փիլիսոփայի ընդհանրացումներ են, որոնք տոգորված են եվրոպական հեղափոխական գաղափարներով ու ամեն քայլափոխի զգացվում են նրանց խորը ազդեցությունը:

Փորձենք ներկայացնել ու վերլուծել Դաշնակցության որդեգրած ծրագրային դրույթների և դրանք կյանքում կենսագործելու համար արված քայլերի մասին Մ. Վարանդյանի արտահայտած տեսակետներն ու կարևոր եզրահանգումները:

Աշխատության առաջին գլխում Մ. Վարանդյանը շարադրում է հայ ազատագրական շարժման ընթացքի պատմությունը մինչև Դաշնակցության ծնունդը: Հեղինակը հետաքրքիր և յուրովի է ներկայացնում հայ ազատագրական շարժման ծննդի ազդակները, համարելով, որ դրանք երկուսն են՝ իրերի հոլովույթը և գաղափարների հոլովույթը<sup>7</sup>: Իրեր ասելով նա հասկանում է Օսմանյան կայսրության դաժան իրականությունը, որում ապրում, ավելի շուտ, գոյատևում էր արևմտահայությունը: Նա այն փիլիսոփայական ընդհանրացումն է կատարում, որ ցանկացած ժողովուրդ որևէ բռնապետական «ժանր, տանջալի, անհանդուրժելի» տիրապետության տակ կշարունակի գոյատևել այնքան ժամանակ, քանի դեռ չկա, չի ծնվել ազատության գաղափարախոսությունը, իր իսկ արտահայտությամբ՝ «Ոյժի գաղափարը, որ կուգայ անոր մտավորականութեան թեւերուն վրայ, որպէս թարգման, անդրադարձում նոյն դժնդակ իրականութեան, կուգայ որպէս պատմութիւն, գրականութիւն, քարոզչութիւն՝ առաջնորդելու զանգուսնները դէպի լոյս եւ ազատութիւն»<sup>8</sup>: Անհնար է այս տեսակետի հետ չհամաձայնվել, քանզի, պատմական փորձը ցույց է տալիս, որ իսկապէս ցանկացած օտարի տիրապետության ներքո հեծող ժողովրդի ազատագրական պայքարին նախորդում է նախ և առաջ այդ պայքարի գաղափարախոսությունը: Հակառակ դեպքում, երբ բացակայում է ազատության գաղափարախոսությունը, կարող են լինել տարանջատ, ինքնաբուխ ժողովրդական ելույթներ, որոնք մեծամասամբ ավարտվում են ձախողումով:

Մ. Վարանդյանը բավական յուրօրինակ է ներկայացնում «իրերու հոլովույթը» Օսմանյան կայսրության մեջ: «Պետք էր իրերու հոլովույթը, - գրում է նա, - Պետք էր փոթորկումը տնտեսական կեանքի մեջ, աննախընթաց տակնուվրայումը Օսմանեան կայսրութեան մեջ, պէտք էին բալկանեան ցնցումները, ռուս - թըրքական պատերազմը, Բուլղարիայի ազատագրումը, Թուրքիայի անդամահատման յարաճուն պրոցէսը, Բեռլինի վեհաժողովը, 61-րդ յօդուածը և այլն և այլն»<sup>9</sup>:

Այն տպավորությունն է ստացվում, թե հայ ազատագրական պայքարը պայմանավորված էր ավելի շատ թվարկած մյուս գործոններով, քան տնտեսական: Ճիշտ է, հեղինակը չի անտեսում տնտեսական գործոնը, սակայն նման տեսակետ արտահայտելով, կարծես թե, դարձնում է այն երկրորդական: Այս թեզն ավելի ակնհայտ է դառնում հետագա շարադրանքում: Այն հարկ ենք համարում ամբողջովին մեջբերել, քանզի, մեր կարծիքով, միանգամայն ինքնուրույն հայեցակարգ է ներկայացնում իրենից. «Եւ ահա, - շարունակում է նա, - երբ այս բոլորը կատարվեցավ իրական, **առարկայական** աշխարհի մեջ - Թուրքիոյ և հայու-

<sup>7</sup> *Վարանդյան Մ.*, նշվ. աշխ., Երևան, 1992, էջ 11:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 12:

թեան կեանքի մէջ - երբ «Հիւանդ մարդը» գետնատարած փռուեցավ Ռուսաստանի ոտքերուն տակ, յոշոտվեցաւ ու հասաւ հոգեվարքի դուռը. երբ ռուս յաղթական բանակը, հայ գորավարներու առաջնորդութեամբ գնաց պարզելու իր դրոշը Էրզրումի մէջ և քիչ յետոյ, Վեհաժողովի որոշումով, միացուց Թուրքահայստանին մէկ մասը իր հայկական հողերուն. երբ պատերազմի հետեւանքով հրոյ ճարակ եղան հայրենիքի ընդարձակ տարածութիւններ քիւրտ ու թուրք հրոսակներու ձեռքով, երբ բուլգար ժողովուրդը, աւելի անմշակ, յետամնաց, քան Հայը, չնչին զոհաբերութեամբ թօթափեց դարաւոր գերութեան լուծը և դարձաւ ազատ, անկախ պետութիւն. երբ օսմանեան կառավարութիւնը, իր երերուն դիրքերը պահպանելու և օտար միջամտութիւններէ մի անգամ ընդմիջտ ազատուելու համար, կրկնապատկեց իր ճնշումներն ու կեղեքումները հպատակ հայութեան դէմ, հիմնեց կազմակերպւած թալանի ու սպանութեան սիստեմ մը, նպատակ դնելով իսպառ անդամալուծել ու նոյնիսկ չքացնել հայ տարրը արեւելեան վիլայէթներէն. երբ նա ազատ ասպարէզ կոչեց Քիւրտերը այդ հայաջինջ գործի համար, հրահրեց բոլոր գիշատիչ ախորժակները և հրէշաւոր չափերու հասցուց **տուրքերու** կործանարար մեքենան. երբ օսմանեան մեռելածին Սահմանադրութիւնը վիժեցաւ (1878ին) և 61-րդ յօդվածը, պահ մը յուսադրելէ և խանդավառելէ յետոյ, գնաց մրափելու դիւանագիտական արխիվներուն մէջ. երբ ստրուկ ցեղի բոլոր կոչերն ու աղերսանքը Թուրքիոյ տէրերուն ու աշխարհի զօրավորներուն՝ ապարդիւն անցան և Հայաստանցի ժողովուրդը, լքւած, յուսաբէկ, մատնուեցավ չարչարանքի բոլոր ձեւերուն՝ աշխարհի ամենէն բարբարոս ռէժիմին տակ, այն ժամանակ ահա հայ **միտքն** ալ փոթորկեցաւ, հայ գրականութիւնը իր նոր բանաստեղծներով, վիպասաններով, հրապարագիրներով հնչեցուց, մրրկաձայն ահագանգի պէս, վշտի ու ըմբոստացումի շեփորը - և հնչեցուց ոչ այլ եւս «անապատ մէջ»... Հայ ժողովուրդը, ի դէմս իր զգայուն տարրերու, ունկնդրեց շեփորի ձայնին, հասկացաւ և որդեգրեց յեղափոխական կարգախօսը»<sup>10</sup>:

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ

Ա. Հայ ազատագրական պայքարի վերելքի գլխավոր ազդակներից մեկը Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի ձախող արծարծումն էր:

Բ. Ետբեռլինյան հիապոստատությունը, որից փոթորկված հայ ազատագրական միտքն ամբողջովին շնչում էր հեղափոխական գաղափարներով:

Գ. Բեռլինի վեհաժողովից հետո թուրքական ուժեղացած բռնաճնշումների հետևանքով ավելի վատթարացած արևմտահայության կացությունը: Մ. Վարանդյանի կարծիքով, որը լիովին համապատասխանում է իրականությանը, մեծ տերությունները Հայկական հարցը պատրվակ դարձնելով ուժեղացրին Թուրքիայի վրա ճնշումները, որոնք էլ խթանեցին, որ վերջինս ավելի ընդլայնի ու խորացնի արևմտահայ տարրի նկատմամբ ջլատման և ոչնչացման քաղաքականությունը:

Նշանավոր տեսաբանը մեծ հաշվով մոտ իրականությանը: Մակայն ցավով պետք է արձանագրել, որ իր աշխատության հետագա շարադրանքի ընթացքում, հակասելով ինքն իրեն, նա դրվատանքով է խոսում իր կուսակցության այն ձեռնարկների մասին, որոնց գլխավոր նպատակը մեծ տերությունների ուշադրության սևեռումն էր Հայկական հարցի վրա:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 12-13:

Այնուհետև հեղինակն անդրադառնում է այն մտավորականներին ու գործիչներին և նրանց ստեղծագործություններին, որոնք նպաստեցին հայ ազատագրական պայքարի զարթոնքին՝ Խրիմյան Հայրիկին, Րաֆֆուն, Ծերենցին, պոլսահայ մտավորական Ստեփան Փափազյանին և այլոց: Ինչպես նաև ժամանակի պարբերական մամուլի որոշ ներկայացուցիչների («Արմենիա», «Հնչակ», «Երիտասարդ Հայաստան», «Մասիս» և այլն), որոնք իրենց էջերում մեծ տեղ էին հատկացնում արևմտահայությանն ու նրա իրավագուրկ վիճակին, փորձում ստեղծված իրավիճակից դուրս գալու համար ուղիներ հուշել: Ներկայացնելով արևմտահայ ազատագրական պայքարի նախադրյալները Մ. Վարանդյանը հետաքրքրական տեսակետ է ներկայացնում: Համաձայն որի, եթե անգամ արևմտահայության հարստահարություններն ու տնտեսական կեղեքումները չլինեին, միայն այն գիտակցությունը, որ իր իսկ արտահայտությամբ՝ «քաղաքակիրթ ազգ մը – որ դեռ տասնհինգ դար տւած է մարդկութեանը մտքի ու արւեստի գեղեցիկ կոթողներ, որ նորագոյն ժամանակներում տւեր է լեզուն մը բանաստեղծներու, վիպասաններու, գիտնականներու, բժիշկներու, նկարիչներու, պետական գործիչներու, զօրավարներու, և որ այժմ էլ կհանդիսանա հելլէն տարրին հետ՝ թուրք կայսրութեան գերագանցօրէն ստեղծագործող ու յառաջադէմ ոյժը իր գրականութեամբ, մշակոյթով, իր հողագործ, արդիւնագործ և առեւտրական ընդունակութիւններով – ենթակայ է կիսավայրենի ցեղերու այլասերող տիրապետութեան, կը մաշի ու կը սպառի անոնց բիրտ կրունկներուն տակ, ոտնահարւած, անարգւած, մարդկային ամէն արժանապատվութիւն կորսնցուցած», բավական էր «ըմբոստացումի հրդեհը արծարծելու»<sup>11</sup>:

Կարծում ենք, որ այսպիսի մտածողության մեջ արհեստական բան կա: Հեղինակի ներկայացված նմանատիպ գիտակցությունը երբեք առաջնակարգ չի եղել ազատագրական մղումների դրդապատճառների մեջ: Մա ավելի շատ կարելի է համարել Մ. Վարանդյանի ստեղծագործ մտքի արգասիքը, քանի որ արևմտահայ ազատագրական պայքարն սկզբնավորվել է ինքնաբերիկ՝ պայմանավորված հիմնականում տնտեսական նախադրյալներով, այնուհետև օտարի բռնատիրությունից ազատագրվելու, մարդավայել պայմաններում ապրելու, իսկ ավելի ուշ՝ ֆիզիկական գոյությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Հայ քաղաքական կուսակությունների կողմից արևմտահայ խնդրի որդեգրումը նույնպես հիմնականում պայմանավորված էր այդ և էլի մի շարք կարևոր գործոններով: Համենայն դեպս, դժվար է մատնանշել այնպիսի փաստեր, որոնք ապացուցեն հայ մշակութային կամ տնտեսական գործունեությամբ զբաղվող ընկերությունների կողմից իրենց ոչ հանուն Թուրքիայի առաջադիմության, այլ միայն հայերի ազատության ու ազատ պայմաններում գործելու անհրաժեշտությամբ պայքարի դուրս գալու նպատակադրություն: Ավելին, նրանցից շատերը այս խնդրում որդեգրել են նույնիսկ պահպանողական կեցվածք:

Մ. Վարանդյանը միանգամայն ճիշտ տեսակետներ է ներկայացնում Արմենական կուսակցության ձևավորման համար գաղափարական սերմնացանների ու կուսակցության ստեղծման համար նախադրյալներ ստեղծողների, տեղի և անմիջական կազմակերպողների մասին. «Յեղափոխական գաղափարի անենէն առատ ցանքը կկատարւեր Վանի մէջ, ուր կ'ապրէր Խրիմյան (Վարագայ վանքը),

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 22 – 23:

ուր հաստատուած էր և Մկրտիչ Փորթուգալյան իր համբաւաւոր Վարժապետանոցով»<sup>12</sup>: Բայց, միննույն ժամանակ, նա սխալվում է նույն Փորթուգալյանին համարելով Արմենական կուսակցության հիմնադիր: Անշուշտ, անվիճելի է, որ նա Վասպուրականում հեղափոխական հոգևոր հայրերից էր, ազատասիրության սերմնացանն ու քարոզիչը, ժողովրդին դարավոր ընդարմացումից դուրս բերելու համար մեծ ջանքեր գործադրողներից: Սրբազան գործի անմնացորդ նվիրյալ, ում ջանքերն իզուր չանցան և արգասաբեր եղան: Անժխտելի է նաև այն, որ նրա հեղափոխական քարոզչության ամենամեծ արգասիքը Վանի առաջադեմ երիտասարդությունն էր և նրա ամենավառ ներկայացուցիչ Մկրտիչ Ավետիսյան – Թերլեմեզյանը: Բայց այս հանգամանքը շեշտելով հանդերձ, սխալվում է Մ. Վարանդյանը, երբ համարելով նրան կուսակցության պարագլուխ և հիմնադիր:

Մ. Վարանդյանի հետ կարելի է համաձայնվել այն հարցի շուրջ, որ փաստորեն հայ առաջին քաղաքական կուսակցության ստեղծմանը զուգընթաց բուն Արևմտյան Հայաստանում սկզբնավորվեց «Հայ հեղափոխություն» անվանված ազատագրական շարժումը, որ «Արմենիայի» խմբագիրը սկիզբ դրաւ հայ շարժման **կազմակերպւած պրօպագանդին**»<sup>13</sup>:

Մ. Վարանդյանը չի ժխտում Մ. Փորթուգալյանի կարևոր դերակատարությունը հայ ազատագրական պայքարի առաջին շրջանում, ինչպէս որ չի ժխտում նրա «Արմենիայի»՝ որպէս արևմտահայ ազատագրական պայքարի սկզբնական դրվագների մասին առաջին բարձրաձայնողի և դրանք ժողովրդի սեփականությունը դարձնողի կարևոր դերակատարությունը: Բայց այդպէս էլ հեղինակի մոտ չենք հանդիպում սկսվող շարժման մարտավարության մասին որևէ հայեցակարգի, սկզբունքային մոտեցման: Նույնը կարելի է պնդել նաև Հնչակյան կուսակցության ձևավորմանը նրա անդրադարձների վերաբերյալ: Հետաքրքիր է, որ նա այս կուսակցության կազմակերպած Գում-Գապուի ցույցը համարում է մի ձեռնարկ, «որ ուժեղ ցնցում պատճառեց հայ շրջաններում»: Բայց, նման ցնցումները բացասական, թե դրական լիցքեր էին հաղորդում հայ շրջանակներին, այդպիսի հարցադրում հեղինակը չի կատարում, մի պարզ պատճառով՝ նման մարտավարություն ընտրեց նաև իր կուսակցությունը: Իսկ այդ դեպքում հոգեբանական զարթոնքի, համախմբման, կորովի ու հաղթանակի նմատմամբ հավատ ներարկելուն զուգընթաց, այդ գործողություններն, անկասկած ունեցան նաև բացասական հետևանքներ, որնց մասին պարզապէս խուսափում է հիշատակել կուսակցական այս պատմագիրը: Մ. Վարանդյանի հետ կարելի է համաձայնել, որ հիշյալ ցույցից քարոզչական առումով ավելի ազդեցիկ էր Էրզրումի ընդվզումը 1890թ., որն իսկապէս լայնորեն նպաստեց ազատագրական պայքարի անհրաժեշտության գաղափարի տարածմանն ու ժողովրդի մեջ սերմանելուն: Նրա արձագանքները իսկապէս հասան մինչև Կովկաս և ունեցան քարոզչական կարևոր նշանակություն:

Մ. Վարանդյանի աշխատության դրվատելի կողմերից է նաև այն, որ նա հայ ազատագրական պայքարի սկիզբն ընկալում և մատուցում է որպէս համագային զարթոնք, որին նպաստեցին թե արևմտահայ և թե արևելահայ մտավոր ուժերը: Բայց շատ այլ հեղինակների նման նա էլ չի փորձում պարզաբանել, որ այդ

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 33:

գարթոնքը եղավ ինքնաբուխ, տարերայնորեն, հաճախ քառսային բնույթ ուներ և, ամենակարևորը, սկսվեց առանց լուրջ նախապատրաստությունների, չհաշվարկվեց դրա արդյունավետության մակարդակը: Հասկանալի է, որ ազատագրական պայքարի գաղափարը լայն տարածում գտավ, նրա անհրաժեշտությունն ըմբռնեցին շատերը, բայց մինչև վերջ էլ չհստակեցվեց՝ կոնիվն էր այդ պայքարի նպատակը, թե դրանով արդյունքի հասնելը, կովի ձևն էր կարևորը, թե առանց նախանշված նպատակի՝ նրա արձագանքները: Այս հարցերին հայտնի տեսաբանը հստակ պատասխաններ այդպես էլ չի տալիս:

2.3. Դաշնակցության ծննդին նվիրված երկրորդ գլուխն առանձնանում է նրանով, որ այն ունի սկզբնաղբյուրային նշանակություն և կարևոր տեղեկություններ է պարունակում շատ արագ հայ ազատամարտի առաջատարը դարձած կուսակցության ձևավորման մասին: Ինչպես նաև գաղափարական այն ուղղությունների, որոնք արևմտահայության ազատագրման խնդրով պայմանավորված՝ իշխող էին կովկասահայ կյանքում: Քանի որ մեր նպատակն ավելի շատ հայեցակարգային մոտեցումների վերհանումն ու գնահատումն է, ուստի ձեռնպահ կմնանք կուսակցության արարման մանրամասները ներկայացնելուց և կփորձենք գնահատել միայն առկա հայեցակարգային մոտեցումները:

Աշխատության այս գլխում ներկայացված են XIX դարի 80 - ական թթ. վերջերին թիֆլիսյան երիտասարդության մեջ եղած խմորումները: Հեղինակն իրավացի է, երբ մատնանշում է, որ հայ ազգային - ազատագրական պայքարը ձևավորվեց արևմտահայ խնդրի շուրջը: Տարաբնույթ խմբակներին նրա անդրադարձներում, դրանց ներկայացուցիչների Արևմտյան Հայաստան մեկնելու ու վերադարձի նկարագրություններում հեղինակը բառացիորեն որևէ կարծիք կարծես թե չի արտահայտում, սակայն նրբանկատորեն մատուցում ու նպաստում է, որ հիմնավորվի **արևմտահայերի և արևելահայերի շարժումն արևմտահայ խնդրի շուրջը սկզբնավորվեց միաժամանակ տեսակետը:**

Հետաքրքիր են Դաշնակցություն կուսակցության ստեղծող տարբեր խմբերի գաղափարական նպատակադրումների ներկայացման Մ. Վարանդյանի փորձերը: Դրանք էին՝ ա. նարողովուլեցները, հանձին Ա. Դաստակյանի, Ք. Միքայելյանի, Ս. Չավարյանի և այլոց, բ. իր իսկ արտահայտությամբ՝ «ռուսական տիպի ընկերվարականներ», որոնց անունը չի նշում, գ. թունդ ազգայնականներ, որոնց ամենանշանավոր ներկայացուցիչն էր Կ. Խատիսյանը, դ. մշակականներ, որոնց գլխավոր դեմքը Ակնունին էր, ե. մարքսիստ ընկերվարականներ և այլն: Կարելի է համաձայնվել Դաշնակցության հիմնադիր սերնդի ներկայացուցիչների նրա հետևյալ բնորոշման հետ. «Աջ ու ձախ, չափաւոր և արմատական, ազգային և համամարդկային ձգտումներով,- ամէն գոյնի ու գաղափարի մարդիկ, հայութեան բոլոր դասակարգերու ներկայացուցիչներ՝ ժողովրդական խոնարի խաւերեն մինչեւ բուրժուա մեծատունն ու ազնւականը, - ամենքն ալ տոգորւած թրքահայոց ազատութեան գաղափարով»<sup>14</sup>:

Մ. Վարանդյանն ազատագրական պայքարի շուրջ առվել համախմբվելուն նպաստելու տեսանկյունից չի անտեսում արևմտահայ որոշ գործիչների դերը Դաշնակցության կազմավորման օրերին: Նա անդրադառնում է Չաքրյանին, Մարկավազին և Հունդյին՝ վանեցի Հարություն աղային: Մասնավորապես վեր-

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 55:



ջին երկուսի քարոզչությամբ է նա պայմանավորում «Պետերբուրգի բարձրագոյն դպրոցներու խումբ մը հայ ուսանողներ»ի խանդավառությունը, որի ոգին էր Սարգիս Կուկունյանը: Բայց չի կարելի համաձայնվել նրա այն տեսակետի հետ, որ «Սարկավագի յորդորներով և «Երիտասարդ Հայաստանի» աջակցութեամբ, Կուկունյան ձեռնարկեց մեծ արշավախումբ մը կազմակերպելու, քանի մը հարիւր երիտասարդներէ, որ պիտի երթար շանթի պէս հարվածելու թշնամին սահմանի միւս կողմը, ջարդ տալու քիւրդերուն, իրարանցում հանելու և Եվրոպայի ուշադրութիւնը հրաւիրելու հայ դատի վրա, իրագործելու 61 – րդ յոդուածը...»<sup>15</sup>: Սակայն փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ Սարկավագը, որը գոհ դարձավ նույն Կուկունյանի կազմակերպած դավադրությանը, դեմ է եղել այդ արշավանքին: Սարկավագը գտնում էր, որ «... առանց նախապատրաստական աշխատանքների անհնար է բազմամարդ խմբով անցնել և ակնկալած օգնությունը հասցնել Թուրքիոյ մէջ ապրող մեր եղբայրներին: Նախապէս պէտք է կազմակերպել խմբի ճանապարհի վրա ընկնող հայ գիւղերը և հետո միայն մտածել խմբի արշավանքի մասին: Խումբը խոմ թոչուն չէ, որ թոչի ու սահմանը անցնի իր ուզած տեղից»<sup>16</sup>:

Սարկավագն, անշուշտ, ճիշտ էր և դա ապացուցվեց խմբի ձախողված արշավանքով: Ուստի միանգամայն անհիմն է Մ. Վարանդյանի այն պնդումը, թե «Ի վերջոյ «կը համոզուին», որ նա պարզ խաչագող մըն էր և Սարկավագ կը սպանուի»<sup>17</sup>: Այս դրվագից բացի հակասական մտտեցումներ էլի կան այս աշխատության մեջ, որոնց ընթացքում կանդրադառնանք:

Մ. Վարանդյանի ծանրակշիռ ու իրավացի հայեցակարգային մտտեցումներից է հետևյալը. «Օճած էր նոր քաղաքական մարմինը հայ ազգային իդէալով, կը յենուր գաղափարական երիտասարդութեան ստուար շարքերուն վրայ կազարարէր ազատութեան գաղափարին հետ **ռամկավարութեան** հաւատամքը: Հայ ունեւոր դասակարգը վաղաժամ լքեց զայն: Հայ խոշոր բուրժուազիան շարունակեց իր կրավորական դիրքը շարժման հանդէպ՝ անոր ամբողջ տեւողութեան ընթացքին: Հեռացան նորակազմ Դաշնակցութենէն և այդ խոշոր դրամատիրութեան անւանի բանբերները, իդէօլօգները (գաղափարախոսները): Հրապարակի վրա մնացին հայ մտաւորականութեան ժողովրդական **տարրերը**: Մնաց հրապարակի վրայ – **հայկական դեմոկրատիան**»<sup>18</sup>:

Իսկապէս, թեև սկզբնավորման պահին կուսակցությունն իր մեջ ներառում էր նաև որոշ խոշոր ունեւորների, բայց նրա հիմնական կորիզը եղան և մնացին մտավորականությունն ու գյուղացիությունը:

Հեղինակը միանգամայն իրավացի է, երբ աշխատության երրորդ մասում տպավորություն է ներշնչում, թե 19 – րդ դարի 90 - ական թթ. սկզբին հայ ազատագրական պայքարը կրում էր հախուռն և ռոմանտիկ բնույթ, ուժերի գերազնահատման միտումով: Սակայն խոսափում է խոստովանել, որ այդ ռոմանտիզմը շարունակեց իշխել նաև իր սիրելի կուսակցության մարտավարության մեջ: «Ուժերու անսահման գերազնահատումը և մոտալուտ յաղթանակի հաւատը,- գրում է նա,- կը ծնէին յախուռն, քաօսային թոչիքներ: Նպատակ կը: Գալոց Հայաստանի

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 66:

<sup>16</sup> «Հայրենիք» ամսագիր, թիւ 5, մարտ, 1937, էջ 139:

<sup>17</sup> **Վարանդյան Մ.**, նշվ. աշխ. էջ 67:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 72:

քաղաքական կա՛զմը... Ատով շատ ալ չէին մտահոգւեր...»<sup>19</sup>: Վրեժի գաղափարը համակել էր մեծամասնությանը, որով տարվածները չէին խնայում նաև սեփական ցեղի այլախոհ ներկայացուցիչներին: Գնահատելի է, որ սա ընդունում է Մ. Վարանդյանը:

Աշխատության չորրորդ բաժինը նվիրված է կուսակցության հիմնադիր երրորդությանը՝ Քրիստափորին, Մ. Զավարյանին և Ռոստոմին: **Այս բաժնում նա տալիս է հիշյալ գործիչների ոչ միայն գաղափարական էվոյուցիան, այլև ճշմարիտ բնութագրում է նրանց՝ որպես միևնույն գործի որդեգիրների: Հեղինակի կարծիքով իրենց էությանը բավականին տարբեր այս երեք անձնավորությունները, սակայն լրացնում էին միմյանց և, ըստ էության, կազմում մեկ ամբողջություն:**

Մեզ համար առավել հետաքրքրական է աշխատության հինգերորդ բաժինը, որը նվիրված է կուսակցության առաջին համագումարին, որի ընթացքում, փաստորեն, չիրականացավ Հայ Հեղափոխականների Դաշնակցության ստեղծման գաղափարը և արդյունքում ծնվեց Հայ Հեղափոխական Դաշնակցությունը:

Որպես կազմակերպական համակարգ, համագումարը որդեգրում է ապակենտրոնացումը, որի ջերմեռանդ կողմնակիցն էր Մ. Զավարյանը: Վարելի է համաձայնվել հեղինակի հետևյալ դիտարկման հետ. «Ապակենտրոնացման դրուսթիւնն եւս, անշուշտ, իր խոշոր անպատեհութիւններն ունէր և երբեմն կը քաջալերէր տեղական մարմիններու, անհատներու ինքնագոյիս, քմահաճ, անիշխանական արարքները... Հարկ էր խուսափել ծայրայեղութիւններէն:

Իրականին մէջ գոյութիւն ունէր յայտնի կեդրոնացում մը, այս կամ այն խոշոր ձեռնարկը ունէ տեղ կը կատարէր առհասարակ կեդրոնական դէմքերու գիտութեամբ ու հավանութեամբ (օրինակ, Օսմանյան Բանքայի դէպքը, Խանասարի արշավանքը և այլն)»<sup>20</sup>:

Իսկապէս, արդարությունը պահանջում է նշել, որ այս կուսակցության գործունեության մեջ շատ հաճախ ապակենտրոնացումը կրել է ձևական բնույթ, մասնավորապէս առավել խոշոր ձեռնարկների ծրագրման և իրականացման դեպքերում:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ու կարևոր են Մ. Վարանդյանի ՀՅԴ կուսակցության որդեգրած նպատակի և դրան հասնելու միջոցների հետ կապված մի քանի դատողություններ, հատկապէս՝ «Դաշնակցութեան» ռահվիրաները իրենց հրապարակախօսութեան մեջ ոչ միայն չէին արտասաներ **անկախութիւն** բառը, այլ և չէին ընդունէր անկախութիւնը որպէս պահանջ»<sup>21</sup>: Այս հարցում նա ամենին չի սխալվում: Դաշնակցությունն իր ծրագրային դրույթներում Արևմտյան Հայաստանի անկախության հարց երբևէ չի դրել և ինքնավարության պահանջից այն կողմ չի անցել: Ըստ հեղինակի, Ընդհանուր ժողովում մերժվում է նաև ընդհանուր ապստամբության կազմակերպման խնդիրը: Թե ինչու, Մ. Վարանդյանը հետևյալ պատասխանն է տալիս. «Տնորք մըն էր այդ **ընդհանուր ապստամբութիւնը**: Երբեք, ոչ մէկ երկրի մէջ ամենէն հօգօր յեղափոխական կազմակերպութիւնները չեն կարողացեր իրագործել այն»<sup>22</sup>:

Մի կողմ թողնելով այն հարցը, թե որևէ մեկ այլ երկրի մեջ իրականացել է, թե ոչ, պարզապէս ուզում ենք շեշտել, որ եթե դա չէր ազատագրման խոստում-

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 76:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 98:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 104:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 96:

նալից ճանապարհը, ապա որն էր: Հայդուկային - ասպատական կռիվնե՞րը, ուրոնք որդեգրվեցին ժողովում և որոնց գլխավոր նպատակը մեկն էր՝ Բեռլինի վեհաժողովում արձանագրված 61-րդ հոդվածը կիրարկելու հարցում հասնել մեծ տերությունների միջամտության: Ընդհանուր ապստամբություն ասելով էլ պարտադիր չէր հասկանալ ընդվզում ողջ Արևմտյան Հայաստանի տարածքում: Իհարկե, ժամանակի տարբեր շրջանների միջև թույլ կապի պայմաններում դա անհնարին էր: Ավելին, ֆիզիկապես նույնիսկ անհնարին էր դարձել մի քանի շրջաններում միաժամանակյա ելույթ ապահովել, որովհետև իշխանական ամենատես լրտեսական աչքը ամենուր էր: Կարծում ենք, եթե ընդհանուր ապստամբության գաղափարը արդյունավետ չէր դիտվում, ապա այդ շրջանում ավելի ճիշտ կլիներ ինքնապաշտպանության նկատառումներով գաղտնորեն զինվելը: Ցավոք, այս եզրահանգմանը Դաշնակցությունը հասավ բավականին ուշացումով միայն 1904թ. Սասունի ինքնապաշտպանությունից հետո:

Աշխատության վեցերորդ մասում հեղինակը ներկայացնում է Արևմտյան Հայաստանում հեղափոխական գործունեություն ծավալվելու համար Պարսկաստանը որպես խարիսխ ընտրած և հենակետեր ստեղծած դաշնակցական գործիչներին (Գ. Ալոյան, Մաքո, Շ. Արդուրյան, Պետո, և այլն), անդրադառնում նաև Դերեկի կռիվներին: Բաժինն ավելի շատ գնահատելի է իր սկզբնաղբյուրային նշանակությամբ և ոչ թե պատմագիտական, ուստի ավելորդ ենք համարում այն մանրամասն ներկայացնելը:

Յոթերորդ բաժինը հետաքրիր է նրանով, որ նվիրված է հայ ազատամարտի կարևորագույն կենտրոնավայրերից Տարոնի հեղափոխական զարթոնքին: Գնահատելի է, որ հեղինակն ընգծում է այդ զարթոնքում Ն. Խարախանյանի, Մ. Խրիմյանի, Մշո կենտրոնական վարժարանի տեսուչ Մ. Մարյանի և այլոց դերակատարությունը: Եթե առաջիններն իրենց քարոզչական գործունեությամբ նըպաստում էին արևմտահայության գաղափարական զարթոնքին, ապա Արաբոն անձնական ու իր շուրջ համախմբվածների օրինակով ու հանդուգն ռազմական ելույթներով հիմք էր դնում, բոլորին վարակում էր գործնական պայքարի ոգով: Մեզ համար ավելի հետաքրքրական են Սասունի 1894թ. ապստամբությունից հետո Եվրոպական տերությունների դիրքորոշման նրա գնահատականները: Ըստ նրա, մայիսյան բարենորոգումների ձախողման հիմնական մեղավորը Ռուսաստանն էր: Այս անգամ դրանցով շահագրգիռ կողմը Անգլիան էր, բայց Ռուսաստանը նրա կողքին չկանգնեց: «Եթե Ռուսաստանը նպաստատուր դիրք բռնէր հայոց հանդէպ, Գերմանիոյ, Ավստրիոյ չեզոքութիւնը չպիտի խափանէր հայ դատի լուծումը, ինչպէս որ նոյն պետութեանց չեզոքացումը չկրցաւ արգելք լինել Կրետէի ազատագրութեան, 1896 թուականին: Իտալիան, որ համակիր էր մեզի, այդ միջոցին պատերազմի բռնած էր Հաբեշտանի հետ, չարաչար պարտութիւններ կը կրէր և կապրէր իր ծանրագոյն տագնապը ազատութեան օրերէն ի վեր: Բայց եթէ Հռոմը կարենար թափով միջամտել Անգլիոյ կողքին, դարձեալ բարենորոգումներու գործը չպիտի քալէր, քանի որ դէմ էր Ռուսաստանը... Լօբանով ոչ միայն կընդդիմանար, այլ և բացորոշ կը հասկցնէր Անգլիային, որ ամէն մի փորձ բռնի միջոցներ ի գործ դնելու Թուրքիոյ դէմ՝ պիտի դիտէ որպէս casus belli»<sup>23</sup>: Կարծես, թե Մ. Վարանդյանը ճիշտ է ըմբռնել Թուրքիայի հետ կապված

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 127:

մեծ տերությունների միջև առկա հակասությունները: Սակայն ցավալի է, որ ՀՅԴ-ն չկարողացավ այդ պարզ ճշմարտությունն ըմբռնել և շարունակեց Եվրոպայի միջամտության հույսով զուր տեղի ուժերը վաստնել, իսկ Թուրքիան ճիշտ օգտագործելով այդ իրավիճակը և վարպետորեն խաղալով այդ հակասությունների վրա ոչ միայն գոյատևեց, այլև անպատժելիության մթնոլորտի հոտն առնելով, դիմեց թուրքավարի Հայկական հարցը լուծելու մեթոդին՝ ցեղասպանությանը:

Աշխատության ութերորդ բաժինը նվիրված է Օսմանյան բանկի գրավման գործողությանը, որը տեղի ունեցավ 1896թ. օգոստոսի 14 - ին: Մ. Վարանդյանն այն հետևյալ կերպ է ներկայացնում. «Կամաց – կամաց շարքերուն մեջ հասունացաւ ու գերակշռեց գաղափար մը - զարնե՛լ բուն իսկ կեդրոնին մեջ, օսմանյան մայրաքաղաքում, բայց զարնել այնպէս, որ հարուածը դպի ոչ միայն թուրք պետութեան շահերուն, այլ և եւրոպական կապիտալի զարկերակին»<sup>24</sup>:

Ձեռնպահ մնալով ինչպէս այս, այնպէս էլ նրան գուգահեռ կազմակերպված Սամաթիայի ձեռնարկի նախապատրաստման և իրականացման Մ. Վարանդյանի մատուցած մանրամասներին անդրադառնալուց, հարկ ենք համարում հենց սկզբից շեշտել, որ Թուրքիայում Եվրոպայի կապիտալին խփելով սխալ էր նույն Եվրոպայի միջամտությանն հասնելու հույսերի փայփայումը: Պատկերացնենք մի պահ, որ բանկը պայթեցվէր, ինչ դրանից կշահեր հայ ազատագրական պայքարը: Կարծում ենք, որ դրական ոչինչ: Դա կարծես թե ճիշտ է հասկացել նաև Վարանդյանը, ում այս ձեռնարկի հերոսականությունն ապացուցելու (ոչ մեկը չի կարող պնդել, որ այն հերոսական չէր), փաստարկներից բացի, դրա արդյունավետության այլ հիմնավորումները կցկտուր են, արհեստական կամ բացակայում են. «Աբդիլ Համիտ, սասանւած հայկական շարժման վերջին դրագեն, բայց տակավին քաջալերված ռուսական հովանավորութեամբ, ձգեց հայոց բարենորոգումները նոյն մեռեալ կէտին վրայ: Չհամարձակեցաւ, սակայն, կրկնել 1895ի նախճիրները և այնուհետև զանգվածային կոտորած մը տեղի չունեցաւ Հայաստանի մէջ, մինչև Ադանայի ողբերգութիւնը (1909թ.)»<sup>25</sup>: Իրականում թեև ավելի փոքր չափերով, սակայն այս ձեռնարկի օրերին ևս Կ. Պոլսում տեղի ունեցան ջարդեր, իսկ մեծ տերություններն այդպէս էլ չմիջամտեցին: Ինչպէս իրավացիորեն նկատում է մերօրյա խելացի պատմաբան Ա. Կիրակոսյանը «Սուլթանական իշխանությունները նախապես տեղյակ էին դրամատան գրավման ծրագրի մասին, բայց Աբդուլ Համիդը գիտակցաբար չկասակեցրեց հարձակումը, որպէսզի հակահայկական տրամադրություններ հրահրի մայրաքաղաքի մահմեդական բնակչության շրջանում և վանի հայերից եվրոպական հասարակական կարծիքը»<sup>26</sup>: Նույն հեղինակի վկայակոչված տվյալների համաձայն Բանկ-Օտոմանի ձեռնարկին հաջողած Կ. Պոլսի հայերի երկօրյա ջարդերին զոհ են գնում տարբեր տվյալներով՝ 5.500, 8.750, 10.000 և նույնիսկ 13.600 հայեր<sup>27</sup>: Իսկապէս, ինչպէս ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Մ. Վարանդյանը Խանասորի արշավանքի հետ կապված ևս պատմագիտական հայեցակարգեր չի ներկայացնում: Աշխատության հաջորդ գլխում պար-

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 145:

<sup>26</sup> *Արման Կիրակոսյան*, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, Երևան, 1999, էջ 352 – 353:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 357:

գապես նկարագրելով արշավանքը դրա անհրաժեշտությունը պայմանավորում է Նիկոլ Դումանի հայտնի՝ կոտորվելու փոխարեն անհրաժեշտ է կռվել, կարգախտով: Դումանն, իհարկե, իրավացի էր, սակայն նա չէր նախատեսել տարանջատ արշավանքներ, այլ, նրա կարծիքով, հաջողություն ապահովելու համար անհրաժեշտ էին միաժամանակյա ընդվզումներ կազմակերպել երկրի տարբեր մասերում: Սակայն, ցավոք, նույնիսկ իր ծրագրած Խանասորի արշավանքի հրամանատարն էլ ինքը չդարձավ:

Աշխատության «Տեղատուփին» բաժնում Մ. Վարանդյանը 1896 - 1904 թվականները, շատ այլ հեղինակների նման, համարում է տեղատվության շրջան: Թերևս, հեղինակի հետ կարելի է համաձայնվել, քանզի այդ շրջանում հայ ազատագրական պայքարի տարանջատ դրսևորումները ոչ մի դրական արդյունքի չհանգեցրին և դրանով է, թերևս, պայմանավորված, որ ՀՅԴ կուսակցության 1898 թ. տեղի ունեցած երկրորդ ընդհանուր պատգամավորական ժողովը վերանայեց իր մարտավարությունը: Բայց, իրականում, վերանայեց զուտ տեսականորեն, քանզի գործնականում մինչև 1904 թ. ներառյալ շարունակեց իր գործունեությունը հին մարտավարությամբ: Աշխատության այս գլխում արժեքավորը թերևս այն է, որ հեղինակը փորձում է գնահատել սուլթանի հետ Դաշնակցության վարած բանակցությունները: Համամիտ չենք հեղինակի հայտնած այն կարծիքին, թե սուլթանը կուսակցության ուժի առջև տեղի տալով գնաց այդ բանակցություններին, որոնք վերջնականապես խզվեցին 1899թ. մարտին, քանզի սուլթանը մերժում է կուսակցության պահանջները: Կարծում ենք, որ բոլոր դեպքերում, ճիշտ կլիներ սուլթանի հետ երկխոսությունները շարունակել, գուցե հնարավոր լիներ որևէ ելք գտնել, ժամանակ շահել ու նախապատրաստվել, որովհետև, ի վերջո, դա ավելի իրատեսական կարող էր լինել, քան ոչինչ չտվող, բազմիցս լուրի հիասթափություն բերող ու թշնամուն միայն հարմար առիթներ մատուցող մեծ տերություններին ապավինելու քաղաքականությունը: Իսկ ամենաիրականն այն էր, որ դարավոր թշնամու հետ վարվելու և հաղթանակ ակնկալելու միայն մեկ ճանապարհ կար՝ կռվելը. «Եթե Արթին փաշաներուն և Օրմանյան պատրիարքներուն ներելի էր մնալ իրենց «համոզումներուն» մէջ – համոզումներ՝ հիմնած դիրքի և շահու վրա – սրտացաւ հայրենասէրներուն ժամանակ էր հասկնալու, որ դահճի և իր գոհին միջեւ կարող է միայն մեկ յարաբերութիւն լինել – կռիւր»<sup>28</sup>: Այստեղ հարցերի հարցն էր մնում անպատասխան՝ ինչպիսի կռիվ: Հարց, որի հստակ պատասխան գտնելն այլքան դժվար էր ազատագրական պայքարի քուրայում հայտնված անփորձ և, նույնիսկ, կռվի վայրերն ու թշնամուն լավ չիմացող գործիչների համար: Այսինքն՝ խիստ կարևորվում էր կռվի ձևերի ու մարտավարության ճիշտ ընտրությունը:

Աշխատության հաջորդ մի քանի բաժիններում, որոնք վերաբերվում են հայդուկային շարժումներին, հայ - քրդական և հայ - մակեդոնական համերաշխության փորձերին, Մասունի 1904թ., իր արտահայտությամբ՝ պատերազմին, «Փոթորիկի» գործունեությանը, Մ. Վարանդյանն ավելի շատ նկարագրում է դեպքերը, քան թե կատարում է տեսական ընդհանրացումներ: Ընդհանուր առմամբ, Մ. Վարանդյանի կողմից Տարոնի և Մասունի ազատագրական շարժումներին կատարած անդրադարձները ճշմարտացի և օբյեկտիվ գնահատել է պատմաբան Ա.

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 166:

Ներսիսյանը, ով հանգամանորեն քննելով հայդուկային շարժումները, թե իրենց սկզբնավորման փուլում (Արաբո, Մխո Շահեն) և թե մինչև 1908թ. ընդգրկող ժամանակաշրջանում (Մերոբ, Անդրանիկ, Գևորգ Չավուշ), այդ շարժումները ներկայացնում է Հ. Հ. Դաշնակցության հետ սերտ կապի մեջ:

Ըստ Ա. Ներսիսյանի՝ Մ. Վարանդյանի աշխատության թեև քննվում է նաև Հրայրի գործունեությունը, խոսվում նրա և հայդուկների միջև եղած հակասությունների մասին, բայց հեղինակի որոշակի վերաբերմունքն երկու կողմերից որևէ մեկի նկատմամբ, չի դրսևորվում: Մ. Վարանդյանը թեպետ մանրամասնորեն նկարագրում է Տարոնի 1904թ. իրադարձությունները, բայց այդպես էլ չի անդրադառնում դրանց արդյունավետության խնդրին: Անհրաժեշտ էին արդյոք Մասունի 1904 թ. կռիվներից հետո հայդուկային ընդհարումների կազմակերպումը Մշո դաշտում, արդյո՞ք անտեղի նահատակության չէի՞ն հանգեցնում Արևելյան Հայաստանից Մասունին օգնության հասնելու համար Հ. Հ. Դաշնակցության կազմակերպած խմբերի սահմանանցումները: Այս հարցերի պատասխանները որոնող ընթերցողին, - գտնում է Ա. Ներսիսյանը, - Մ. Վարանդյանը չի բավարարում<sup>29</sup>:

Իսկապես ՀՅԴ տեսաբանը նմանատիպ հարցադրումներին չի պատասխանում: Ինչ վերաբերվում է «Փոթորիկի» գործունեությանը, որի նպատակն էր հանուն հայ ազատամարտի բռնի հանգանակությունը, ապա՝ Մ. Վարանդյանը ներկայացնելով որոշ մանրամասներ, վերլուծելով կատարվածը և ամփոփելով արդյունքները, խոստովանում է, որ դրա բերած օգուտները շոշափելի չէին<sup>30</sup>:

Իր աշխատության մեջ Մ. Վարանդյանը բավական լայն տեղ է հատկացրել Բաքվում, Երևանում և գավառներում, Ղարաբաղում, Գանձակում և Թիֆլիսում հայ – թաթարական ընդհարումներին՝ դրանք նկարագրելով ամենայն մանրամասնությամբ: Նա չի սխալվում, երբ այդ ընդհարումների մեղավոր է համարում ցարական Ռուսաստանին, թեպետ մեր կարծիքով, խորությամբ չի բացահայտում դրանց պատճառները: Այս ընդհարումներին նրա անդրադարձները գնահատելի են հետևյալ կողմերով.

Ա. Հեղինակն իրավացիորեն գտնում է, որ դրանցով Դաշնակցության համար անխուսափելիորեն պայքարի նոր ճակատ բացվեց: Մինևույն ժամանակ, նա փորձում է հիմնավորել հետևյալ տեսակետը՝ կովկասյան ճակատի բացումով Դաշնակցությունը ցույց տվեց, որ ինքը համահայկական շահերի որդեգիր կազմակերպություն է:

Բ. Այդ ընդհարումներում Դաշնակցության ղեկավարությամբ, սեփական ուժերով, առանց որևէ օգնության հայ ժողովուրդը փաստացի հաղթանակ տարավ, որը լուրջ եզրակացությունների հիմք դառնում: Հատկապես, խարխլում է միշտ ուրիշին ապավինելու կույր համոզմունքը, որը դարեր շարունակ ոսկրացել էր հայոց մեջ: Նա բառացիորեն այդ մասին չի էլ խոսում, սակայն իր պատում-շարադրանքով անուղղակիորեն դա է ապացուցում: Մ. Վարանդյանն իրավացիորեն գրում է. «Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ իր ծոցն առնելով հայ բովանդակ ժողովուրդը, այդ երկարատև մաքառումներու ընթացքին ցուցաբերեց այնքան եռանդ, արիութիւն ու անձնագոհութիւն, այնքան ռազմական և ռազմագիտական կորով

<sup>29</sup> *Աշոտ Ներսիսյան*, Ազգային ազատագրական պայքարը Տարոնում 1894 – 1908թթ., Երևան, 1999, էջ 16:

<sup>30</sup> *Վարանդյան Մ.*, նշվ. աշխ., էջ 270:

ու տաղանդ, որ հակառակորդը շշմեցավ – միանգամայն անսպասելի էր իրեն համար – շշմեցավ նաև Չարիքը նիւթող ցարական կառավարութիւնը»<sup>31</sup>:

Աշխատության այն բաժինը, որտեղ նկարագրված է սուլթանի ահաբեկման նախապատրաստության և իրականացումը ձախողելու ողջ պատմությունը, գր-նահատելի է որպէս սկզբնաղբյուր: Այդ նկարագրության մանրամասներին չի հետևում ոչ մի տեսական ընդհանրացում: Դրա փոխարեն գնահատելի եզրակա-ցություններ կան «Համառուսական իրարանցումի մէջ» գլխում՝ կապված կու-սակցության որդեգրած «Կովկասյան նախագծի» հետ, որն ընդունվեց 1905 թ. և վավերացվեց 1907 թ. Վիեննայի ընդհանուր ժողովում: Դրանով որդեգրվեց սո-ցիալիզմի գազափարախոսությունը: Իսկապէս, նա կարողանում է վեր հանել ճշմարտությունը և իրական գույներով մատուցել սոցիալիզմի գաղափարախո-սության նկատմամբ դաշնակցության վերաբերմունքը, որ **սոցիալիզմը երբեք այդ կուսակցության համար չդարձավ առաջնային, քանզի միշտ կաշկանդված մնաց ազգային - ազատագրական պայքարի խնդրով:**

Մեզ հետաքրքրող խնդիրների տեսանկյունից Ս. Վարանդյանի տեսակետ-ները վերջանում են նրա աշխատության երկրորդ հատորի առաջին գլխով, որն անվանված է «Սահմանադրական Թուրքիան եւ Հայութիւնը»: Այստեղ հեղինակն անդրադառնում է Դաշնակցություն - երիտթուրք կապերին, վերջիններիս հայ դատի հետ կապված դիքորոշումներին: Նա այն ճիշտ համոզմունքն է ներշնչում, որ երիտթուրքերի ցանկացած ներկայացուցիչ դեմ է եղել հայոց դատին և հայութ-յան անջատողականությանն (սեպարատիզմ)՝ առհասարակ: Գնահատելի է, որ նա միշտ օբյեկտիվ դիրքերից է վերլուծում երիտթուրքերի Սահմանադրության հռչակումից հետո վարած քաղաքականությունը և անջրպետ չի տեսնում դրա և սուլթանի վարած քաղաքականության միջև: Այս առումով Ս. Վարանդյանի ար-տահայտած տեսակետներն արդեն դուրս են մեր հետաքրքրության ժամանա-կագրական շրջանակներից և դրանց կանդրադառնանք մեկ այլ առիթով:

**Сурен Саргсян – Оценка М. Варандяна национально - освободительного движения армян в 1885 - 1908гг.** – Труд известного политического деятеля АРФ, теоретика, историка М.Варандяна посвящена истории этой партии. В данной статье автор попытался обобщить и представить общие подходы и концептуаль-ные аспекты представленного в его исследовании армянского национально-ос-вободительного движения, охватывающего этап 1885-1908 гг. Показать, что те ошибки и упущения в подходах, которые были характерны для армянского нацио-нального-освободительного движения, были характерны для многих, в т.ч. и для АРФ, в результате чего этот этап движения по сути закончился поражением.

В то же время представлен большой вклад М.Варандяна-исследователя и его работы в историю, в частности в исследование истории АРФ, подчеркнута важное позитивное значение этого труда, содержащего огромный фактический материал.

**Suren Sargsyan – 1885 – 1908 Armenian national liberating struggle estimated by Mickael Varandyan.** – M. Varandyan was an eminent promoter of the Armenian Revolutionary Federation, theoretician, and writer of the party history whose work

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 360:



devoted to his favorite party's history of the past. In the article we tried to show all general approaches and conception point of views of the Armenian national emancipation struggle of the period of 1885-1908 in author's research. Also, to show the mistakes which were matching of our emancipation struggle could be characteristic to all parties of that time, particularly in this case to the Armenian Revolutionary Federation. The result of those mistakes was a defeat of the Armenian national emancipation struggle of that period of the time.

Meanwhile, in the article M. Varandyan is presented as a scholar and his great work as a huge contribution to the history of Armenia, and particularly to the history of the Armenian Revolutionary Federation, and is emphasized the significant positive meaning of his work which includes huge important documents and materials.

## 1863-64ԹԹ. ԼԵՀԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

### ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ալեքսանդր Երկրորդը գահ բարձրանալով որդեգրեց ազատական քաղաքականություն, ինչն աննախադեպ ոգևորություն առաջացրեց ամբողջ Ռուսական Կայսրությունում: Միաժամանակ ռուս ազգայնականների շրջանում աշխուժացան համապավոնականության գաղափարախոսության կողմնակիցները, որոնք առաջնային էին համարում սլավոնական տարածքների ռուսականացումը<sup>32</sup>, որին բնականաբար դեմ էին հանդես գալիս սլավոնական այլ ազգությունների ներկայացուցիչներ<sup>33</sup>:

Համապավոնական գաղափարների իրականացման ճանապարհին Ռուսաստանն ուներ դժվար լուծելի խնդիր: Եվ դա լեհական հարցն էր: Լեհերն օգտվելով իշխանությունների համեմատաբար մեղմ քաղաքականությունից և առաջնորդվելով ազգային-ազատագրական գաղափարներով, ձգտում էին վերականգնել իրենց իրավունքներն ու անկախությունը: Իրադրությունը հատկապես սրվեց 1860-62թթ., իսկ արդեն 1863թ. հունվարին լեհ ժողովուրդը դիմեց զինված ապստամբության:

Լեհական ազատագրական շարժման վերելքի հետ կապված ռուսաց հասարակությունում սկսվեցին թեժ քննարկումներ: Ի հայտ եկան տարաբնույթ կարծիքներ: Հասարակության մեծամասնությունը գտնում էր, որ Լեհաստանը Ռուսական Կայսրության անբաժանելի մասն է և հետևաբար անկախության իրավունք չունի: Այդ պատճառով էլ լեհական ապստամբության նկատմամբ վերաբերմունքը մեծամասամբ բացասական էր: Մակայն կային նաև գործիչներ, որոնք անկեղծ համակրանք էին հայտնում լեհ ժողովրդի արդար պայքարի նկատմամբ և քննադատում էին կառավարության պատժիչ գործողությունները:

Լեհական ապստամբության ընթացքում ռուսական մամուլը լիովին վերահսկվում էր գրաքննչական գլխավոր վարչության և ներքին գործերի նախարարության կողմից: Անգամ լեհերի նկատմամբ համակրանք տաժող սլավոնաֆիլերը կտրուկ փոխեցին իրենց վերաբերմունքը և նույնիսկ նրանց «День» թերթը դարձավ ռուսական մեծապետական գաղափարների քարոզչության կարևոր խոսափող, ինչը փաստեցին ժամանակի ռուսական պետական պաշտոնյաները<sup>34</sup>:

Լեհական ապստամբությունն իր արձագանքները գտավ նաև արևելահայ իրականությունում: Արդի հայ պատմագիտությունը հայ հասարակական հոսանքների տարաբաժանումը արևելահայ և արևմտահայ հատվածների գնահատում է որպես արհեստական: Նրանք դիտարկվում են որպես միասնական հայ ազգային մշակույթի, մտավոր և հոգևոր կերտվածքի ընդհանուր, և շատ կողմե-

<sup>32</sup> *Иванов А.А.*, О малорусском литературном языке и об обучении на нем. Русский вестник, М., 1863, т. 45, с. 250. *Ламанский В.А.*, Национальности италянская и славянская в литературном, политическом отношении., Отечественные записки, М., 1864, N 11 с. 185.

<sup>33</sup> *Пыпин А.Н.*, Панславизм в прошлом и настоящем, Вестник Европы, 1878., N12 с., 777.

<sup>34</sup> *Цимбаев Н.И.*, И.С. Аксаков в общественной жизни пореформенной жизни России, М. 1978, с. 109.

րով միասնական զարգացման ընթացքի գիտական վերարտադրության<sup>35</sup>: Մակայն մեր խնդիրն է ելնելով հողվածի սահմանային հնարավորություններից ցույց տալ Ռուսական Կայսրությունում քաղաքական զարգացումների ազդեցությունը միայն արևելահայ գործիչների վրա և նրանց արձագանքներն այդ երևույթների նկատմամբ:

Մասնավորապես Լեհական ապստամբությանն արձագանքեցին ազգային-պահպանողական գործիչները, որոնք «մերժում էին հեղափոխություններն ու հասարակական-քաղաքական ցնցումները»<sup>36</sup>: Արևելահայ գործիչներն անտարբեր չէին կայսրության սահմաններում տեղի ունեցող իրադարձություններին: Նրանք անմիջապես արձագանքում էին երկրի թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքական հարցերին: Արևելահայ գործիչները հանդես էին գալիս հիմնականում պաշտպանելով Ռուսական Կայսրության վարած քաղաքական գիծը:

Արևելահայ պահպանողական մամուլը՝ ի դեմս «Համբաւաբեր Ռուսիոյ», «Մասեաց աղանի», «Մեղու Հայաստանի», «Հիւսիսի», հանդես եկան լեհական ապստամբության վերաբերյալ հողվածներով:

Պարզապես պետք է փաստել, որ արևելահայ գործիչներն իրենց հնչեցրած գնահատականներում ոչ պակաս կոշտ էին, քան ռուսաց հասարակական գործիչները: Այս փաստը կարելի է բացատրել «արևի» տակ իրենց տեղն ունենալու հանգամանքով՝ «Ռուսաստանը մեր առջևը փակած չէ՛ իւր դռաը,- գրում էր Ռ. Պատկանյանը,- և պետք եղած ժամանակը միշտ հիւրընկալութիւն է ցոյց տուել»<sup>37</sup>: Մակայն չպետք է մոռանալ, որ նույն Լեհական թագավորությունն էլ դարեր առաջ Հայաստանից գաղթած հայերին էր ապաստան տվել և բավական արտոնություններ ընձեռել մեր ազգակիցներին: Մակայն ապստամբության հենց առաջին օրերից արևելահայ մամուլը հետևելով ռուսական մամուլին՝ անցավ լեհերին քննադատելու և դատապարտելու գործին: Ռ. Պատկանյանը «Լեհաստանի մէջ բնակուած Հայերի անցեալ դարերու վիճակի տեսութիւն» հողվածում խոսելով Լեհաստանի մասին, վիրավորական տոնով նրան անվանում է «ինքնագրելուխ»<sup>38</sup>:

Այս Հովհաննիսյանը հայկական մամուլում ապստամբության արձագանքներին անդրադառնալով, նշում է, որ այդ ժամանակահատվածում «Մեղու Հայաստանի» թերթի խմբագրական գործն իր ձեռքը վերցրեց Պ. Միմեռնյանցը և ընդարձակ տեղեկագրեր տպագրեց Լեհաստանի ապստամբության և Ջեյթոնի հերոսական ինքնապաշտպանության մասին<sup>39</sup>: Ըստ Այ. Հովհաննիսյանի «Մեղու Հայաստանին» չնայած վերապահումների՝ համակրանք էր ցուցաբերում լեհ ժողովրդի հանդեպ<sup>40</sup>: Հավանաբար, Այ. Հովհաննիսյանը նկատի է ունեցել թերթում տեղ գտած լրահոսը, որը մեծամասամբ առանց վերլուծվելու արտատպվում էր օտարալեզու մամուլից: 1864թ. «Մեղու Հայաստանի» առաջին համարի խմբագրականում անդրադառնալով նախորդ տարվան՝ լեհական հարցի մասին խոսելիս,

<sup>35</sup> Տե՛ս **Խառատյան Ա.**, Հայ հասարակական հոսանքները XIX դարի 50-70-ական թվականներին, Պատմաբանասիրական հանդես, Եր., 2006, թիվ 1, էջ 272-283:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 275:

<sup>37</sup> Հիւսիս 1863 հ. 1:

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ Դիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, հ. V, Եր., 1974, էջ 394:

<sup>40</sup> **Հովհաննիսյան Ա. Գ.**, Նալբանդյանը և նրա ժամանակը, Եր., 1956, էջ 57:

խմբագրականում նշվում է. «այս հարցը ամենից ծանրակշիռն էր», այդ իսկ պատճառով «նշանաւոր առարկան դարձաւ բոլոր անցեալ տարին»<sup>41</sup>: Պետք է նշել, որ այս նույն քաղաքականությունը որդեգրեցին գրեթէ բոլոր թերթերն ու ամսագրերը, բացառությամբ Ստ. Նազարյանի ազատական «Հյուսիսսփայլի», որը ողջ 1863թ. ընթացքում չտպագրվեց, իսկ հաջորդ տարի՝ վերահրատարակվելուց հետո նույնպես որևէ կերպ չարձագանքեց լեհական խնդրին:

Արևելահայ մամուլը լեհական հարցին սկսեց անդրադառնալ դեռ 1862թ., երբ Լեհաստանում իրավիճակը գնալով սրվում էր, և Լեհաստանի փոխարքա նշանակվեց Մեծ իշխան Կոնստանդին Նիկոլակիչը:

«Մեղու Հայաստանին» 1862թ հունվարի 27-ի համարում /այդ ժամանակ թերթը խմբագրում էր Ստեփանոս քահանա Մանդինյանը – Հ.Գ/ անդրադարձավ Լեհական հարցին: Միքայել Պատկանյանցը, որը թղթակցում էր թերթին՝ «Հոգևորականություն և խոովայող շարժումը Լեհաստանումը» հոդվածում անդրադառնալով 1861թ. դեկտեմբերի 13-ին ֆրանսիական «Le Monde» թերթում «Կառավարչություն Ռուսաց եւ հոգևորականություն Լեհաց» տպագրած հոդվածին, ստահող համարեց այն լուրերը, թե իբր լեհ ժողովրդի դժգոհության պատճառ են հանդիսացել ռուսական իշխանությունների կողմից լեհ հոգևորականության նկատմամբ անհարգալից վերաբերմունքը: Միք. Պատկանյանը կարծում էր, որ Լեհաստանում իրավիճակը սրողները ստեղծված ազգային կազմակերպություններն էին, որոնք եկեղեցու անվան տակ քողարկված միջոցառումներ էին կազմակերպում «Լեհաստանու ազգային գոյներով շինած դրօշակներով» և երգում էին «Բօժէ, ցօուս Պօլսկէ /Աստված Փրկիչ Լեհաստանու/»<sup>42</sup>:

Մեկ տարի անց, ապստամբության ժամանակ, նույն միտքն է հնչեցնում Մսերյանների «Համբաւաբեր Ռուսիոն», որն անդրադառնալով լեհական ապստամբության պատճառներին՝ կարծում էր, որ կրոնական տարբերությունը չէր, այլ «այն ազատութիւնն է, որ ստացան Լեհացիք 'ի Թագաւոր Կայսերքն այս վերջին ժամանակներումս»: Եթէ չստանային այդ ազատությունը, և մնային այն նույն վիճակի մեջ, որը կար տաս-քսան տարի առաջ, չէին ապստամբի և չէին համարձակվի «ձայն և զենք բարձրացնել, որպէս չբարձրացուցին Աւստրիոյ և Բրուսիոյ ձեռքի տակ գտանուած Լեհացիք, որք չունին այն ազատութիւնը»<sup>43</sup>: Մսերյանները բերում են օրինակ Հայոց եկեղեցուն, որն ունի ազատություն «կատարելու իւր ամենայն կարգերը» և այն կարծիքն են հայտնում, որ նույն ազատությունը տրված էր լեհական ժողովրդին և կաթոլիկ եկեղեցուն<sup>44</sup>:

Միք. Պատկանյանը նույնպես այդ կարծիքին էր. «Ռուսաստանը, մանաւանդ հիմիկուան Ռուսաստանը, թշնամի չէ կաթոլիկութեան»<sup>45</sup>:

«Մասեաց աղանի» հանդեսը՝ Գաբրիել վարդապետ Այվազովսկու խմբագրությամբ, «Փարիզեան սուրհանդակ» բաժնում նույնպես անդրադառնալով «Le Monde» թերթին իր գարմանքն է արտահայտում, որ վերջինս լեհական խնդիրը համարում է կրոնական, քանի որ «այլազգին սովորութիւն ունի զամենայն պատերազմն՝ իւր ..... մարգարեին անունովը հրատարակել եւ նորա դրօշակին

<sup>41</sup> Մեղու Հայաստանի, 1864 հ.1:

<sup>42</sup> Նույն տեղում, 1862, հ.4:

<sup>43</sup> Համբաւաբեր Ռուսիոյ, 1863, հ.47:

<sup>44</sup> Նույն տեղում:

<sup>45</sup> Մեղու Հայաստանի, 1862, հ. 4:

տակ առնուլ գնորա հավատացեալս: Բայց երբ քրիստոնեայք քրիստոնեից դեմ կելնեն, երկունս եւս յանուն հավատոյ իրարու սիրտը պատռելնին, պապական լրագրէն կտրվիմք»<sup>46</sup>:

Հետաքրքիր է, թէ ինչո՞ւ միայն լեհական ապստամբության շրջանում արևելահայ հասարակական գործիչներն անդրադարձան Լեհաստանի պատմության այն հատվածին, երբ հայերը սկսեցին բնակվել այդ պետությունում և 40.000 հայ ընտանիք ընդունեց կաթոլիկություն:

1863թ. Մանկտ-Պետերբուրգում պահպանողական հոսանքի ներկայացուցիչ Ռ. Պատկանյանի խմբագրությամբ հրատարակվող «Հիւսիս» թերթում տըպագրվեց «Նամակ առ հրատարակիչը» հոդվածը, որտեղ հոդվածագիրն իր մտահոգությունն էր արտահայտում Լեհական թագավորությունում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ: Խոսում է հայերի կարգավիճակի մասին երկու երկրներում, և համեմատում. «Ռուսաստանի մէջ Հայոց վիճակը եղել է բազմապատիկ առաւելությամբ լավ, քան զԼեհաստանի Հայոց վիճակը երբեմն, և այժմ ևս լաւ է, քան զՊարսկաստանի, Հնդկաստանի, Աստրիայի և այլոց դրությունը, և մեծ յանցանք կրլինի մեզ ուրանալ այն»<sup>47</sup>: Մատենադարանում պահպանվող Ռաֆայել Պատկանյանի «Միջնավէպը Լեհաստանի Հայոց անցքերու: Նիկոյ: 1627-1652» ձեռագիրը աշխատությունում, որը թվագրված է 1864թ. մարտի 27-ի ամսաթվով, հեղինակն անդրադառնում է Լեհական թագավորության պատմության այն շրջանին, երբ հայերին հանգրվան տվեցին: Ռաֆայել Պատկանյանն իր այս աշխատության սկզբում անդրադառնում է լեհ-ռուսական հարաբերություններին, որտեղ առաջին հերթին մեղադրում է Լեհական թագավորությանը՝ 16-րդ դարում Ռուսաստանի արևմտյան գավառներում իրականացված դավանափոխության քաղաքականության համար: Պատկանյանն այս ամենի ետևում տեսնում էր կանգնած Հռոմի պապին, որը ցանկանում էր. «Լեհաց բնակված ամեն ազգէն շինվի մէկ հօտ, ու նոցա վերայ Հրովմայ Քահանայապետը լինի մէկ հովիւ»<sup>48</sup>: Շարունակելով միտքը ասում է, որ Ռուսաստանի արևմտյան գավառների մի քանի «թերահավատ ու թուլամիտ» եպիսկոպոսներ համաձայնվեցին դավանափոխ լինել<sup>49</sup>: Այնուհետև հեղինակը խոսում է Լեհաստանի հայոց գաղթօջախի պատմության մասին և նշում, որ հայ գաղթյալների գործունեության շնորհիվ շենացավ Լեհաստանը. «Հայերը պատճառ ու գործի միջոց էին Լեհաստանի երջանկութեան», իսկ փոխարենը սկսեցին հալածվել լեհերի՝ մասնավորապես կաթոլիկ եկեղեցու կողմից<sup>50</sup>:

Ռ.Պատկանյանը «Հիւսիսի» էջերում հպարտորեն նշում է, որ շուշեցի պորուչիկ Բեհբուդ-Բեգ Մարտիրոսյան Պարոն Շուկովնիկյանը մասնակցելով լեհերի ապստամբությունը ճնշելուն՝ վիրավորվում է: Հոդվածագիրը հիշեցնում է հայ ժողովրդին, որ հայագրի սպան վիրավորվել է մի երկրում, «ուր որ մէկ ժամանակ Հայոց ազգը պանդխտութեան մէջ անտանելի հալածանք է քաշել»<sup>51</sup>:

«Մեղու Հայաստանի» թերթն էլ անդրադարձավ Պողոսյկ քաղաքի հայ գաղթավայրին: Այստեղ ներկայացվում էր հայերի վիճակը, թէ ինչպէս հայերը

<sup>46</sup> Մասեաց աղանի, 1863, հ.8 էջ 123:

<sup>47</sup> Հիւսիս 1863 հ.1:

<sup>48</sup> Մատենադարան, Պատկանյանների ֆոնդ, թղթ. 139. վավ. 93, թ. 3:

<sup>49</sup> Նույն տեղում:

<sup>50</sup> Նույն տեղում, թ.2:

<sup>51</sup> Հիւսիս, 1863, հ.1:

հաստատվեցին Պոդոլսկում, ունեին իրենց եկեղեցին և ինչպես 1666թ. ընդունեցին կաթոլիկություն: Իսկ այժմ «Աստվածապաշտությունը հայերեն լեզվով կատարվում է միան մի եկեղեցում, իսկ միւսների մեջ ժամասացությունը բոլորն էլ լատիներեն են»: Նոդվածում նաև ասվում է, որ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի վաճառականության և արհեստների ծաղկման համար լեհերը պետք է պարտական լինեն միայն հայերին, «միայն անցեալ դարի վերջերից սկսած շատ զօրացան այդ բաներում Հրեաները: Այժմ Կամենեցի Հայերը այնպես խառնվել են Լեհերի հետ, որ մինչև անգամ դժուար է նրանց զանազանել և ճանաչել»<sup>52</sup>:

Մտերյանների «Համբարաբեր Ռուսիոն» էլ լեհ ժողովրդին հիշեցնում է, որ իրենք լեհերն են խտրական քաղաքականություն վարել տարբեր ազգերի, այդ թվում հայերի հանդեպ և ստիպել են ընդունել կաթոլիկություն: «Լեհացիք չեն կարող արդարանալ այս կետիս մեջ. մեր ազգայնությունը, մեր կրոնը, մեր եկեղեցին և լեզուն կորած են արդեն Լեհաստանի մեջ՝ Լեհաց Թագաւորաց քահանայից և ժողովրդի շնորհիվը, այն ժողովրդի, այն քահանայից, որք այժմ այսպես անամօթաբար համարձակուում են արատավորել զՌուսաց տերությունը»<sup>53</sup>: Հեղինակն ամփոփելով հոդվածն ասում է, որ չի կարող հավատալ լեհ ժողովրդին, քանի որ «նոքա անհետացուցին 40.000 հայ տուն, նոքա յափշտակեցին մեր եկեղեցիքը ոտնակոխ արին մեր փառքը ու պատիվը ... և յետ այսորիկ կարո՞ղ ենք մենք լաւ խոսել նոցա վերայ և ջատագովել ... ո՞չ և դարձեալ ո՞չ»<sup>54</sup>:

Այստեղ հարկ ենք համարում կանգ առնել մի շատ կարևոր հանգամանքի վրա: Բնականաբար, հայ պահպանողականները լեհերին իրավացիորեն էին մեղադրում հայերին կաթոլիկացնելու մեջ, քանի որ այդպես օտարության մեջ նրանք բավական հեշտ ձուլվեցին լեհերի հետ: Սակայն հարց է առաջանում, ինչու սկսեցին անդրադառնալ այս խնդրին հենց ապստամբության օրերին: Կարծում ենք սա կապված էր այն կատաղի քարոզչության հետ, որ մայրաքաղաքային մամուլն սկսել էր ընդդեմ լեհերի: Այս ժամանակահատվածում է, որ գրեթե ողջ ռուսական մամուլը ողողվում է լեհերի դեմ մեղադրանքներով առ այն, որ նրանք ժամանակին ընդունեցին կաթոլիկություն և հեռվացան սլավոնական արմատներից<sup>55</sup>: Ռուսաց հասարակական գործիչներն ու մտավորականները լեհերին անվանում էին կրտսեր եղբայր, և իրենց նկատմամբ ատելություն սերմանողներին փնտրում էին լեհ հոգևորականության և շյախտայի մեջ<sup>56</sup>:

Այս նույն շրջանում արևելահայ գրեթե բոլոր գործիչները համակրանքով գնահատեցին Ջեյթոնի 1862թ. հերոսական ինքնապաշտպանությունը Օսմանյան Թուրքիայում: Բացառություն էր կազմում Խ. Լազարյանը, որն իր հայացքներով ծայրահեղ պահպանողական էր և դեմ էր պայքարի այս ձևին, և այն անվանում էր «ապիկար ու վտանգավոր մի մտայնություն, որպես տղայական երազ, անպարագրելի հիմարություն ու բանդագուշանք»<sup>57</sup>:

<sup>52</sup> Մեղու Հայաստանի, 1863, հ.9:

<sup>53</sup> Համբարաբեր Ռուսիոյ, 1863, հ.47:

<sup>54</sup> Նույն տեղում:

<sup>55</sup> Տե՛ս *Иванов А.А.*, О малорусском литературном языке и об обучении на нем. Русский вестник, М., 1863, т. 45, с.244-267; Московские ведомости, 1863 N 131 և այլն:

<sup>56</sup> *Соловьев С.М.*, История падения Польши. Восточный вопрос. М. 2003, с. 185; *Данилевский Н.Я.*, Россия и Европа. Взгляд на культурные и политические отношения Славянского мира Германо-Романскому, М., 2003, с. 304.

<sup>57</sup> *Հովհաննիսյան Ա.Գ.*, Նալբանդյանը և նրա ժամանակը, Եր., 1956, էջ 56:

Իսկ մնացյալ պահպանողականները ոչ միայն ողջունում էին Ձեյթունի ինքնապաշտպանությունը, այլ նաև քննադատում Օսմանյան տերությանը՝ մանա քաղաքականություն վարելու համար:

Սուերյանները «Համբաւաբեր Ռուսիայում» խոսելով Ձեյթունում տեղի ունեցող իրադարձությունների մասին՝ ողջունում են զեյթունցիների քայլը, դատապարտում թուրքական կառավարության գործողությունները և հավելում. «Այս պատմութենէն յայտնապէս երևում է, թէ, որպիսի պատասխանատուութեն պիտի պարտական մնայ փաշայն. նորան հարկ է խստագոյն դատաստանի տակ ձգել»<sup>58</sup>:

Քննդատության է ենթարկվում միաժամանակ Կ.Պոլսի ֆրանսիալեզու մամուլը, որ պատշաճ ձևով չի քննադատում տեղի ունեցածը և ավելին, ասում է, որ օրինականությունը վերականգնվեց պատեհ միջոցներով. «Ի՞նչ անենք՝ 200 մարդ, 2 քահանայ, 1 տիրացու և 1 կին սպանել, պատեհաւոր միջոցներ են համարուում...»<sup>59</sup>: Այդ դեպքում հարց է առաջանում, ինչո՞ւ էին ցնծությամբ ընդունում և ողջունում ռուսական իշխանությունների վարած խիստ քաղաքականությունը Լեհաստանում՝ «չարութեան արմատը խլելու և խաղաղութիւնը և հանդարտութիւնը հաստատելու համար»<sup>60</sup>:

Նման դիրքորոշում ունեին նաև «Մեղու Հայաստանին» և «Մասեաց աղանին»: Սակայն այս երկու պարբերականների մոտ նկատում ենք ավելի մեղմ գնահատականներ քան «Համբաւաբեր Ռուսիոյում»:

«Մեղու Հայաստանին» 1863թ. Ազգային լուրեր բաժնում տպագրում է հաղորդագրություն Ձեյթունի դեպքերի մասին, որն արտատպված և թարգմանված է «Московские ведомости» թերթից: Այստեղ նկարագրվում է զեյթունցիների քաջարի պաշտպանությունը: Իսկ թուրքերի գործողությունը ներկայացվում է «խիստ և տմարդի վարմունք Ձեյթունցոց դէմ»<sup>61</sup>: Սակայն միևնույն ժամանակ չի համարձակվում անգամ թույլ գովեստի խոսքեր շոայել լեհ ազգայնականների հասցեին:

Միայն «Մասեաց աղանին» էր, որ փորձեց մեկ անգամ պաշտպան կանգնել լեհ ժողովրդին: «Փարիզեան սուրհանդակ» բաժնում անդրադարձ կատարվեց Միրոսլավսկու և Վլադիսլավ Չարտորսկու միջև եղած տարաձայնություններին: Միրոսլավսկին գալիս է Փարիզ որպեսզի այստեղի պառակտված լեհերին միավորի: Նա ցանկանում էր, որ Լեհաստանն ապագայում ունենա ժողովրդավարական, իսկ Չարտորիսկին՝ ազնվականական կարգեր, այսինքն միապետական կարգերի հաստատում: Միրոսլավսկին Չարտորիսկիին նամակ է գրում մեղադրելով նրան իրենց անհաջողությունների մեջ<sup>62</sup>: «Բայց կսխալին Լեհացիք: Իրենց անմիաբանութիւնը մեծ վնաս կուտայ ազգային խնդրոյն, եւ ամեն արդարասէր անձն կմտածէ թէ երբ ազգ մը քստորանքին մէջ անգամ անմիաբանութեամբ կապրի, ի՞նչ պիտի լինի՝ եթէ ազատի եւ ինքնագլուխ մնա»<sup>63</sup>: Դրանից հետո, 1863-64թթ. «Մասեաց աղանին» իր համարներում եթէ անդրադառնում էր լեհական հարցին, ապա միայն քննադատելով լեհերին, և պաշտպանելով ռուսական կառավարության վարած քաղաքականությունը:

<sup>58</sup> Համբաւաբեր Ռուսիոյ, 1862, հ. 30:

<sup>59</sup> Նույն տեղում:

<sup>60</sup> Նույն տեղում, 1863, հ.50:

<sup>61</sup> Մեղու Հայաստանի, 1863, հ.5:

<sup>62</sup> Մասեաց աղանի, 1863, հ.14, էջ 221:

<sup>63</sup> Նույն տեղում:



Ինչպես արդեն վերևում նշեցինք ազատականների «Հիսիսափայլը» որևէ կերպ չարձագանքեց Լեհաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Սակայն Լեհաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին իր կարծիքն արտահայտեց ազատական հոսանքի հետ որոշակի ընդհանրություններ, բայց և ոչ պակաս բնութագրական տարբերություններ ունեցող Մ. Նալբանդյանը<sup>64</sup>: Նա արմատական հայացքներ կրող գործիչ էր և ռուս արմատականների ուսուցիչական ծրագրերի անմիջական ազդեցության ներքո՝ ցանկանում էր ժողովրդական ապստամբությունների միջոցով ռուսական և եվրոպական երկրների քաղաքական կարգերը տապալել և նոր համակերպական կարգեր ստեղծել:

Մ. Նալբանդյանը 1862թ. Միմեոն Մանիկյան կեղծանունով Փարիզում լույս ընծայեց «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը, որտեղ անդրադառնում է լեհական հարցին: Նա արևելահայ գործիչներից միակն էր, որը քննադատեց ռուսական իշխանությունների վարած քաղաքականությունը: Նրա հայացքներն արմատապես տարբերվում էին պահպանողականներից: Նալբանդյանը խոսում է Լեհաստանի բաժանման, լեհ ժողովրդի երեսնամյա պայքարի մասին<sup>65</sup>: «Ռուսական բանտերը լցվեցան լեհացիներով. կարծեմ շուտով Սիբիրի մեջ պիտի ավելի շատ լինի լեհացի, քան թե Լեհաստան»: Շարունակելով քննադատել Ռուսաստանի վարած քաղաքականությունը լեհական հարցում ներկայացնում է Լեհաստանի ներկա վիճակը, թե ինչ ճնշումների է դիմում կառավարությունը ինչպես համար ազգային շարժումը. «Ռուսիո գերմանաթաթար կառավարությունը իբրև վամպիր ծծում է Լեհաստանի արյունը, փակում է նորա եկեղեցիքը և դպրոցները»<sup>66</sup>:

Անշուշտ, Մ. Նալբանդյանի վրա մեծ ազդեցություն էր թողել Լոնդոնում գտնվող ռուս վտարանդիության տեսակետներն ու հայացքները, որոնք ցանկանում էին Լեհաստանը տեսնել անկախ, միևնույն ժամանակ ապագա Համապալվոնական Դաշնության կազմում որպես իրավահավասար պետություն<sup>67</sup>:

Այսպիսով, 19-րդ դարի 60-ական թվականների սկզբին լեհական հարցը Ռուսական կայսրությունում հասարակության լայն շերտերի քննարկման առարկա դարձավ, որը չըրջանցվեց նաև արևելահայ գործիչների կողմից: Միանշանակ կարելի է պնդել, որ 19-րդ դարի 60-ական թվականներին արևելահայ պահպանողական հոսանքը Ռուսական Կայսրության վարած ազգային քաղաքականության հարցում անմիջականորեն պաշտպանում էր կառավարության քաղաքականությունը: Սա, հավանաբար, պետք է բացատրել դարեր շարունակ այլադավան պետությունների տիրապետության ներքո ունեցած ճնշումներից հետո հայ ժողովրդի մի հատվածի ձեռք բերած որոշակի կրոնական և քաղաքական ազատություններով, որը ստացել էին Ռուսական Կայսրության կազմում և չէին ցանկանում ընդդիմանալ կառավարությանը: Միայն ազատական հոսանքի արմատական հայացքներ կրող Նալբանդյանը համարձակություն ունեցավ հայ իրականությունում քննադատել ռուսական իշխանությունների վարած քաղաքականությունը և պաշտպանել լեհական ապստամբությունը:

<sup>64</sup> *Խառատյան Ա.*, նշվ. աշխ., էջ 275:

<sup>65</sup> *Նալբանդյան Մ.*, Երկեր, Եր., 1987, էջ 114:

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 118:

<sup>67</sup> Герцен А.И., Собрание сочинений и писем под ред. *М. Лемке*, т.8. с. 56; *Бакунин М.А.*, Избранные сочинения в 5-ти т., т.3, Пгр., 1920, с.62.

**Айк Григорян – Отклики польской восстании 1863–64гг. в восточноармянской действительности.** – Александр Второй вступая на престол взял курс либеральной политики. Пользуясь сравнительно легкой политикой нового царя и руководствуясь национально-освободительными идеями, поляки стремились восстановить свои права и независимость. Во время польской восстании русскую печать контролировало государство. Большинство в русской общественности считало, что Польша неотделимая часть Российской Империи, следовательно не имеет прав на независимость. Восстание свои отклики нашло и в восточно-армянской действительности. в частности, национально-консервативные деятели, которые отрицали революцию и общественно-политические потрясения, в своих оценках были не менее жесткими, чем российские общественные деятели. во время восстания консерваторы обвинили поляков в обретении католичества армян. Только из либерального течений М.Налбандян, у которого были радикальные взгляды, имел смелость в армянской деятельности критиковать политику российских властей и защищал польское восстание.

**Hayk Grigoryan – The Polish 1863-1864 uprising responses in East Armenian reality.** – Alexander II, after his succession to the throne, adopted a generally liberal policy. Availing of the relatively soft rule and inspired by the ideas of national liberalism, Poland struggled to reestablish their rights and independence. During the Polish uprising, the Russian press was entirely controlled by the government. The Polish uprising was also reflected in the Eastern Armenian realities. Thus, Polish uprising provoked reactions of the national-conservatives, who were against revolutions and social-political upheavals. They were even harsher in their assessment of the situation than the Russian public figures. Conservatives blamed Poland of converting Armenians to Catholicism. Mikael Nalbandyan, an adherent of the fundamental principles of the liberal movement, found courage in the Armenian reality to condemn the Russian state policies and defend the Polish uprising. The majority of Russian society considered that Poland was an inseparable part of the Russian Empire and, consequently, didn't have a right for independence.

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՄԵԻՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

### ԶԱՎԱՀԻՐ ԹՈՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության և Հայոց Ազգային պատվիրակություններն, որոնք փաստորեն ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր պատասխանատուներն էին, իսկ Ազգային Պատվիրակության պարագային նույնիսկ կարելի է պնդել, որ իր քայլերի համար որևէ պատասխանատվություն չէր կրում ՀՀ կառավարության առջև, ի վերջո կարողանում են հասնել Սևրի պայմանագրով իրենց պահանջների մեծ մասի բավարարմանը: Սակայն, միայն թողով: Մենք վստահ ենք, որ եթե նրանք կառչած չլինային Դաշնակիցներից, ավելի նեղ սահմանների պահանջ ներկայացնեին և լուրջ նշանակություն տալով միլի շարժմանը, գնային թուրքերին զիջումների, չէր բացառվում, որ չկայանար հայ-թուրքական վերջին պատերազմը: Չգնալով դրան, նրանք նույնիսկ նման ուղղություն չմատնանշեցին ՀՀ կառավարությանը, որը թուրքերի հետ առանձին բանակցությունների գնաց շատ ավելի ուշ, Ալեքսանդրապոլի կոնֆերանսում, երբ արդեն բանը բանից անցել էր: Բայց դա այլ թեմա է: Ցավալի է շեշտել, որ հիշյալ պատվիրակությունները նույնիսկ Դաշնակիցներից հույսը չէին կտրում, երբ արդեն ԱՄՆ-ի սենատը մերժել էր Հայաստանի մանդատը և սկսվել էր նրա բաժանման գործընթացը: Նույնիսկ այդ մերժումից առաջ, Երևանում հատուկ առաքելության մեջ 1919թ. սեպտեմբերի 25-27-ին գտնված Հարբոթի Ալ. Խատիսյանի հիշատակած հայտարարությունները պետք է լուրջ մտորումների տեղիք տային: Նա ասել էր, թե եթե ԱՄՆ-ը ստանձնի մանդատը, ապա՝ «այն պետք է ըլլայ ոչ միայն Հայաստանի այլ ամբողջ Փեռքը Ասիոյ եւ Անդրկովկասի վրայ, Ալեքսանտրեթէն սկսած մինչեւ Բաքու, այսինքն՝ Միջերկրականէն մինչեւ Կասպից ծով»<sup>68</sup>:

Հարբոթի հանձնախումբն այս եզրակացությանն էր եկել հիմնականում նկատի ունենալով ծովային ճանապարհները: Նրա համար մտահոգիչ էր Դարդանելի փակվելու դեպքում Հայաստանի հետ կապվելու հարցը: Ուստի պատահական չէ, որ Հարբոթը Երևանում հասկացնում էր, որ մանդատի հարցը չի լուծվելու և ակնարկում էր Թուրքիայի հետ լեզու գտնելու մասին: Այդ մասին Ալ. Խատիսյանը գրում է. «Հարբոթը ինձ հետ մենակ մնալով իմ առանձնասենյակի մեջ, պատմեց, թե ինձ ողջոյն է բերած Բեռլինի պէլէն, որուն հետ ես ծանոթ էի դեռ Տրապիզոնի բանակցութիւններու ժամանակէն, եւ որ Բեռլինի պատրաստ էր անմիջապէս բանակցութիւններու մէջ մտնել Երեւանի կառավարութեան հետ: Զոր. Հարբոթը իր կողմէն խորհուրդ կու տար սկսիլ այդ բանակցութիւնները: Մենք այդ խորհրդին չհետևեցանք, հավատացած ըլլալով, որ մեր խնդիրը պիտի լուծուի Փարիզի մէջ»<sup>69</sup>: (Ընդգծումը մերն է - Ջ. Թ.)

Ինչպէս համոզվում ենք՝ արդեն պարզ էր դառնում, որ Դաշնակիցների հետ հույսեր պետք չէ կապել, քանզի նրանք էին ակնարկում թուրքերի հետ անմիջական հարաբերություններ սկսելու մասին:

---

<sup>68</sup> Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը Բէյրութ, 1968, էջ 189:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 191-192:

Սակայն, հայոց պատվիրակությունները համառորեն գործում էին: Այն տպավորությունը կա, որ Դաշնակիցները Սևրի պայմանագրում նրանց պահանջները ներառելով, իրենք էլ գիտեին, որ դրանք իրականանալի չէին: Դրա համար բավարար հիմք է թեկուզ և այն, որ 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ-ի Սենատը մերժեց ստանձնել Հայաստանի մանդատը (կողմ՝ 34, դեմ՝ 43, ձեռնպահ՝ 19)<sup>70</sup>:

Թեպետ հակառակ կարծիքն է իշխում, բայց փաստեր կան, որոնք վկայում են, որ Ուիլսոնն էլ է զգուշավորություն ցուցաբերել մանդատի ստանձնման խնդրում: Դեռևս 1920թ. ապրիլի 27-ին իրեն ուղղված Հարբորտի Թիֆլիսից մի զեկույցի պատասխանում նա մասնավորապես հետևյալն է գրել. «Միացյալ Նահանգներն իսկապես ընդունում է պարտավորությունն իր վրա՝ կարգավորելու արտաքին քաղաքականության մեր հետաքրքրությունները առանձնապես շոշափող մի շարք հարցեր, անկախ մեծ նշանակության ներքին գործերից: Բայց և այնպես, ամերիկյան միջամտությունը հայկական գործին պահանջում է 100-ից մինչև 20 հազ. զինվոր: Միացյալ նահանգները կարող է իր վրա վերցնել այսպիսի ծանրություն միայն Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ վերջնական համաձայնությունից, ինչպես նաև Ռուսաստանի և Գերմանիայի հստակ արտահայտությամբ հավանությունից հետո, հատկապես վերաբերվող Թուրքիայի և Անդրկովկասին միջամտության ծախսերի թիվն առաջին տարվա համար նշվում է 275 մլն. դոլար»<sup>71</sup>:

Ստացվում է, որ Ուիլսոնը մանդատի ստանձնումը կախյալ էր համարում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիրքորոշումից, ինչպես նաև Ֆրանսիայի և Գերմանիայի վերաբերմունքից: Եվ այն օրերին, երբ սենատը քննարկում էր մանդատի հարցը: Այս ամենից հետո, հատկապես սենատի կողմից մանդատի մերժումից, այլևս խիստ կասկածելի էր Սևրի պայմանագրի հայերին վերաբերվող հոդվածների իրականացումը:

Երբ վերջապես, երկար ձգձգումից հետո Սան-Ռեմոյում մշակվեց Թուրքերի հետ պայմանագիր կնքելու նախագիծը, այն հունիսի 22-ին հավանություն գտավ թուրքական կառավարության կողմից և ընկավ Սևրի պայմանագրի հիմքում: Հայաստանին էր վերաբերվում այդ պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժինը (88-93 հոդվածներ) ամբողջությամբ:

Այժմ հարկ ենք համարում մեջբերել Հայաստանին վերաբերվող հոդվածները՝ անհրաժեշտ եզրակացությունների համար.

«Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն:

Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վելայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատու մր թողել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող էր առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ:

<sup>70</sup> Հայկազեան հայագիտական հանդես, Պեյրոթ, 1977, 78 հ., *Ջալեն Մարդեան*, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և Հայկական Հարցը (1900-1976), էջ 74-75:

<sup>71</sup> Армения в документах государственной департаменте США 1917-1920гг., составитель Г. Г. Махму-  
ряев, Ереван, 2011, ст. 401-402:

Հողված 90. Այն դեպքում, երբ 89-րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տերիտորիան կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տերիտորիայի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից: Սակայն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տերիտորիաների նկատմամբ, այս պահից սկսած կգործադրվեն նաև այդ տերիտորիայի նկատմամբ:

Հայաստանի սուվերենությանը հանձնվող տերիտորիայի կապակցությամբ նրա վրա դրվող Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը, և դրանց բնույթն ու այն իրավունքները, որոնցով նա կարող է փաստարկել, կսահմանվեն սույն պայմանագրի 8-րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածների համաձայն:

Հաջորդ կոնվենցիաները կկարգավորվեն, եթե դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն Պայմանագրով և որոնք կարող են ծնունդ առնել հիշյալ տերիտորիայի փոխանցման կապակցությամբ:

Հողված 91. Եթե 89-րդ հոդվածում նշված տերիտորիայի մի մասը հանձնվի Հայաստանին, ապա Սահմանագծման հանձնաժողով, որի կազմը կորոշվի հետագայում, կստեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:

Հողված 92. Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելույն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:

Երբ 89-րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի և եթե դրանից հետո այս կամ այն շահագրգռված պետությունները չեն կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանագատումը տեղում գծանշելու մասին:

Հողված 93. Հայաստանն ընդունում է, համաձայնվելով դրանք մտցնել գլխավոր տերությունների հետ պայմանագրի մեջ, այն որոշումները, որոնք այդ Տերություններն անհրաժեշտ կհամարեն Հայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ռասայի, լեզվի և կրոնի առումով տարբերվում են ազգաբնակչության մեծամասնությունից:

Հայաստանը նմանապես համաձայնվում է գլխավոր տերությունների հետ Պայմանագրի մեջ մտցնել այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կը համարեն տրանզիտի ազատությունը և այլ ազգերի առևտրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար»<sup>72</sup>: (Ընդգծումները մերն են – Ջ. Թ.)

Սևրի պայմանագրի այս կետերի մասին բազմիցս գրվել է և խոսվել է ընդհանրապես այն մոտեցմամբ, որ նրանով Հայաստանին էին տրվում հիշատակված չորս վիլայեթները: Բայց հատկապես հոդվածների մեր ընդգծած մասերը մղում են եզրակացնելու, որ Սևրի պայմանագրով Հայաստանին ոչ մի կոնկրետ

<sup>72</sup> Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սուվետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 676-677, **Գաբրիել Լազեան**, Հայաստան և Հայ դատը, Երևան, 1991, էջ 210-212, **Մ. Վրացեան**, Հայաստանի Հանրապետություն, Բելրուս, 1958, էջ 440-441 և այլն:

տարածք էլ չի տրվել, այլ ընդամենը խտավում է այդ վիլայեթներում (Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի) Թուրքիայի և Հայաստանի միջև «սահմանատման» համաձայնության մասին, որը պետք է որոշեր ԱՄՆ-ը և որը նոր միայն պետք է ընդունեին Դաշնակիցները: **Փաստորեն, Սևրի պայմանագիրը ոչ թե ճանաչում էր այդ տարածքները ՀՀ մաս, այլ դրանցից որոշ մասեր կճանաչեր ԱՄՆ-ի կողմից սահմանագիծը որոշելուց հետո:** Ստացվում է, որ 89-րդ հոդվածով ոչ մի հստակ սահման չէր նախորոշվում ՀՀ և Թուրքիայի միջև, այս հոդվածով նրանք ոչ թե հստակ որոշում են այս վիլայեթները կամ նրանցից մասեր հատկացնել ՀՀ-ին, այլ համաձայնվել այն սահմանների հետ, որը կառաջադրի ԱՄՆ-ը:

91-րդ հոդվածի մեր ընդգծած մասերը նույնպես վկայում են մեր եզրակացության ճշտության մասին և, ավելին, հակասական վիճակ են ստեղծում 89-րդի հետ: Եվ այն պատճառով, որ ձևակերպումն այնպես է սկսվում, որ կասկած է հատուցում տարածքը ՀՀ-ին հանձնելու մասին: («Եթե 89-րդ հոդվածում նշված տերիտորիայից մի մասը հանձնվել է Հայաստանին...»): Բացի այդ, եթե սահմանները որոշվեին, ապա՝ նոր միայն երեք ամսվա ընթացքում կստեղծվեր սահմանագծման հանձնաժողով, որը դարձյալ նշանակում է, որ Սևրի պայմանագրով Հայաստանին ոչ մի կոնկրետ տարածք չէր տրվում:

92-րդ հոդվածը նույնպես անորոշությամբ է լեցուն: Այն հաստատում է, որ դեռևս որոշված չեն Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև եղած սահմանները: Բացի այդ, հոդվածից այն եզրակացությանն են գալիս, որ հնարավոր է չընդունվեր որոշված սահմանագիծը «այս կամ այն շահագրգռված պետությունների» կողմից, որի դեպքում սահմանագիծը կորոշեն «գլխավոր» դաշնակից տերությունները: Այսպիսով, Հայաստանին և Թուրքիայի վերաբերվող հոդվածներով Թուրքիային ոչ մի կոնկրետ սահման չէր պարտադրվում: Նույնիսկ կարող էր անհամաձայնություն առաջանալ սահմանագծով շահագրգռված տերությունների միջև:

Վերջնական եզրակացությունն հետևյալն է՝ **Սևրի պայմանագրով Թուրքիային չի պարտադրվել տարածքներ զիջելու ՀՀ-ին, այլ՝ տրվել է համաձայնություն ընդունելու այս երկուսի միջև այն սահմանագիծը, որը կզօեր ԱՄՆ-ի նախագահը:**

Եվ երկրորդ, ճիշտ չէ Ուիլսոնի կողմից 1920թ. նոյեմբերի 22-ին որոշած ՀՀ և Թուրքիայի սահմանագծի նույնացումը Սևրի պայմանագրի հետ, որոնք նույնիսկ չեն պարտադրում Հայաստանին թողնել հիշյալ վիլայեթները: Սևրի պայմանագրով հստակ Հայաստան անհնար է մատնանշել, այլ՝ Ուիլսոնյան քարտեզով, որը զծվեց այն ժամանակ, երբ արդեն կորչում էր Սևրի պայմանագրի Թուրքիային վերաբերվող հոդվածների իրավական հիմքը:

Ուրեմն, երբ խոսք է գնում Սևրի պայմանագրով ՀՀ սահմանների որոշման մասին, ապա դա անհնար է:

Ցայսօր Սևրի պայմանագրով ՀՀ սահմանները նույնացվում են Ուիլսոնյան սահմանների հետ, որն այնքան էլ ճիշտ չէ:

Սակայն, քանի որ, ինչպես գրված է 89-րդ հոդվածում, Դաշնակիցները պետք է ընդունեին «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատումը» ըստ ԱՄՆ-ի, բայց այն այդպես էլ չընդունեցին, ուրեմն պատմական ճշմարտությունը պահանջում է շեշտել, որ Ուիլսոնյան վճիռը 1920թ. նոյեմբերի 22-ին ոչ մի կոնկրետ հետևանք չունեցավ և չէր կարող ունենալ և դրանում նա ինքն էլ համոզված էր: Եվ հետևյալ պատճառներով.

Առաջին. Նրա իրավարար վճռի օրերին արդեն թուրքերն Ալեքսանդրապոլում էին, գրավված էին այն տարածքները, որոնք ՀՀ-ին դեռ չէին հանձնվել:

Երկրորդ. Առկա էր թուրք-բոլշևիկյան մերձեցումը, որից տեղյակ էր ինքը՝ Ուիլսոնը:

Երրորդ. Դաշնակիցներն իրենք էին ձգտում Քեմալի հետ մերձեցման:

Մեր տեսակետն ավելի հիմնավորելու համար բավական է մեջբերել Կ. Պոլսում գտնված ԱՄՆ գերծովակալ Բրիստոլի դեռևս 1920թ. սեպտեմբերի 18-ին ԱՄՆ պետքարտուղար Կոլբիին ուղարկած հեռագրի հետևյալ տողերը. «Ոչ ոք չի կարող հավատալ, որ թուրքերը դուրս կբերեն իրենց զորքերը՝ Հայաստանին տարածքների փոխանցումով, եթե չստիպեն նրանց դա անել...: Եվ ծայրահեղ պարզ է, որ Դաշնակիցները Հունաստանի օգնությամբ գնում են ստիպելու նրանց ճանաչելու պայմանագիրը: **Պայմանագիրը Թուրքիայի հետ Հայաստանին տալիս է միայն այն մասերը արևելյան վիլայեթների, որոնք կարող են որոշվել նախագահի իրավարարությամբ:** Այսօր այդպիսի շրջաններում պրակտիկորեն հայեր չըկան, իսկ հայրենադարձությունը Երևանյան հանրապետությունից կրբերի անկարգությունների, եթե չապահովվի պաշտպանությամբ»<sup>73</sup>: (Ընդգծումը մերն է - Ջ.Թ.):

**Այսպիսով, ինչպես պարզ է ընդգծվածից, իսկապես Սևրի պայմանագրով ՀՀ-ին կոնկրետ ոչինչ չէր տրվում, և եթե տրվել էր, պետք է տրվեր ԱՄՆ նախագահի իրավարար վճռից հետո:** Բացի, այդ, տրվելիք հողերը ինչպես էին գրավվելու, եթե մի կողմից ՀՀ մանդատն արդեն մերժել էր Սենատը, մյուս կողմից էլ դրանք գրավել չէին կարող ՀՀ զորքերը և արդեն չէին ցանկանում դաշնակիցները:

Ջերմ մնալով Սևրի պայմանագրով նախատեսված ԱՄՆ-ի նախագահի իրավարարությամբ ՀՀ-ին հողատարածքների հատկացնելու անհնարինությունն ապացուցելու համար այլ փաստերի մեջբերումներից, պարզապես ավելացնենք միայն, որ արդեն նոյեմբերի 22-ի Ուիլսոնյան քարտեզագրությունից առաջ էլ պարզ էր, որ Հայաստանը որևէ տարածք Թուրքիայից չէր ստանալու:

Հայաստանի խորհրդայնացումով, որը տեղի ունեցավ Ուիլսոնյան վճռից ուղիղ տաս օր անց, արդեն վերջ գտան մեծ տերությունների՝ հոգուտ հայոց միջամտելու բոլոր հնարավորությունները:

Այսքանից հետո համակ միամտություն է բուրում Պողոս-Նուբարի և Ավ. Ահարոնյանի հեռագրից՝ ուղղված Ուիլսոնին, ուր մասնավորապես կարդում ենք. «Անսահմանորեն յերջանիկ ենք, վոր Գերագույն խորհուրդը անկախ Հայաստանի սահմանների վորոշումը ձեզ է հանձնել: Ամբողջ հայ ազգը իր աչքերը ուղղած է ձեզ վրա, հուսալով տեսնել, վոր իր իրավունքները պաշտպանված պիտի լինի ձեզանից:

Հայաստանի պետության հովանավորության ընդունումը Ամերիկայի կողմից միայն կարող է իրականացած դարձնել մեր յերագները ունենալ լիյակատար Հայաստան: Բայց յեթե Ամերիկան հանձն չառնե այս պարտականությունը, մենք ձեզ թախանձում ենք պնդել, վոր գեթ Հայաստանի պետության մաս կազմելին Բիթլիսի նահանգը առանց Սդերդ գավառի, Վանի նահանգը առանց Հեքարի գավառի, ամբողջ Կարնոյ նահանգը, վորի գլխավոր քաղաքները Կարին յեվ Երզրն-

<sup>73</sup> Армения в документах государственного департамента США 1917-1920 гг., ст. 418.

կան անհրաժեշտ են Հայաստանի պաշտպանության համար, ամբողջ Խարբերդի գավառը..., նայել ունենալ յելք Սեվ ծովու վրա, Ճորոխի հովիտը, որ անհրաժեշտ է մեր երկաթուղիներու շինության համար յեվ ամբողջ Անդրկովկասյան Հայաստանը:

Հույս ունենք, վոր համենայն դեպս Ամերիկյան ցույց կտա իր առատաձեռն ու հզոր աջակցությունը Հայաստանին:

Այն հայկական հողամասերը, որոնք դուրս պիտի մնան անկախ պետությունից, այսինքն Սեբաստյան, Տիգրանակերտի, Մալաթյան հողամասերը, նայել ամբողջ Կիլիկյան մենք ցանկանում էինք, վոր դաշնակիցները գրկեյին թյուրք վարչությունից յեվ ոժտվեյին Յեվրոպական կառավարության հատուկ ռեժիմով դաշնակիցների վերահսկողության ներքո»<sup>74</sup>:

1920թ. նոյեմբերի 22-ին իր հեռանալուց առաջ (նա նախագահական ընտրություններում չվերընտրվեց) Ուիլսոնը կայացնում է իր քաղաքական վճիռը՝ Սևրի պայմանագրի իրեն տված հիմքով գծում է Հայաստանի սահմանները, երբ Հայաստանը բաժանվում էր քեմալականների և բոլշևիկների միջև (Տես Հավելված II, «Հայ-թյուրքական սահմանագիծն ըստ Սևրի պայմանագրի, 10.08.1920»): Ի՞նչ էր այն ներկայացնում իրենից:

Ուիլսոնի սահմաններով Արևելյան Հայաստանն, որն ուներ 71.330 քառ. կմ տարածություն, միավորվելու էր 90.000 քառ. կմ Արևմտյան Հայաստանին, որով ՀՀ սահմանը կազմվելու էր 161.330 քառ. կմ: Արևելյան Հայաստանին միավորվելու էին.

1. Վանի նահանգի 39.300 քառ. կմ տարածքից՝ 20.000 քառ. կմ:
2. Էրզրումի նահանգի 49.700 քառ. կմ տարածքից՝ 40.000 քառ. կմ:
3. Բիթլիսի նահանգի 27. 100 քառ. կմ տարածքից՝ 15.000 քառ. կմ:
4. Տրապիզոնի նահանգի 32.700 քառ. կմ տարածքից՝ 15. 000 քառ. կմ<sup>75</sup>:

ՀՀ-ին էին միացվելու «Վանի նահանգի Վանի Սանճաքը, Բաղեշի (Պիլթիսի) նահանգէն Բաղեշ և Մուշի Սանճաքները, Էրզրումի նահանգը գրեթե ամբողջությամբ, Էրզրումի, Տրապիզոնի Սանճաքին եւ Կիւմիշխանէին ալ արեւելեան մասերը:

Սահմանը կը սկսի Սեւ ծովու վրայ գտնուող Տրապիզոնէն, մոտ մէկ ժամ արեւմուտքէն Բլաթանտ պգտիկ քաղաքէն, մէջը կ'առնէ Տրապիզոնը, կը շարունակէ դէպի հարաւ արեւելք, մէջը կ'առնէ Երզնկա քաղաքը, կ'անցնի Տերսիմի լեռներու հիւսիսէն եւ հարաւ արեւելք ծռելով՝ մէջը կ'առնէ Մշոյ դաշտը եւ Սասունի մեծ մասը: Հոս իր հարաւային սահմանն է Տաւրոսի շղթան, ուրկէ Վանա լիճի արեւելքէն կը դիմէ դէպի հիւսիս, Մասիս, Պարսկաստանի եւ Թուրքիոյ ներկայ սահմանագլուխը: Այդ ձեռով Արեւմտեան Հայաստանը իր մէջ կ'առնէ ամբողջապէս Վանայ լիճը, Արածանիի եւ Արմատեան Եփրատի վերին եւ Միջին հովիտները, Ճորոխի վերին եւ միջին հովիտը»<sup>76</sup>:

Ահա այս տարածքներն էին միավորվելու ՀՀ սահմաններին՝ համաձայն Ուիլսոնի իրավարար վճռի, որի կյանքի կոչվելու հիմքերն արդեն խարխլված էին և

<sup>74</sup> ՀԱՍ, ֆ. 200, ց. 2, գ. 114, թ. 1:

<sup>75</sup> **Գաբրիել Լազեան**, Հայաստան և հայ դատը, էջ 215, **Լենդրուշ Խուրշուդյան**, Հայկական Հարցը, Երևան, 2002, էջ 49:

<sup>76</sup> Նույն տեղում, էջ 214:



որն ինքն էլ գիտեր այդ մասին, քանզի քաղաքագետ լինելուց բացի նաև իրավագետ էր:

Նրա նախորոշած սահմաններն առավել մանրամասնությամբ հարկ չենք համարում մեջբերել (Այդ մասին լիարժեք պատկերացում կազմելու համար տե՛ս հավելված II): Նրա գծած Հայաստանը մանրագնի ուսումնասիրության արդյունք սահմանագծերով նկարագրված է Գերագույն Խորհրդին նրա ուղղված գաղտնի նամակում<sup>77</sup>, որն հրատարակվել է բազմիցս<sup>78</sup>:

Ընդհանրացնելով ողջ շարադրանքը, շեշտենք մեկ անգամ ևս, որ.

Առաջին. Սևրի պայմանագրով Հայաստանի Հանրապետության սահմանները հստակորեն չեն մատնանշվել և հայտնի վիլայեթներով սահմանը պետք է որոշվեր ԱՄՆ նախագահի կողմից:

Երկրորդ. Այդ սահմաններով Հայաստանի գոյությունն արդեն կասկածելի էր իրավաբար վճռի օրերին:

Երրորդ. Ճիշտ կլիներ ավելի նեղ սահմանների վերաբերյալ լեզու գտնել թուրքերի հետ, քան թե անտեղի տարվել Դաշնակիցներով:

Որ Սևրի պայմանագրի կնքման օրն արդեն կասկածելի էր նրա իրականացումը, երևում է նաև նրանից, որ այդ նույն օրը ՀՀ և Ռուսաստանի միջև կնքվում է Թիֆլիսի համաձայնագիրը, որին անդրադառնալը այս հոդվածի նպատակներից դուրս է:

#### **Джаваир Торосян – Границы Республики Армения по Севрскому договору.**

– В статье сделана попытка доказать, что по Севрскому договору границы Республики Армения указаны нечетко, и граница по известным вилайетам должна была определиться президентом Америки. Одновременно указывается, что по этим границам существование Армении уже сомнительно в дни арбитражного решения Уильсона, и было бы правильней найти общий язык с турками относительно более узких границ, чем зря надеяться на Союзников. Уже в день заключения Севрского договора его осуществление было сомнительным, так как в тот же день между РА и Россией заключается Тифлисское соглашение.

#### **Javahir Torosyan – The borders of the Republic of Armenia according to Sevri's contract.**

– In the article it is tried to prove that in Sevri's contract the borders of the Republic of Armenia are not pointed out clearly and the border with famous villaets had to be determined by the president of America. At the same time the existence of Armenia with those borders was already suspicious in the days when Wilson had right to make decisions and it would be better to find a common language with the Turks referring to the narrower borders than to be with allies inappropriately. Just the day of Sevri's contract its realization was already suspicious as on the same day an agreement was confirmed between the Republic of Armenia and Russia.

<sup>77</sup> Армения в документах государственного департамента США 1917-1920 гг., ст. 421-427.

<sup>78</sup> Տե՛ս Գ. Լազեան, նշվ. աշխ., էջ 215-224, Հայկ Ղազարյան, Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավաբար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, գիրք II, Երևան, 2012, էջ 354-374, **Արմեն Խաչիկյան**, Նախագահ Վիլսոնի Հայաստանի քարտեզը, Երևան, 2010, էջ 14-21:

---

**ՌԴ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ԴԱՎԻԹ ԱՓԻՆՅԱՆ**

Անդրկովկասի նկատմամբ Ռուսաստանի տարածքային հավակնությունները գաղափարական ձևակերպում ստացան 18-րդ դարի երկրորդ կեսին, երբ կայսրության արտաքին քաղաքական ձգտումներում սկսեց շրջանառվել այսպես կոչված «Հունական նախագիծը»: Վերջինն ենթադրում էր իրականացման երկու եղանակ՝ ռազմական և գաղափարական, և երկուսն էլ, երկարաժամկետ կտրվածքով, որոշիչ դարձան Ռուսաստանի արտաքին քաղաքականության հարավային ուղղության զարգացումներում, որում Կովկասին հատկացված էր էական նշանակություն:

«Հունական նախագիծ» իրականացումը՝ Թուրքիայի մասնատման և Ռուսաստանի պրոտեկտորատի ներքո Հունական տերության ձևավորման մասերով, թույլ կտար Ռուսաստանին տիրանալ սևծովյան նեղուցներին, ինչպես նաև իր գերիշխանությունը հաստատել Միջերկրական ծովում: Այս ամենի հիմնանպատակներից էր Ռուսաստանը վերածել Մերձավոր Արևելքի և Արևելյան Եվրոպայի ռազմական և տնտեսական առումներով ամենաազդեցիկ տերության:

Նշենք, որ «Հունական նախագիծը» հեռու էր բարոյական կամ կրոնական բովանդակությունից: Այն ուներ կայսրությանը հատուկ հստակ նպատակներ՝ տիրանալ Բալկաններին, Կովկասին, Անդրկովկասին և Սևծովյա նեղուցներին: Պատահական չէ, որ 1783 թվականին ստորագրվեց ռուս-վրացական Գեորգիևյան տրակտատը, համաձայն որի Հերակլ II-ի թագավորությունն անցնում էր Ռուսաստանի հովանու ներքո, իսկ ռուսական զորքերն այնտեղ տեղակայման իրավունք էին ստանում<sup>79</sup>:

Պետք է նշել, որ համաձայնագիրը պահպանվեց 4 տարի, մինչև 1787թ., ինչից հետո ռուսական զորքերը, կարճ ժամանակով, ստիպված դուրս բերվեցին Արևելյան Վրաստանից /Քարթլի-Կախեթից/: Չնայած դրան Ռուսաստանը շարունակում էր դիտարկել այդ տարածքները որպես սեփական վասալական ազդեցության գոտի և շուտով՝ 1787-1792թթ. ռուս-թուրքական պատերազմում տարած հաղթանակից հետո, Յասայի պայմանագրով, վերականգնեց իր ներկայության իրավասությունը հիշյալ տարածքներում:

Ղրիմի թերակղզու և հյուսիսային մերձսևծովյան տարածքների միացումը Ռուսաստանին, ապահովեցին կայսրության հարավային սահմանների անվրտանգությունն ու նրա ելքը դեպի Դնեստր և Սև ծով, ինչը դարձավ ռուսական իշխանությունների հեռու գնացող մտադրությունների իրականացման սկիզբը:

Այսպիսով, դեպի հարավ Ռուսաստանի ռազմաքաղաքական լայնածավալ և ակտիվ ընդարձակման իրականացումը պահանջում էր գաղափարական հիմնավորում և ապահովում: Դրա համար գործածության մեջ դրվեց դեռևս 15-րդ դարում ձևակերպված՝ Բյուզանդական և Ռուսական կայսրությունների պետաի-

---

<sup>79</sup> Сазонов А., Герасимова Г., Сборник архивных документов, “Георгиевский трактат”, М., 1992, с., 244.

րավական իրավահաջորդության քաղաքական-կրոնական հայեցակարգը, որն առավել հայտնի է «Մոսկվա – Երրորդ Հռոմ» ձևակերպմամբ, որի իրականացման համար ներմուծվեցին նաև մշակութային և քաղաքական իմաստներ:

Ռուսական արտաքին քաղաքականության ճարտարագետների աշխարհաքաղաքական ծրագրերը իրենցում բովանդակում էին հսկայական քաղաքական, սոցիալական, մշակութային փոխակերպումներ:

Այս առումով, 18-րդ դարում, պետական-կրոնական մեսսիականության գաղափարը գերակայող է դառնում կայսրության արտաքին քաղաքականության իրագործման հիմնավորումներում:

Հարկ է նշել, որ Ռուսաստանում կրոնական կյանքի ուղղորդումների քաղաքականությունում պետության չափաբաժինը սկսած 18-րդ դարից զգալի էր: Փաստացի, նրա հնարավորություններն օգտագործվել են պետության կողմից և որոշ առումով այն համարվել է որպես պետական կառույց, որը Պատրիարքի հետ մեկտեղ ղեկավարել է միապետը, ով մարմնավորել է բարձրագույն աշխարհիկ /վարչական-պետական/ և հոգևոր /եկեղեցական-կրոնական/ իշխանությունները, ինչը պատմագիտության տերմինաբանությամբ կոչվում է աբսոլյուտիզմ: Այդ պատճառով կայսերական շրջանի Ռուսաստանում կրոնակեղեցական գաղափարական ցանկացած դոկտրին մեխանիկորեն դառնում էր նաև արտաքին քաղաքականության բովանդակային մաս:

Այսպիսով 1783 թվականին Ռուսաստանի ռազմական հովանավորության հաստատումը Արևելյան Վրաստանում, ինչպես նաև 1801թ. վերջինիս ընդգրկումը կայսրության կազմում էլ առավել կոշտացրեցին, ինչպես Օսմանյան կայսրություն - Շահական Պարսկաստան լարված փոխհարաբերությունները, այդպես էլ նրանց երկուսի վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ: 19-րդ դարի ռուս-թուրքական և ռուս-պարսկական և պատերազմներների արդյունքում ռուսական կայսրությունը ընդհուպ մոտեցավ Կենտրոնական և Հարավային Կովկասի սահմաններին ինչը և որոշիչ դարձավ Ռուսաստանի աշխարհաքաղաքական հետաքրքրությունների կիրառական պատկերի ուրվագծման տեսանկյունից:

Կովկասում այդ երեք ուժերի միջև հետաքրքրությունների, կոնֆլիկտի գոյության պայմաններում որպես առկա հակասությունների հաղթահարման սկզբնակետ այն ժամանակ ընտրվեց կովկասյան ժողովուրդների կրոնական սուլվերենության սկզբունքը:

Հարավային Կովկասում Ռուսաստանի հետագա ընդարձակումը պայմանավորված էր նաև նոր նվաճված տարածքների անվտանգության ապահովման գործոնով, ինչի համար անհրաժեշտ էր դուրս գալ նրա բնական սահմանների վրա, ինչպիսիք կարող էին հանդես գալ միայն Արաքս գետը արևելքում, և Ճորժի գետը՝ արևմուտքում, որոնց հասնելու համար Ռուսաստանը 19-րդ դարի առաջին կեսում նախաձեռնեց մի շարք մարտական գործողություններ:

Առավելապես ժամանակի հրամայականից և հանգամանքներից, քան պատմական առաքելության գիտակցմամբ կամ տեսական մեկ այլ հիմնավորումից բխող Ռուսաստանի արտաքին քաղաքականության ռազմական բաղադրիչը և հատկապես դրանով պայմանավորված որոշ հաջողություններ իրենց որոշակի ազդեցությունն ունեցան հետագայում այդ փորձի ընդհանրացման և արտաքին քաղաքականությանը վերաբերող տեսությունների ձևավորման վրա:

Բնականաբար, փորձը, որ ձեռք բերեց Ռուսաստանը «Հունական նախագրծի» և ռազմական մի շարք գործողությունների շրջանակներում, ժամանակի ըն-

թացքում որոշակի վերախմաստավորման և արժևորման ենթարկվեց Ռուսաստանում ձևավորվող հասարակագիտական դպրոցների շրջանակներում և առանձին մտածողների աշխատություններում: Բայց ոչ միայն և ոչ այդքան այդ փորձը դարձավ Ռուսաստանի արտաքին քաղաքականության վրա ազդող տեսական ուսմունքների և հոսանքների հիմք, որքան հիմնականում եվրոպական հասարակագիտության և առհասարակ՝ փիլիսոփայության շրջանակներում ձևավորված մի շարք ուղղություններ, որոնք ներթափանցեցին Ռուսաստան և դարձան այնպիսի հիմնահարցերի վերախմաստավորման տեսական աղբյուր, ինչպիսիք են ազգային ինքնությունը, պատմական անհրաժեշտությունն ու առաքելությունը և այլն: Բնականաբար, դրանք ուղղակի կամ անուղղակի իրենց ազդեցությունը թողեցին նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության վրա՝ ամփոփելով եղած փորձը և ուրվագծելով հետագա գործողությունների գլխավոր սկզբունքները:

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում աստիճանաբար սկսում է զարգանալ աշխարհագրական դետերմինիզմի ռուսական դպրոցը, որի ներկայացուցիչներն իրենց նշանակալի ներդրումն ունեցան Ռուսաստանի, որպես համաշխարհային քաղաքականության նշանակալի ներկայացուցչի տեղի ու դերի արժեվորման գործում:

Ռուսաստանում դեռևս 1871թ. Ն.Դանիլևսկու կողմից առաջին փորձերից է կատարվում գիտական դետերմինացիայի ենթարկել Ռուսաստանի հարաբերությունները ամբողջ աշխարհի հետ ընդհանրապես և Արևմտյան Եվրոպայի հետ՝ մասնավորապես: Իր վերլուծությունում, նա առաջարկում էր Ռուսաստանի գերիշխանության ներքո ստեղծել ուղղափառ համապատասխանական միություն, իսկ արևմտաեվրոպական երկրների՝ Ռուսաստանի նկատմամբ որդեգրած անհաշտ ընդդիմամարտիկի կեցվածքը հիմնավորում էր հիշյալ երկրների ռուսական տարածքներից առավելագույն օգուտներ ստանալու ձգտումներով, որոնք շատ հաճախ չեն ներդաշնակում իրենց հնարավորությունների հետ<sup>80</sup>: Նա Ռուսաստանի և արևմտաեվրոպական երկրների միջև առկա անհաշտելիությունը առավելապես պայմանավորում էր հոգեբանական խանդի բաղադրյալով:

Բավական է նշել այն, որ ուղղափառ համապատասխանական միությունը, որն ընդգրկելու էր նաև արևմտաեվրոպական երկրների որոշակի ազդեցությունում գտնվող արևելաեվրոպական երկրներին՝ չէր կարող չառաջացնել շահերի բախում և հակակրանքի մթնոլորտի առկայություն միմյանց նկատմամբ:

Դանիլևսկու տեսական մոտեցումները Ռուսաստանի և Եվրոպայի փոխհարաբերությունների վերաբերյալ հանգում էին նրան, որ Ռուսաստանը չի կարող անմասն մնալ եվրոպական գործընթացներից, բայց միաժամանակ չմիջամբողջապես տեղավ՝ պարտավոր է գործընթացներին նայել սեփական շահերի դիտակետից<sup>81</sup>:

Նետագայում ժամանակը հաստատեց, որ սլավոնական ժողովուրդներն առանձնակի ցանկություն էլ չունեին ռուսական կայսրության մասը կազմելու, ինչի հիմնավորումը Ն.Դանիլևսկին տվել է՝ համակեցության (քաղաքակրթական) տիպերի անհամատեղելիության տեսակետից: Նա կարծում էր, որ քաղաքակրթությունները կարող են բարգավաճել էթնիկական պլուրալիզմի առկայության

<sup>80</sup> *Данилевский Н.*, Россия и Европа, Санкт Петербург 1991, с., 51.

<sup>81</sup> Տե՛ս նույնը, էջ՝ 72:

դեպքում միայն, իսկ մշակութային կոռպորացիան համարում էր անհրաժեշտություն՝ «տիրապետության» պահպանման համար:

Այսպիսով, նա հանգում էր նրան, որ Ռուսաստանի ազդեցության ընդարձակման համար անհրաժեշտ է կիրառել քաղաքակրթական ընդհանրության մոդելը: Ուշագրավ է, որ Ն.Դանիլսկու ընկալումներում՝ համակեցության կերպի տարածատեղը՝ Կ.Պոլիս կենտրոնով, սփռվում էր Հեռավոր Արևելքից մինչև Էգեյան ծովի ափերը:

Կարելի է պնդել, որ մշակութային ընդարձակման ռազմավարությունն ամենաազդեցիկներից է՝ տարածքների «յուրացման» և ազդեցության տարածման գործում: Այստեղ տեղին է հիշատակել գերմանացի նշանավոր գիտնական Ֆ. Ռատցեյլին, որն իրավամբ կարծում էր, թե պետության պատմական սահմանների ընդարձակումը տեղի է ունենում նաև վերջինիս մշակութային ընդարձակմանը զուգընթաց:

Այսպիսով, պանսլավոնիզմի գաղափարախոս-ներկայացուցիչն եզրակացնում էր, որ Ռուսաստանն աշխարհասփյուռ պետություն է և իր տիրապետությունը պիտի տարածի ու հաստատի Ռուսաստանի հետ պատմական և քաղաքակրթական ընդհանրություններ ունեցող երկրներում:

Ռուսաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգային մոտեցումների ձևավորման ասպարեզում իր ծանրակշիռ ներդրումով է աչքի ընկնում մաթեմատիկոս, աշխարհագետ Վենիամին Պյոտրի Սեմյոնով-Տյան-Շանսկին, որը քաղաքական դետերմինիզմը մեկնաբանում է ռուսակենտրոնության դիրքերից: Նա կարծում էր, որ Ռուսաստանի տարածքային ամբողջականության պահպանման և ամրապնդման համար անհրաժեշտ է խստիվ հետևել, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նույնիսկ միջամտել բնակչության տեղաբաշխման և բնակեցման խտության համամասնության պահպանմանը, ինչի կենսակոչման առաջնային նախապայման նա համարում էր կենսաապահովման անհրաժեշտ ենթակառուցյների զարգացման ծրագրերի իրագործումը:

Նա առաջարկում էր պետության մայրաքաղաքը տեղափոխել Եկատերինբուրգ, քանզի այն գտնվում է ռուսական պետության աշխարհագրական կենտրոնում, իսկ Ռուսաստանի ասիական տիրույթներում նա առաջարկում էր ստեղծել արագ զարգացող տնտեսական և մշակութային «անկլավներ»<sup>82</sup>:

Գիտնականը նաև կարծիք էր հայտնում, որ կյանքում գոյություն ունեն աշխարհագրական միավորի յուրացման միայն երկու իրական մեխանիզմներ՝ ներդրումն ու նվաճումը:

Թե ինչ էր ենթադրում Սեմյոնով-Տյան-Շանսկին՝ նվաճում ասելով, մեկնաբանության կարիք չունի, իսկ ներդրում ասելով՝ գիտնականն ի նկատի ուներ միախառնվող ռեսուրսի ներդրում, որի արդյունքում տվյալ տարածքը պիտի յուրացվեր տիտղոսակիր դարձած էթնոսի կողմից:

Ընդհանրապես համարվում է, որ Սեմյոնով-Տյան-Շանսկուն է պատկանում աշխարհագրական դետերմինիզմում մարդաբանական տեսության ներմուծումը, համաձայն որի տարածքների էթնիկական յուրացումը պիտի զուգորդվի տնտեսական յուրացմամբ:

---

<sup>82</sup> *Семенов-Тянь-Шанский В.*, О могущественном территориальном владении применительно к России, Санкт Петербург 1915, с., 442.

Հայեցակարգային մոտեցումների ձևավորման առումով նշանակալի ներդրումն է ունեցել նաև ռուս փիլիսոփա Իվան Իլյինը: Վերջինս համակարծիք է եղել Չելլենի այն մտքին, որ պետությունը կենդանի օրգանիզմ է, սակայն ընդարձակման հարցում պաշտպանել է ոչ թե տարածքների մեխանիկական, այլ բնականոն ինտեգրացիայի տեսակետը: Ի.Իլյինը զարգացրել է այն տեսակետը, որ Ռուսաստանը ստեղծվել է ոչ թե տարածքների «մեխանիկական» միավորման, այլ՝ բնականոն՝ «օրգանական» ինտեգրման շնորհիվ<sup>83</sup>:

Վերոգրյալ մտքին կարելի վերաբերվել որոշ վերապահումներով, քանզի հենց Ռուսաստանի պարագայում հողահավաքչությունը հիմնականում տեղի է ունեցել «մեխանիկական», այլ ոչ թե «օրգանական» ինտեգրման շնորհիվ: Ի.Իլյինը Ռուսաստանը բնութագրում էր որպես մեծ գետերի երկիր, որը սահմանակցում է տաք ջրերին, և դրանից ելնելով նա օրինաչափ էր համարում ռուսական տիրակալների ձգտումները «գրկվածին» հասնելու ուղղությամբ: Նա մատնանըշում էր, որ գերհսկա տերության չափերն ու դեպի ծով ելքի սահմանափակվածությունը չեն ներդաշնակում միմյանց և չեն նպաստում տերության կարգավիճակի պահպանմանն ու ամրապնդմանը: Նա աշխարհում խաղաղության պահպանման լավագույն միջոց էր համարում գերտերությունների միջև ուժերի հավասարակշռության պահպանությունը, ընդ որում նրանցից մեկը Ռուսաստանն էր՝ Եվրասիայի տիրակալամբ<sup>84</sup>:

Ի.Իլյինի վերլուծություններն իրենց ազդեցությունն են թողել Ռուսաստանի արտաքին քաղաքականության նպատակային ընկալումներում: Նրանք բնորոշ են ռուսական ամենատիրական տեսակին և հիմնականում կառուցված են «անհրաժեշտ է» սկզբունքի վրա, որում չեն ներկայացվում հիշյալի իրականացման իրատեսական մեխանիզմները, սակայն հստակորեն նշմարվում է «տաք ջրեր» ելումուտ ունենալու գաղափարը:

Այս համատեքստում անհնար է չխոսել «Եվրասիականության» մասին: Այն որպես գաղափար ռուսական իրականությունում երևան է եկել ռուս վտարանդիության շրջանակներում քսաներորդ դարի երկրորդ տասնամյակում, որի գաղափարախոսական հենքն էր կազմում հրաժարումն եվրոպական ինտեգրացիոն գործընթացներից ի նպաստ սեփական պատմության և մշակույթի յուրակերպության: Ըստ էության այս ուղղության հիմնական ներկայացուցիչներն են համարվում Ն.Տրուբեցկոյը, Պ.Սավիցկին և Ն.Ալեքսեևը: Տարբեր ժամանակաշրջաններում նրանց հետ համագործակցել և իրենց հայացքներն են կիսել ճանաչված այնպիսի գիտնականներ, ինչպիսիքն են Գ.Վերնադսկին, Պ.Սուվչինսկին, Ա.Կարտաշևը, Գ.Ֆլորովսկին, Պ.Առապովը և այլոք: Այս ուղղության պաշտոնական ձևավորումն ազդարարեց Տրուբեցկոյի, Սավիցկու, Ֆլորովսկու և Սուվչինսկու հեղինակած “Исход к Востоку. Предчувствия и свершения” ժողովածուի հրապարակումը, որում ներկայացվում էին նոր ուղղության հիմնադրությունները՝ կառուցված Ռուսաստանի բացառիկ լինելու գաղափարի վրա<sup>85</sup>:

«Եվրասիականության» առանձնահատկություններից էր հակա-արևմտականությունը: Նրանց մոտ աստիճանաբար զարգանում էր այն կարծիքը, որ եվրո-

<sup>83</sup> *Ильин И.*, Наши задачи. Собрание сочинений. Т. 2., Книга I., М., 1993, с., 297.

<sup>84</sup> Նույն տեղում, էջ՝ 326:

<sup>85</sup> Տե՛ս *Трубецкой Н., Савицкий П., Флоровский Г., Сувычский П.*, Исход к Востоку. Предчувствия и свершения. София 1921 г. <http://nevmenandr.net/eurasia/1921-isxod.php> (2010թ.)

պականացումը չարիք է, քանզի ենթադրում էր Ռուսաստանի ռոմանագերմանացում, որը հղի է ռուսական պատմական ինքնության կորստով:

Առաջնորդվելով այս սկզբունքով՝ Տրուբեցկոյը Պետրոս Մեծի քաղաքականությունը դիտարկում էր որպես ապագային, որը ծանր հարված էր հասցրել Ռուսաստանի ասիական համախմբմանը և որոշ առումով եվրոպականացրել էր երկիրը<sup>86</sup>:

Կարծիք կա, որ «Եվրասիականությունը» ծնունդ առավ արևմտականությանը հակադրվելու արդյունքում և դարձավ ռուսական պատմական նույնականության փնտրման մեթոդներից մեկն, ուր հիմնավորվում էր Ռուսաստանի բացառիկությանը՝ ելնելով նրա քաղաքակրթական և պատմական յուրակերպությունից:

«Եվրասիականության» ներկայացուցիչները պնդում էին, որ ռուսականը չի կարող պատկանել ոչ եվրոպական, ոչ էլ ասիական մշակութային ավանդույթներին և իր դրսևորումներում պարտավոր է լինել ինքնատիպ<sup>87</sup>: Դեռ ավելին, այդ ուղղության ներկայացուցիչները պնդում էին, որ Ռուսաստանը դատապարտված է ապրել և զարգանալ իր ինքնատիպ ուղով: Նույնիսկ կոչեր էին հնչում ռուսական մշակույթի բացառիկությունը ընդգծելու նպատակով այն հակադրել թե եվրոպական, և թե ասիական մշակույթներին<sup>88</sup>:

Գաղափարական բազմաթիվ հակադրությունների պատճառով «Եվրասիականությունը» պառակտվեց, իսկ քսաներորդ դարի երեսունական թվականներին նրա շարքերը լքել էին նույնիսկ վերջինի հիմնադիրներ համարվող Ն.Տրուբեցկոյը, Գ.Ֆլորովսկին և ուրիշներ: Սակայն ուշագրավն այն է, որ քսաներորդ դարի վերջում այդ գաղափարական հենքի գերակայմամբ Եվրասիականությունը վերածնվեց՝ վերածվելով յուրատիպ միավորով ուժի ՌԴ գերակայմամբ: 21-րդ դարի սկզբում Եվրասիականությունը կրկին պահանջված համարվեց ՌԴ կողմից և այս անգամ հարմարեցվեց դարաշրջանի նոր պահանջներից թերևս ամենակարևորին՝ ՌԴ անվտանգության սկզբունքին:

Խոսելով Ռուսաստանի արտաքին քաղաքականությունն ձևավորող հիմնական գաղափարական հիմնադրությունների վերաբերյալ, կարևոր է նշել, որ այն բազմաչափ է ու շատ ընդգրկուն: Ի տարբերություն ուժային և կոպիտ ներթափանցման, այն հիմնավորապես մոտիվացվում է պետական գերակա առաջնայնություններով և իր ներքին տրամաբանությամբ ուղղորդվում է նախ՝ վերահսկմամբ ու կառավարմամբ, ապա՝ մղումով ու հարկադրանքով, ինչպես նաև կախվածության և փոխկախվածության սկզբունքներով:

**Давид Апинян – Внешняя политика РФ в контексте идеологических концепций.** – В данной работе обсуждаются определённые идеологические и концептуальные подходы, которые оставили свой отпечаток на формирование внешней политики России.

**David Apinyan – Russian Foreign Policy in the context of ideological concepts.** – The paper discusses certain ideological and conceptual approaches that have left their mark on the formulation of Russia's foreign policy.

<sup>86</sup> *Трубецкой Н.*, Европа и человечество. Наследие Чингисхана., М., 2000., с., 29.

<sup>87</sup> Տե՛ս *Дугин А.*, Основы Евразийства., М., 2002.

<sup>88</sup> *Трубецкой Н.*, Европа и человечество. Наследие Чингисхана. М., 2000, с., 67.

## ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1912 - 1914թթ.)

### ՀԱՍՄԻԿ ՄԻՄՈՆՅԱՆ

1912 թվականն այն, կարելի է ասել, ճակատագրական տարին էր, որով նորից սկսվեց մեծ տերությունների քաղաքական սիրախաղը հայության նկատմամբ, որն ավարտվեց Արևմտյան Հայաստանի՝ իր բնիկ հայ տարրից վերջնականապես դատարկմամբ: Միրախաղն սկսողը դարձյալ Ռուսաստանն էր, որը Անգլիայի և Ֆրանսիայի հետ հայտնի ռազմաքաղաքական դաշինքը կազմած, արդեն գնում էր աշխարհի վերածննանը: Ռուսաստանն էր, որ վերստին կյանքի կոչեց հայոց բարեփոխումների խնդիրը՝ այն պարզ նպատակադրումով, որ կրկին իր կողմը թեքի հայերին Թուրքիայի հետ հնարավոր պատերազմում և նաև հայերի հարցն էլ, իբրև քրիստոնյա փոքրամասնության, հիմքերից մեկը ծառայեցնի Թուրքիայի հետ իր դարավոր խնդիրները լուծելու համար:

Հայկական բարենորոգումների խնդիրը հիմնականում կյանքի կոչվեց Կովկասում. ցարական ներշնչմամբ ոգևորելով հայերին, բայց նրանով տարվեցին նաև արևմտահայ հասարակական - քաղաքական շրջանակները, ինչպես նաև Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանը:

Առաջին քայլերը հայերին կրկին իր կողմը գրավելու համար ցարիզմը կատարեց Գևորգ 5-րդ Տփիսիսեցի կաթողիկոսի միջոցով: Մինչև այդ, 1912թ. սեպտեմբերի 19 - ին Թիֆլիսում հրավիրվում է մի ժողով հայ հասարակական - քաղաքական տարբեր շրջանակների մասնակցությամբ, որը որոշում է դիմել ռուսական կառավարությանը Արևմտյան Հայաստանի ազատագրման համար: Պարզ է, որ ներշնչող կողմը Վորոնցով - Դաշկովն էր: Դրան հաջորդում է կաթողիկոսի դիմումը փոխարքային՝ խնդրելու օգնություն արևմտահայության համար: «2 հոկտեմբերի 1912» թվագրված դիմումում կաթողիկոսը մասնավորապես գրում է. «Թուրքիայի անատոլիական վիլայեթներում և Կիլիկիայում հայերը անպատիժ կերպով ենթարկվում են անլուր հալածանքների. նրանց սպանում են, թալանում, նրանց կանանց ու աղջիկներին տանում են իրենց հարեմները և շատերին բռնությամբ իսլամացնում են: Հայոց պատրիարքը բազմիցս դիմել է Բարձր Դռանը արդարադատության և իր հոտի պաշտպանության համար, բայց ստանալով միայն փուչ խոստումներ՝ իր հայացքը իմ միջոցով հատում է ռուս մեծ ժողովրդին ու մեր մեծագոր թագավորին և նորին մեծությունից է սպասում պաշտպանություն և հովանավորություն...»<sup>89</sup>:

Ավելորդ համարելով նոր դիմումագրերի կամ աղերսագրերի մեջբերումները, մենք ուզում ենք ուշադրություն սևեռել մի կարևորագույն հարցի վրա՝ **ցարիզմը կաթողիկոսի միջոցով ցանկանում էր վերստին իր կողմը գրավել արևմտահայությանը, ինչը նշանակում է, որ արևելահայ ռուսամետ գործիչները իրենց դերն ունեցան 1912 - 14թթ. արևմտահայ քաղաքական միտքը դեպի Ռուսաստան ուղղորդելու համար:** Ընդ որում նա դա անում էր նաև այն մտավախությունից ելնելով, որ Եվրոպական տերությունները որպես Թուրքիայի դեմ խաղաքարտ կա-

<sup>89</sup> Հայերի ցեղապանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու **Մ. Գ. Անրսիսյանի** խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 283:



րող են իրենց ձեռքը վերցնել Հայկական հարցի առաջ քաշելու «պարտականությունը», ինչը երևում է Վորոնցով - Դաշկովի ցարին հասցեագրած մի նամակից, ուր նա շեշտում է, որ այդ հարցում եվրոպական միջամտությունը դառնում է անխուսափելի և խորհուրդ է տալիս շտապել, «որպեսզի նախաձեռնությունը ձեռքից դուրս չընկնի»: Ըստ նրա, հակառակ դեպքում Ռուսաստանի հեղինակությանը մեծ հարված կհասցվի և կստիպի հայերին «մեկընդմիջտ ձեռք ձեռք քաշել ցարի հետ հույսերը կապելուց» և որոնել այլ պաշտպանություն, այն դեպքում, երբ Ռուսաստանին անհրաժեշտ էր ունենալ «մի համակիր ժողովուրդ այն մարզերում, որոնք իրերի ներկա պայմաններում կամա թե ակամա հեշտությամբ կարող են գտնվել մեր ռազմական գործողությունների թատերաբեմում»<sup>90</sup>:

Ինչպես համոզվում ենք՝ ցարիզմի համար կարևորը ոչ թե հայերի փրկությունն էր, այլ նրանց հոգուտ իր քաղաքական շահերի օգտագործումը: Սակայն այս հանգամանքն այնքան էլ խորությամբ չեն ըմբռնում ոչ կաթողիկոսը, ոչ Կ. Պոլսի պատրիարքը և ոչ էլ հայ կուսակցական ու հասարակական - քաղաքական այլ շրջանակներ: Մինչև արևմտահայ քաղաքական մտքի ուղղվածություններին անդրադառնալը, որոնք հիմնականում ընթանում էին արևելահայ քաղաքական մտքի մատնանշած ուղով, ավելորդ չենք համարում մատնանշել, որ շուտով ցարիզմը Թիֆլիսում ստեղծեց իր քաղաքական նպատակներն ընդհանրության հասցնելու հայկական քաղաքական մարմինը՝ հանձին Ազգային Բյուրոյի և Եվրոպայում Հայկական հարցին հետամուտ Հայոց Ազգային Պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: Մրանք բազմիցս քննարկված թեմաներ են, որոնց ստեղծման մանրամասներին հարկ չենք համարում անդրադառնալ: Պարզապես ուզում ենք շեշտել, որ Թուրքիայի հետ հնարավոր պատերազմից առաջ սրանք նախաքայլեր էին ցարական իշխանությունների կողմից հայությանը դեպի իր քաղաքական լաստը կողմնորոշելու համար: Իսկ հայությունը գնաց դրան՝ փոխանակ ընտրելու չեզոքության և դեպքերի ընթացքին լուռ հետևելու մարտավարությունը: Մրանում համոզվելու համար բավական է մեջբերել 1912թ. նոյեմբերին Թիֆլիսում տեղի ունեցած համագումարում ստեղծված Ազգային Բյուրոյի որոշումներից (մինչև այդ, դեռևս հոկտեմբերին, ստեղծվել էր յոթ հոգուց բաղկացած ժամանակավոր Բյուրո), ուր մասնավորապես կարդում ենք. «Բյուրոյի քաղաքականությունը կարելի է ամփոփել հետևյալ հակիրճ բանաձևերով. **մեր գործունեությունը հարմարեցնել ռուսաց քաղաքականությանը, ունենալ պահանջների մի ծրագիր միայն, համարձակ և ներդաշնակ գործունեություն առաջ բերել բոլոր կենտրոններում**»<sup>91</sup> (Ընդգծումը մերն է - Յ. Ս.):

Ինչպես պարզ է հատկապես մեր ընդգծած տողերից, այս նորաստեղծ մարմինն ամբողջությամբ դառնում էր ռուսական քաղաքականության կցորդը: Այս փաստաթղթում մի հետաքրքիր տեղեկություն կա, որը վերաբերվում է արևմտահայերի ինքնապաշտպանության հարցի նկատմամբ ցարիզմի ունեցած վերաբերմունքին: Այնտեղից իմանում ենք, որ Բյուրոն ինքնապաշտպանության գործը պետք է ձեռնարկեր միայն ռուսական կառավարության օժանդակությամբ և գիտությամբ: Իսկ այդ առումով հարցումներին կառավարությունը պատասխանել է, թե «**կառավարությունը ամեն միջոց ձեռք է առել հայերի ապահովության համար և որ ուրեմն պետք չի տեսնում օժանդակելու ինքնապաշտպանության**»<sup>92</sup>:

<sup>90</sup> Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ 6, Երևան, 1981, էջ 520 - 521:

<sup>91</sup> Տես Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ. 222, ց. 1., գ. 1, թ. 28:

<sup>92</sup> Նույն տեղում, փաստաթուղթն ամբողջությամբ տես թթ. 25 - 28:

Ինչպես համոզվում ենք, Ռուսաստանին ամեննին ձեռնտու չէր արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպումը, որը բնականաբար չէր բխում նրա շահերից, իսկ նրա ձեռնարկած միջոցառումները Թուրքիային բարենորոգումների պարտադրումն էր, որոնց վերաբերյալ ռուսական նախագիծը վերջինս ընդունեց 1914թ. հունվարի 26 - ին և որը հնարավոր չեղավ կյանքի կոչել:

Արևմտահայերի հոգևոր, ինչպես նաև քաղաքական մարմինը՝ Կ. Պոլսի Պատրիարքարանը, թեպետ զգուշությամբ, սակայն դարձյալ կողմնորոշվում էր դեպի Ռուսաստանը և նրա դաշնակիցները: Այսպես, Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսին հասցեագրված իր 1913թ. մայիսի 20 - նամակում պատրիարք Հովհաննես Արշարունին մասնավորապես գրում էր. «Հալեպից մինչև Վանայ լճի ափը հայ ժողովուրդը ապրում է վաղվա օրվա հանդեպ մշտական վախի մեջ: Նորից հայ ընտանիքների երկար շարանները ձգվում են դեպի սահմանը: Հայերն ստիպված են կտրել այն թելերը, որոնցով պատմության դարերը և համախա աշխատանքի դարերը իրենց կապել են այս հողի հետ:

Ի նկատի ունենալով, որ հայերի այսպիսի վիճակը դարձել է անտանելի, ինչպես և՛ մեր դեմարշների ապարդյունությունը, պատրիարքը չկորցնելով Հայաստանում բարենորոգումների հարցի լուծման հույսը՝ դրա հետ միասին Ձերդ գերագանցությանը խնդրում է ձեռք առնել այնպիսի միջոցներ, ինչպիսիք դուք տեղին կհամարեք, որպեսզի վերացվի Անատոլիայում զանգվածային անխուսափելի կոտորածի վտանգը...»<sup>93</sup>:

Հարկավ, այս և նմանատիպ այլ գրությունները պետք է պայմանավորել նաև Պատրիարքարանի դրության անորոշությամբ և ստեղծված իրավիճակում ելքեր գտնելու անհրաժեշտությամբ, բայց և այնպես անհրաժեշտ էր հաշվի առնել թե ռուսական և թե եվրոպական տերությունների հայության նկատմամբ որդեգրած դիրքորոշումների պատմական փորձը:

Երիտթուրքերն իրենց հերթին ցանկանում էին արևմտահայ ղեկավար ուժերին հեռու պահել դեպի մեծ տերություններ հակվածությունից: Սակայն ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ քաղաքական մտքի ներկայացուցիչները չեն հավատում նրանց առաջարկներին: Թալեաթը, Նաջի բեյը, հայագրի իթթի-հաթական Պ. Հալաճյանի միջոցով ցանկանում էին ստիպել Պատրիարքարանին՝ իրենց հետ բանակցություններ սկսելու «եւ այսպիսով պետութեանց միջամտութիւնը արգելելու»<sup>94</sup>, զանազան խոստումներ շոյալելով: Պետք է նշել, որ տվյալ իրավիճակում Թուրքական իշխանությունների հետ բանակցելու հակվածություն էին դրսևորում արևմտահայ այն գործիչները, որոնք ճանաչված էին որպես օտար տերությունների հայկական խնդրին միջամտելու հակառակորդներ: Դրանք էին նախկին պատրիարք Մաղաթիա Օրմանյանը, «Մաբահ» թերթի խմբագիր Տիրան Քելեկյանը և Գ. Գյուլպենկյանը: Չի կարելի պնդել, թե այս գործիչները սխալ էին, երբ հակված էին բարենորոգումների թուրքական նախագծին, անշուշտ, անելով իրենց առաջարկները: Սակայն, ընդհանուր հակվածությունը Ռուսաստանի և Եվրոպական տերությունների կողմն էր: Այդ հաստատում է նաև Ս. Վրացյանը՝ գրելով հետևյալը. «Երբ 1912 - ին սկսուեց թիւրք - բալկանեան պատերազմը, հայերի մեջ այլևս հաւատ ու խանդավառութիւն չէր մնացել: Պատրարքարան, կուսակցութիւններ, հանրային կարծիքը, բովանդակ ժողովուրդը եկել էին այն համոզման, որ առանց դրսի միջամտութեան հայերի վիճակը չի բարեփոխի: Այս

<sup>93</sup> Հայերի ցեղապանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 316:

<sup>94</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 107, թ. 16:

տրամադրութեան հետեւանքով էր, որ պատերազմի ընթացքին բուլգարահայու-թիւնը կազմակերպեց Թիւրքիայի դէմ Անդրանիկի կամաւորական խումբը»<sup>95</sup>:

Այսպիսով, արևմտահայ քաղաքական դեկլարանտները որդեգրել էին հակա-թուրքական կեցվածք:

Անհրաժեշտ է շեշտել, որ այս առումով միավորված էին և Պատրիարքա-րանը և Դաշնակցություն կուսակցությունը, որը դեռևս 1912թ. մայիսի 5 - ին խզել էր իր հարաբերությունները իթթիհատի հետ<sup>96</sup>:

Բավական է նշել, որ 1912թ. դեկտեմբերի 21 - ին տեղի է ունենում Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովի դռնփակ նիստ, որի ատենապետ Ստ. Գարայանը և դաշնակցական գործիչ Վահան Փափազյանը (Կոմս) հայտարարում են, թե «այ-լևս սպառած են բոլոր միջոցները, ու քողարկուած ձեռով առաջադրեցին հայ ժո-ղովրդի այսուհետեւ հետեւելիք ուղեգիծը, այսինքն նորէն միջազգային սեղանի վրայ հանել **հայկական հարցը**...»<sup>97</sup>:

Այս նիստից հետո Պատրիարքարանի խառը ժողովն ընտրում է Հայկական հարցը հետապնդելու կոչված քաղաքական մի մարմին՝ նրան տալով լիազո-րություններ՝ արտաքին բանակցությունների համար՝ կապված բարենորոգում-ների խնդրի հետ: Այս մարմինը կոչվում է Ապահովության հանձնաժողով, որի մեջ մտնում են Եղիշե արքեպ. Դուրյանը (նախագահ), վարդապետ Պալաքյանը, Ստեփան Գարայանը, Ոսկան Մարտիկյանը, Լևոն Տեմիրճիպաշյանը, Մուրադ Պոյաճյանը և Վահան Փափազյանը: Ստացվում է, որ «թե արևմտահայ և թե արե-վելահայ հոգևոր և քաղաքական գործիչները իրարից անկախ բռնել էին նույն ճա-նապարհը»<sup>98</sup>: Այսինքն, ամբողջովին շրջադարձ էին կատարել դեպի մեծ տերու-թյունները:

Քանի որ Դաշնակցության շատ արևմտահայ գործիչներ նույնպես ներքաշ-ված էին ռուսական ծրագրերի մեջ իթթիհատական պարագլուխները Պ. Հալա-ճեանի միջոցով փորձում են սիրաշահել նրանց և կանխել նրանց կողմնորոշումը դեպի Արևմուտք և Ռուսաստան: Նույն Պ. Հալաճյանի բնակարանում տեղի է ու-նենում Կ. Պոլսի ՀՅԴ մարմնի ներկայացուցիչների հետ: Իթթիհատականներից ներկա էին Թալեաթը, Խալիլը և Միդիաս Շյուքրին, իսկ Դաշնակցության կող-մից՝ Ակնունին, Վարդգեսը և Արմեն Գարոն: Երիտթուրքերն վստահեցնում են. ա) Հավատ ընծայել իրենց բարյացակամությանը, բ) իրենք հայաբնակ նահանգ-ներում բարեկարգումներ կնտցնեն, գ) պետք չէ դառնալ օտարների ձեռքին խա-ղալիք, քանի որ իրենք նույն հայրենիքի գավակներն են և Պողոս Նուբար փաշան ռուսների ձեռքի խաղալիքն է: Նրանք գտնում են, որ կաթողիկոսի ռուսների դրդամամբ գործին միջամտելն ապօրինի է և որ «Պատրիարքարանը Թյուրքիո մեջ է և ոչ մեկ պետութիւն ձեզի չէ տուած այն իրաւունքները, որ մենք տուած ենք հան-ձին ձեր Ազգային Սահմանադրութեան»<sup>99</sup>:

Սակայն, այս առաջարկությունները չեն ընդունվում, որի սխալականութ-յունը հետագայում են ըմբռնում: Ինքը Վ. Փափազյանը խոստովանում է, որ 1912 - 1914թթ. երիտթուրքերի դէմ որդեգրած քաղաքականությունը «անըմբռնելի յան-դուգնութիւն մըն էր», «որուն արդիւնքը վայելեցինք 3 տարի վերջը»:

<sup>95</sup> *Միմնն Վրացեան*, Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրուք, 1958, էջ 4:

<sup>96</sup> Տեւ Հ. Յ. Դաշնակցութեան յոթերորդ ընդհանուր ժողովի որոշումները, 1913, էջ 7:

<sup>97</sup> Վ. Փափազեան, Իմ յուշերը, հ. երկրորդ, Պէյրուք, 1952, էջ 182:

<sup>98</sup> *Աշոտ Ներսիսյան*, Հայկական հարցի վերաբացումը 1912 - 14թթ., տեւ «Նորք», թիվ 3, Երևան, 2006, էջ 153:

<sup>99</sup> Վ. Փափազեան, նշվ. աշխ, էջ 191:

Մեկ ուրիշ հանդիպում էլ տեղի է ունենում այդ օրերին Սկյուտարի զինվորական կառավարիչ Ջեմալ փաշայի հետ, որին ներկա էին Արմեն Գարոն, Ակնունին, Վարդգեսը, Հրաչ Թիրաքյանը, Վահագն Տաթևյանը և Վահան Փափազյանը: Ջեմալը մեղմորեն նույն հորդորն է անում հայերին և հասկացնում, որ «Օտարները իրենց շահերուն համար պիտի ջանան շահագործել մեր վիճակը, բայց դուք պիտի հասկանաք վերջապես, որ մենք չենք կրնար հաշտուիլ այն դիրքին հետ, որ դուք եք բռնած, հետեւանքները անդարմանելի կրնան դառնալ...»<sup>100</sup>:

Իսկապես հետևանքները անդարմանելի եղան, քանի որ թե արևելահայ և թե արևմտահայ քաղաքական ղեկավարները մեծ տերությունների խոստումներով ջերմեռանդորեն տարվելով, նորից ընտրում էին մի ճանապարհ, որի վերջին կանգառը խաբկանքն էր: Մա չի նշանակում, թե մենք արդարացնում ենք թուրքերին, քանզի եթե բարվոք լիներ արևմտահայության կացությունը, ապա՝ հայության ղեկավարները չէին գնա նման քայլերի: Բայց չէ որ գրեթե ամբողջ 19 - րդ դարում խաբվելու փորձը պետք է ստիպեր գեթ չեզոք դիրք գրավելու: Այնպես, որ միանգամայն ճիշտ է Լևոն Չորմիսյանը, երբ գրում է, որ թուրքերը «խորհուրդ տվին, թելադրեցին, որ հայերը հրաժարին Եվրոպական պետությանց պաշտպանութենեն եւ իրենց հետ համախորհուրդ լուծումներ գտնեն Հայկական խնդրին: Հայերը վստահություն չէին կրնար ունենալ եւ չունեցան թուրքերու վրա: Ինչպես հին թուրքերը, նորերն էլ ցույց տուած էին Ըումելիի և Արաբիո դեպքերուն ընթացքին փոքրամասնություններու հանդէպ իրենց զգացումները եւ քաղաքականությունը: Ընդհանուր օրենք է նայպես, որ որևէ պետություն իր պարտության եւ տկարության պահուն միայն կը հաշտվի սա կամ նա քաղաքական զիջումին: Հայ ղեկավարները ամենեն նպաստավոր եւ հարմար քաղաքական պահը կը նկատեին թուրքերուն պարտությունը: Նման պատեհութենե օգտվիլ ուզողը պարտավոր է հաշվի առնել նաև հակառակորդին հավանական վերաբերումը, երբ պայմանները ավելի նպաստավոր դարձվածք մը ստանան իր հանդէպ: Պարտավոր է անոր հավանական վրիժառության, քինախնդրության եւ ատելության դեմ պահպանողական որոշ միջոցներ ապահովել: Մեկ խոսքով պարտավոր է նժարի մեջ դնել անպատեհությունները իր առած քայլին եւ նախազգուշական միջոցներ ձեռք առնել»<sup>101</sup>:

Ամեն ինչ տեղին է ասված և նոր մեկնաբանությունների կարիք չկա:

Մենք նպատակահարմար չենք համարում, թե Թուրքիայի հայկական նահանգներում քաղաքական ղեկավարները ինչպիսի դիրքորոշում էին բռնել մեծ տերությունների նպատամբ, քանզի չնչին բացառություններով նրանք ընդունում էին Կաթողիկոսի, Պատրիարքի և Դաշնակցության դիրքորոշումները: Դաշնակցության պարագայում պետք է պնդել, որ նա թեպես իր յոթերորդ ընդիժողովում, որը գումարվեց 1913թ. օգոստոսին Էրզրումում ընդունեց ճիշտ որոշում, այն է՝ «Քաղաքական բարդութիւններու առեն՝ համախորհուրդ ընկերվարական միւս կուսակցութիւններուն՝ օրինական բոլոր հնարաւոր միջոցներով կանխել զինուած ընդհարումները, իսկ պատերազմի պարագային ամէն քաղաքացի կը կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնը իր պետութեան հանդէպ»<sup>102</sup>, սակայն գործնականում շեղվեց այն իրագործելու ուղուց՝ հավատ ընծայելով ցարական խոստումներին:

Ինչ վերաբերվում է հնչակյաններին, ապա ինչպես Դաշնակցության պարագայում նրանց համար էլ կարելի է բնդել, որ նրանց թե արևելահայ և թե արև-

<sup>100</sup> Նույն տեղում, էջ 192:

<sup>101</sup> **Լևոն Չորմիսյան**, Կուսակցութիւնները, Երևան, 1995, էջ 63 - 64:

<sup>102</sup> ՀԱԱ, ֆ. 1457, ց.1, գ. 81ա, թ. 3:

մտահայ ներկայացուցիչները առաջնորդվել են մեկ քաղաքական գծով: Հետսահմանադրության շրջանում նրանք առաջ էին քաշում Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրը, իսկ Հայկական հարցի վերաբացման շրջանում կարծես թե ընդհանուր հակվածությունը մեծ տերությունների կողմն էր:

Այդ երևում է 1913 թ. հունվարի 30-ին Փարիզում Սոցիալ Դեմոկրատ հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության եվրոպական մեծ պետություններին ուղղված կոչից, ու նշվում է, որ որ Օսմանյան կայսրությունում «ահավոր ճնշումներն ու կոտորածները դարձել են ծրագրված ամառական քաղաքականություն, որին դիմել են սուլթաններն ու ամեն անգամ, երբ ուզեցել են ոչնչացնել իրենց իշխանութեան տակ հեծեծող այս կամ այն քրիստոնեայ ժողովուրդին»<sup>103</sup>:

Կոչը միաժամանակ հորդոր է «քաղաքակիրթ Եվրոպային»՝ սատարելու ազատության և առաջադիմության ձգտող հայ ժողովրդին: Կոչում առաջ էր քաշված բարենորոգումների իրականացման և Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրը: Փաստորեն, հնչակյանները նույնպես որդեգրել են այն քաղաքական կուրսը, որին հետամուտ էին վերոհիշյալ հոգևոր և քաղաքական գործիչները:

Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է հետևյալ եզրակացություններին հանգել.

1. 1912թ. Բալկանյան պատերազմի սկսումով արևմտահայ ղեկավար ուժերը կրկին կողմնորոշվում են դեպի մեծ տերությունները և մասնավորապես Ռուսաստանը:

2. Այս առումով նրանց և արևելահայ քաղաքական ղեկավարների միջև տարբերություն չկար:

3. Երիտթուրքերը նման կողմնորոշումը համարում էին դավաճանություն թուրքիայի նկատմամբ, որը առիթներից մեկն հանդիսացավ արևմտահայության ցեղասպանության համար Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

**Асмик Симонян – Восточноармянская политическая идеология в период поднятия Армянского Вопроса (1912 – 1914гг.).** – Статья посвящена позиции восточноармянских политических кругов в период переоткрытия Армянского Вопроса. В ней показано, что Армянский Вопрос заново призвали к жизни великие державы, исходя из своих политических интересов. Армянская Резиденция католикоса Константинополя, армянские политические партии были заинтересованы вопросом преобразований, надеясь, что на этот раз он будет иметь благоприятный исход. Между восточноармянскими и западноармянскими политическими кругами не было разногласий относительно выбранной позиции.

**Hasmik Simonyan – The Western Armenian political idea in the period of reopening of the Armenian Question (1912 - 1914).** – The article is devoted to the position of Western Armenian political limits in the reopening period of the Armenian Question. It is shown in the article that the Armenian Question was again brought to life by great countries proceeding from their political parties were busy remaking, hoping that this time it will be solved favourably. There was no difference between Eastern and Western political limits in the sense of position.

<sup>103</sup> Հիսնամեակ սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան, Ֆրեզնո, 1938, էջ 265-267:

**ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ՎՐԻԺԱՌՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԺԻ ՈՐՈՇ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ  
ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ Փ. ԲՈՒՉԱՆԴԻ  
«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿՈՒՄ**

**ՌԱՖԻԿ ԼԱՀԱՊԵՏՅԱՆ**

Փավստոս Բուզանդը բավականին ակնարկներ ունի ազգակցական համակարգի վերաբերյալ: Նա ազգակցությունը հիշատակում է **ազգ ու տակ, տոհմ, ցեղ, սերունդ** եզրույթներով: Հայոց մարդպետն ասելով Տարոնի հոգևորականությանը՝ զայրացած էր, որ Աշտիշատի գեղեցկությունը նրանք են վայելում: Այդ պատճառով լուտանք է թափում Տրդատ թագավորի և ողջ ու մեռած Արշակունի «ազգի և տակի և տոհմի» վրա, աշխարհաբար թարգմանությամբ՝ «ցեղի և արմատի» վրա (IV դար., գլ. ԺԴ, 180-181): Արշակ II արքայի գործած անօրինությունները նկատի ունենալով՝ պատմիչը բերում է Ներսես Մեծի խարազանող խոսքերը՝ ուղղված Արշակ II-ին. «Դուք Արշակունյաց ցեղ... կկործանվեք» [IV դար., գլ. ԺԵ, էջ 189]: Կամ՝ Պարսից Շապուհ թագավորը նախատինք (ուզեց) հասցնել Արշակունյաց ազգին» [IV դար., գլ. ԾԵ, էջ 269]: Մեկ այլ առիթով էլ հիշատակում է **տոհմ** տերմինը, բայց հետավոր ազգական նկատի ունենալով: Այդպես, Հայոց երկրի վրա արշաված Ալանայոզան գորավարը, որ ազգությամբ «Պահլավ էր, Արշակունիների տոհմից» [IV դար., գլ. ԼԻ, էջ 237]: Վարազդատ արքան՝ «Արշակունի տոհմից», իսկ նրա դայակ և ուսուցիչ Բատը՝ Սահառունյաց տոհմից» հիշատակված է Փ. Բուզանդի երկում: Նույն կերպ՝ Մանվել գորավարը՝ Արտաշեսի որդին՝ Մամիկոնյան տոհմից: Վերջինս պատգամ էր ուղարկում Վարազդատ թագավորին և ասում. «Մենք բոլոր տոհմով հին ժամանակներից ի վեր հավատարմությամբ ծառայել ենք ձեզ Արշակունիներիդ, մեր կյանքը զոհել ենք ձեզ համար, ապրել ու մեռել ենք ձեզ համար: Մեր բոլորի հին նախնիքը պատերազմների մեջ ընկան ձեզ համար. Վասակը, Մուշեղի հայրը, կորավ Արշակ թագավորի համար, և մենք միշտ աշխատել ենք, չարչարվել ենք **ձեր ցեղի** թագավորության համար» [V դար. գլ. ԼԵ, էջ 367]:

«Վատանշան Մերուժանը, որ Հայոց աշխարհից էր, Արծրունյաց տոհմից էր» [IV դար. գլ. ԼԱ, էջ 231], իսկ մեկ այլ տեղ Մերուժանին ներկայացնում է «Արծրունյաց ցեղից» [IV դար., գլ. ԻԳ, էջ 219], սպարապետ Վասակին՝ Մամիկոնյան տոհմից» [IV դար., գլ. ԺԶ, էջ 197]: Հայոց Վարազդատ արքայի մոտ, որին պատմիչը ներկայացնում է «Արշակունի տոհմից», հավաքվեցին ժողովի «Հայոց մեծամեծների ու նախարարների բոլոր տոհմերը» [V դար., գլ. ԼԴ, էջ 357]: VI դարության սկզբբուն էլ հիշատակված է Մանվել գորավարի մահից հետո Հայոց թագավորի ընտրությունը «Արշակունի թագավորների տոհմից մի մանուկ Խոսրով անունով մեկի, որի գլխին թագ են կապում և նրան կին է տրվում պարսից արքայի քույր Զրվանդուխտը» [VI դար., էջ 399]:

Մեկ այլ առիթով էլ գրում է. «Որք էին տոհմք և ազգկք աշխարհակերք աշխարհավերք ժանդագործ քրմացն»<sup>104</sup>: Սրանից հետևում է, որ վաղ միջնադարյան

<sup>104</sup> Տե՛ս *Փավստոս Բուզանդացու*, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832, էջ 8:

գրականության մեջ **ազգ, տոհմ, ազգուտակ, ազգատոհմ** տերմիններն ունեցել են միևնույն իմաստը: Շատ հաճախ այդ տերմինները գործածվել են իբրև **հոմանիշներ**<sup>105</sup>՝ արենակցական ընտանիքների մերձավոր կապերով և որոշակի փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով շաղկապված անձանց որոշակի շրջան ներկայացնելով<sup>105</sup>: **Ազգուտակ** տերմինը պատմիչը գործածել է իբրև **ազգականություն**, բոլոր **ազգականների ամբողջություն**: Նույն կերպ՝ պատմիչը **տոհմ** տերմինը ներկայացրել է որպես՝ մի նախահորից սերված մարդկանց խումբ՝ իրար հետ կապված արյունակցական կապերով: **Ազգ, ազգատոհմ, սերունդ**, որոշ դեպքերում նաև՝ նահապետի անունով կոչվող առանձին նախարարություն:

Հայկական բառարաններում ևս «տոհմ» և «ազգ» բառերի իմաստներում էական տարբերություններ չկան: Մտ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում գրված է. «Ազգ նշանակում է տոհմ, գերդաստան, տուն, որի բոլոր անդամներն իրար հետ կապված են արյան կապով»<sup>106</sup>: Փավստոս Բուզանդը գործածել է նաև «ցեղ» տերմինը որպես «ազգ»-ին հոմանիշ, բայց արյունակիցների ավելի հեռավոր ազգակցությունը նկատի ունենալով: Արշակ թագավորը ժողովի մասնակիցներին թվարկելիս՝ գրում է. «Ժողովի գումարվեցին նախարարական ցեղերի ու տոհմերի մեծամեծ նախարարները...»: Երբ Վաչե գորավարը Հայոց Խոսրով թագավորին բերում է մասքութների Սանեսան արքայի գլուխը, Խոսրով արքան տեսնելով՝ «սկսեց լալ ու ասել «Իմ եղբայրն էր, Արշակունի ցեղից» [III դպր., գլ. Է, էջ 31]: Ըստ պատմիչի մասքութների թագավոր Սանեսանը և հայոց արքա Արշակը «նույն ծագումն ունենին, միևնույն տոհմից էին» [III դպր., գլ. Զ, էջ 27]: Մեկ այլ տեղ նրանց «ազգակից», անգամ եղբայրներ է անվանում. «Եվ հայոց Խոսրով թագավորը խույս տվեց իր եղբորից, այսինքն մասքութների Սանեսան թագավորից» [III դպր., գլ. Է, էջ 29]: «Եղբայր» բառը Փավստոսը հաճախ է գործածում ավելի հեռավոր արյունակից ազգականի նշանակությամբ: Այսպես. Սանեսանը երկու անգամ հիշատակված է Խոսրովի եղբայր, որովհետև նա ևս Խոսրովի նման Արշակունի է: «Նոցա (մասքութների Սանեսան թագավորի տոհմի) և հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր տոհմին բնութեան», աշխարհաբար թարգմանությամբ՝ «որովհետև նրանք (մասքութների թագավոր Սանեսանը) և հայոց թագավորները նույն ծագումն ունեին, միևնույն տոհմի էին» [III դպր., գլ. Զ, էջ 26-27]: Նույն կերպ պարսիկ գորավար Սուրեն Պահլավին ներկայացված է Արշակ թագավորի ազգակից, ազգական [IV դպր. գլ. ԼԳ, էջ 233]: Մանուել սպարապետը երկու անգամ հիշատակված է Մուշեղ սպարապետի եղբայր [V դպր., գլ. ԼԷ, էջ 366, 367], այնինչ հայտնի է նույն Փավստոսից, որ Մանուելի հայրն էր Արտաշեսը, իսկ Մուշեղի հայրը՝ Վասակ սպարապետը [էջ 266, 267]: Նույնպես և երբ Մամիկոնյան տոհմի կանայք տեսնում են Մերուժանի գլուխը՝ ավստասանքով ասում են. «Մակայն դա մեր եղբայրն է» [ V դպր., գլ. ԽԳ, էջ 388, 389], որովհետև Մերուժանի հայրը՝ Շավասպ Արծրունին, կին էր առել Մամիկոնյան տոհմից, ուրեմն և Մերուժանը Մամիկոնյան կանանց քեռորդին էր դառնում, բայց եղբայր էր անվանվում:

Փավստոսը ազգատոհմի ավագին անվանում է **նահապետ**. «Սյունյաց Անդրով նահապետ, Արշարունյաց նահապետ Արշավիր Կամսարական [III դպր., գլ.

<sup>105</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Ռ. Նահապետյան**, Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), Պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1912, էջ 18-24:

<sup>106</sup> Տե՛ս **Մտ. Մալխասյան**, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969, էջ 7:

ԻԱ էջ 87] և այլն: Մեկ այլ առիթով Հայոց աշխարհից Հունաց Վաղես կայսրի մոտ Արշակ թագավորի կողմից ուղարկված պատվիրակության կազմը թվարկելիս նշում է. «Հայոց մեծ եպիսկոպոսապետ Ներսեսը և Մամիկոնյան ցեղի մեծ նահապետը Վարդան անունով, Հայոց մեծ ստրատելատ (սպարապետ) Վասակի եղբայրը, որոնք Արշակ թագավորի **դայակներն ու սնուցողներն** էին: Նրանց հետ Ռշտունյաց Մեհեն (Մեհենդակ) նահապետը, Անսացյաց Մեհառ (Մեհևան) նահապետը, Խոռխոռունյաց Գարջույլ Սախազ նահապետը, Սահառունյաց Մուշկ (Մուշկան) նահապետը, Գնթունյաց Դեմետ նահապետը, Բագենից Կիշկեն նահապետը, Հրսիձորի Սուրիկ նահապետը, Հաբուժենից Վրկեն նահապետը [IV դպր., գլ. ԺԱ, էջ 165], Դեհկան նահապետը, որն ի դեպ պարսկական գորավարներից էր՝ տոհմով ազգակից հայոց թագավորներին [IV դպր., գլ. ԼԲ, էջ 233]:

Պատմագրության մեջ կան թեև սուղ, բայց ցայտուն տեղեկություններ ազատոհմին հատուկ ինքնապաշտպանության և արյան վրիժառության պարտականության մասին: Ընդ որում վրիժառության հիմքում, ինչպես, օրինակ, Բուզանդի երկում, ընկած են եղել ոչ միայն բարոյական պատվասիրության, այլև քաղաքական դրդապատճառները: Նա գրում է, թե Մանավազյան և Որդունի նախարարական տների միջև քաղաքական նկատառումներով արյունահեղ կռիվներ են եղել: Միմյանց մեծապես վնասելուց բացի, նրանք ավերել են նաև հայոց արքունական տունը: Այդ պատճառով էլ Վաչե գորավարի միջոցով թագավորը (Խոսրով արքան) «երկու կողմն էլ ջարդում, ոչնչացնում է, երկու տոհմից ոչ մի արու կենդանի չի թողնում (Դպր. III, գլ. Դ., էջ 18-19): Այստեղ պատմիչը գործածում է «ազգ», «տոհմ», «ցեղ» տերմինները: «Ապա թագավորը սաստիկ զայրանալով նրանց՝ Մանավազյան և Որդունի նախարարական տոհմերի դեմ ուղարկեց Արտավազդի որդի Վաչեին, Մամիկոնյան տոհմի նահապետին, Հայոց սպարապետության տոհմից, իր գորքերի մեծ գորավարին, որ գնա, այդ երկու ցեղը, տոհմերը ոչնչացնե» [III դպր., գլ. Դ, էջ 19]: Այդ նույն հատվածում գրում է նաև, թե նախարարական տոհմերի բնակության նստավայրերը կոչվում էին այդ նույն տոհմերի անուններով: Այսպես. «Եվ (թագավորը) Աղբիանոս եպիսկոպոսին տվեց հոգուտ եկեղեցու Մանավազյանների ավանը և նրանց նահապետի բուն աթոռանիստ գյուղը (այսինքն) **Մանավազակերտը** յուր բոլոր սահմաններով և նրանց շուրջն եղած գավառակով՝ Եփրատ գետի կողմերում: Իսկ Որդունիների բուն գյուղը, որ կոչվում էր **Որդորու**, յուր բոլոր սահմաններով, որ գտնվում էր Բասանի երկրում, տվին Բասանի եպիսկոպոսին, որ Որդորու գյուղից էր» [էջ 19]: Փավստոս Բուզանդը հանդիմանելով Արշակ Երկրորդի հայ նախարարներից շատերին «սերհատելու»՝ սերունդներից զրկելու դաժան գործելակերպը, գրում է, թե «նախարարներից շատերին կոտորեց, շատերին սերհատեց և ժառանգ չթողեց, շատերի կավածները արքունիքը գրավեց: Կամսարականների տոհմերը, որոնք Շիրակի և Արշարունիքի տերերն էին՝ սերհատեց և այս գավառները Ոստանին միացրեց: Բայց հայոց գորավար և սպարապետ Վասակը նրանց ցեղից փախցնում ու փրկում է մի փոքրիկ մանուկ, Սպանդարատ անունով, որ հետո այդ գավառները ժառանգեց» [IV դպր., գլ. ԺԹ, էջ 203]:

Արյան վրիժառության սովորությունը էր պայմանավորված նաև Հայոց Մուշեղ գորավարի կողմից հոր՝ Հայոց սպարապետ Վասակի վրեժն առնելու համար պարսկական գորքից մոտ վեց հարյուր ավագների մորթելը, մորթերը հանելը ու խոտով լցնելը [V դպր., գլ. Բ, էջ 291]:



Փավստոս Բուզանդը բավական տեղ է հատկացրել նաև հայրենիքին դավաճանած նախարարական տների կործանման պատմությանը և հասարակական պատժի ձևերի կիրառմանը: 337 թ. Մծբինի դաշնագրի ժամկետը լրանալուն պես Հայաստան արշավեց Շապուհ Երկրորդը: Հակառակորդին միացավ նաև դավաճան նախարար Դատաբեն Բզնունին: Վանա լճի մոտ, Առեստի ճակատամարտում Վաչե Մամիկոնյանը ջախջախիչ պարտության մատնեց ոսոխին: Պատմիչի հիշատակմամբ դավաճան «Դատաբենին Վաչե սպարապետը և քաջ Վահան Ամատունին ձերբակալեցին և բերին Խոսրով Մեծ թագավորի առաջ. նրան քարկոծեցին իբրև մի մարդու, որ դավաճանել է իր աշխարհին և իր տիրոջ գնդին ու զորքերին» [III դպր., գլ. Ը, էջ 35]:

Այնուհետև Վաչե սպարապետը Աղթամար կղզում ոչնչացնում է «նրա տոհմը, կինը և որդիքը, ոչ էզ թողեց և ոչ արու: Այս կերպով այդ նախարարական տոհմը ոչնչացավ, և նրա տունը (կալվածները) արքունիքին հանձնվեցին» [նույն տեղում]: Նույն կերպ վարվեցին Աղձնյաց բղեշխի տոհմի նկատմամբ: Վերջինս փորձում էր դավաճանաբար պարսկական զորքերով անջատել Աղձնիքը թագավորությունից: Սակայն հայկական ուժերը հաղթեցին բղեշխին օգնության եկած պարսից զորքերին: Բակուր բղեշխի ամբողջ տոհմը սրի քաշվեց, սպանեցին բեղշխին՝ եղբայրների ու որդոց հետ: Բակուր բղեշխի որդիներից միայն մի պատանի կարողացավ փախնել ու ապաստան գտնել Հայոց Վաչե զորավարի մոտ, [III դպր., գլ. Թ, էջ 37]:

Պատմիչը դառնությամբ է խոսում Հայր մարդպետի մասին, որ արքա Տիրանի կողմից կոտորել է տալիս Ռշտունյաց և Արծրունյաց երկու ավագ տոհմերին. «որոնց առանց որևէ մեղքի ու հանցանքի միջեհան արին, նույնիսկ էգերին կոտորեցին: Այն ժամանակ միայն երկու երեխա էին թաքնվել, որոնց փախցրել, ապաստանել էին դայակների մոտ, Մեհենդակ Ռշտունու որդուն՝ Տաճատին, և Արծրունի Վաչեի որդուն՝ Շավասային, որոնք ծծկեր երեխաներ էին» [III դպր., գլ. ԺԸ, էջ 75]: Նրանք արքայի ցասումից փրկվեցին իրենց դիրքերից և պաշտոններից հրաժարվելու գնով հայոց զորքերի զորավարներ Մամիկոնյան Արտավազդի և Վասակի կողմից, որոնք «Ամեն մեկը մի երեխա անոթի տակ առնելով դուրս եկան [արքայի մոտից], զենքերը հանած, երեխաների համար մեռնելու պատրաստ: Որովհետև թեպետ նրանք սնուցանում էին թագավորի որդուն՝ Արշակին, բայց այդ ժամանակվա գործերից զվելով՝ թողին իրենց Արշակ սանին և արքունական բանակից հեռացան: ...Նրանք սնուցանեցին այս երկու երեխաներին, նրանց կնության տվեցին իրենց աղջիկները, որոնց այդ տոհմերը նորից սերվեցին» [նույն տեղում]:

Հեղինակը իր գրքի IV դպր. ԺԲ գլխում գրում է, որ եթե պետությունը ապաստանի երաշխիք է տալիս, ապա այդ անձին իրավունք չունեն հետապնդել և վրեժ լուծել: Ահա այդպիսի ապաստանի մասին մենք կարդում ենք դարձյալ Բուզանդի երկում: «Այս ժամանակ թագավորը իր համար մի դաստակերտ շինեց Հովիտ կոչված Կոզ գավառում և իր իշխանության բոլոր գավառներին հրաման ուղարկեց... «Եթե մեկը մեկին պարտք է, եթե մեկը ուրիշին մի բանով վնասել է՝ թող բոլորը գան այդ դաստակերտը, և ապահով կլինեն: Եթե մեկը (ուրիշի) արյուն է թափել, մեկին վնասել է, կինը տարել է կամ պարտապան է. կամ մեկի գույքը գրավել է, կամ որևէ մեկից երկյուղ ունի՝ թող գա այն տեղը. նրա դեմ դատ ու պահանջ չի լինի...» [IV դպր., գլ. ԺԵ, էջ 169]:

Փաստորեն վաղ միջնադարում գործել է նաև դավաճանություն գործած մարդկանց քարկոծ անելով մահապատժի ենթարկելու դաժան ձևը: Ի դեպ, ըստ Փավստոս Բուզանդի հավաստման, պարսկական հասարակական պատժի դաժան ձև էր ...մորթը հանելը, խոտով լցնելը և հրապարակում կանգնեցնելը՝ նախատինքի համար [III դար., գլ. ԻԱ, էջ 91]:

Այդպես են վարվել Պարսից արքա Ներսեհի հրամանով Ատրպատականի մարզպան Շապուհ Վարազի նկատմամբ, որը չարախոսել է հայոց արքա Տիրանին: Առիթը Տիրան արքայի մուգ շագանակագույն և պուտպուտիկ, ճանձկեն (խայտաբղետ, ճաճանչաճերմակ), քաջությամբ լի, հոյակապ տեսքով, բոլոր ձիերից մեծ և բարձր, բոլորից գանազանվող, աննման գեղեցկությունն էր [III դար., գլ. Ի, էջ 79], ձիուն տիրանալու ձգտման մերժումն էր հայոց արքայի կողմից: Այստեղից էլ Շապուհ Վարազի քուռ մատնությամբ պարսկա-հայկական պատերազմի ծագումը և պարսից բանակի ջախջախումը, պարսից արքայի մի կերպ փախուստը և վերժխնդիր լինելը Ատրպատականի մարզպանից. «Ատրպատականի մարզպան Շապուհ Վարազի անօրենության համար երկրի թագավոր Շապուհ Բ-ն հրաման տվեց՝ պատիվը նրանից առնել, պատվական պատմունճանը վրայից հանել և մեծամեծ չարչարանքների ենթարկել Վարազին: Եվ ըստ պարսկական սովորության՝ հրամայում է նրա մորթը հանել, խոտով լցնել և հրապարակում կանգնեցնել նախատինքի համար» [III դար., գլ. ԻԱ, էջ 91]:

Մենք կարդում ենք նաև հայ իրականության մեջ տարածում գտած համայնական հասարակական մի սովորույթի՝ «բրածեծ անելով սպանելու» մասին: Այդպես են վարվում նաև հայրենիքին դավաճանած Մերուժան Արծրունու (սա ճողոպրելով կարողանում է խուսափել դատաստանից) հետ, պարսից գործով հայրենիք ներխուժած և վայրագություններ գործած պարսիկ Սուրենի նկատմամբ [IV դար. գլ. ԼԶ, էջ 235]:

Պատմիչը դժգոհելով հայոց Տիրան արքայի (338-350 թթ.) օրոք տեղի ունեցած կանայականություններից, չարագործություններից՝ գրում է, թե (նրա) անպիտան ու անմիտ թագավորության օրերին, հենց նրան նայելով՝ չարություններով բոլոր դարերից գերազանցեցին: Ամենամեծ (չարությունն) այն էր, որ իրենց գլխավորին և առաջնորդին **բրածեծ անելով սպանեցին**, և այնուհետև ամեն ոք վարվում էր իր ուզածի պես [III դար., գլ. ԺԳ, էջ 57]:

Փ. Բուզանդը նկարագրելով Տիրան արքայի անօրենությունների դեմ ժամանակի կաթողիկոսի հանդիմանությունը, գրում է. «Եվ ահա մի անգամ, տարեկան տոնի մի օր, Տիրան թագավորը մյուս ավագանիի հետ եկավ, որ եկեղեցի մտնե, իսկ նրա դեմ դուրս գալով [Հուսիկ կաթողիկոսը]՝ ասաց. «Արժանի չես, ինչո՞ւ ես եկել, ներս մի մտներ»: Ուստի նրան իսկույն ներս էին քաշում եկեղեցին, բիրերով ծեծելով ջարդեցին աստծու քահանայապետին, սուրբ ու երանելի մանուկ Հուսիկին, և ջարդուբուրդ անելով կիսամահ թողին այնտեղ» [III դար., գլ. ԺԲ, էջ 53]:

<sup>153</sup> НАА, ф. 101, оп. 1, д. 82, л. 1-4.

<sup>154</sup> Там же, л. 9.

<sup>155</sup> Там же, л. 9 об.

новы, по данным жандармского управления, привело к парализованию деятельности малочисленных младодашнакцаканов в губернии.

Указывалось на наличие особой фракции “Поторик”(Буря), возникшей в августе 1906 г. на съезде социализации 1906 г., из участников и представителей Эчмиадзинского братства, признавалось наличие военной организации “фидиев” в Ереванском уезде в форме летучих отрядов, в ходе “армяно-татарских столкновений”, а существование армии в 100 тыс. человек с соответствующими подразделениями у партии “Дашнакцутюн” сочтено преувеличением. Сведения по “зеленой гвардии” либо “зеленой сотне отсутствовали. Под партийным влиянием в Ереванской губернии действовали разные благотворительные организации<sup>156</sup>.

В целом, фиксировался спад влияния партии: “Из изложенного Ваше Превосходительство изволите усмотреть, что при доложенных обстоятельствах в настоящее время вряд ли может с прежним авторитетом и влиянием функционировать в пределах Эриванской губернии организация “Дашнакцутюн”, когда само население идет навстречу стремлению власти, а такое стремление возможно только при отсутствии того “Дамоклова меча”, какой была до сего эта организация не более двух лет тому назад<sup>157</sup>. Причиной создавшейся ситуации сочтены репрессии властей и новое социалистическое учение, далекое от интересов прагматичных армян<sup>158</sup>.

Между тем, наместник Кавказа граф Воронцов-Дашков направил письмо премьер-министру Столыпину о политическом курсе относительно армянского населения Южной окраины, наличия различных толков по поводу приглашения новоизбранного католикоса и отказе в традиционной награде орденом св. А. Невского, а также относительно возможных почестей по его прибытию в регион.

23 мая 1909 г. иерарх Матеос Измирлян отплыл из Константинополя на судне “Чихачев”, чтобы прибыть на аудиенцию в Петербург. Премьер-министром Столыпиным был заготовлен “Проект обращения Государя Императора к патриарху-католикосу с установкой на деятельность в рамках закона”: “Я рад видеть Ваше Святейшество тотчас же по приезде вашем в пределы Русского государства, прежде вступления вашего в исполнение своих новых обязанностей. По примеру предков моих, относясь с неизменной благожелательностью к вверенной вашему управлению армяно-григорианской церкви, что вы приложите в своей будущей деятельности все старания к укреплению в членах паствы вашей истинного духа веры христовой, побуждая их к мирной, доброжелательной жизни и повиновению властям законным<sup>159</sup>”.

В тоже время Столыпин направил ответное письмо наместнику Кавказа, ставящей целью разъяснить политический курс к армянским подданным: “Отнюдь не следует, будто правительство намерено стать в своей политике в отношении армянской народности на путь притеснения её или её церкви”. Подчеркивался учет специфики национальных отношений, но в контексте державных видов: “Без сомнения, политика правительства в Армянском вопросе, как и в других инородчес-

---

<sup>156</sup> **Тунян В.Г.**, Легенды и были: охранка и Армения. Ереван, 2008, с.110-113.

<sup>157</sup> НАА, ф. 101, оп. 1, д. 82, л. 12 об.

<sup>158</sup> Там же, л. 1 - 17.

<sup>159</sup> РГИА, .821, оп.140, д. 18, ч. 2, л.29.

ких вопросах, неизменно благожелательна. Однако, эта благожелательность не должна приводить инородческие племена к заблуждению, будто правительство отказывается от своего исконного направления: объединения всех окраин с культурно-исторической основой Русского государства и приобщения отдельных племен к общегосударственной жизни и русской культуры. Из этого направления не следует заключать, будто правительство намерено поглотить всю самобытность населяющих Империю инородческих племен<sup>160</sup>.

Сохранение этнической идентификации должно было сопрягаться с сохранением “целости и достоинства государства”. При этом армянскому народу, а не армянскому радикализму приписывалась крайность воззрений, выходящей за пределы вышеуказанной установки. Столыпин отмечал: “Между тем, как Вашему Сиятельству известно, именно армянская народность предъявляет такого рода культурные и политические требования, которые не оставляют сомнения в достаточно прочно сложившемся направлении домогаться автономии, не вытекающее ни из закона, ни из духа нашего государства”.

В этом направлении важная роль отводилась новому армянскому первосвященнику: “В связи с этим представляется чрезвычайно важным установить то направление, которое примет в деле политики армян глава их церкви. Он имеет прямое отношение к школьному делу, а между тем именно оно наиболее обращает на себе домогательства армянских националистов<sup>161</sup>. От наместника Кавказа требовалось воплощение державных видов: “Засим от Вашего Сиятельства зависило бы всеми доступными Вашему высокому авторитету способами разъяснить армянскому населению, что от него требует правительство и какой политики оно держится, а также дать ему надлежащее разъяснение относительно значения Высочайшего повеления о прибытии патриарха-католика в столицу, равно как относительно значения высочайшего предуказания о пожаловании высокого ордена в зависимости от ожидаемых правительством государственных заслуг патриарха-католика<sup>162</sup>”.

Столыпин не рекомендовал ограничить почести, которые ранее предоставлялись региональной властью. Им отмечалось: “Что касается второй части письма Вашего Сиятельства относительно воспрепятствования приветствий католику со стороны представителей сословных учреждений, то в сем отношении мнение Ваше основано, по-видимому на недоразумении. Нет сомнения, что всякому, принадлежащему к армяно-григорианской церкви не может и не должно быть возбранено участие во встрече и приветствии своего духовного отца, но Высочайшие предуказания, о которых Ваше Сиятельство изволите домогаться, касаются в чествовании католика представителями сословных учреждений (in corpore) вне зависимости от того исповедания к которому эти представители принадлежат<sup>163</sup>. Обращено внимание, что, согласно воле царя, католику будет вручен алмазный крест служащими церемониальной части после окончания монаршей аудиенции<sup>164</sup>”.

---

<sup>160</sup> Там же, л. 30.

<sup>161</sup> Там же, л. 30 об.

<sup>162</sup> Там же, л. 30 об, 31.

<sup>163</sup> Там же, л. 31, 31 об.

<sup>164</sup> Там же, л. 31 об.

Таким образом, премьер-министр П.А Столыпин в ходе единой борьбы против армянского радикализма столкнулся с противодействием наместника Кавказа, требовавшего учета национальной специфики и вакантности Эчмиадзинского престола. Поэтому Столыпин в 1908 г. разделил отношение к армянскому радикализму на две составные части - духовную и светскую, требующих соответствующих отношений. Дифференцированное отношение Столыпина к представителям армянского радикализма исходило из существующей ограниченности законодательной базы для репрессий против Эчмиадзинского престола и его внешнеполитического значения. Борьбу против радикальных настроений в Эчмиадзине Столыпин считал возможным осуществлять законодательным путем, предусматривая изменить льготное положение армянской церкви в Российской державе, оказывая воздействие на статус католикоса всех армян. Относительно светских революционеров во главе с партией “Дашнакцутюн” развернуто масштабное следственное дело, которое должно было завершиться политическим судебным процессом. Стали осуществляться массовые аресты и высылки.

**Վալերի Թունյան – Պ.Ա. Ստոլիպինի տարբերակված մոտեցումները հայկական ռադիկալիզմին 1908 - 1909թթ.:** – Հոդվածում համակարգված ձևով ներկայացված են Պ. Ա. Ստոլիպինի մոտեցումները հայկական ռադիկալիզմի նկատմամբ: Առանձնացված են նրա կողմից հայ ռադիկալների հանդեպ կիրառած մոտեցումներն ու վերաբերմունքը, ինչպես նաև պայքարի ձևերը: Այդ պայքարը մասնավորապես Դաշնակցություն կուսակցության նկատմամբ հանգեցրեց մասսայական հալածանքների, բանտարկության և դատավարության:

**Valery Tounyan – P.A. Stolipin’s distinguishing approaches to Armenian radicalism (1908 - 1909).** – In the article Stolipin’s approaches to Armenian radicalism are represented systematically. Used approaches and attitudes as well as the forms of struggle towards Armenian radicalism are separated by him. That struggle particularly to the alliance party brought to mass persecution, imprisonment and procedure.

ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

Քոչարը Փարիզում հաստատվեց 1923-ին, ֆրանսիական գեղարվեստական կյանքում բուռն, արընթաց իրադարձությունների շրջանում, երբ կերպարվեստի տարբեր դպրոցներ և ուղղություններ ակնթարթորեն ձևավորվում, արագ հերթագայվում ու դեռ մինչև վերջ, լիավարտ կերպով չդրսևորված՝ փոխադարձաբար հերքվում էին: Արվեստում ինչ գնով լինի նոր խոսք ասելը, նորարարության հետևից ընկնելը դիտվում էր որպես գեղարվեստական շուկայում տեղ գրավելու, անուն հանելու պարտադիր պայման: Մասնավոր ցուցասրահներում ու ձեռներեց նկարավաճառ-մարշանների առևտրական կրպակներում տարատեսակ ցուցահանդեսներ էին բացվում, գովասանվում և քարոզվում էին մինչ այդ անհայտ արվեստագետների աշխատանքները, իսկ անկախ մամուլը շարքային ընթերցողներին ու քաղքենիներին շվարեցնող գեղագիտական հոչակագրեր էր հրապարակում... Փարիզը դեռ շարունակում էր մնալ համաշխարհային գեղարվեստական մշակույթի առաջապահը:

Այնտեղ տնավորվելուց հետո Քոչարը սկզբում ուշադիր հետևում էր ընթացիկ իրադարձություններին՝ աստիճանաբար հարմարվելով անձանոթ միջավայրին: Նա քաջ գիտակցում էր, որ Փարիզում ընդունելություն գտնելն ու ճանաչվելն այնքան էլ հեշտ չէ, որ դրա համար ոչ միայն քրտնաջան աշխատանք, այլև անհրաժեշտ կապեր հաստատելու, արվեստի հեղինակավոր քննադատների ու գործարար մարդկանց տեսադաշտում հայտնվելու, նրանց հավանությանն արժանանալու հատկություններ և հմտություններ են պահանջվում: Ստեղծագործական բնատուր շնորհքով, նախանձելի աշխատասիրությամբ ու համառությամբ Քոչարն օժտված էր առատաբար, բայց և գործնական, պրակտիկ հարցերում նա նույնքան ուշիմ ու օչքաբաց էր: Շուտով նկարիչն ընտելացավ գեղարվեստական օտար շրջապատին, հաղթահարեց լեզվական և հոգեբանական պատնեշներն ու կարգին արվեստանոց ձեռք բերեց: 1923–1925 թվականներին նրա աշխատանքները ներկայացվում են Աշնանային սալոնում, Անկախականների սալոնում, Գիտական ընկերության ցուցահանդեսում, Ժամանակակից արվեստի միջազգային ցուցահանդեսում, իսկ 1926-ի հոկտեմբերի 28-ին Փարիզի “Le Sacre du Printemps” (“Սրբազան գարուն”) պատկերասրահում բացվում է նրա անհատական անդրանիկ ցուցահանդեսը<sup>165</sup>:

Այդ տարիներին Քոչարն արդեն մի շարք ուշագրավ գործեր էր ստեղծել. “Հաստիկը հարդարվելիս” (“Հաստիկը”, 1923), “Հուրին” (1925), “Պտուղներով հուրին”, “Խնձորով աղջիկը”, “Արևելյան կանայք” (բոլորն էլ՝ 1926) և այլն: Հավանաբար, դրանք մտածվել ու հղացվել էին որպես Կոստանդնուպոլսում սկիզբ ա-

<sup>165</sup> Դրանից առաջ, 1923-ին, երբ Քոչարը դեռ նոր էր ժամանել Փարիզ, նրա ստեղծագործությունների մի փոքրիկ ցուցահանդես կազմակերպվեց հայկական “Ապագա” թերթի խմբագրությունում, սակայն փարիզյան արվեստասեր լայն հանրության համար այդ ցուցադրումն աննկատ անցավ:

ռած արևելյան նկարաշարի շարունակություն: Եվ եթե դա իրոք այդպես է, ապա վերապահորեն պետք է մոտենալ այդ նկարների մասին Վալդեմար Ժորժի հայտնած կարծիքին. ընդունելով, որ Քոչարի օրիենտալիստական աշխատանքները "յուզիչ համադրություններն են արեւելեան եւ արեւմտեան արուեստներուն"<sup>166</sup>, մենք, ֆրանսիացի քննադատին հակառակ, "արեւելեան արուեստի" տակ տեսնում ենք ոչ այնքան մահմեդական, որքան հայկական՝ Քոչարին առավել հոգեհարազատ գեղարվեստական մշակույթը, նախ և առաջ՝ մեր միջնադարյան մանրանկարչությունը, որի սքանչելի օրինակները նա ջանադրաբար ուսումնասիրել էր Սուրբ Ղազար կղզում, միսիթարյան միաբանության հարուստ մատենադարանում և որին, ըստ ամենայնի, ծանոթացել էր դեռ վաղ հասակում:

Փարիզում հիմնավորվելուց հետո, կարճ ժամանակում Քոչարն ստեղծեց ժանրաթեմատիկ բովանդակությամբ միմյանցից տարբեր, բայց գեղարվեստական լեզվով ու ոճով, կատարողական եղանակներով իրար նմանվող մի շարք կտավներ, որոնցից հատկապես տպավորիչ են նկարչի առաջին գլուխգործոցները՝ "Տեսիլք" (1924) և "Ընտանիք: Մերունդներ" (1925) այլաբանական խոշոր պատկերները: "Տեսիլք"-ում կերպարային յուրօրինակ մարմնավորում են ստացել նկարչի խոհերը մարդու երկակի բնության, նրանում մույթ ու լուսավոր ուժերի հարատև հակամարտության, կենդանական ստոր բնագոյների ու հոգևոր վեհ ձգտումների մասին: Նկարի սյուժեն փոխառված է Մարիամ Մագդաղենացու և խաչված ու հետո հարություն առած Քրիստոսի հանդիպմանը վերաբերող ավետարանական հայտնի պատումից: Ակնհայտ է, որ Քոչարն այստեղ շեղվել, հեռացել է Նոր Կտակարանի կանոնական տեքստից, առաջարկելով իր սեփական՝ առավել քան "պարականոն" մեկնակերպը: Քրիստոսի հայտնությունը Մագդաղենացուն տեղի է ունենում ոչ թե Տիրոջ գերեզմանի մոտ՝ Գողգոթայի պարտեզում, ինչպես ասված է Հովհաննու Ավետարանում, այլ հորինված, երևակայական մի ինտերիերում: Ընդ որում, թե՛ Մարիամը և թե՛ Քրիստոսը ներկայացված են մերկ, առանց ծածկույթի: Մերկացնելով հերոսներին ու դրանով իսկ երկիմաստ նշանակություն տալով տեսարանին՝ նկարիչը, հավանաբար, ցանկացել է շեշտել Քրիստոսի մարդկային, "չափազանց մարդկային" էությունը, սակայն այդ դեպքում նա ինչու՞ չի ընտրել, չի գերադասել դեռ չապաշխարած անառակ կնոջ հետ Հիսուսի առաջին հանդիպումը: Իսկ գուցե սա ոչ էլ Քրիստոսն է, այլ նրա կերպարանքն ընդունած պիղծ ոգին, այսը՝ մեկը նրանցից, ով հալածվել ու դեն էր քաշվել դիվահար Մարիամ Մագդաղենացուց<sup>167</sup>: Արդյո՞ք հենց դա չեն ակնարկում նկարի խորքում պատկերված՝ կորուսյալ դրախտի "արգելված պտուղներով" լի մրգամանր, կեղծ աստվածության հրապուրական նենգ ժպիտն ու նրա շողում, գայթակղիչ ժեստը: "Մի՛ մերձանար յիս", – ըստ բիբլիական գրույցի, այսպես ձայնարկեց Հիսուսը, երբ նրան ճանաչած ապշահար Մարիամը երկյուղածության խոյանքով դեպի նա պարզեց իր ձեռքերը: Այդպես էլ ներկայացված է սույն տեսարանը միջնադարյան մանրանկարներում, Ֆրա Անջելիկոյի որմնանկարներում, Շոնգաուերի, Տիցիանի, Բատիստելլոյի, Ալեքսանդր Իվանովի և այլոց համանուն կտավներում ու գրաֆիկական թերթերում: Հակառակ դրանց՝ Քո-

<sup>166</sup> *Ժորժ Վալտեմար*. Քոչարը եւ նկարչութիւնը տարածութեան մեջ... էջ 29:

<sup>167</sup> Այս կտավի կերպարային բովանդակության վերաբերյալ նման անսովոր ու անակնկալ ենթադրությամբ հանդես է եկել արվեստաբան Ինգա Կուրցենսը 1990-ի մայիսին Հայաստանի պետական պատկերասրահում կայացած՝ Երվանդ Քոչարի ծննդյան 90-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողովում:

չարի Քրիստոսը բնավ չի խորշում Մարիամից, դուրս հանելով ոտքը, նկարի միջից արտանդվելով՝ նա, կարծես, վաղուց գղջացած կնոջը երկնային աշխարհի մեղսալի հաճույքները նորեն ճաշակելու հրավեր է անում:

"Տեսիլքը" լուծված է մոխրագույն և մով սառը թույրերով, ձևերը հարթ են, ծավալներից գուրկ, իսկ եզրագծերը՝ ողողուն, աղոտ: Քրիստոսի մարմինն ուրվանման է, թեթև, անկշիռ, ասես թափանցիկ շղարշից հյուսված: Շոշափելի, կորնթարդ, ցայտուն կերպով է ծեփված միայն Հիսուսի՝ նկարի ստորին եզրը հատող, մեխով խոցված, արնոտ ոտնաթաթը, որի ստվերն ընկնում է փայտե կոկ շերտաձողին և հատակի սալաքարերին, ինչը նատուրալիստական ազդու, բայց փոքր-ինչ տհաճ տպավորություն է թողնում:

Գաղափարական ու կերպարային այլ բովանդակություն և իմաստ ունի Քոչարի "Ընտանիք: Սերունդներ" կտավը, թեպետ սա նույնպես ժանրային հստակ սահմանումների չենթարկվող այլաբանական հորինվածք է, որի առանցքը տարբեր սերունդներ ներկայացնող ալեհեր պապի, երիտասարդ հոր և մոր ու մանկան ֆիգուրներն են: Գործող անձինք գուրկ են անհատական վառ դիմագծերից, հոգեբանական խոր նկարագրից: Այն, որ մեր առջև ընտանեկան կամ խմբակային դիմանկար չէ, հուշում է Քոչարի կտավում մերկ մարմինների առկայությունը, ինչը պորտրետային ժանրի այդ տեսակներին խորթ և անվայել է: Այստեղ մերկության բաց ցուցադրումը հատկանշական է այն առումով, որ կրկին հաստատում է նկարչի կայուն հետաքրքրությունը դասական արվեստի ավանդույթների ու մոտիվների հանդեպ, որոնց հետ կապն ի հայտ է գալիս նաև մարդկային ֆիգուրներին ծավալներ տվող "քանդակային" պլաստիկ մշակումներում: Քոչարի կտավում մենք գործ ունենք ոչ թե անհատական կոնկրետ, այլ հավաքական համապարփակ կերպարների, մարդկային կենսագրության ու ճակատագրի անձնավորված շրջափուլերի, էտապների հետ: Նկարի հիմքում սերունդների հաջորդականության և ժառանգորդության, նրանց անընդհատ հերթագայության գաղափարը, կյանքի հավերժ շրջապտույտին անդրադարձող մտքերն են: Պատահական չէ, որ պատկերված մարդիկ համախմբված են շրջանաձև կուռ ու միասնական զանգվածում, որը եզերված, տարազատված է թիկնած ձերունու աջ ձեռքի, տղամարդու ուսերին զցած կոր թիկնոցի, մոր և մանկան կլոր դեմքերի ու նույն ձերունու ծավված ոտքերի՝ իրար "սատարող" և շարունակող ուրվագծերից: Որպես անբաժան, սերտ ամբողջություն, խումբը նման է մի հզոր կաղնու, որին սնուցող, հողի հետ կապող արմատը պապն է, իսկ ծառաբունն ու ծառապսակը՝ նրա զավակները և հաջորդները:

Քոչարի այս աշխատանքը ևս բիրիական որոշ գուգորդումների ու գուգարումների առիթ է տալիս: Կարծում ենք, որ նկարի համար իբրև մեկնակետ օգտագործվել և յուրահատուկ բեկում է ստացել Ջրհեղեղի մասին հայտնի առասպելը՝ բարեպաշտ Նոյի պատմությունը, ով Աստծո ողորմությամբ խուսափեց պատժից, տապանով "նստաւ ի լերինս Արարատայ"՝ մարդկային ցեղը փրկելով երկրի երեսից նրան ջնջելու սպառնալիքից: Մի՞ թե պարզապես պատահաբար է հայ արվեստագետի կտավի հերոս ձերունի պապը գրեթե նույնությամբ կրկնում Միքստոսյան մատուռի առաստաղին Միքելանջելոյի պատկերած Նոյ նահապետի դիրքն ու կեցվածքը: Ուշադրություն է գրավում նաև փոքրիկ աղավնին, որին Քոչարի նկարում գրկել ու քնքշորեն այտին է սեղմել չքնաղ մանուկը: Պիկասոյի հանրահայտ գծանկարի՝ "Խաղաղության աղավնու" շնորհիվ այդ կերպարն այսօր ընկալվում է որպես հաշտության խորհրդանիշ և բարու բանբեր: Սակայն



սիմվոլիկ իմաստ ու խորհրդավոր նշանակություն նա ձեռք է բերել դեռ Գիրք Գր-րոցի սկզբնամասում՝ Ջրհեղեղին նվիրված գլուխների տներից մեկում. "Եւ ար-ձակեաց գաղանին զհետ նորա տեսանել թէ ցածուցեալ լիցէ ջուրն յերեսաց երկ-րէ...": Նոյի աղավնին հետ վերադարձավ ձիթենու նորածիլ տերևով՝ որպէս վերջնական փրկության նշան: Քոչարը, անշուշտ, խուսափում է բառացի փոխա-ռումներից, բայց նրա կտավում բիբլիական զուգահեռները, այնուհանդերձ, որո-շակի են: Մարդկանց խումբը տեղավորված է մի ցամաք ու լերկ բլրի վրա, որի հետևում մինչև հորիզոն փոված ջրերն են: Մեր առջև անշարժ, անշունչ, ամայի, ժամանակի հունը կորցրած՝ "նախապատմական" բնանկար է: Նորից հիշվում են Աստվածաշնչի տողերն այն մասին, որ օր ու գիշերվա բնականոն հերթափոխու-մը, պատմության շարժընթացը վերականգնվեց, հունի մեջ մտավ Հեղեղից հետո, երբ "նուազեաց ջուրն յերեսաց երկրէ եւ ցամաքեցաւ երկիր":

Թէն Քոչարի կտավն ունի անսասան, հաստատուն ամուր կառուցվածք, իսկ ներկայացված տեսարանը խաղաղ է թվում, դրանում ներքին անհանգըս-տություն, նույնիսկ տագնապ կա: Դա արտահայտված է գլխահակ պապի հոգ-նած ֆիգուրում, նրա մտազբաղ դեմքի ծայքերում, ամուսինների ուղիղ մեզ նայող խոշոր աչքերում և փոքր-ինչ փայլատ ու միապաղաղ դեղնադարչնագույն և կա-նաչավուն կիսատոներում... Բայց ամեն դեպքում այստեղ իշխում են լուսավոր վճիտ զգացմունքները: Ջուր չէ, որ երիտասարդ հոր շուրթերին թեթև ժպիտ է խաղում, մայրական սիրո ջերմությամբ ու գորովանքով է համակված կինը, իսկ հորինվածքը պսակում է աղավնուն գրկած մանկան սրտառուչ, թովիչ կերպարը: Քոչարի մուսան պոլիֆոնիկ է՝ բազմաձայն ու տարահնչուն, նրա արվեստում դրամատիկ շեշտերը հաճախ զուգակցվում կամ ընդմիջվում են, սակայն ի վեր-ջո՝ խլացվում, մարվում մաժորային կենսահույզ ակորդներով:

Նկարչի նշված աշխատանքները չէին կարող աննկատ մնալ ու շուտով գրավեցին Վալդեմար Ժորժի, Կլեման Մորոյի, Սենտ-Էնյանի, Անդրե Պասկալ-Լևիի, Ռայմոն Սելիգի, Մորիս Ռեյնալի և ֆրանսիացի այլ քննադատների ուշադ-րությունը: Քոչարի անունն ավելի հաճախ սկսեց երևալ "L'Art Vivant" ("Կենդանի արվեստ"), "La Revue Moderne des Arts et de la Vie" ("Արվեստների և կյանքի ժա-մանակակից հանդես"), "La Revue du Vrai et du Beau" ("Ճշմարտության և գեղեց-կության հանդես"), "Les Artistes d'aujourd'hui" ("Արդի արվեստագետները"), "Ca-riers d'Art" ("Արվեստի տեսրեր") և գեղարվեստական նմանատեսակ մյուս լրագ-րերի ու ամսագրերի էջերում: Նա ինքն էլ երբեմն ելույթ էր ունենում մամուլում՝ բացատրելով սեփական արվեստում իր հետապնդած նպատակները: Բայց Քոչա-րին իսկական ճանաչում բերեց միայն նրա անհատական երկրորդ ցուցահանդե-սը՝ "Le peinture dans l'espace" ("Նկարչություն տարածության մեջ" կամ "Տարածա-կան նկարչություն") հետաքրքրական վերնագրով, որը կայացավ 1928-ի նոյեմբե-րին փարիզյան "Van Leer" ("Վան Լեեր") պատկերասրահում: Հենց այդ անվան տակ էլ արվեստի պատմության մեջ մտան Քոչարի այն ստեղծագործություննե-րը, որոնցում փորձ էր արվում ժխտել մեր սովորական պատկերացումները նկարչության ինքնահատուկ ձևերի և արտահայտչական հնարավորությունների մասին:

Տարածական նկարչությունը հանդիսացավ հայ արվեստագետի՝ անսպա-սելի փոխակերպումներով ու անակնկալ շրջադարձերով հղի ստեղծագործ մտքի փայլուն նվաճումը: Պատահական չէ, որ Տարածական նկարչությունը գնահատե-լիս Վալդեմար Ժորժն այն բնութագրել է որպես Քոչարի "աշխատանքի դրամա-

գլուխը եւ արուեստի ոգին"<sup>168</sup>, իսկ վարպետն ինքը խոստովանել է, որ նկարելու հենց այդ եղանակն ու կերպն են նրան ստեղծագործական լիակատար բավակա-նացում տվել<sup>169</sup>:

Բայց ի՞նչ է Տարածական նկարչությունը, որտե՞ղ են դրա ակունքները և արդյո՞ք այն նոր ու խոստումնալից հեռանկարներ է բացում կերպարվեստի զարգացման համար: Սկսենք Քոչարի գեղարվեստական հայտնագործության նախադրյալներից: Գաղտնիք չէ, որ արդեն Սեզանի արվեստում, ի հակադրություն իմպրեսիոնիզմի, առաջ էին քաշվում ոչ միայն առարկայական աշխարհի նյութականության վերահաստատման, այլև նկարչության մեջ տարածական կառուցումների խնդիրները: Սեզանը, ինչպես և նրան հաջորդած մի շարք վարպետներ, այդ խնդիրները փորձում էր լուծել՝ հրաժարվելով դեռ Վերածննդի շրջանում մշակված ու գիտականորեն հիմնավորված գծային հեռանկարից, որը նրան չէր գոհացնում, քանի որ բնույթով մոնոկուլյար՝ միակնային էր: Փոխարենը Սեզանը դիմեց տեսողական ընկալման և տարածության վերարտադրման միանգամայն այլ, նախորդից սկզբունքորեն տարբերվող, իր կարծիքով ավելի օբյեկտիվ ու հավասարատես բինոկուլյար (երկակնային)՝ հետագայում "պերցեպտիվ" կոչված, ընկալման համար առավել բարդ, բայց հանրապարհակ հեռանկարի օգնությամբ<sup>170</sup>: Դրանով խնդիրը չհանգուցալուծվեց: Սեզանի հարթած ճանապարհով առաջ ընթացան կուբիստները: Առարկաների կազմությունը "մերկացնելու" նպատակով նրանք պատկերը ոչ միայն բերում ու հանգեցնում էին գնդի, գլանի կամ խորանարդի, երկրաչափական այլ մարմինների հիմնաձևերին, ինչպես վարվում էր Պոլ Սեզանը, այլ այն տրոհում, տարրալուծում էին, ապա՝ նորովի համադրում: Կուբիստների պրպտանքների ու փնտրումների արդյունքը եղավ կտավի վրա երեսակված ու խիստ պարզեցված ֆիգուրների ազատ համակցումն ու հոդավորումը: Սակայն շուտով նրանք հասկացան, որ իրականության հայեցողական, միայն մեր "ներքին աչքով" ընկալվող նկարագիրը հնարավոր չէ տալ նկարչության ավանդական միջոցներով, առանց խախտելու վերջինիս տեսակային յուրահատուկ սահմանները: Գիտակցելով, որ "կուբիզմի վերջին նպատակները կտավի դաշտում իրագործվելու հեռանկարներ չունեն"<sup>171</sup>, կուբիստներն իրենք, այսուհանդերձ, չխիզախեցին գնալ այդ քայլին, բայց նրանց անկատար փորձի շնորհիվ պարզ դարձավ, որ "հակասությունը հաղթահարելու երկու ելք կա. կամ վերադառնալ պատկերման հին, ավանդական եղանակին..., կամ մի ոտք առաջ անցնել ու դուրս գալ կտավի դաշտից՝ մեզ շրջապատող իրական միջավայրում առարկայական ձևերի կառուցվածքային պլաստիկ սինթեզը կենսագործելու համար: Առաջին ուղուն վերադարձան Պիկասոն, Լեժեն, Խուան Գրիսը, երկրորդով շարժվեցին ռուս կոնստրուկտիվիստները"<sup>172</sup>: Ասենք, որ սկզբում երկրորդ ուղիով, կարծես, ընթացան նաև կուբիստները: Այսպես՝ 1912–1914 թվականներին, մեկը մյուսի հետևից, երևան եկան Ժորժ Բրաքի և Պաբլո Պիկասոյի կուլմծները, որոնցում պատկերված առարկաները ոչ թե նկարված, այլ անմիջաբար ներմուծ-

<sup>168</sup> *Ժորժ Վալտենսար*, Քոչար եւ նկարչութիւնը տարածութեան մէջ..., էջ 34:

<sup>169</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>170</sup> Այդ մասին հանգամանորեն տե՛ս *Раушенбах Е. В.*, Пространство Сезанна и система жесткой перцептивной перспективы / *Раушенбах Е. В.*, Пространственные построения в живописи. Очерк основных методов. Москва, 1980, с. 215–232.

<sup>171</sup> *Тасалов В.*, Прометей или Орфей. Искусство „технического века“. Москва, 1967, с. 282.

<sup>172</sup> Նույն տեղում:

ված էին հորինվածքում, ինչը խարխլում, մասամբ ջնջում էր գեղանկարը քանդակից զատող բնագծերը: Նույն տարիներին Պիկասոն ցուցադրեց իր քանդակային անդրանիկ "կառուցվածքները", որոնք, ի տարբերություն արձանագործական հնավանդ տեխնիկաների, ոչ թե ծեփվում, փորվում կամ ձուլվում, այլ հավաքվում, բաղադրվում էին փայտե, թիթեղյա կամ թերթամետաղի պատրաստուկներից: Պիկասոյի վերոհիշյալ "կառուցվածքներից" քիչ ավելի ուշ ծնունդ առան Վլադիմիր Տատլինի այսպես կոչված "հակառեփեֆները" (контррельеф) և Ալեքսանդր Արխիպենկոյի "քանդականկարները" (скульптокартина), որոնք տարբեր նյութերից՝ գիպսից, փայտից, մետաղից, առանձին դեպքերում նաև ապակուց պատրաստված տարածական հորինվածքներ էին:

Այն, ինչին իրենց արվեստում եկան վերը թվարկված վարպետները, նպաստեց կոնստրուկտիվիզմի կայացմանը, որի ներկայացուցիչները ֆիզիկական ռեալ տարածությունը նվաճելու խնդրին մոտեցան՝ ելնելով ճշգրիտ և բնական գիտությունների բնագավառներում կատարված վերջին հետազոտությունների ու նոր տեսակետների վրա, մասնավորապես հաշվի նստելով Նիկոլայ Լոբաչևսկու, Բերնհարդ Ռիմանի և Հերման Մինկովսկու ոչէվկլիդեսյան երկրաչափության և Ալբերտ Էյնշտեյնի հարաբերականության տեսության հետ, որտեղ ապացուցվում էր բազմաչափ տարածությունների հնարավոր գոյությունն ու ենթադրվում տարածական-ժամանակային արտասովոր կապերի առկայությունը: Հենց կոնստրուկտիվիստներին էր վիճաված "գործնականորեն իրականացնել կոնկրետ առարկայի բազում պրոյեկցիաների տարածական այն սերտաճումը, որին կուբիստական նկարչությունը համառորեն կոչ էր անում, սակայն անգոր էր դրան տիրանալ նկարի դաշտում"<sup>173</sup>: Ճիշտ է, դրան հասնելու համար կոնստրուկտիվիստները զոհաբերեցին, թերևս, ամենից գլխավորը. նրանք շուռ եկան, երես թեքեցին կերպարվեստի բուն նպատակը հանդիսացող պատկերավորման խնդիրներից, ըստ էության բավարարվելով տարածական արտրակտ ձևերի "մակետավորմամբ"<sup>174</sup>:

Ինչպես հայտնի է, կոնստրուկտիվիզմը մեծ վերելք ապրեց 1920-ական թվականներին, առավել հստակ ու կատարյալ դրսևորում գտնելով Ռուսաստանում, որտեղ Արխիպենկոյի և Տատլինի հետ ասպարեզ մտան ստեղծագործական ինքնատիպ մտածողությամբ օժտված, տաղանդավոր ևս մի խումբ վարպետներ՝ Լ. Լիսիցկին, Ա. Ռոդչենկոն, Լ. Պոպովան, Ի. Պունին, Ա. Էքստերը, Լ. Բրունին, Ի. Կլյունը, Կ. Մեդունեցկին, Ա. Գանը և ուրիշներ: Բայց կոնստրուկտիվիզմի առաջնորդներն ու տեսաբաններն էին տարբեր ազգանուններով հաղես եկած եղբայրներ Նաում Գաբոն և Նատան Պեզները, որոնց արվեստում ծեփածո պլաստիկ, ծավալական քանդակից սկզբունքորեն հրաժարվելու միտումը հետևողական ընթացք ստացավ ու հասավ իր տրամաբանական ավարտին: Եթե բացառենք Գաբոյի կոնստրուկտիվիստական առաջին փորձերը՝ 1915–1918 թվականներին նրա ստեղծած "գլուխների" և "իրանների" քանդակաշարը, ապա եղբայրների հետագա բոլոր աշխատանքները ոչ այլ ինչ են, քան տարբեր անկյունների տակ միմյանց հատող ուղղագիծ կամ կեռ ձևեր ունեցող, մետաղից, փայտից, ապակուց պատ-

<sup>173</sup> Նույն տեղում, էջ 238:

<sup>174</sup> Այդ տարիներին, կոնստրուկտիվիստների հետ մեկտեղ, զեղարվեստական նմանատիպ խնդիրներով էին զբաղված նաև արևմտաեվրոպական ու ռուսական ավանգարդի առաջատար մի շարք վարպետներ, օրինակ՝ նեոպլաստիցիզմի կնքահայրերից մեկը համարվող Թեո վան Դուսբուրգը կամ սուպրեմատիզմի հիմնադիր Կազիմիր Մալխիչը:

րաստված տարածական անկերպ, թափանցանց ֆիզուրներ: Մակայն այդ աբստրակտ, բնական և ճշգրիտ գիտությունների նորագույն նվաճումներով ներշնչված տարածաչափական հորինվածքները միաժամանակ աչքի էին ընկնում ստեղծագործական մտքի ազատ սլացքով և ընկալվում որպես "քնարական ինժեներության" ցուցանանշներ:

Կոնստրուկտիվիզմի տեսական հիմքն ու "ավետարանը" դարձավ Մոսկվայում 1920-ի օգոստոսին Գաբոյի և Պևզների ստորագրած "Ռեալիստական մանիֆեստը": Եվ քանի որ այդ հռչակագրի կանխադրություններից մի քանիսը կարևոր նշանակություն ունեն Քոչարի Տարածական նկարչության գեղարվեստական լեզուն հասկանալու և գաղափարական ծիրը պարզելու համար, իմաստ կա դրանք համառոտակի վերաշարադրել: "Ռեալիստական մանիֆեստում" արվեստին ներկայացված պահանջները հանգում էին չորս պարտադիր կետի.

1) հրաժարվել ստեղծագործության նկարագրող որակից, այսինքն՝ գույնից, այն փոխարինել լուսաօդային բնական տոնով,

2) հրաժարվել գծից, գծանկարից և, առհասարակ, կերպարակերտող բոլոր տարրերից, դրանք դուրս մղել ուժային ռիթմերով,

3) հրաժարվել ծավալից և զանգվածից հանուն խորության՝ տարածության միակ, բացարձակ ձևի,

4) հրաժարվել անշարժ, ստատիկ կոմպոզիցիայից հօգուտ շարժուն, կինետիկ հորինվածքի:

Կոնստրուկտիվիստական ծրագրի այս չորս կետերից Քոչարին կարող էին հատկապես գրավել վերջին երկուսը: Ու թեպետ "Ռեալիստական մանիֆեստի" և նրա Տարածական նկարչության միջև կապն ընդամենը ենթադրական է, բայց դրա հավանականությունը, այնուամենայնիվ, բավականին մեծ է: Քոչարը դեռ սովորում էր Պետական ազատ գեղարվեստական արվեստանոցներում, երբ երկարատև բացակայումից հետո արտասահմանից Մոսկվա վերադարձան Գաբոն ու Պևզները: Այստեղ նրանք ակտիվորեն քարոզում էին կոնստրուկտիվիզմի գաղափարները, ըստ որում զբաղվում էին դրանով նաև վերոհիշյալ արվեստանոցներում, որտեղ Պևզները դասավանդում էր: Հետևաբար, Քոչարն արդեն Մոսկվայում հնարավորություն ուներ ծանոթանալու ոչ միայն կոնստրուկտիվիստների ստեղծագործությանը, այլև տեսական հայացքներին: Եղբայրների աշխատանքներն ու գաղափարները նա կարող էր դիտել և յուրացնել նաև 1924-ին, երբ Փարիզի "Percier" ("Պերայե") պատկերասրահում<sup>175</sup> բացվեց և աղմկալից հաջողությամբ անցավ "Ռուս կոնստրուկտիվիստները. Գաբո և Պևզներ" խորագրով ցուցահանդեսը, որի կատալոգը ևս նախաբանել էր Վալդեմար Ժորժը: Ցուցահանդեսը շրջադարձային նշանակություն ունեցավ եվրոպական կոնստրուկտիվիզմի հետագա ճակատագրի համար և չէր կարող անտեսվել Քոչարի կողմից: Համենայն դեպս, նա շուտով արմատապես վերանայում է արվեստի հանդեպ սեփական դիրքերն ու հայացքները: Չնահանջելով կուբիստների պես, բայց և մինչև վերջ

<sup>175</sup> Տասնամյակներ անց՝ 1966-ի փետրվարին, նույն պատկերասրահում տեղի ունեցավ Հայաստան մեկնելուց հետո Քոչարի ստեղծագործությունների հանրային առաջին դիտումը: Փարիզում նման ցուցահանդեսի կայացման միտքը ծագել էր դեռ 1955-ին, սակայն ինչ-ինչ պատճառներով այդ ձեռնարկումը հետաձգվեց 11 տարով: Ֆրանսիայում վարպետի թողած աշխատանքներից լրակազմված ցուցադրությունը գլուխ բերելու դժվար գործում մեծ էին Քոչարի նախկին կնոջ՝ Մելինեի և ֆրանսիացի հայտնի նկարչուհի Մոնյա Դեյունեի դերն ու վաստակը: Վալդեմար Ժորժի վերոհիշյալ գրքույվը հրատարակվել էր հենց այդ առիթով:

չհարմարվելով կոնստրուկտիվիզմին, Քոչարը նախանշում է այլընտրական իր ուրույն, դեռ անկոխ ճանապարհը: Պահպանելով նկարչության կերպարային հիմքը, նա միևնույն ժամանակ այն անջատում, կտրում է կտավից ու ներքաշում տարածության մեջ: Հիմնավորելով իր ընտրությունը, նա համոզված հայտարարում է. "Երբ ապսթեթ նկարչության հետեւողները կը տեսնեն թէ երկու չափերու մէջ որեւէ ընելիք չունին, նկարչութիւնը կա՛մ պետք է մահանայ Մոնտրիանի վերջին քառակուսիին վրայ, կա՛մ... առնի երրորդ չափը՝ տարածութիւնը, միջոցի մէջ յառաջանա"<sup>176</sup>:

Տարածական նկարչության անդրանիկ նմուշները երևացին 1925-ին, և մինչև Քոչարի Հայաստան մեկնելը գեղարվեստական այդ յուրատեսակ հղացումն էր որոշում նրա ստեղծագործական որոնումների բնույթը և ուղղությունը: Ավա՜դ, մենք անմիջաբար ու ամբողջապես ծանոթ չենք արվեստագետի փարիզյան շրջանի Տարածական նկարչությանը: Աշխատանքները մնացել են արտասահմանում, ցաքուցրիվ եղել, հայտնվել տարբեր թանգարաններում ու սրահներում, մասնավոր հավաքողների մոտ<sup>177</sup>: Բայց, այնուհանդերձ, դրանց մասին որոշ պատկերացում են տալիս մամուլում հրապարակված կարծիքները, պահպանված լուսանկարներն ու վերատպությունները, Քոչարի մասնակցությամբ կայացած ցուցահանդեսների կատալոգները, ինչպես և նրա Տարածական նկարչության ուշահաս՝ արդեն երևանյան "պտուղները":

Սկզբում արվեստագետն իր առջև զուտ ձևական խնդիրներ էր դնում ու ձգտում ցանկացած գնով նկարչությունը դուրս բերել կոորդինատային հարթ, մակերեսային համակարգից և այն մտցնել երրորդ՝ տարածական չափման մեջ: Նա ուզում էր խնդիրը լուծել սկզբունքորեն՝ ապացուցել, որ դա գործնականում հնարավոր է, և այդ պատճառով այնքան էլ մեծ նշանակություն չէր տալիս ստեղծագործությունների պատկերագրությանն ու կերպարային բովանդակությանը, հաճախ դրանք նույնիսկ անվերնագիր թողնելով: Տարածական նկարչության նրա առաջին փորձերն առայժմ աչքի չեն ընկնում թեմատիկ բազմազանությամբ կամ փոքրիշատե զարգացած պլուժեով, ինչը հատուկ է 1960-ականներին և ավելի ուշ Քոչարի ստեղծած տարածական նույնատեսակ հորինվածքներին: Փարիզյան շրջանի նրա այդ կարգի աշխատանքներում, վերջիններիս համեմատ, մենք հիմնականում գործ ունենք փայտե բոլորածավալ ձևերի հետ, որոնց մակերեսը ծածկված է մեկ կամ երկու մերկ ֆիգուրների յուղաներկ պատկերներով: Դրանք չափսերով համեստ, փոքրադիր աշխատանքներ են, որոնք ցանկության դեպքում կարելի է ձեռքի մեջ առնել, դես ու դեն շրջել, ինչպես դիտում են մանր պլաստիկայի, մանրաքանդակի օրինակները: Ի դեպ ասենք, որ այդ տարիներին Քոչարը Փարիզի Վիտրի-այուր-Մեն արվարձանի ինքնագործական ֆաբրիկայի պատվերով ջնարակված արձանիկների արտադրության համար արևելյան թեմաներով ու մոտիվներով մի շարք գեղեցիկ էսքիզներ է վրձնել:

Նկարչի՝ փայտե եռաչափ, պատկերազարդ հորինվածքները բազմերանգ քանդակի ուրույն տեսակներ են, որոնցում նկարչությունը երկրորդական, ստորադաս դեր է կատարում, քանի որ կոչված է իրեն հատկացված իներտ, անհա-

<sup>176</sup> Տե՛ս. **Ժորժ Վայտենաք**, Քոչար եւ նկարչութիւնը տարածութեան մէջ..., էջ 37:

<sup>177</sup> Այսպէս՝ Քոչարի Տարածական նկարչության լավագույն օրինակներից մեկը (անվերնագիր, 1934, արույր, արծնաներկ) պահվում է հանրահռչակ Բոբուրում՝ Փարիզի Ժորժ Պոմպիդուի անվան արվեստի և մշակույթի կենտրոնում: Այնտեղ է գտնվում նաև նկարչի մեկ այլ ստեղծագործություն՝ "Արևելյան կանայք" (1926) յուղաներկ պաստառը:

դորդ ծավալներին կենդանի շունչ տալ: Այնինչ Քոչարի գլխավոր նպատակը, նրա ստեղծագործական գերագույն խնդիրը տարածության նկարչական կազմակերպումն էր: Այդ նպատակին հասնելու համար նրան անհրաժեշտ էր հաղթահարել "նյութի դիմադրությունը", այսինքն՝ լիովին հրաժարվել քանդակային հիմքից: Հենց այդպես էլ շուտով վարվում է Քոչարը: Փայտի փոխարեն օգտագործելով պղինձն ու դրա համաձուլվածքները (արույր, մեքիոր), մասնակիորեն նաև ապակին, իսկ 1960-ական թվականներին գործածելով թիթեղն ու այլումինը, հմտորեն բանեցնելով դրանց ֆիզիկական հատկությունները՝ ճկունություն, դյուրաթեքություն, կոելիություն, թափանցիկություն են, նա սեփական աշխատանքներից հեռացնում է լեցուն քանդակի մնացուկները, խոշորացնում դրանց չափսերը և դրանք բացում տարածության մեջ: Այսպիսով, Քոչարի եռաչափ նկարչությունն ազատվում է "թերաթեքության բարդությից", նրան հակացուցված ծավալային և զանգվածային պլաստիկ որակներից ու ձեռք բերում տարածական անսահմանափակ լիագորություն: Այն, ինչը հնարավոր չէր իրականացնել, հենվելով փայտե ծավալների վրա, հնարավոր դարձավ մետաղյա բարակ թերթերի շնորհիվ, որոնք ընդունում էին ամենատարբեր՝ ինչպես երկրաչափական պարզ, այնպես էլ խրթին, պարուրանման ոլորուն ձևեր, հեշտությամբ ծակատվում կամ խոռոչավորվում: Այսուհետ Քոչարի նկարչությունն ինքն է որոշում իր "կենսատարածքը". մեկ հարթությունից անցնելով մյուսին՝ այն հոժարակամ է ծավալվում, բացվում ու համակերպվում տարածության հետ:

Թվում է, որ նկարչության և տարածության գեղարվեստական սինթեզի համար առավել հարիր ու պիտանի նյութը պետք է ապակին դառնար: Օժտված լինելով լույսն անցկացնելու, լուսաօդային մթնոլորտու "լուծորդվելու" և դրա հետ մեկտեղ ներկող նյութերը դրոշմելու, դրանք սեփական մակերևութի վրա կրելու ունակությամբ, այն կարող էր հույժ արժեքավոր ու արդյունավետ դեր խաղալ Տարածական նկարչության գաղափարի իրականացման գործում: 1930-ական թվականների իր առանձին աշխատանքներում շահագործելով ապակու ուրույն հատկությունները՝ Քոչարը միաժամանակ ստիպված էր սահմանափակել դրա կիրառումը, քանի որ ակնհայտ արժանիքների կողքին ապակին նաև էական թերություն ուներ՝ կառուցվածքով անձկուն, չափազանց փխրուն ու խոցելի էր: Մինչդեռ նկարիչը մեծ կարևորություն էր տալիս իր եռաչափ հորինվածքների երկարակեցության ու դիմացկունության հանգամանքին՝ գերադասելով օգտվել մեխանիկական ներգործությունից վնասվելու, օդի և ջրի ազդեցությամբ քայքայվելու, կերվելու վտանգից պաշտպանված նյութեր ու դիմակայուն արձաններկեր, որոնք, Վալդեմար Ժորժի վկայությամբ, "անեղծելի են, կը տոկան անձրևին ու ցուրտին"<sup>178</sup>: Այստեղից հետևում է, որ 1930-ական թվականներին Քոչարը մտադիր էր իր տարածական նկարները տեղադրել ոչ միայն ճարտարապետական փակ միջավայրում, այլև դրսում՝ բաց երկնքի տակ:

Հասկանալի է, որ Տարածական նկարչությունն էապես տարբերվում էր հաստոցային սովորական նկարից: Վերջինս դիտորդին պարտադրում էր ֆրոնտալ՝ ճակատային, դիմահայաց տեսակետ, այնինչ նոր, եռաչափ պատկերը նրան դինամիկ շփման, առավել ակտիվ երկխոսության էր հրավիրում՝ ստիպելով ստեղծագործությունը դիտել ոչ թե պարզապես շահեկան, հարմար հեռավորության վրա, այլև տարբեր կողմերից, այն ամբողջությամբ բացահայտելով մի-

<sup>178</sup> *Շորժ Վալտենար*, Քոչար եւ նկարչութիւնը տարածութեան մէջ..., էջ 39:

միայն շարժման, ժամանակային չափման մեջ: Շատ ավելի ուշ, արդեն 1960-ականներին կատարված համանման աշխատանքներում, հետևելով Մարսել Դյուշանի, Ալեքսանդր Կալդերի, Նիկոլա Շեֆերի և այսպես կոչված "կինետիկ քանդակի" այլ վարպետների ստեղծագործական փորձին, Քոչարն օգտվեց էլեկտրական շարժիչի ուժից, որի շնորհիվ նրա տարածական նկարներն իրենք սկսեցին մեր առջև շարժվել՝ շուտ գալ, պտտվել առանցքների շուրջ:

1930-ական թվականներին նկատելի փոփոխությունների ենթարկվեց նաև Քոչարի ներկայակալը: Նրա կտավներում ու տարածական հորինվածքներում հաճախ են երևում միջնադարյան հայ ծաղկողների նախասիրած դեղնակարմիր և կապտամոխրավուն գունափնջերը: Կողք-կողքի դրված ու փոխադարձաբար ուժգնացած այդ երանգները Քոչարի նկարներին ոչ միայն դեկորատիվ, այլև պլաստիկական արտահայտիչ տեսք են հաղորդում: Հաշվի առնելով մարդկային աչքի ցանցաթաղանթի ու տեսողական նյարդի վրա սատը և տաք գույների տարաբնույթ ներգործությունը, նա առաջիններին դիմում է գոգավոր ստվերոտ, իսկ երկրորդներին՝ կորնթարդ լուսավոր ձևերի պատկերման համար:

Թեև Քոչարն ընդլայնում է իր ստեղծագործությունների թեմատիկ ցանկը, արձարծում ծովային, աստեղական ու կենդանակերպ այլևայլ մոտիվներ, այնուհանդերձ նրա Տարածական նկարչության կիզակետում, որպես գլխավոր հերոսներ, շարունակում են մնալ Տղամարդը և Կինը: Հիմնովին փոխվում է միայն նրանց գեղարվեստական մեկնաբանության եղանակն ու պատկերման կերպը: Մարդկանց ֆիգուրները տարօրինակ և անբնական տպավորություն են թողնում. համաչափություններով խաթարված, անճանաչելիորեն աղարտված կամ, ընդհակառակը, գրեթե նատուրալիստական ճշտամոլությամբ, մանրամասնորեն կատարված այդ կերպարների գլուխներն ու մարմինները թափանցիկ խոռոչներ և բացվածքներ ունեն, իսկ նրանց անատոմիական օրգանները կամ իրար սերտաձած ու ջուխտակված են, կամ զգալիորեն չափազանցած: Քոչարը վրձինը գործի է դնում հերձակի նման. հատելով իր հերոսների մարմինները, նա վիրաբույժի սատը հայացքով ուսումնասիրում է նրանց ֆիզիկական բնությունն ու ներքին կազմությունը՝ մարդկային ոգու նեղ, անձուկ և մութ կացարանը: Ինչպես բառն է իր սկզբնական նշանակությունը կորցնում խոսվածքային այս կամ այն իրավիճակում, այնպես էլ Քոչարի ստեղծած կերպարների բուն իմաստը մեծապես կախված է պատկերի շիտակ կամ շրջված ձևից: Գեղարվեստական կերպարի բովանդակության ու ձևի միջև այդպիսի տարափոխ, գաղտնափակ կապը նկատել են դեռ սիմվոլիստները, բայց իր ծայրագույն՝ անհեթեթ արտահայտությունն այն ստացավ միայն անամորֆ (ձևախեղված) սյուրռեալիզմին հարող վարպետների մոտ:

Ապրելով Փարիզում՝ Քոչարը տարվել է նաև սյուրռեալիզմով, բայց եթե մասնագետներից ոմանք դրանում տեսել են գեղարվեստական նոր երևույթների հանդեպ նկարչի անհագ հետաքրքրությունը հաստատող ևս մի փաստարկ, ապա մյուսները "անգաղափարայնության" կամ "ձևամոլության" մեջ նրան կրկին մեղադրելու առիթ են գտել: Սյուրռեալիզմի նկատմամբ իր տեսակետը Քոչարը պարզել ու լուսաբանել է՝ հենվելով Պիկասոյի հեղինակության վրա. "Ենթագիտակցությունն իր իրավունքները ներկայացրեց և շատ ավելի առաջ անցավ գիտակցությունից: Արվեստագետները հայտնաբերեցին մեր "ես"-ի թաքնված կյանքն ու անսպասելի գեղեցկությունները: Երազը, որ արգելված ցանկությունների և իդձերի անթույլատրելի շղթայագերծումն էր, դարձավ հոգու ազատագրը-

ման նշանը: Պիկասոն մարտնչեց այս դրոշակի տակ, մինչև որ Անդրե Բրետոնի և Մարվադոր Դալիի հետ ստեղծեց համաշխարհային մի նոր հոսանք՝ սյուրռեալիզմը, որը տարածվեց արվեստի և գրականության բոլոր ճյուղերում ու այսօր էլ... մեծ հետևորդներ ունի<sup>179</sup>: Սյուրռեալիզմի կնիքը դրվեց Քոչարի ոչ միայն Տարածական նկարչության, այլև փարիզյան ողջ ստեղծագործության վրա: Ճիշտ է, ի տարբերություն իր կրտսեր հայրենակցի՝ նույնպես Փարիզում աշխատած Լևոն Թուրունջյանի, նա չդարձավ այդ շարժման ուղղահավատ կողմնակիցը<sup>180</sup>: Մասնակցելով սյուրռեալիստների ցուցահանդեսներին, ինչպես դա եղավ 1932-ին Լեոնս Ռոզենբերգի փարիզյան «L'Effort Moderne» («Նոր ուժ») պատկերասրահում, հայ արվեստագետը կազմակերպորեն չէր հարում նրանց, չէր ստորագրում այդ խմբակցության հռչակագրերը, չէր արտահայտվում գերիրապաշտների հրատարակած լրագրերի և ամսագրերի էջերից: Մարդկային մտքի և բանականության ճանաչողական դերն ու ունակությունը ժխտող կամ նվազեցնող՝ Ակրի Բերգսոնի կյանքի փիլիսոփայության և Զիգմունդ Ֆրոյդի հոգեվերլուծության հիմքերի վրա խարսխված սյուրռեալիզմի տեսական ծրագիրը շատ առումներով ընդունելի չէր աշխարհը գիտելիքներով և իմացությամբ, այլ ոչ թե հուզական կամ ինտուիտիվ՝ կռահողական ազդակներով ընկալելու ու հասկանալու սովոր արվեստագետի քննասիրական սթափ մտածողության համար<sup>181</sup>: Ու թեև 1920-ականների սկզբին և 1930-ականների վերջին նրա կատարած աշխատանքներում, նախորդների համեմատ, ակտիվանում է ստեղծագործական անգիտակից մղումների դերը, և դրանցում առաջին անգամ երևում են սեքսուալ անթաքույց նշանակները, սեռական միասնացման կամ երկատման՝ ֆրոյդիստական բնորոշ մոտիվները<sup>182</sup>, այնուամենայնիվ սյուրռեալիզմի ազդեցությունն առավելապես դրսևորվում է Քոչարի նկարների ու քանդակների "ոչ թե գաղափարական իմաստակիր շերտերում, այլ սոսկ ձևական, ֆորմալ միջոցների ու հնարների մեջ"<sup>183</sup>: Դեռ ֆուտուրիստների սկսած "արվեստի աննարդկայնացման" գործընթացը շարունակող և խորացնող սյուրռեալիստների աշխատանքներին հակառակ, Քոչարի՝ "սնամեջ մարդկանց" պատկերող նույնիսկ առավել անդեմ ու ցնորական տեսիլներում բացակայում է կերպարների թերատության, հոգեկան դատարկության կամ ունայ-

<sup>179</sup> **Քոչար Երվանդ**, Պիկասո / Գրական թերթ, Երևան, 1966, 4 նոյեմբերի:

<sup>180</sup> Տաղանդավոր սյուրռեալիստ և արտորակցիոնիստ՝ հայազգի ֆրանսիացի նկարիչ Լևոն Թուրունջյանի (1905/1906–1968) ստեղծագործական կենսագրությանը մենք անդրադարձել ենք հետևյալ հոդվածներում. **Aghassian Ararat**. Léon (Lewon) Tutundjian / Armenien. Wiederentdeckung einer alten Kulturlandschaft. Museum Bochum, 1995, S. 387–388 և **Աղասյան Արարատ**, Լևոն Թուրունջյանի երրորդ "վերադարձը" / Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ, Երևան, 1997, էջ 15–21:

<sup>181</sup> Պիկասոյին նվիրված իր վերոհիշյալ հոդվածում, հաստատելով սյուրռեալիստների տեսական հայացքների ու նրանց ստեղծագործության վրա Ա. Բերգսոնի և Զ. Ֆրոյդի ազդեցությունը, Քոչարը գրում է. "Եթե կուրիզմի տեսությունը հիմնավորվում էր Էյնշտեյնի, Ռիմանի և Լոբաչևսկու թեորիաներով, ապա սյուրռեալիստական արվեստի կոնցեպցիան ամրապնդվում ու շաղախվում էր Ֆրոյդի և Բերգսոնի տեսություններով" (տե՛ս. **Քոչար Երվանդ**, Պիկասո...):

<sup>182</sup> "Երկփեղկվածը"՝ այսպես է կոչվում 1933-ին նկարչի ստեղծած գրաֆիկական թերթը, իսկ Հերմաֆրոդիտի կամ Անդրոգինի կերպարին հանդիպում ենք ոչ միայն նրա փարիզյան շրջանի, այլև հետագա աշխատանքներում: Կնոջ կրծքով ու տղամարդու դեմքով երկսեռ եակը 1930-ական թվականներին կարևոր տեղ էր գրավում նաև սյուրռեալիստներից շատերի արվեստում, որոնք այդ կերպարը մեկնաբանում էին համաձայն Ֆրոյդի՝ որպես մարդու հոգեկան բխեքսուալ խառնվածքի խորհրդանշան: Բերենթ թեկուզ Մարվադոր Դալիի "Կին-երեխայի հիշողությունը" և "Հեղուկ ցանկությունների ծնունդը" (երկուսն էլ՝ 1932) հանրահայտ կտավների օրինակը:

<sup>183</sup> **Пилпосян А. С.**, Ерванд Кочар..., с. 12.



նության հիվանդագին տպավորությունը: Մարդկային կենդանի ապրումները և հուզական շարժումները, կարծես, շոշափվում ու թափանցում են այդ կերպարների մարմնական անկիրք և անզգայուն թաղանթի տակից:

Սակայն ճիշտ չէր լինի Քոչարի փարիզյան նկարչության ձևական լեզուն կապել միմիայն սյուրռեալիզմի ոճաբանության հետ, քանի որ այն օժտված է նաև "արտասանական" այլ շեշտադրումներով: Այսպես՝ շարունակում են կենսունակ մնալ դասական արվեստի ոճական տիպիկ հայտանիշները, որոնք դրսևորվում են ոչ միայն գծանկարի անբասիր մաքրության կամ կերպարների պլաստիկական անթերի մշակվածության, այլև երբեմն կլասիկ արվեստի ծանոթ նմուշներն ուղղակիորեն քաղվածելու մեջ: Անկարելի է չնկատել այն նմանությունը, որն ակնհայտ է Քոչարի մի շարք աշխատանքներում պատկերված կանանց ("Բանալիով կինը", 1930, "Կինը և աքաղաղը", 1930, "Նժույգով կինը", 1931) և անտիկ Վենետրաների կամ հայ նկարչի թղթագանգվածից պատրաստված ու ջրաներկով գունազարդված քանդակներից մեկի ("Պառկած տղամարդը", 1933) և ժամանակին Պարթենոնի ճակտոնին թիկնած Դիոնիսոսի ֆիգուրի միջև: Ու թող մեզ չշփոթեցնի այն գուցե թե ավելորդ ընտանեկարի վերաբերմունքը, որն իրեն մեկ-մեկ թույլ է տալիս Քոչարը դասական բնօրինակներին անդրադառնալիս: Դա միանգամայն համահունչ էր ժամանակի ոգուն, այդպես էին վարվում գեղարվեստական ավանգարդի ներկայացուցիչներից շատերը, առաջին հերթին՝ սյուրռեալիստները: Հիշենք Ադեսանդրոսի "Միլոսյան Վեներայի", Լեոնարդո դա Վինչիի "Մոնա Լիզայի", Յան Վերմեերի "Ժանեկագործուհու", Ժան-Ֆրանսուա Միլլեի "Անժելյուսի", Էդուարդ Մանեի "Օլիմպիայի" առավել քան ազատ, իսկ որոշ դեպքերում պարզապես անպարկեշտ մեկնությունները Սալվադոր Դալիի, Մարսել Դյուշանի կամ Ռոնե Մագրիտի համանուն աշխատանքներում: Ինչպես տեսնում ենք, Քոչարի և սյուրռեալիստների ստեղծագործության միջև այստեղ ևս կան շփման կետեր, թեև ընդհանուր առմամբ հայ վարպետի "կլասիցիզմը" ավելի մոտ էր Պիկասոյի նոր դասականությանը, քան Դալիի ակադեմիզմին, իսկ ազատ ցիտման, քաղվածման մեթոդը նրա արվեստում հանրային էպատաժի, սկանդալային խայտառակ արարմունքի ո՛չ միջոց էր, ո՛չ էլ նպատակ:

Քոչարի փարիզյան նկարներում ու քանդակներում իրենց յուրովի բեկումն են ստացել նաև ֆուտուրիզմի ոճական կարևոր հատկանիշները, մասնավորաբար ձևերին շարժականություն տվող գունատրոհումն ու եզրագծերի բազմապատկումը, ինչպես նաև նույն հորինվածքում տարաժամանակ երևույթների, գործողությունների ու վիճակների համաժամանակ պատկերումը, որի շնորհիվ, օրինակ, խոշոր պլանով տրված մարդկանց դեմքերին, ասես հայելում, արտացոլվում են կինոկադրեր հիշեցնող փոքրաչափ զանազան տեսարաններ՝ հնարք, որը լայնորեն կիրառվում էր իտալացի ապագայապաշտ նկարիչ և քանդակագործ Ջինո Սևերինիի 1910-ականների կտավներում<sup>184</sup>: Ֆուտուրիստների ստեղծագործության հետ որոշակի զուգահեռներ են նկատվում նաև Քոչարի փարիզյան

<sup>184</sup> Ջինո Սևերինիին, ինչպես և գեղարվեստական ավանգարդի ներկայացուցիչներից շատերին, Քոչարը ծանոթ էր անձամբ: Իտալացի ֆուտուրիստի, ֆրանսիացիներ Ֆերնան Լեժեի, Ժան Մետցենժեի և Չվեյցարացի ինքնուս նկարիչ Ժան-Պիեռ Վիոյեի հետ հայ արվեստագետը մասնակցել է Լոնդոնի "Leicester" ("Լեյչեսթեր") պատկերասրահում 1930-ի գարնանը բացված խմբային ցուցահանդեսին: Սևերինիի կիրառած "ներթափանց" պատկերի նույն եղանակը յուրատեսակ դրսևորումներ է ստացել նաև եվրոպական ավանգարդիզմի խոշոր վարպետներ Ջորջո դե Կիրիկոյի և Մարկ Շագալի համաժամ առանձին գործերում:

շրջանի առանձին՝ առավելապես գրաֆիկական աշխատանքների թեմատիկ ու կերպարային բովանդակության մեջ: Հայտնի է, որ ֆուտուրիստները ցնծությամբ էին ողջունում համընդհանուր մեքենայացման մոտալուտ դարը՝ ազդեցիկ խանդավառությամբ գովերգելով տեխնիկական քաղաքակրթության արտաքին նշանները: Իսկ որպես դրա գերագույն կենտրոն նրանք տեսնում էին ապագայի քաղաքը՝ մեծ քաղաքների համախառնումից առաջացած հսկա Մեգալոպոլիսը, որտեղ և պետք է բնակվեր նրանց անհոգի, անզգամ, բայց ֆիզիկապես պինդ հերոսը՝ նա, ում ֆուտուրիստական մանիֆեստներից մեկում "պահեստամասերով զինված մեքենայակերպ մարդ" էին անվանել<sup>185</sup>: 1930-ական թվականներին "մարդն ու քաղաքը" թեման, ինչպես և "մարդ-քաղաքի" կերպարը գերել էին նաև Երվանդ Քոչարի ստեղծագործական երևակայությունը<sup>186</sup>: Ճիշտ է, դրանք հետաքրքրում էին նկարչին, դիտարկվում ու մեկնաբանվում սկզբունքորեն այլ բարոյական և խրատական դիրքերից:

Ինչպիսի՞ն է լինելու գալիքի մարդը, ի՞նչ վտանգներով են հղի կյանքի համատարած մեքենայացումը, մերկ տեխնիցիզմի պաշտամունքը, արդյո՞ք դրանք չեն նպաստի անհատի անկմանն ու աստիճանական վատթարացմանը, նրա հոգևոր դատարկությանը, արդյո՞ք չի խափանվի մարդու ներդաշնակ կապը քաղաքակրթության վարատումներից օրեցօր ուտվող, ամենահաղթ քաղաքներով, ուրբանիստական երկաթբետոնե և ապակեպատ տարածքներով ու լանդշաֆտներով ճնշվող-նեղվող մայր բնության հետ: Ահա այն հարցերը, որոնցով զբաղված էր Քոչարը: Ֆուտուրիստների ռազմաշունչ լավատեսությունը վերջինիս աշխատանքներում փոխարինվում է խոր շփոթությամբ, մարդկային ճակատագրի հանդեպ ներքին անհանգստությամբ, բարոյական և գեղագիտական իդեալների և արժեքների հնարավոր կործանման, հասարակության "անմարդկայնացման" ավերիչ հետևանքների մասին տագնապալից մտորումներով: Ֆուտուրիստների հերոսին՝ սրտի տեղում շարժիչ կրող "լարովի մարդուն" անձանոթ էին վախն ու կասկածը, ամոթն ու ապաշավանքը: Այլ կերպարանքով է հանդես գալիս 1933-ին Քոչարի ստեղծած գեղանկարչական, քանդակային և, հատկապես, գրաֆիկական մի շարք գործերի հերոսը ("Քաղաք", "Գալիքի մարդը", "Մարդն ու քաղաքը", "Մարդ-քաղաք", "Գլուխ-քաղաք", "Գլուխ"): Նա ևս, կարծես, միս ու արյունից գուրկ, անբնակելի երկնաքերերով սեղմված, անվերջանալի, խուլ և ամալի պողոտաներով ճեղքված մի վիթխարի քաղաքի արհեստածին էակներից է: Այդ քաղաքում մարդն իրեն միայնակ, անտերունչ է զգում, կենդանի ջերմության պակասը գոսացնում, ցամքեցնում է մարդկային հոգին, այն պատում խորթացման անթափանց զրահով: Այդպես է, ըստ Քոչարի, ծնվում "մեքենայակերպ մարդը": Սակայն որքա՞ն հեռու է նա ֆուտուրիստների "դրական հերոսից": Բայց արդյո՞ք նա հերոս է, ամենակարող գերմարդ, թե անբարեպատեհ հանգամանքների ողբերգական զոհ: Եվ արդյո՞ք դա չէ պատճառը, որ նրա լայնորեն բացված աչքերում ու դեռ մինչև վերջ չդիմազրկված դեմքի արտահայտության մեջ ոչ թե գերազանցության կնիք, այլ անանց տխրություն ու խորը թախանձ կա: Քոչարի փարիզյան դրոշ աշխատանքներում այդ տրամադրությունները հայտարարված են արդեն իսկ դրանց վերնագրերում՝ "Մելամաղձություն", "Անձկատենչը" և այլն: Հայ ար-

<sup>185</sup> Ст' у. Манифесты итальянских футуристов. Москва, 1914, с. 42.

<sup>186</sup> Այդ թեմաներն ու կերպարները գեղարվեստական անսովոր մարմավորում գտան նկարչի "Homo sapiens" ("Մարդ բանական", 1933) յուղանկարում, որտեղ կրկին տեսնում ենք Հերմաֆրոդիտին:

վեստագետի "մեքենայակերպ մարդը" դեռ ունակ է տառապելու, նրանում դեռ թրթփում է վերածնվելու պատրաստ հոգին, նա դժգոհ է իր ճակատագրից ու դժբախտ: Տեխնիկական առաջընթացի երկաթյա օղբ դեռ չի հասցրել ամբողջությամբ տրորել նրա անձը, նրանում ջնջել բնության և Աստծո մասին վերջին հիշողությունը:

Փարիզում Քոչարը սև կամ գունավոր մատիտներով, գրիչով, վրձնով ստեղծել է գրաֆիկական հարյուրավոր թերթեր ու փակցանկարներ<sup>187</sup>: Գեղարվեստական այն հղացումները, որոնք հետագայում պետք է մարմնավորվեին Քոչարի երփնագիր կամ քանդակային աշխատանքներում, հաճախ նախապես անցնում էին նրա գրաֆիկական "մաքրարանի" կրակի միջով: Բայց արվեստագետի գծանկարչական այդ թերթերից շատերը միանգամայն ինքնաբավ, ավարտուն հորինվածքներ են՝ սկսած հանկարծաստեղծ փոքրադիր պատկերներից մինչև լրջորեն մտածված ու հիմնովին մշակված դիմանկարները: Փարիզում Քոչարի կատարած գրաֆիկական գործերը, նրա գեղանկարների համեմատ, ավելի ճկուն և բազմատեսակ են թվում ժանրերի, արծարծվող թեմաների ու մոտիվների շրջանման առումով: Ինչ վերաբերում է դրանց ձևական լեզվին, գեղարվեստական ոճին և արտահայտչական միջոցներին, ապա որևէ էական, սկզբունքային տարբերություն այստեղ չենք տեսնում: Բացառություն են միայն վերոհիշյալ՝ ռեալիստական մեթոդով լուծված կենդանագրերը, որոնց առավել բնորոշ օրինակներից է "Բանվորի գլուխը" (1933):

Քոչարի գծանկարների շարքում բոլորովին յուրահատուկ է հիմնականում 1930-ին կատարված թերթերի խումբը: Նկարչի մյուս աշխատանքներից դրանք առանձնանում են կիրառված տեխնիկայով, որն ինքը Քոչարն իր օրագրերում բնութագրել է ֆրանսերեն "repoussé" (ծերատում, դրոշմում) բառով և որն այսպես կոչված "էստամպաժի", այն է՝ թղթի կամ կտորեղենի դրոշմագարդման մի ուրույն տեսակ է: Տվյալ դեպքում Քոչարն օգտագործում է մոմապատ և, որպես կանոն, երանգավոր թուղթը: Խազիզելով, սեղմելով ու տրորելով այն անսայր մատիտով, քարեգրիչով կամ մետաղաձողով, նա հասնում է հարթ կամ խորափոր, անգույն կամ մասամբ գունագեղված գրաֆիկական ռելիեֆի արտահայտիչ տպավորության: Այդ կարգի ուշագրավ ստեղծագործություններից են "Շերարձակ կինը", "Մարդը և թռչունը", "Կինն ու տղամարդը", "Կանացի ֆիգուրը", "Ձկներով նստյալմորտը", "Տղամարդու կիսադեմը" և այլն<sup>188</sup>:

Փարիզում Քոչարն առավելապես ճանաչված էր որպես գեղանկարիչ: Պակաս հայտնի էին նրա գրաֆիկական աշխատանքները, իսկ քանդակների մասին պատկերացումը շատ աղոտ էր, չնչին: Ըստ էության, վերջիններիս հետ ծանոթությունը տեղի ունեցավ միայն 1934-ին՝ նկարչի հայրենիք վերադառնալուց երկու տարի առաջ Փարիզի "Vignon" ("Վինյոն") սալոնում բացված նրա անձնական երրորդ, օտար ավերում հետինը դարձած ցուցահանդեսում: Քոչարի այդ ժամանակվա ստեղծագործության մեջ քանդակն իսկապես աչքի չէր ընկնում ու շարունակում էր ստվերում մնալ: Այն հազվադեպ դիմաքանդակներին, որոնք նա ծեփել

<sup>187</sup> Հետաքրքիր է, որ ոչ միայն փարիզյան շրջանում, այլև իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում օգտվելով այսպես կոչված "եզակի գրաֆիկայի"՝ բուն գծանկարի գանազան նյութերից ու տեխնիկաներից, Քոչարն այդպես էլ չանդրադարձավ տպագիր, բազմացվող գրաֆիկայի՝ փորագրության տարատեսակներից որևէ մեկին:

<sup>188</sup> Երվանդ Քոչարի փարիզյան գծանկարների և, առհասարակ, նրա գրաֆիկական ողջ ժառանգության մասին հանգամանորեն տե՛ս. **Акопян Артур**. Графика Ерванда Кочара. Ереван, 2007.

կամ փորագրել էր Թիֆլիսում, ապա Սուրբ Ղազար կղզում, փարիզյան շրջանում հավելվեցին ևս մի քանի գիպսե արձաններ՝ "Գլխաքանդակը" (1933), "Շերմաֆրոդիտը" (1933), "Կնոջ գլուխը" (1934): Նախորդ քանդակների համեմատությամբ, սրանք բնական ձևերից շեղված և վերացարկված մարդակերպ "գլուխներ" ու "ֆիգուրներ" են, որոնք փորփրված կամ ակոսված են խոր բացվածքներով, կտրրվածքներով և լուսածերպերով: Մնամեջ, դատարկ, միջանցիկ քանդակի գաղափարն արդեն հաստատվել և ինքնատիպ դրսևորումներ էր ստացել եվրոպական կերպարվեստում: Դեռ 1925-ին՝ նույն թվականին, երբ ծնունդ առավ Քոչարի Տարածական նկարչությունը, Ժակ Լիպշիցը Փարիզում ցուցադրեց իր այսպես կոչված "տրանսպարենտ"՝ թափանցանց առաջին քանդակները, որոնց հետևեցին Պաբլո Գարգալոյի, Օսիպ Ցադկինի, Հենրի Մուռի և այլոց քանդակային նմանօրինակ հորինվածքները: Քոչարն այդ տարիներին սերտ կապեր ուներ Ժակ Լիպշիցի հետ, և նրանց մտերմացնող շատ հանգամանքներ կային. երկուսն էլ ծագումով Ռուսաստանից էին, ժամանակին անցել էին կուրիզմի արահետներով և փարիզյան ցուցադրահներում հաճախ կողք-կողքի էին դնում իրենց գործերը<sup>189</sup>: Բայց եթե անգամ ընդունենք, որ միջանցիկ, թափանցանց քանդակի գաղափարը Քոչարը փոխառել էր իրենից տարիքով ավագ և ավելի մեծ փորձ ունեցող գործընկերոջից, մինևնույն է ապշում ես, թե ինչպես է նա կարողացել այդ գաղափարն ընտելացնել, հարմարեցնել իր սեփական ստեղծագործական մտքին ու երևակայությանը, քանզի Քոչարի փարիզյան քանդակները, տարափոխելով նրա համաժամ նկարչությունից եկող "գալիքի մարդու", "երկփեղկված մարդու" կամ "մարդ-քաղաքի" ծանոթ կերպարները, արտակարգ ինքնակա ու յուրահնար աշխատանքներ են:

Հատուկ ուշադրության է արժանի Քոչարի՝ Հայաստան մեկնելուց քիչ առաջ ստեղծված քանդակներից մեկը: Ակատի ունենք Իոսիֆ Ստալինի՝ լուսանրկարով հայտնի գիպսե խոշոր կիսանդրին: Ի՞նչն էր ստիպել քաղաքականությունից միշտ հեռու կանգնած արվեստագետին դառնալ սովետական առաջնորդի ահեղ կերպարին: Միգուցե դա Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աշխարհից օրեցօր մեկուսացող երկիրը կրկին տեսնելու վճիռ կայացրած և խորհրդային իշխանությունների սփրսը շահելու, նրանց սեփական բարեհուսության խոսուն ապացույց ներկայացնելու պահանջով դրդված արվեստագետի միամիտ հնարն ու միակ հույսն էր: Այդ չէ՞ր պատճառը, որ 1936-ի մայիսին տունդարձի ճամփան բռնած ֆրանսաբնակ հարյուրավոր հայերի նման Մարսելի նավահանգստից դեպի Բաթում ուղևորվող Քոչարը հետոն էր վերցրել նաև "Ստալինին"՝ Փարիզում թողնելով իր հեղինակած գործերից շատերը<sup>190</sup>: Այստեղ, սակայն, հանդիպական հարց է ծագում. իսկ ինչու՞ արվեստագետը հիշյալ քանդակին ռեալիստական

<sup>189</sup> Այդպիսի մի նշանակալից ցուցահանդեսում նրանց համատեղ մասնակցության մասին է խոսվում Քոչարի՝ Պիկասոյին նվիրված վերոհիշյալ հոդվածում. "Երբ [1925-ին – Ա. Ա.] Փարիզում կազմակերպվեց համաշխարհային մեծ ցուցահանդես, որ կոչվում էր "Այսօրվա արվեստ", Պիկասոն չուզեց ցուցադրվել ընդհանուր մեծ դահլիճում, այլ նախընտրեց ցուցադրվել առանձին փոքր սենյակում՝ արձանագործ Լիպշիցի և տողերիս հեղինակի հետ" (տե՛ս. *Քոչար Երվանդ*, Պիկասո...):

<sup>190</sup> Քոչարի՝ Փարիզում մնացած ստեղծագործությունները խնամքով պահում էր նրա երկրորդ կինը (առաջինը՝ Վարդենին, մահացել էր 1928-ին)՝ շնորհալի նկարչուհի Մելինե Քոչարը (օրիորդական ազգանունը՝ Օհանյան, 1899–1969), որի հետ նա ամուսնացել էր 1930-ին և ում վիճակված էր ընդմիշտ բաժանվել ամուսնուց: 1969-ին՝ փարիզյան "Percier" ("Պերսյե") պատկերասրահում Երվանդ Քոչարի հետահայաց ցուցահանդեսից երեք տարի անց, Մելինեն ինքնասպան եղավ: Նրա գունաներկ դիմանկարը (1930) իրավամբ համարվում է Քոչարի լավագույն կտավներից մեկը:

ձևեր չի տվել: Այո, Ստալինի կիսանդրին պատմական կոնկրետ դեմք էր պատկերում և ընդհանուր առմամբ բավականին ճշմարտանման արտաքին ուներ, բայց է՛լ ավելի շատ այն նմանվում էր պյուրոեալիստական և ֆուտուրիստական քիչ առաջ դիտված "գլուխներին": Առաջնորդի "մեքենայակերպ մարդկանց" հիշեցնող կիսաֆիգուրը տրված էր աքսոնոմետրիկ՝ առանցքաչափական կտրվածքով, և դիտորդները նրա կրծքի և գանգատուփի մեջ կարող էին տեսնել մետաղյա պտուտակներ, փողակներ ու ժանանիվներ: Հազիվ թե Քոչարն այս աշխատանքին հաղորդած լիներ մերկացուցիչ ծաղրական իմաստ (այլապես ինչու՞ նա այդ արձանը հայրենիք տարավ), բայց փաստը մնում է փաստ, որ Թիֆլիսում հայտնվելուց հետո<sup>191</sup> ամիսներ չանցած նա ոչնչացրեց այն: Թեև Քոչարը "գիտեր, որ Երեւանի մեջ իր ստեղծագործութիւնները պիտի դրուէին կապանքի տակ"<sup>192</sup>, նա, այնուհանդերձ, լավ չէր պատկերացնում խորհրդային արվեստի ու գեղարվեստական կյանքի իրական վիճակը:

Նկարչի՝ Փարիզից մեկնելու որոշումը շատերի, նույնիսկ նրա մերձավորների համար անսպասելի էր և առաջ բերեց նրանց տարակուսանքը: Չէ՞ որ Քոչարը բավականին լայն ճանաչում էր գտել: 1936-ին Փարիզում լույս տեսնող "N+1" ամսագրի հավելվածում հրատարակված դիմանսիոնիզմի (ֆրանսերեն dimension՝ չափս, չափում բառերից) մանիֆեստում հռչակվել էին այն նույն գաղափարները, որոնք արդեն իսկ արտահայտվել էին Քոչարի գրավոր և բանավոր առանձին ելույթներում ու մարմնավորվել նրա Տարածական նկարչության մեջ: Հայ արվեստագետի ստորագրությունն այդ փաստաթղթի տակ դրված էր Բեն Նիկոլսոնի, Ալեքսանդր Կալդերի, Դավիթ Կակաբաձեի, Խուան Միրոյի, Հանս Արպի, Ռոբեր Դելունեի, Սարսել Դյուշանի, Վասիլի Կանդինսկու, Ֆրանսիս Պիկաբիայի, Էնրիկո Պրամպուլինիի, Շառլ Միրատոյի ու եվրոպական ավանգարդի նշանավոր այլ վարպետների անունների կողքին<sup>193</sup>: Քոչարի ստեղծագործության վերաբերյալ հիացական կարծիքներ էին հայտնել ֆրանսիացի հեղինակավոր քննադատները, նրա աշխատանքներն այսօր էլ կարելի է տեսնել ոչ միայն Փարիզի Ժորժ Պոմպիդուի անվան արվեստի և մշակույթի կենտրոնում, այլև Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի և այլ երկրների թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում: Համեմատաբար կարճ ժամանակում դրան հասնելը օտարի համար բնավ հեշտ գործ չէր, այն էլ՝ Փարիզում: Շատերն այդ մասին միայն երագում էին: Եվ, այդուհանդերձ, վիճակը նետված էր, ու իր ընտրության մեջ Քոչարն ամրակամ էր: Երեք տասնամյակ անց, մեկնաբանելով դեպքը, Վալդեմար Ժորժը կգրի. "Այս մեկնումին խորունկ նպատակները մեզի անձանօթ կը մնան... Արդե՞ք Քոչար նախընտրեց Երեւանը, Խորհրդային Հայաստանի մայրա-

<sup>191</sup> Խորհրդային Միություն ժամանած Քոչարն սկզբում կանգ առավ Թիֆլիսում, ուր ապրում էին նրա հարազատները՝ մայրն ու քույրերը, բայց այն բանից հետո, երբ մերժվեց նրա՝ Վրաստանի նկարիչների միությանն անդամակցելու խնդրագիրը, նա 1936-ի աշնանը տեղափոխվեց Երևան:

<sup>192</sup> Տե՛ս. **Ժորժ Վալդեմար**, Քոչար եւ նկարչութիւնը տարածութեան մէջ..., էջ 33:

<sup>193</sup> Հետաքրքիր է, որ "Դիմանսիոնիզմի մանիֆեստի" հրատարակման պահին Քոչարն արդեն Վրաստանում էր: Սակայն, հաշվի առնելով նրա դերն ու վաստակը տարածական արվեստի ասպարեզում, հռչակագրի կազմողներն անհրաժեշտ են համարել նշել նաև հայ վարպետի անունը, վերջինիս այդ մասին տեղեկացնելով արդեն post factum՝ կատարվածից հետո: Հռչակագրի օրինակը և Շառլ Միրատոյի առընթեր նամակը պահվում են Երվանդ Քոչարի երևանյան թանգարանի արխիվում: Այդ ամենին վերաբերող մանրամասները տե՛ս. **Մարտիրոսյան-Քոչար Լալա**, Դիմանսիոնիզմի մանիֆեստը եւ նրա դերը ժամանակակից արվեստում / Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ, Երևան, 1998, էջ 63-68:

քաղաքը, քանի որ երկրի կարօտը կը լափէր զինք, ինչպէս Փրօփօֆիէր, թե՛ յանցանքի զգացում մը ունէր յեղափոխութեան խոստացուած երկրին հանդէպ... Ամեն պարագայի, Քոչար կը վերադառնայ Խորհրդային Միութիւն, ինչպէս ուրիշներ կուսակրօն կը դառնան<sup>194</sup>: Քննադատն ինչ-որ տեղ իրավացի էր. հայրենիք մեկնելով՝ Քոչարը, անշուշտ, շատ բան էր գոհում: 1930-ականների վերջում "սոցիալիստական ռեալիզմի" արգելոցում փարիզյան ոճով աշխատելն անհնարին էր: Նա ստիպված էր հրաժարվել իր ստեղծագործության նախորդ շրջանում որդեգրած գեղարվեստական սկզբունքներից: Նրա նկարներն ու քանդակներն առժամանակ կորցրեցին մինչ այդ ձեռք բերած արտահայտչական ուժն ու կորովը, նորարարական որոնող ոգին, մի կերպ տեղավորվելով այդ տարիների խորհրդային կերպարվեստի "պրոկրուստյան մահճում": Ավանգարդիզմի ֆորմալ լեզուն, որին Քոչարը կատարելապես տիրապետում էր և որի ձևավորմանն անձամբ նպաստել էր, երկար ժամանակ, կարծես, ավազակ նրա գործերում<sup>195</sup>:

(շ ա ր ու ն ա կ ե լ ի )

**Արարտ Բոչարյան – В пространстве Ерванда Кочара.** – Состоящий из трех частей очерк посвящен жизни и деятельности одного из крупнейших армянских художников XX века – выдающегося скульптора, живописца и графика Ерванда Кочара (1899-1979). Последовательно рассматриваются основные этапы и характерные особенности творческой эволюции мастера, подробно анализируются его наиболее интересные и значительные произведения. Большое внимание уделяется парижскому периоду в искусстве Кочара, отмеченному поисками новых, нетрадиционных форм и методов художественного высказывания, – поисками, которые велись им в общем русле русского и западноевропейского авангардизма.

В данном сборнике вниманию читателей предлагается вторая часть очерка, которая рассказывает о парижском периоде творчества армянского мастера.

**Ararat Aghasyan – In Yervand Kochar's space.** – The three-part essay presents the life and activity of one of the greatest Armenian artists of the XX century – the outstanding sculptor, painter and graphic artist Yervand Kochar (1899-1979). The major phases and specific features of the master's creative evolution are sequentially considered, detailed analysis of his most interesting and remarkable works is conducted. Considerable attention is given to the Parisian period in Kochar's art, marked by quests of novel, non-traditional forms and methods of artistic utterance – quests, conducted in line with the general trends of Russian and west-European avant-garde.

In this collection, the readers are offered the second part of the essay, telling about the Parisian period in the career of the Armenian master.

<sup>194</sup> **Ճորժ Վալտենմար,** Քոչար եւ նկարչութիւնը տարածութեան մէջ..., էջ 32–33:

<sup>195</sup> Երվանդ Քոչարի փարիզյան կյանքին և գործունեությանը վերաբերող հետաքրքիր, երբեմն զվարճալի մանրամասներ կան հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի որդու՝ Վիգեն Իսահակյանի հուշերի գրքում (տե՛ս. Իսահակյան Վիգեն, Փարիզ, Քոչար, անցած օրեր..., Երևան, 2006), որը բացվում է հիշատակագրին պատկերող՝ Քոչարի ձեռքով 1933-ին բնականինք կատարված գրաֆիկական սակավագիծ, բայց արտահայտիչ դիմանկարի վերապայույամբ:

---

## ՇՈՒՇԻՆ՝ “ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ”

### ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

“1920 թվականի նախօրյակին Շուշին եղել է մի ծաղկող երաժշտական օազիս: Այսօր տեղ, որպես սոխակների ծառուղուց, հնչել է “համաարևելյան” համբավ ձևոք բերած երաժշտությունը”<sup>196</sup>:

*Մարիետա ՇԱՀԻՆՅԱՆ*

Ծանրակշիռ է Շուշիի դերն ու նշանակությունը Անդրկովկասի, Միջին Ասիայի և Ռուսաստանի, ինչպես նաև սփյուռքահայ երաժշտարվեստի՝ կոմպոզիտորական և կատարողական արվեստի զարգացման գործում: Պատահական չէ, որ քաղաքը կոչվել է “Անդրկովկասի կոնսերվատորիա”: Այստեղ ակտիվ է եղել երաժշտական կյանքը, ինչն էլ իր հերթին նպաստել է շուշեցիների երաժշտական մակարդակի բարձրացմանը: Այստեղ են ծնունդ առել և ձևավորվել երաժշտարվեստի հետագայում անվանի գործիչներ: Շուշիում են ծնվել և նրա երաժշտական մթնոլորտում որպես երաժիշտներ ձևավորվել հայ կոմպոզիտորներ և երաժիշտկատարողներ Գրիգոր Սյունին, Եղիշե Բաղդասարյանը, Դանիել Ղազարյանը, Արշակ Կոստանյանը, Բողգան Թումանյանը, Հովհաննես Իոանիսյանը, Ալեքսանդր Ալեքսանդրյանը, Գրիգոր Մելիքյանը, Բալա Մելիքյանը և ուրիշներ: Ծանրակշիռ է Շուշվա դերը ժողովրդական երաժշտական արվեստի զարգացման գործում: Անդրկովկասում լայն ճանաչում գտած շուշեցի երաժիշտները նոր աստիճանի են բարձրացրել ժողովրդական երաժշտական գործիքներով (թառ, քամանչա, զուռնա և այլն) կատարողական արվեստը, մշակել-կատարելագործել են արևելյան երաժշտության զանազան ժանրեր: Շուշեցի երաժիշտներից շատերն իրենց բազմարդյուն գործունեությունը նվիրաբերեցին ոչ միայն հարազատ, այլև տարբեր ժողովուրդների ազգային երաժշտության զարգացման գործին:

20-րդ դարասկզբի հայ երաժշտարվեստի երախտավորների շարքում իր արժանի տեղն է գրավում կոմպոզիտոր և խմբավար, **Գրիգոր Սյունի** կեղծանունով հանդես եկած Գրիգոր Միրզայանը, որն իր ստեղծագործությամբ և, ի մասնավորի, ժողովրդական երգերի մշակմամբ զգալի դեր կատարեց հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ոճի բյուրեղացման գործում: Մելիքների տոհմից էր սերում Գրիգորի պապի հայրը՝ Մելիք Հովհաննես Միրզաբեկյան-Սյունին, նույն ինքը՝ աշուղ Թեյմուրը, որը Պարսից Ֆաթալի շահի հրավերով երկար տարիներ անց էր կացրել պալատում, երգել ու հեղինակել բազմաթիվ պարսկական թեսնիֆներ: Շարունակելով հոր արվեստը, Թեյմուրի զավակներից մեկը շուտով Խնձորեսկից տեղափոխվում է Շուշի, դառնում աշուղ Դադասի Սյունեցի, այնուհետև՝ Աթաբեկ: Դադասու որդիներից Հովհաննեսը՝ ժողովրդական բանաստեղծ-երգիչ և մանրանկարիչ, աշուղ Վարանդեցին, ամուսնանում է Աննա Հախունցի հետ: Ամուսինները մեկը մյուսի էտևից կորցնում են իրենց տասնչորս զավակներին՝ դեռևս մանուկ հասակում: Որդեկորուս հոր, արդեն նավթարդյու-

---

<sup>196</sup> Յ. Բրուտյան, Արցախյան ոգին երաժշտության ծիրի մեջ, Երևան, 2000, էջ 34:

նաբերության ու պղնձարդյունաբերության ասպարեզի խոշոր սեփականատեր դարձած մեծահարուստ Վանի բեյի մեծագույն երագանքն էր գավակ ունենալը: 1876-ի սեպտեմբերի 10-ին Գանձակի (հետագայում՝ Կիրովաբադ) գավառի Գետաբեկ գյուղում ծնվում է նրա տասնհինգերորդ գավակը՝ Գրիգոր Հովհաննես Վարանդեցի Դադասի Միրզաբեկյան Սյունին: Երկու տարի անց Սյունիների ընտանիքը բնակություն է հաստատում Շուշիում: Տազնապած նորածնի առողջական թույլ վիճակով և նախորդ երեխաների դժբախտ ճակատագրով, Գրիգորի ծնողները յոթ տարի շարունակ դիմում են տարբեր գուշակների և կատարում նրանց թելադրանքները: Առողջ մեծացած Գրիգորի 7-ամյակը հայրը նշում է աննախադեպ ճոխությամբ. այդ օրը նա որդուն նվիրում է իր ձեռքով պատրաստած դափն ու սուրը և ասում՝ «...առ այս դափն և երգե ամեն անգամ, որ սիրտդ նեղանա և սրտիդ ցավերը փարատին: Իսկ երբ մեկը քեզի ցավ պատճառե և կամ վրադ բռնանա, առ այս սուրը և կուրծքը խրե... բայց, որդի՛, տե՛ս որ այս դափն ու սուրը պարապ ժամանցներու կամ խենթ նպատակներու համար չի գործածես»<sup>197</sup>: Սերելով աշուղների տոհմից, օժտված լինելով հնչեղ ձայնով ու երաժշտական վառ ընդունակություններով, Գրիգորը վաղ հասակում տարվում է երաժշտությամբ: Նրա մանկության տարիներն անցնում են Շուշիում, որտեղ և ստանում է տարրական կրթությունը: Սակայն շատ շուտով նա կորցնում է հորը և որպես երգիչ ժողովրդական երաժիշտներ Արտեմի ու Բալայի հետ թափառում գյուղից գյուղ: 1904-ին ավարտում է Պետերբուրգի կոնսերվատորիան՝ աշակերտելով Ն.Ռիմսկի-Կորսակովին, Ա.Լյադովին, Ա.Գլազունովին, դեկավարում տեղի հայկական եկեղեցու երգչախումբը, ներդաշնակում հոգևոր երգեր, կատարում ժողովրդական երգերի մշակումներ, գրում մեներգեր և պոլիֆոնիկ գործեր: Երաժշտություն է դասավանդել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Հայոց դրամատիկական ընկերության միջոցով բեմադրել իր «Արեգնազան» օպերետը, գրել «Ասլի և Քարամ» երգախառն դրաման: Հետագայում զբաղվել է համերգային գործունեությամբ: 1908-ին շրջագայելով հայաբնակ տարբեր վայրերում՝ Տրապիզոն, Կարին, Թիֆլիս, Թեհրան, Կ.Պոլիս ևն, 1923-ից՝ ԱՄՆ, հավաքել է ժողովրդական եղանակներ, դրանք ներդաշնակել և կատարել իր երգչախմբերով՝ նպաստելով հայ ժողովրդական լայն զանգվածներում բազմաձայն երգեցողության տարածմանը:

1921-ի օգոստոսին Սյունին վերադառնում է Թիֆլիս՝ երկարատև թափառական կյանքից ու լարված գործունեությունից վատթարացած առողջական վիճակով, տևական հանգստի կարոտ: Նույն թվականի աշնանը առողջությունը վերականգնելու ակնկալիքով և այնուհետև Հայաստանում բնակություն հաստատելու մտադրությամբ նա ընտանիքի հետ մեկնում է Պոլիս: Բայց իրադարձությունների ընթացքը նրան տանում է ԱՄՆ, որտեղ էլ անցնում է նրա հետագա ողջ կյանքը: Բնակվելով Ֆիլադելֆիայում և շրջելով ԱՄՆ հայաբնակ քաղաքներով, Սյունին շարունակում է իր երաժշտական-հասարակական գործունեությունը: Նա կազմակերպում է երգչախմբեր ու համերգներ տալիս Բոստոնում, Ուոթերթաունում, Նյու-Յորքում, Ֆիլադելֆիայում, Չիկագոյում, Դետրոյտում, Փրավիտենսում և այլուր՝ ունկնդրի կողմից արժանանալով բացառիկ ընդունելության: Համերգներից երկուսը (1924-ի հունվարի 27-ին և տասը տարի անց՝ 1934-ի փետրվարի 24-ին) շահում են միջազգային մրցանակներ: 1930-ի փետրվարի 19-

<sup>197</sup> Նույն տեղում, էջ 105:



ին Ֆիլադելֆիայում աննախադեպ հաջողությամբ Սյունին բեմադրում է հայկական և արևելյան թեմաներով գրված իր «Պայքար և գոհողություն» մանկական օպերան, որի բոլոր դերակատարները մանուկներ ու պատանիներ էին: Սյունին Հարություն Մեհրապյանի հետ համագործակցությամբ ԱՄՆ-ում հիմնում է «Ամերիկահայ երաժշտական միությունը», որն արգասաբեր գործունեություն ծավալեց ամերիկահայ գաղթօջախի բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման գործում: Սակայն Հայրենիքի կարոտը կրծում էր կոմպոզիտորի հոգին: Ի մխիթարություն՝ նա հայրենիք է ուղարկում երաժշտական գործիքներ սիմֆոնիկ նվագախմբի համար, Երևանի կոնսերվատորիային է նվիրում մի շարք երաժշտական գործիքներ, որոնց պակասն այն ժամանակ խիստ զգում էր սիմֆոնիկ նվագախումբը, նորաբաց երաժշտական հրատարակչության համար անհրաժեշտ իրեր, նոտաներ, պարտիտուրների համար թղթեր... Սյունին հիմնադրում է երաժշտական ստուդիա, ղեկավարում սիրողական երգչախմբեր ու հանդես գալիս համաշխարհային մրցույթներում, գրում է և հրատարակում բանվորական-հեղափոխական երգեր և սովետահայ ժողովրդի նոր կյանքը գովերգող ստեղծագործություններ: ԱՄՆ-ում ապրած տարիներին Սյունին հանդես է եկել որպես Սովետական Հայաստանի բարեկամ, եռանդուն մասնակցել ՉՕԿ-ի գործունեությանը: ԱՄՆ-ում ի հայտ են գալիս մի շարք հիվանդություններ, որոնք քայքայում են երաժշտի առողջությունը, բայց հուսահատվելու փոխարեն, Սյունին ասում էր. «Քեփո տեդն արա, ինձի դարապաղցի կըսեն»<sup>198</sup>: Սրտի տագնապ, տևական ծանր շաքարախտ, ապա՝ կոկորդի քաղցկեղ, որն էլ գերեզման իջեցրեց կոմպոզիտորին 63 տարեկանում: Վախճանվեց Սյունին 1939-ի դեկտեմբերի 18-ին, Ֆիլադելֆիայում (ԱՄՆ)՝ Հայրենիքում վերջին հանգրվանը գտնելու փափագով: Նրա և կնոջ աճյունասափորները Հայաստան հասան 1959-ին, որդու՝ Ռուբենի միջոցով և 1968-ին «վերջապես իր նյութեղեն հյույները խառնվեցին առեղծվածային Հայաստան աշխարհի նվիրական հողին, բայց ոչ իր երագած, իր պաշտած Ղարաբաղի...»<sup>199</sup>: Ցավոք, մինչև օրս Սյունիի ստեղծագործական ժառանգությունը լրիվ հրատարակված, նույնիսկ՝ հավաքված և ի մի բերված չէ: Նրա ժառանգությունը բաղկացած է ժողովրդական երգերի մշակումներից, հայ նշանավոր բանաստեղծների գրական խոսքի երաժշտականացումը հանդիսացող՝ ժողովրդական մեղեդիների վրա հիմնված երգերից ու ռոմանսներից, թատերական ներկայացումների համար գրված երաժշտական կտորներից և նվագախմբային որոշ ստեղծագործություններից: Իր գործունեության վերջին շրջանում Սյունին մշակեց բանվորական հեղափոխական երգեր («Անվախ ընկեր», «Դու գոհ գնացիր», «Ինտերնացիոնալ»), 1930-ականներին Խորհրդային Հայաստանում ստեղծված մասսայական երգերի նմանողությամբ հորինեց «Նոր կյանքի երգեր» շարքը (1934):

Դաշնամուրի նվագակցությամբ ինքնուրույն մեներգերը (Հ.Թումանյանի «Ինձ մի խնդրիր», Ավ.Իսահակյանի «Ախ, ալ վարդի» նն) գրված են հայ քաղաքային ժողովրդական երաժշտության ոճով, ունեն արտահայտիչ մեղեդիներ: Սրանք, ինչպես և բուն ժողովրդական երգերի մշակումները (օրինակ՝ «Նեննի» օրորոցայինը), զգալի դեր են խաղացել ազգային ռոմանսի ձևավորման ու զարգացման գործում: Կոմպոզիտորի ստեղծագործության առավել արժեքավոր բա-

<sup>198</sup> Նույն տեղում, էջ 113:

<sup>199</sup> Նույն տեղում:

ժինն են գեղջկական երգերի խմբերգային մշակումները, որոնցից լավագույնները (“Մարերի հովին մեռնիմ”, “Մարերը հովել ա”, “Ալազյազ” են) հայ խմբերգային երաժշտության դասական ժառանգության մասն են կազմում: Մյունխի թե՛ խմբերգային և թե՛ մեներգային մշակումներում պահպանում է հայ ժողովրդական երգի առանձնահատկությունները՝ հասնելով ոճական անաղարտության: Նրա երգերից շատերը, այդ թվում՝ “Մարերի հովին մեռնեմ”, “Մարեն կուզա ձիավոր”, “Ալազյազ”, “Ախ, ալ վարդի”, “Եթե մի օր”, “Ինձ մի խնդրիր” երգերն իրենց մշտական տեղն ունեն համերգային երկացանկում:

1881-ին Շուշիում է ծնվել ու իր նախնական կրթությունն ստացել հայ կոմպոզիտոր, խմբավար, երաժշտական հասարակական գործիչ **Եղիշե Բաղդասարյանը** (Բաղդասարյանց, 1881, Շուշի - 1919, Արմավիր, Հյուսիսային Կովկաս): 1900-ին Ե.Բաղդասարյանը մեկնել է Պետերբուրգ, սովորել կոնսերվատորիայում, 1901-ից՝ Ա.Լյադովի ստեղծագործական դասարանում: Դեռևս ուսումնառության ընթացքում նա զբաղվել է և՛ խմբավարությամբ, և՛ ստեղծագործությամբ, և՛ երաժշտական խմբագրական աշխատանքով: Կոնսերվատորիան ավարտելուց հետո որոշ ժամանակ աշխատել է Մոսկվայում, ղեկավարել Լազարյան ճեմարանի ուսանողական երգչախումբը, դասավանդել երաժշտական տեսական առարկաներ: Կովկասի հայաբնակ քաղաքներում (Բաքու, Արմավիր, Շուշի և այլուր) կազմակերպել է երգչախմբեր և ժողովրդական գործիքների նվագախմբեր, որպես խմբավար և դիրիժոր հանդես եկել համերգներով: 1910-ին նա հիմնադրել է Մոսկվայի հայկական երգչախմբային ընկերությունը և ղեկավարել նրա գործունեությունը: Իբրև խմբավար հանդես է եկել Բաքվում, Արմավիրում, իսկ ամռան ամիսներին նրա հայտնությունը Շուշիում մեծ աշխուժություն է առաջացրել. անմիջապես կազմել է երգչախումբ, ժողովրդական գործիքային անսամբլներ և համերգներ տվել: Ե.Բաղդասարյանի մասնակցությամբ է կազմվել և Պետերբուրգում հրատարակվել “Քնար մուզայի” բանաստեղծությունների ժողովածուն (1900), Հ.Սյվազովսկու հիշատակին նվիրված “Գեղարվեստական ալբոմը” (1903), “Արցունքներ” գրական-գեղարվեստական-երաժշտական ժողովածուն (1907): Ե. Բաղդասարյանը երգերի, խմբերգերի, ռոմանսների, ժողովրդական երգերի ու շարականների հեղինակ է, այդ թվում՝ կոմպոզիտորի առաջին երկը՝ Ալ.Ծատուրյանի խոսքերով և Ալ.Սպենդիարյանի ռուսերեն թարգմանությամբ 1901-ին գրված “Մի լար, բլբուլը”, ինչպես նաև “Մշո ողբը”, “Մաղթանք”, “Քեզ” (ռուսերեն), “Արևելյան եղանակներ” դաշնամուրային պիեսները: Գրել է “Անուշ” (1909, ըստ Հովհ.Թումանյանի) և “Արտավազո Բ” (ըստ Հար.Թումանյանի) օպերաները, “Անտառի մանուկ” մանկական երաժշտական պատկերն ըստ Ղ.Աղայանի, “Գյուլնազ տատի հեքիաթը” մանկական օպերան՝ ըստ Ղ.Աղայանի հեքիաթի:

Շուշիում է ծնվել սովետահայ կոմպոզիտոր, խմբավար, երգիչ, մանկավարժ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1945), ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ (1944), Բաթումի (1922) և Լենինականի (1924) երաժշտական ստուդիաների հիմնադիր, իր ստեղծագործությամբ և ակտիվ գործունեությամբ հայ պրոֆեսիոնալ երաժշտության և խմբերգային արվեստի զարգացմանը զգալի ավանդ մատուցած **Դանիել Ղազարյանը** (1883, Շուշի - 1958, Երևան), ով որպես երաժիշտ մկրտվելով Շուշվա թեմական դպրոցում, ընդգրկվելով Կարա-Մուրզայի, Գրիգոր Մյունխի ու Ստեփան Դեմուրյանի երգեցիկ խմբերում և 1921-ին ավարտելով Թիֆլիսի կոնսերվատորիան, շուրջ կես դար ծառայեց հայ երաժշտական մշա-

կույթի առաջընթացին: Դ.Ղազարյանը երգերի ու ռոմանսների, խմբերգերի, շուրջ 300 մանկական երգերի (“Միրուն թիթեռ”, “Մագիկ-մագիկ”, “Էծիկ” և այլն), խըմբերգերի, երաժշտական պատկերների (“Պապն ու շաղգամը”, “Փխիկի գանգատը”) և մանկական հինգ օպերաների (“Հաղթված բազեն”, “Գայլը”, “Անգործ մանուկը”, “Տիկնիկի պսակը” և “Փոքրիկ կառուցողները”), դրամաների համար գրված երաժշտության (“Մու և Վարդիթեր”, “Գիքոր”), նվագախմբային ու դաշնամուրային ստեղծագործությունների հեղինակ է: Նրա գործունեության հիմնական բնագավառը երգն է. մեծ ժողովրդականություն են վայելում “Ուտին”, “Լանջեր մարջան”, “Մար դարդեր”, “Աշնան գիշեր”, “Անուշ գարուն”։ “Քույր իմ նազելի”...<sup>200</sup>: Խմբավար Դ.Ղազարյանը, հետևելով իր ուսուցչի՝ Ստեփան Դեմուրյանի օրինակին, հընթացս իր գործունեության 50 տարիների տարբեր քաղաքներում<sup>201</sup> կազմել է շուրջ 250 երգեցիկ խումբ և տվել ավելի քան 1000 համերգ: Մասշտաբային գործունեություն է ծավալել գեղարվեստական ինքնագործունեության բնագավառում. կազմակերպել է երգչախմբեր Երևանի Ուսուցչի տանը, Հաղթանակի այգում, Կարմիր բանակի տանը: Հաճախակի ելույթներ է ունեցել նրա կազմակերպած կույրերի քառաձայն երգեցիկ խումբը: Մանկավարժ Ղազարյանը ավելի քան 50 տարի աշխատել է հանրակրթական դպրոցներում՝ որպես երգ-երաժշտության ուսուցիչ: Պատրաստել է երգեցողության դասատուների բազմաթիվ ռուսկյալ կադրեր, իբրև մանկավարժական կաբինետի փորձառու մեթոդիստ՝ դասատուների համար կազմել ծրագրեր, դպրոցական երօարաններ և այլն: Երաժշտական-հասարակական գործիչ Ղազարյանը 1923-ին կազմակերպել է Բայրուամի ժողովրդական երաժշտական ստուդիան, որը մեկ տարի անց վերածվեց ժողովրդական կոնսերվատորիայի, իսկ 1924-ին՝ Լենինականի երաժշտական ստուդիան, որը հետագայում վերածվեց երաժշտական դպրոցի: 1937-ին Ղազարյանը երաժշտական ստուդիա է կազմակերպել նաև Երևանի Կարմիր բանակի տանը: 1933-ին Պիոներների պալատում Ղազարյանի ջանքերի շնորհիվ իր գործունեությունն է վերսկսում Երևանի մանկական օպերան, որտեղ մինչև 1939-ը բեմադրվում են Դ.Ղազարյանի “Հաղթված բազեն”, “Գայլը”, Ս.Մուրադյանի “Շունն ու կատուն”, Վ.Ուր-Շատի “Ուլիկները”, Ա.Մայիլյանի “Տիկնիկ-գիգիկը”, Ա.Մանուկյանի “Չարի վերջը” և մանկական այլ օպերաներ: Եվ պատահական չէ, որ 1997-ին, շուրջ չորս տարի տևած նախապատրաստական աշխատանքներից հետո Շուշիում դպրոցականների առջև իր դուները բացած՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում առայժմ միակ երաժշտական միջնակարգ մասնագիտական գիշերօթիկ դպրոցը, որտեղ ուսանում են շնորհալի պատանիներ ու աղջիկներ, որտեղ հաջողությամբ գործում են փողային նվագախումբն ու երգչախումբը, իր հիմնադրման օրվանից կրում է Դանիել Ղազարյանի անունը: Դ.Ղազարյանի անունն է կրում նաև Արթիկի երաժշտական դպրոցը:

<sup>200</sup> Իր երգերի համար Դ.Ղազարյանն ընտրել է Ավ.Իսահակյանի, Վ.Տերյանի, Ալ.Ծատուրյանի, Շ. Կուրդիկյանի, Գ.Սարյանի, Մարմենի. Վ.Միրաքյանի, Հ.Հայրապետյանի, Մ.Կոբյունի, Վ.Աղայանի, Մետաքսեի բանաստեղծությունները:

<sup>201</sup> Այդ թվում՝ Երևանում, Լենինականում, Կիրովականում, Նոր-Բայազետում, Էջմիածնում, Հոկտեմբերյանում, Դիլիջանում, Ղարսում, Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, Խարկովում, Ռոստովում, Նոր Նախիջևանում, Արմավիրում, Կրասնոդարում, Վլադիկավկազում, Նովոռոսիսկում, Բաթումում, Սուխումում, Բորժնում, Մոչիում, Ախալցխայում, Ախալքալաքում, Աշխաբադում, Գանձակում, Շուշիում, Ստեփանակերտում, Կաղվանում, Նուխիում և այլուր:

**Բոգրան Թումանյանը** (1881, Շուշի-1975, Տաշքենդ) 16 տարեկանում Բաքվում կազմակերպում է ժողովրդական գործիքների նվագախումբ, փայլուն նվագահանդեսներ տալիս Բաքվում և Անդրկովկասի այլ քաղաքներում: 1922-ին Բ.Թումանյանը տեղափոխվում է Տաշքենդ, հիմնադրում ժողովրդական գործիքների նվագախումբ՝ երկար տարիներ ղեկավարելով այն: Նա է հիմնադրել Տաշքենդի ռադիոյի ժողովրդական գործիքների նվագախումբը, ստեղծել Տաջիկական և Ուզբուրական ռադիոների նվագախմբերը՝ ստեղծելով դրանց նվագացանկը: Մի կողմից՝ նա փոխադրում և նվագախմբի համար գործիքավորում էր արևելյան դասական մեղեդիներն ու պարերգերը, մյուս կողմից՝ յուրացրած հայ և տեղի ժողովրդական երաժշտության լեզուն՝ հորինում սեփական ստեղծագործությունները, որոնցից ժամանակին մեծ ժողովրդականություն են վայելել Ուզբուրական ժողովրդական թեմաներով պոլիտը, Կարա-կալպակյան երգային ու նվագարանային մեղեդիները, բազմաթիվ երգեր և խմբերգեր ուզբուր, ուզբեկ, տաջիկ բանաստեղծների խոսքերով, ջութակի համար՝ «Արևելյան ֆանտազիա», «Հուշեր», «Երաժշտական պահ» և այլն<sup>202</sup>:

Անգնահատելի է շուշեցի երաժիշտ **Հովհաննես Իրանիսյանի** (Հովհաննիսյան, 1881, Շուշի-1938) ներդրումը արևելյան ժողովրդական գործիքային երաժշտության զարգացման գործում: Նա հանդես էր գալիս ոչ միայն որպես մենակատար, այլև զարգացնում ու խորացնում էր անսամբլային ու նվագախմբային կատարողականությունը՝ նպաստելով բազմաձայնության արմատավորմանը: 1900-ին Հ.Իրանիսյանն ավարտում է Շուշիի ռեալական դպրոցը: 1910-ին ավարտելով Նովոռոսիյսկի համալսարանի բժշկական ֆակուլտետը, նա վերադառնում է Շուշի, ոչ միայն աշխատում որպես լավագույն բժիշկ, այլև կազմակերպում զինվորական նվագախումբ և երկար տարիներ ղեկավարում այն: 1920-ին Հ.Իրանիսյանը տեղափոխվում է Բաքու, հիմնադրում ժողովրդական գործիքների նվագախումբը, որը հետագայում ստանում է «Առաջին ադրբեջանական պետական նվագախումբ» անունը: «Այդ նվագախմբով է, որ Ադրբեջանը Մոսկվայում ներկայացավ մշակույթի և արվեստի անդրանիկ տասնօրյակին»<sup>203</sup>: Նվագախումբը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Անդրկովկասի և Ռուսաստանի տարբեր քաղաքներում: Բացի այս նվագախմբից՝ Հ.Իրանիսյանը հիմնադրել է այլ նվագախմբեր ևս (1925, 1927, 1932), այդ թվում նաև կանանց առաջին նվագախումբը: 1938-ին նրան շնորհվում է Ադրբեջանի արվեստի վաստակավոր գործչի կոչում<sup>204</sup>:

Շուշիում է ծնվել գրեթե բոլոր ժողովրդական գործիքների վրա նվագող վարպետ, ՀՍՄՀ ժողովրդական արտիստ **Ալեքսանդր Ալեքսանդրյանը** (1889, Շուշի-1970): 1903-ին ավարտել է Շուշվա թեմական դպրոցը, ուսման ընթացքում հայ վարպետների մոտ սովորել տարբեր գործիքների վրա նվագել և այնքան կատարելագործվել, որ դպրոցն ավարտելուց անմիջապես հետո դարձել է քաղաքի փողային նվագախմբի ղեկավարը: 1902-ին Գ.Սյունիի ժողովրդական գործիքների անսամբլում թառահար էր, իսկ ավելի ուշ՝ ժողովրդական անսամբլների ղեկավար: 1921-ին փոխադրվել է Երևան, աշխատել ինքնագործ խմբերի հետ: 1930-36-ին հրավիրվել է Երևանի Կոնսերվատորիա և ղեկավարել արևելյան գործիքների

<sup>202</sup> Տե՛ս **Յ.Բրուսյան**, Արցախյան ոգին երաժշտության ծիրի մեջ, Երևան, 2000, էջ 239-240:

<sup>203</sup> Նույն տեղում, էջ 241:

<sup>204</sup> Նույն տեղում, էջ 240-241:

ամբիոնը: 1936-37-ին ղեկավարել է Հայֆիլիհարմոնիայի ժողովրդական գործիքների նվագախումբը, 1938-67-ին՝ Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլի ժողովրդական գործիքների խումբը: Վիրտուոզ մենակատարն ու հմուտ ղեկավարը նաև իր անսամբլների համար հորինել է ազգային ժողովրդական ու արևելյան մեղեդիների ռիթմահիտոնացիոն կառույցների տարրերով ներթափանցված երգեր և պարեղանակներ: Դրանցից են այդ նվագախմբերի կատարմամբ հնչած “Դիլիջան”, “Չույզ սև աչեր”, “Չուլեյկայի պարը”, “Նազելի”, “Նաիրյան աղջկա պարը”, “Սևանի”, “Նունե”, “Արտաշատի” և այլն<sup>205</sup>:

Շուշեցի հռչակավոր թառահարներից են հայր և որդի Մելիքյանները՝ հատկապես արևելյան դասական մուղամաթների փայլուն գիտակներն ու վիրտուոզ մեկնաբանները, որոնց փառքը տարածվել էր արևելյան երկրներում: Հայրը՝ **Գրիգոր Մելիքյանը** (1859-1929, Շուշի), դարձավ որդու՝ Բալայի ուսուցիչը և նրան փոխանցեց իր վարպետության գաղտնիքները: Թառահար **Բալա Մելիքյանը** (Մելիքով, 1888-1935, Շուշի) հատուկ երաժշտական կրթություն չի ստացել, որպես երաժիշտ ձևավորվել է Շուշվա ժողովրդա-երաժշտական միջավայրում, հոր՝ նշանավոր թառահար Գրիգոր Մելիքովի ազդեցությամբ: 19 տարեկանում արդեն Բալա Մելիքյանը ճանաչված թառահար էր և իր գործունեությամբ կապված էր նաև Բաքվի, Թիֆլիսի ու Երևանի երաժշտական կենտրոնների հետ: Վիրտուոզ թառահար, մուղամների անզուգական մեկնաբան Մելիքյանն իր կազմակերպած գործիքային անսամբլներով համերգներով՝ որպես մենակատար և նվագակցող, հանդես է եկել նաև Մոսկվայում և Լենինգրադում:

Շուշիում է ծնվել հայ օպերային երգիչ, քնարադրամատիկ տենոր **Արշակ Կոստանյանը** (1865-1920): Մովորել է Կազանի համալսարանում, 1892-ին աշակերտել նշանավոր երգչուհի Նինա Դարիալի-Ղորղանյանին, երաժշտական կրթությունը շարունակելու նպատակով 1893-ին մեկնել Իտալիա: Վերադառնալով Ռուսաստան՝ երգել է Վորոնեժի, Խարկովի, Իրկուտսկի, Կազանի, Մարատովի և այլ քաղաքների օպերային թատրոններում: 1903-ին հաստատվել է Մոսկվայում, երգել Մոլոդովնիկովի նշանավոր օպերային խմբում: Աչքի է ընկել գրավիչ, անկաշկանդ երգեցողությամբ: Նրա կատարած դերերգերից են՝ Շերցոգ, Ալֆրեդ (Վերդի, “Ռիգոլետտո”), Տրավիատա (“Տրավիատա”), Ֆաուստ (Գունո, “Ֆաուստ”), Ալմավիվա (Ռոսսինի, “Սևիլյան սափրիչ”), Տուրիդդու (Մասկանի, “Գեղջկական պատիվ”), Գերման (Չայկովսկի, “Պիկովայա դամա”), Վլադիմիր Իգորևիչ (Բորդին, “Իշխան Իգոր”), Եֆիմ, Մակուս (Ա.Ռուբինշտեյն, “Վաճառական Կալաշնիկով”), “Ներոն” և այլն<sup>206</sup>: Համերգներով հանդես է եկել նաև ծննդավայրում՝ Շուշիում:

Բացառիկ է Շուշվա դերն ադրբեջանական պրոֆեսիոնալ երաժշտության կայացման ու զարգացման գործում՝ թե՛ կոմպոզիտորական, թե՛ կատարողական, թե՛ երաժշտագիտական: Բավական է նշել, որ Շուշիի մոտ գտնվող Աղջաբերդի գյուղում է ծնվել, այնուհետև ընտանիքով Շուշի տեղափոխվել և Շուշվա երաժշտական մթնոլորտում ձևավորվել ադրբեջանցի սովետական կոմպոզիտոր, երաժշտագետ, հասարակական գործիչ, Ադրբեջանի ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտության հիմնադիր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Ադրբեջանի կոմպոզիտորների միութ-

<sup>205</sup> Նույն տեղում, էջ 241:

<sup>206</sup> Նույն տեղում, էջ 242-243:

յան նախագահ, Ադրբեջանական ՄՍՀ ԳԱ ադրբեջանական արվեստի ինստիտուտի դիրեկտոր **Ուզեիր Հաջիբեկովը** (18.09.1885 - 23.11.1948): Նա է 1926-ին կազմակերպել ադրբեջանական առաջին բազմաձայն երգչախումբը, 1931-ին՝ նույն կարգացող ժողովրդական երաժիշտների նվագախումբը, 1936-ին՝ պետական երգչախումբը: Մեծապես նպաստելով հանրապետությունում երաժշտական կրթության զարգացման գործին՝ 1922-ին հիմնել է երաժշտական դպրոց, իսկ 1938-48-ին եղել Ադրբեջանի կոնսերվատորիայի դիրեկտորը, որը նրա մահից հետո 1949-ին անվանակոչվել է նրա անունով: Հաջիբեկովն է իր “Լեյլի և Մեջնուն” օպերայով 1907-ին սկզբնավորել մուղամային օպերայի ժանրը՝ հետագայում գրելով ևս 5 մուղամային օպերաներ, հիմնադիրն է ադրբեջանական երաժշտական կոմեդիայի՝ “Ամուսինը և կինը” (1909), “Սա չլինի, նա լինի” (1910, էկրանավորումը՝ 1958) և լայն ճանաչում գտած “Արշին մալ ալան” (1913, էկրանավորվել է մի քանի անգամ, ՄՍՀՄ Պետական մրցանակ՝ 1946), ստեղծել ադրբեջանական առաջին մասսայական երգերը, կամերային-գործիքային ստեղծագործությունները, 1944-ին հեղինակել Ադրբեջանական ՄՍՀ-ի պետական հիմնը և այլն: Կոմպոզիտորի ստեղծագործության զագաթն է “Քյոռ օլլի” հերոսական վիպական օպերան (1937, ՄՍՀՄ պետական մրցանակ, 1941), որն առանձնանում է ժողովրդական կերպարային-ինտոնացիոն կառուցվածքի և արտահայտչական դասական միջոցների միասնությամբ (Երևանում բեմադրվել է 1942-ին): Պատահական չէ, որ օպերայի պրեմիերայի ժամանակ օպերայի գլխավոր հերոսի դերերգով հանդես է եկել մյուս շուշեցին՝ Բյուլ-Բյուլը: 1945-ին Ու.Հաջիբեկովը հրատարակել է “Ադրբեջանական ժողովրդական երաժշտության հիմունքները” տեսական աշխատությունը: Եվ պատահական չէ, որ Շուշիում, այն տանը, որտեղ անցել են Հաջիբեկովի մանկության և պատանեկության տարիները, 1959-ին բացվել է տուն-թանգարան<sup>207</sup>:

Շուշվա երաժշտական մթնոլորտի ծնունդ է սովետական երգիչ, քնարադրամատիկ տենոր և երաժշտագետ-ֆոլկլորիստ, ՄՍՀՄ ժողովրդական արտիստ, ՄՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր, Ադրբեջանի Գերագույն Սովետի 1-3 գումարումների դեպուտատ, ադրբեջանական սովետական երաժշտական թատրոնի հիմնադիրներից մեկը՝ **Բյուլ-Բյուլը** (իսկական անունը և ազգանունը՝ Մուրթուգա Մեշադի Ռզա օլլի Մամեդով, 1897-1961): Դեռևս պատանեկության տարիներին նա ստանում է Բյուլ-Բյուլ անունը, որն ադրբեջաներեն նշանակում է սոխակ: Ստեղծագործական գործունեությունն սկսել է որպես ժողովրդական երգիչ, կատարել ադրբեջանական մուղամներ և ժողովրդական երգեր: 1920-ից Ադրբեջանական պետական թատրոնի (հետագայում՝ Ադրբեջանի օպերայի և բալետի թատրոն) մեներգիչ է: 1927-ին ավարտել է Բաքվի կոնսերվատորիան և ուղարկվել կատարելագործման Միլան: Նրա խաղացանկում տեղ է գտել նաև Սաբրայի դերերգը Ա.Տիգրանյանի “Անուշ” օպերայից: Պատահական չէ, որ Բյուլ-Բյուլին անվանել են “Շուշվա սոխակ”<sup>208</sup>:

Շուշիում շատ ակտիվ էր տրոփում երաժշտական կյանքի զարկերակը:

<sup>207</sup> Շուշիում է ծնվել Ուզեիր Հաջիբեկովի եղբայրը՝ սովետական կոմպոզիտոր, հասարակական գործիչ, Ադրբեջանական ՄՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Զուլֆուգար Հաջիբեկովը (1884-1950), ով եղբոր հետ նպաստել է Ադրբեջանի պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի կայացմանը:

<sup>208</sup> **Б. Заболотский.** Соловей из Шуши, Жизнь и творчество наподного артиста СССР Бюль-Бюля, М., 1987.

Դրանում մեծ նշանակություն ունեցավ Շուշվա թեմական դպրոցը<sup>209</sup>, որտեղ երգ-երաժշտության դասավանդումը գտնվում էր բարձր մակարդակի վրա, իսկ դպրոցի երգեցիկ խումբը հաճախ էր համերգներով հանդես գալիս՝ կատարելով ժողովրդական և հայրենասիրական երգեր: Դժվար է գերազնահաստել Շուշվա թեմական դպրոցի դերը հայ երաժշտության նվիրյալների դաստիարակման գործում: Շուշվա թեմական դպրոցն, ըստ էության, մեկն էր այդ ժամանակաշրջանում հայ երաժշտական իրականության մեջ գործող երեք կենտրոններից՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի կողքին, որտեղ խիստ կարևորվում էր երգ-երաժշտության դասավանդման բարձր մակարդակի ապահովումը, որակյալ երաժշտական կադրերի պատրաստումը: Շուշվա թեմական դպրոցում են որպես երաժիշտներ ձևավորվել Գրիգոր Սյունին, Դանիել Ղազարյանը, Ալեքսանդր Ալեքսանդրյանը և այլք:

1892-ին Շուշվա Մարիամյան և թեմական դպրոցներում որպես երաժշտության դասատու աշխատանքի է հրավիրվում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, քսանամյա **Ստեփան Դեմուրյանը** (1872-1934): Շուշիում նա աշխատում է մինչև 1895-ը, ապա ընդմիջումներով՝ մինչև 1917-ը, մեծապես նպաստելով հայ երգի տարածման գործին: Կարճ ժամանակ անց Ս.Դեմուրյանը դառնում է Շուշվա աշակերտության ամենասիրելի ուսուցիչը: “Շատերը սիրեցին նրան ու նրա առարկան,- հետագայում իր ուսուցչի մասին կգրի նրա արժանավոր սանը՝ Դանիել Ղազարյանը,- Եվ եթե թեմական դպրոցը տվեց բազմաթիվ գրագետ երաժշտասերներ, որոնք շնորհակալ գործունեություն ծավալեցին Ղառաբաղում և այլուր, ապա դրա համար նախ և առաջ պարտական ենք Ստեփան Դեմուրյանին”<sup>210</sup>: Ս.Դեմուրյանի կազմակերպած քառաձայն երգեցիկ խումբը տոն օրերին երգում էր ճարտարապետական նշանավոր կոթողի՝ Շուշիի Ղազանչեցոց Ս.Ամենափրկիչ եկեղեցում:

Ակտիվ երաժշտական կյանքով ապրող Շուշիում հաճախակի էին համերգներ կազմակերպվում՝ շնորհիվ Քրիստափոր Կարա-Մուրզայի, Ստեփան Դեմուրյանի, Եղիշե Բաղդասարյանի, Գրիգոր Սյունիի և այլոց բեղուն գործունեության: Տեղի էին ունենում համերգներ ինչպես տեղի երաժշտական կոլեկտիվների ուժերով, այնպես էլ հյուրախաղերով հանդես էին գալիս անվանի երաժիշտները: Համերգային հայտագրերում մեծ տեղ էր գրավում խմբերգային երգեցողությունը: Համերգների ծրագրերում տեղ էին գտնում ինչպես հայ դասականների (Տիգրան Չուխաճյան, Կոմիտաս, Մակար Եկմալյան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Ալեքսանդր Սպենդիարյան) ստեղծագործությունները, այնպես էլ ժամանակակից կոմպոզիտորների (Ստեփան Դեմուրյան, Եղիշե Բաղդասարյան, Գրիոր Սյունի, Անուշավան Տեր-Ղևոնդյան) խմբերգերն ու ժողովրդական երգերի խմբերգային մշակումները: Ջգալի տեղ էր հատկացվում նաև արևմտաեվրոպական (Բախ, Ֆրանց Շուբերտ, Ռոբերտ Շուման, Ջակոմո Պլուչչինի, Ժյուլ Մասնե, Մտանիսլավ Մոնյուշկո) և ռուս (Միխայիլ Գլինկա, Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով, Պյոտր Զայկովսկի, Սերգեյ Ռախմանինով, Գրիգորի Կազաչենկո) դասական, ինչպես նաև

<sup>209</sup> Շուշվա թեմական վեցդասյա դպրոցում երաժշտության դասընթացը տևում էր վեց տարի, որից առաջին երեք տարիների ընթացքում աշակերտները սովորում էին երգեցողություն, իսկ հաջորդ երեք տարիներին յուրացնում էին հայկական նոր ձայնագրությունն ու երգը: Դպրոցի շրջանավարտները կատարելապես տիրապետում էին հայկական ձայնագրությանն ու ազատ թելադրություններ գրում:

<sup>210</sup> **Ս. Տանկլան**, Դանիել Ղազարյան, Երևան, 1977, էջ 9:

ուկրաինական (Նիկոլայ Լիսենկո) երաժշտության պրոպագանդանր: Հնչում են ինչպես հայ ժողովրդական երգեր, այնպես էլ ռուսական, գնչուական, վրացական ժողովրդական երգեր: Պրոպագանդվում է նաև հայկական օպերային երաժշտությունը: Համերգների ընթացքում հնչում են հատվածներ Կարա-Մուրզայի “Շուշան” օպերայից, արիաներ Ա.Տիգրանյանի “Անուշից”, ներկայացվում է “Անուշ” օպերան:

Այսպիսով՝ ակնհայտ է այն մեծ դերն ու նշանակությունը, որն ունեցավ Շուշվա՝ “Անդրկովկասի կոնսերվատորիայի” երաժշտական մթնոլորտը հայ և ադրբեջանցի երաժշտական գործիչների ձևավորման գործում, ովքեր իրենց զգալի ավանդը բերեցին տարածաշրջանում երաժշտության զարգացման գործին:

**Анна Асатрян – Шуши – “Консерватория Закавказья”.** – Весомы роль и значение Шуши в деле развития как композиторского, так и музыкально-исполнительского искусства Закавказья, Средней Азии и России, а также зарубежных армян. Не случайно город назывался “консерваторией Закавказья”. Музыкальная жизнь здесь была достаточно активной, что способствовало повышению музыкального уровня шушинцев. Армянские композиторы и исполнители Григор Сюни, Егеше Багдасарян, Даниел Казарян, Аршак Костанян, Богдан Туманян, Ованнес Иоанисян, Александр Александрян, Григор Меликян, Бала Меликян и другие родились в Шуши и сформировались как музыканты в музыкальной атмосфере этого города. Весом вклад Шуши и в развитие народного музыкального искусства. Завоевавшие широкую популярность в Закавказье музыканты подняли на новую ступень искусство игры на народных музыкальных инструментах (тар, кеманча, зурна и т.п.), обработали и усовершенствовали различные жанры восточной музыки.

**Anna Asatryan – Shushi - “Conservatory of Transcaucasus”.** – Notable is the role and significance of Shushi in the development of both composer's and musical performer's art of Transcaucasus, Central Asia and Russia, as well as of Armenians abroad. It is not accidental that the city bore the name of “Conservatory of Transcaucasus”. Music life there was intense enough, which favored the raise of musical level of Shushinians. Armenian composers and performers Grigor Syuni, Yeghishe Baghdasaryan, Daniel Ghazaryan, Arshak Kostanyan, Bogdan Tumanyan, Ovannes Ioanisyanyan, Alexander Alexandryan, Grigor Melikyan, Bala Melikyan and others were born in Shushi and shaped as musicians in the musical atmosphere of the city. Weighty is the contribution of Shushi to the development of folk music art, too. The musicians, who gained wide popularity in Transcaucasus, raised the art of playing folk musical instruments (tar, kamancha, zurna, etc.) to a new level, interpreted and perfected various genres of oriental music.



---

## ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՃՅԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

### ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ

“Եթե գրչի համեստ կարողությունս ներելու ըլլար՝ պիտի ուզէի հատորներ լեցնել կեանքովը եւ գործունեությամբը այն Վարպետին, գոր սիրած եմ կենդանութեան միջոցին եւ որուն յիշատակը կը յարգեմ չափազանց մահուրնէն ետք ալ”:

*ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՅԱՆ*

Մանկավարժական և կատարողական գործունեությունը Տիգրան Չուխաճյանի (1837-1898) կենսագրության առավելապես անհայտ և գողտրիկ էջերն են, որոնց բացահայտման համար աղբյուրներն, ավա ղ, շատ աղքատիկ և սահմանափակ են: Դրանք հիմնված են հիմնականում ժամանակակիցների վկայությունների, մամուլի արձագանքների, նրա աշակերտների հիշողությունների վրա: Չեն պահպանվել կոմպոզիտորի նամականին, հուշերը, նույնիսկ հայտնի չէ, արդյոք նա երբևիցե թղթին է հանձնել իր մանկավարժական և կատարողական տեսակետներն ու մեթոդները:

Սակայն ուսումնասիրելով նրա՝ ժամանակի համար նոր մտածողության նմուշներ հանդիսացող բազմաժանր դաշնամուրային ստեղծագործությունները՝ հաճախ նվիրված նաև իր աշակերտներին, ակնհայտ է դառնում, որ կոմպոզիտորն իր ժամանակի և միջավայրի համար մեծ հեղինակություն է վայելել որպես մանկավարժ և դաշնակահար: Եվ քանի որ ինքը սիրում էր կատարել իր ստեղծագործությունները տարբեր առիթներով և վայրերում, հատկապես սալոններում, կարելի է փաստել, որ տիրապետել է դաշնամուրին քաջահմուտ վարպետությամբ: Գործիքին չտիրապետող կոմպոզիտորը չէր կարող ստեղծել այնպիսի վիրտուոզ ստեղծագործություններ, ինչպիսիք են “Քնար արևելյան” կապրիսը, “Քուզի ջրվեժը” էքսյրումտը և այլն:

Սակայն չգիտես ինչու, սփյուռքահայ երաժիշտ Հ.Ավագյանը գտնում է, որ “Դաշնակահար մը չէր Չուխաճեան: Ան փոքր տարիքէն Պոլսոյ մէջ դաշնակի դասեր առած է իտալացի Մանձոնիէն եւ այնքան՝ որքան կարողացած է կատարել երգերու նուագակցութիւններ: Ժամանակակից մամուլի հաղորդագրութիւնները կը տեղեկացնեն՝ թէ տարբեր առիթներով ելոյթներ ունեցած է, յաճախ իբրեւ նուագակցող, երբեմն նաեւ իբրեւ մենակատար: Օրինակ դաշնակի նուագով ելոյթ ունեցած է 1874 Մայիս 5/17-ին, ֆրանսական թատրոնին մէջ, Սուևդուկեանի Պեպօի ներկայացումէն ետք՝ ի պատիւ Միհրդատ Ամերիկեանի”<sup>211</sup>: “Ի պատիւ Պ.Միհրդատ Ամերիկեանի. Ազդ-Սոյն թատերգութիւնը՝ որ Ռուսահայոց կեանքին նկարագիրը իսիստ բնական եւ իսիստ ճարտար կերպով նկարագրող Պ.Գաբրիէլ Սուևդուկեանց մեծանուն պոէտին գործըն է, արդարեւ աւելորդ է գովելը, երբ գործը ինքնին ցոյց պիտի տայ նաեւ մեր ազգի համբաւաւոր երաժշտապետներէն

---

<sup>211</sup> Տե՛ս *Տիգրան Չուխաճեան*, Ստեղծագործություններ դաշնակի համար, Խմբագրություն՝ Հայկ Ավագեան, Գահիրե, 2005, էջ VII:

/բռօֆէտօն/ Պ.Տ.Չուհաճեանի եւ Պ.Կ.Տեվլէթի, որ առաջին անգամն ըլլալով բեմի վրայ ի պատիւ Պ.Ամերիկեանի դաշնակի նուագահանդէս մը պիտի կատարեն, թէ՛ ժողովրդեան եւ թէ՛ մեր կողմէն այժմէն շնորհակալութիւննիս ի սրտէ կը յայտնենք”<sup>212</sup>:

Իսկ “Թատրոնը” մի առիթով գրել է. “1875 Օգոստոս 24/Սեպտեմբեր 5-ին, Օրթագիւղի Բարեսէր Ընկերութեան Թատրոնին մէջ, Օրթագիւղի Ս.Թարգմանչաց Վարժարանի աշակերտներու պարգեւաբաշխութեան հանդէսն սկսաւ Խորէն եպիսկոպոսին Օրհնեալ որ սիրէք զՀայաստան անուն տխուր ողբովն՝ զոր Տիգրան էֆենտի Չուխաճեան իր վարժ մասնէրովն դաշնակի վրայ եղանակեց եւ աշակերտք ձայնի հետեւեցան անոր”<sup>213</sup>:

Սակայն, մամուլի այս դրական արձագանքներին զուգընթաց՝ կան փաստեր, որ երբեմն մեծահամբավ երաժշտի համերգները կազմակերպւում էին ոչ պատշաճ մակարդակով և հոգածությամբ. այդ է վկայում “Արևելյան մամուլի” հոդվածագիրը. “Այն ողորմելի դաշնակը՝ որ դրուած էր հայ երաժշտապետի տրամադրութեան տակ՝ ձախորդություն մ’էր պարգապէս, և որու պատասխանատու պէտք է բռնել զինք պաշտպանող բարեկամները՝ էթէ հովանաւորիչ յատուկ մարմին մը չկար իսկ: Զարմանք. և ոչ մին այն Հայ տուններէն՝ ուր դաշնակները կը վխտան, հաճէր է զիշերուան մը համար փոխ տալ զայն սիրելի ու մեծաբելի արուեստագետի մը.....”<sup>214</sup>:

Մանկավարժությունը Չուխաճյանի բազմարդյուն գործունէության կարևոր շերտերից էր: Մանկավարժությամբ նա զբաղվել է իր ողջ կյանքի ընթացքում: Մեծ երաժիշտը խորապէս գիտակցում էր, որ հայ երաժշտական մշակույթի զարգացման համար մեծ կարևորություն ունեն երաժիշտ կատարողները, որոնք էլ ունկնդրին՝ ժողովրդին պիտի հասցնէին հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Եվ զրկված հայրենական երաժշտական կադրեր պատրաստող կրթօջախից, Տ.Չուխաճյանը միայնակ էր զբաղվում կադրերի պատրաստման գործով՝ այդ ասպարեզում ևս արձանագրելով էական հաջողություններ:

Նրա երկարամյա և արդյունավետ մանկավարժական աշխատանքը, անշուշտ, իր հետքը թողեց ժամանակի դաշնամուրային մանկավարժության մէջ: Հիմնվելով եվրոպական ավանդույթների վրա, նա մեծ գործ կատարեց իր փորձն ու գիտելիքները ներդնելու և կատարողական արվեստը զարգացնելու համար: Այդ ջանքերի շնորհիվ Կ.Պոլսում մանկավարժությունը դարձավ հաստատուն և կենսունակ: Դրա վառ վկայությունը նրա կրթած սերունդն է, հայտնի սաները, որոնք շարունակեցին մեծատաղանդ Վարպետի սկսած և նրանց ավանդած կարեվոր նշանակության այս գործը: “Իրօք, Չուհաճեան մեծապէս նպաստած է հայկական եւ ընդհանրապէս օսմանեան շրջանակներու մէջ հիմնաւորելու եւ տարածելու դաշնակի յօրինողական թէ կատարողական արուեստը, անոր շնորհելով թափ ու կորով, բովանդակային խորութիւն”<sup>215</sup>:

Բավական է նշել, որ նրա սաներից էր արևմտահայ տաղանդավոր ջութակահար, դաշնակահար, դիրիժոր, մանկավարժ և կոմպոզիտոր Հարություն Սինանյանը, որի ստեղծագործական կայացման մէջ մեծ դեր կատարեց կոմպոզի-

<sup>212</sup> “Մասիս”, Կ.Պոլիս, 4/16 մայիս, 1874, թիվ 1528, էջ 3:

<sup>213</sup> “Թատրոն”, Կ.Պոլիս, 30 Օգոստոս/11 Սեպտեմբեր, 1875, թիւ 162, էջ 2:

<sup>214</sup> “Արևելեան մամուլ”, Զմիւռնիս, 1896, թ. 11, էջ 347:

<sup>215</sup> **Տ.Չուհաճեան**, Ստեղծագործութիւններ դաշնակի համար, էջ VIII:

տորը: Նրան համարում էին նաև Չուխաճյանի հետևորդ: Իր ուսուցչի պես Սինանյանը ևս մի կողմից՝ օգտագործում էր եվրոպական երաժշտական մշակույթի փորձը, իսկ մյուս կողմից՝ դրանք ծառայեցնում հայ ազգային երաժշտական արվեստի հարստացմանը<sup>216</sup>:

Տ.Չուխաճյանի և Հ.Սինանյանի՝ միմյանց հանդեպ ունեցած ջերմ վերաբերմունքի մասին ուշագրավ տեղեկություններ ենք գտնում «Բազմավեպի» 1904թ. փետրվարյան համարում հրատարակված հոդվածում. «Կ'ըսուի թէ հանճարները իրարու կը նախանձին և զիրար նսեմացընել կը ճգնին: Մենք այս բանս չենք տեսներ ընդ մեջ Չուխաճեանի և Սինանեանի: Չուխաճեան կը գնահատեր ու կը սիրեր համակրելի և տաղանդաւոր պատանին: Եւ սա կը յարգեր ու կը մեծարէր հայութեան անգուգական երաժշտապետ և երգահան Չուխաճեանը:

Սինանեան չէր կարող մոռնալ Չուխաճեանի լաուրթիւնները, անոր մեծ արհեստագետ ըլլալը յայտնի կը դրուատեր և ստեպ՝ երեկոյթներու միջոց՝ իւր խումբին զարնել կու տար անուանի վարպետին Ave Maria-ն, Լեպլեպիճի Օրորը, Օլիմբիան, չուերգ յուղարկաւորութիւնը (շինուած Ներսէս Պատրիարքի համար) և ուրիշ ընտիր գործերը»<sup>217</sup>:

Հատկանշական է նաև այն, որ Չուխաճյանի մահարձանը Զմյուռնիայի գեղեզանատանը նույնպես կանգնեցվել է նրա սաների ջանքերով:

Ժամանակակից մամուլում ևս տեղ են գտել արձագանքներ նրա աշակերտների ու նրանց բարձր վարպետության մասին, որը ևս մատարոք Տ.Չուխաճյանի մանկավարժական տաղանդի վկայությունն է:

Տ.Չուխաճյանի աշակերտը լինելը մեծ պատիվ էր համարվում: 1898-ին Ռ.Որբերյանը գրախոսում է Իզմիրի Կրթասերի նվագահանդեսի մասին, որտեղ նվագում էին գերմանացի կոմպոզիտորի ստեղծագործություն և գրում է. «գոր ընկերակցութեամբ զարկին Տիկ.Սօրուքեան եւ Տիկ.Ռօվար: Այս վերջինները, հայուհի ու գերմանուհի, գրեթէ մրցումի պէս բան մը ըրին, եւ ուրախ ենք ըսելու թէ հայուհին-Չուխաճեանի հին աշակերտուհի, գերագանցեց, իր ուժգին ու նուրբ եւ հիանալի կերպով թռչտուն նուագին մէջ, միւսը թէւէ վարժ ու ճարտար մատներ այլ անելի նուաղկոտ հով մը ուներ»<sup>218</sup>:

Դաշնամուրի դասավանդման մեջ Չուխաճյանի թողած ազդեցության մասին գրում է նաև Սմբատ Դավթյանը. «իբր ուսուցիչ եւ քաջ դաշնակահար, Տ. Չ. հասցուցած է բազմաթիւ սաներ, որոնք երաժշտութիւնը մշակած են, եւ՝ Գեղարուեստի հրայրքով վառ՝ իրենց կարգին տարածած են զայն այլեւայլ խաւեր, բարերար ներգործութիւն մը ընելով ժողովուրդին վրայ՝ անոր հոգեկան ազնուացման տեսակէտով»<sup>219</sup>:

1880-ականներին Տ.Չուխաճյանի կյանքում դարձյալ մեծանում է մանկավարժական աշխատանքի նշանակությունը: «Երաժշտութեան դասեր է տալիս Սկիւտարի ճեմարանում եւ շարունակում դաշնամուրի մասաւոր պարապմունքները օժտուած պատանիների հետ: Յատուկ սիրով եւ ուշադրութեամբ է վերաբերում դաշնամուրին վաղուց ի վեր ջանասիրաբար տիրապետող ու արդէն երիտասարդական հասակը թեւակոխած այն աշակերտ-աշակերտուհիներին, որոնք

<sup>216</sup> *Ա. Շիլլիգյան*. Армянское смычковое искусство, Ереван, 2004, стр. 57-58.

<sup>217</sup> Տե՛ս «Բազմավեպ», 1904, փետրվար, էջ 72-77:

<sup>218</sup> *Ռ. Որբերեան*, Հանդեսներ Իզմիրի մէջ, «Մասիս», Կ.Պոլիս, 6/18 յունիս, 1898, թիւ 106, էջ 1:

<sup>219</sup> Մ.Դավթեանի տօթերը, Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, Վենետիկ, 1926, էջ 464:

աչքի զարնող կատարողներ դառնալու յոյսեր էին ներշնչում<sup>220</sup>:

1889-ին Կ.Պոլսի “Արևելքում” լույս է տեսել ևս մի երաժշտա-քննադատական հոդված՝ նվիրված տեղի ունեցած նվագահանդեսին. հոդվածն այդպես էլ կոչվում է “Չուխաճեան նուագահանդես”: Անանուն հեղինակը չափազանց պրոֆեսիոնալ կերպով անդրադառնում է այն բարձրաձայն նվագացանկին և կատարումներին, որոնք հնչել են այդ երեկո: Ուշագրավ է Տ.Չուխաճյանի աշակերտուհի օր. Մ.Մարտիրոսյանի կատարման մասին հիշատակումը, որը ստորև մեջբերում ենք. “Միենայն զնահատման արժանացաւ եւ Օր. Մ.Մարտիրոսեան, որ Մենտելլոնի “Caprice brillant”-ը նուագեց դաշնակի վրայ ընկերակցութեամբ նուագախումբին: Աստ դժուարութիւն մը աւելի կար. պէտք էր համընթաց, ներդաշնակ գնալ գործիներուն հետ, եւ կերպիւ իւրք մրցիլ անոնց հետ, ու պատասխանել անոնց արագ, ու մերթ խառնուելով հանդերձ անոնց հոսանքին՝ դաշնաւոր յորձանաց վերեւ թրթռալ սակայն, իբրեւ հոդմն որ կը խաղայ անոնց հետ: Եւ գիտէք, Մենտելլոն այն ձայնագէտն է, որ գուցէ ամէն երաժշտէ աւելի բանաստեղծութիւն դրած է իր արտադրութեանց մէջ: Պէտք է զգալ այդ բանաստեղծութիւնն, եւ Օր. Մ.Մարտիրոսեանի մատուցէր զայն զգացող հոգիէ մը կազդուէին յայտնապէս: Չափ, ճշդութիւն, կորով ու նրբութիւն նայնպէս յատկութիւնքն էին իւր խաղուն: Ունկնդիրք համակիր ծափերով շնորհաւորեցին իրեն ալ երաժշտական նշանաւոր կարողութիւնը: Եւ փութանք ըսելու, Մարտիրոսեան քերց յաջողութիւնը դափնի մըն ալ աւելի էր այն օր Չուխաճեանի փառապսակին, իբրեւ յաջողութիւնն իւր աշակերտուհեաց<sup>221</sup>:

Մանկավարժության համար հիմնավոր պատճառ էր նաև նյութական կողմը, որով տաղանդաշատ կումպոզիտորը փոքրիշատե հոգում էր ընտանիքի կարիքները: Կարիքը մշատապես հետապնդում էր կումպոզիտորին, նույնիսկ այն ժամանակ, երբ նա արդեն հայտնի և հեղինակավոր երաժիշտ էր: Հատկապես ընդունված էր ազդեցիկ մարդկանց տներում տոն օրերին հանդես գալը: Դրա մասին հիշատակվում է Գ.Չմշկյանի հուշերում, որի համաձայն Չուխաճյանը իր դպրոցական որդու հետ ծանոթների և բարեկամների տներում հայկական ավանդական երգեր էին կատարում. որդին երգում էր, իսկ հայրը՝ նվագակցում<sup>222</sup>:

Տ.Չուխաճյանն իր բազմաթիվ ստեղծագործությունները նաև նվիրել է իր աշակերտներին և ըստ Մ.Տեր-Միմոնյանի, դա ևս ապահովում էր դրանց կատարումը թեկուզ սպոնսում և հրատարակվում էին նրանց ծնողների կողմից: Այս նվիրատվություններով նույնիսկ կարելի է դատել այս կամ այն աշակերտի առաջադիմության մասին. որոշները շատ պարզ են, սահմանափակ տեխնիկական միջոցներով, մյուսները ավելի վիրտուոզ և այլն<sup>223</sup>:

Նրա աշակերտների թվում էին հետագայում թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպիսիք էին Երկրագործության և Առևտրի նախարարության Ընդհանուր քարտուղար Մունիր Բեյը (նրան է ձևավորված Պրոտի պոլկան), Մուլթանի կցորդ պաշտոնակալ Նայիմ Բեյը (“Ձեմիրե-կադրի”): Հայ աշակերտներից էին

<sup>220</sup> Լ. Թահմիզեան, Տիգրան Չուխաճեան. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Փաստենա, 1999, էջ 61:

<sup>221</sup> Լ. Թահմիզեան, Տիգրան Չուխաճեան. կեանքը եւ ստեղծագործութիւնը, էջ 65-66: “Արևելք”, 1889, թ. 1605, Մայիս 23:

<sup>222</sup> Տե՛ս Գ.Չմշկյան, Իմ հիշատակարանը, Երևան, 1953, էջ 130-131:

<sup>223</sup> Մ. Թեր-Տիմոնյան. Фортепианная музыка в творчестве Тиграна Чухаджяна, ձեռագիր, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ, էջ 5-6:

Ք.Ասատուրը (Բնութագրական պար “Արևելյան”), Մարի և Էժենի Մարտիրոսյանները (“Քուզի ջրվեժը” Էքսպրոմտը), Հայկանուշ և Մաքրուհի Ազնավուրյանները (“Տարանտել”), Ք.Շիրինյանը (“Գավոտ”), Մեմբար, Վիկտորիա և Արսիհա Մարաֆյանները (Մալոնի մագուրկա “Միրուն”), Նեվրիք Պորտուքայանը և Միհրան Խուդավերդյանը (“Մեծ արաբական պար”), Տիրուհի Ղազարոսյան (“Երկրորդ արաբական պար”), Հակոբ Ասատուրը (“Անընդհատ շարժում”) և այլք: Դասավանդել է նաև բանաստեղծուհի, արձակագիր Անայիսին և նրա քրոջը: Մաեստրո Տ.Չուխաճյանի մասին բազում հետաքրքրական տեղեկություններ է մեզ փոխանցում Անայիսը իր հուշերում: “...երբ դասը աւարտէր, շատ անգամ հմայիչ եղանակներ կը նուագէր, և ես ափ ի բերան մտիկ կ'ընէի: Երբեմն ալ կը յանդգնէի հարցնել իրեն:

-Ինչ է նուագածնիդ:

Երեսակայութիւն “Իմաժինասիռն” կը պատասխանէր:

Այդ երեսակայութիւնը ստեղնաշարին վրայէն կը սահէր, կ'երթար երբեմն փոթորկոտ, գոռ, երբեմն ալ մեղմածուփ անուրջի մը պէս:

Չուխաճեան վերջերը, կը սիրէր դասերէն յետոյ քիչ մը խօսակցիլ, բացատրել երաժշտութիւնը: Թրքերէնով, ֆրանսերէնով խառն հայերէն մը կը խօսէր որ իր բերնին մէջ համակրելի եւ առինքնող կը դառնար:

Իր սկզբունքն էր թէ լաւագոյն էր պարզ, դիրքին կտոր մը կատարեալ կերպով մը նուագել, քան թէ դժուարին հեղինակութիւններ միջակ կերպով: Շումանի ալ կարծիքը այդ եղած է:

Կը փափաքէր որ աշակերտը իր նուագածին մէջ բան մը դնէ իր հոգիէն:

Չուխաճեան, հակառակ որ իտալական դպրոցին կը պատկանէր, մասնաւոր պաշտում մը ունէր Շուպերին հանդէպ, մեզի շատ անգամ կը խօսէր անոր գործերուն մասին խորունկ հիացումով, սքանչացումով:

Իրեն համար նուագ մը կրնար ներկայացնել գեղեցիկ բնանկար մը, ինչպէս նաեւ արտայայտութիւն մը վշտի կամ խնձիղի, կամ ցատումի:

Իր մաքուր հոգիին մէջ բնութեան հրաշալիքները և արուեստին ամենակարողութիւնը իրար կը խառնուէին, զիրար կը կրացնէին և կը դառնային աստուածային զօրութիւն մը:

Երիտասարդական եռանդը երբեք չէր պակասած իրեն, երբ նուագէր միշտ մեղրածոր քաղցրութիւն մը ունէին իր մատները, կարծես լուսապսակ մըն ալ գլխուն շուրջը<sup>224</sup>:

Ծանոթանալով ժամանակակիցների այս հուշերին, նկատում ենք, որ Տ. Չուխաճյանի կատարողական գործունեությունն անբաժանելի էր մանկավարժականից: Կարելի է եզրակացնել, որ նրա մանկավարժությունը խորապէս ստեղծագործական էր, բացատրական: Նա փորձում էր շարժել և զարգացնել աշակերտի երևակայությունը, խորացնել նրա գիտելիքները: Նրանց հետ խոսում վերլուծության, համեմատությունների միջոցով: Ինչպէս ամեն իսկական երաժշտի, Տ.Չուխաճյանի համար ևս բովանդակության բացահայտումը ստեղծագործության վրա աշխատելու կարևոր անկյունաքարն էր:

Բացատրական աշխատանքից բացի՝ Տ.Չուխաճյանը կողմնակից էր կատարման ոգեշնչված, ռոմանտիկ ոճին: Ինչու չէ, այս տպավորությունների շնոր-

<sup>224</sup> *Անայիս*, Յուշերս, Փարիզ, 1949, էջ 32-37:

հիվ նաև ստեղծվում է մանկավարժի ջերմ, մարդամոտ կերպարը:

Հայտնի չէ, արդյո՞ք կատարողական արվեստի վերաբերյալ նրա հայացքները ձևավորվել են որևէ ներգործության շնորհիվ, սակայն ռոմանտիկ արվեստի ներկայությունը զգալի է: Նյութերից ակնհայտ է դառնում, որ նա առավելապես հիմնվում էր ռոմանտիկ նվագացանկի վրա. դրան մոտ էր նաև իր ստեղծագործական ուղղվածությունը:

Հոգատարությունն աշակերտների հանդեպ երևում է նաև նրա ստեղծագործական նվիրումներից. չնայած Մ. Տեր-Սիմոնյանի այն կարծիքին, որ կոմպոզիտորը դա անում էր ստեղծագործությունների կատարման և հրատարակման համար, այնուամենայնիվ կարծում ենք, որ հոգատար մանկավարժը նաև դրանով աշակերտի առաջ դնում էր կոնկրետ գեղարվեստական և տեխնիկական խնդիրներ՝ յուրաքանչյուրին հանձնարարելով որոշակի մակարդակի բարդություններ հաղթահարելու գործը:

Այսօր դժվար է գնահատական տալ Տ.Չուխաճյանի կատարողական արվեստին և մանկավարժության չափանիշներին: Ակնհայտ է սակայն, որ այն ձեռք է բերել մեծ նշանակություն ժամանակի հասարակական-մշակութային կյանքում:

**Анна Адамян – Исполнительская и педагогическая деятельность Тиграна Чухаджяна.** – Статья посвящена разнообразной и плодотворной деятельности великого армянского композитора Тиграна Чухаджяна. В частности, его исполнительской и педагогической деятельности. Приведены интересные факты и отклики из прессы, а также воспоминания его учеников и современников. Суммируя все факты мы убеждаемся, что Т.Чухаджян стоял у истоков формирования исполнительских и педагогических школ в Константинополе 2-ой половины 19-го века и сыграл огромную и важнейшую роль в их дальнейшем развитии.

**Anna Adamyan – Performance and pedagogical activities of Dikran Tchouhadjian.** – The article is devoted to various and fruitful activities of the famous armenian composer Tigran Tchouhadjian. Particularly it reveals his pianistic and teaching career. The interesting facts and responses are given in article from the press and also from the memories of his pupils and contemporaries. Summarizing all facts, we are convinced, that Tchouhadjian stood at the sources of formation of performing and pedagogical schools in Constantinople of the 2<sup>nd</sup> half of the 19<sup>th</sup> century and played the major and huge role in their further development.

## ԱՐՏՈ ՉԱՔՄԱՔՉՅԱՆ

### ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԱՆՑԱՆ

Որքան հաստատուն է մի ժողովրդի գոյավիճակը, կացութեանն ու զարգացման պատմական ընթացքը, ինչքան բազմակողմանի, ճոխ և հարուստ է նրա ստեղծագործ ոգին, մշակութային կյանքը, այնքան նրա հարատևման երաշխիքները գորավոր են, նույնչափ էլ նա կայուն և պատվավոր տեղ է ապահովում իր համար, ուրիշ առաջադեմ ժողովուրդների հետ հավերժորեն քայլելու իրավունք է նվաճում: Հայկական կերպարվեստը, այս իմաստով, հպարտորեն հանդես գալու երաշխիքը ունի համաշխարհային արվեստի երկար հռչակումներում<sup>225</sup>: Դրա ամենավառ օրինակներից մեկն է հայ արվեստի մեծ երախտավոր Արթուր Չաքմաքչյանի ստեղծագործությանը:

Բարդ է արվեստագետի աշխարհը, գերլարվածությամբ օժտված, անհանգիստ ֆակտուրայով և բարձր հուզականությամբ:

Ապրելով և ստեղծագործելով տարբեր երկրներում, ուշադրությամբ ուսումնասիրելով տարբեր քաղաքակրթությունները, արվեստագետը հավատարիմ է մնում իր ազգային խառնվածքին: Միջնադարյան հայ ճարտարապետությունը, քանդակագործությունը, որմնանկարչությունը, մանրանկարչությունը, զարդամոտիվների իմացության սկզբունքները այն աղբյուրներն են, որոնցից սնունդ է առնում քանդակագործը: Ազգային ամուր հողը կենսահաստատ ուժ է հաղորդում նրա ստեղծագործական իդեալներին: Միաժամանակ նրա թե մտածելակերպը, թե արտահայտչամիջոցները համահունչ են մեր օրերին:

Չաքմաքչյանի արվեստը դրամատիկ է, լարված և անփորձ հասցեստիքոջ համար ոչ այնքան հասկանալի:

«Օ. Ռոդենը, պատկերելով Արարչի ձեռքը, պատրաստեց կավ տրորող քանդակագործի ձեռք»<sup>226</sup>: Քանդակագործն, իրապես, այն հրաշագործն է, որի ստեղծագործունյունը մնում և դարեր շարունակ ապրեցնում է իր հեղինակին, մշտապես ներկա, շնչավոր պահելով նրան:

Արթուր Չաքմաքչյանը եղավ 60-ականների մեր հոգևոր վերելքի մունեստիկներից մեկը և ազգային զարթոնքի տարիներին, երբ ազգը կանգնած էր իր անցյալը վերաիմաստավորելու և նորովի կայանալու դժվարին ճանապարհին: Գրականության, երաժշտության և կերպարվեստի ասպարեզներում ստեղծագործողները փորձում էին դրսևորվել նորովի և անկաշկանդ, հաղթահարել պարտադրանքի տարրերը:

20-րդ դարի հայ քանդակագործությունը անցել է մեծ փորձությունների դժվարին ճանապարհով: Մի կողմից առաջնորդների մոնումենտալ արձանների պարտադրանք, մյուս կողմից ազգային զարթոնքի, մեծ ոգևորության և մշակութային ժառանգության խորքից եկող անզուգական վարպետների փոխանցած ա-

<sup>225</sup> **Վարդան Վարդանյան**, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Երևան, 2000, էջ 1:

<sup>226</sup> **Յուրի Բորն**, Գեղագիտություն, Երևան, 1982, էջ 359:

վանդույթներ: Այս մթնոլորտում են գործել Վաղարշակ Մելի-Հակոբյանը, Արա Մարգարյանը, Մուրեն Ստեփանյանը, Այծեմնիկ Ուրարտուն (Տեր-Խաչատրյանը), Ստեփան Թարյանը, Տարագրոսը, Մերգեյ Մերկուրովը և այլոք: Այս ժամանակահատվածի ամենաբարդ խնդիրը սոցիալիստական գաղափարախոսության ծանր և հաճախ անհեթեթության հասնող պարտադրանքի հաղթահարումն էր: «1930-1950-ական թթ ազգային գեղարվեստական մշակույթն անդառնալի կորուստներ կրեց: Երկրով մեկ ծավալված քաղաքական բազմաթիվ հետապնդումների շարքում էին ճարտարապետներ՝ Միքայել Մազմանյանը, Նիկողայոս Բունյաթյանը, նկարիչներից ու քանդակագործներից՝ Մարգիս Հովհաննիսյանը Դանչոն (Եղիազար Գաբուզյան), Տաճատ Խաչվանքյանը, Երվանդ Քոչարը, Տիգրան Դավթյանը և ուրիշներ»<sup>227</sup>: «Այնպիսի նշանակության գաղափարակիր հուշարձաններում, ինչպիսիք էին Լենինինը, վաղուց արդեն սահմանված էին որոշակի օրենքներ, կանոններ, որոնք կազմավորվել էին 1930-1950-ական թթ, մասնավոր հարցերում, նույնիսկ, կնքված և անբեկանելի, որոնք հաջողությամբ պահպանվեցին մինչև 60-70-ական թթ»:

Այս տարիների ցուցահանդեսների և համամիութենական միջոցառումների սրահները ողողված էին կուսակցական առաջնորդներին փառաբանող, խորհրդային մարդու «ուրախ և անհոգ» կյանքը նկարագրող ստեղծագործություններով: Մակայն այս ժամանակահատվածում ստեղծված այնպիսի բացառիկ ստեղծագործություններ՝ ինչպիսիք էին Երվանդ Քոչարի «Մասունի Դավիթը» և այլն, խոսում էին այն մասին, որ հայ արվեստը կարողացել է պահպանել իր բարձր նկարագիրը և կենսական մեծ ուժով դրսևորվել բոլոր ժամանակներում: Թերևս այստեղից են գալիս հայ նկարիչների և քանդակագործների հետագա սերնդի ինքնավստահությունն ու ընդվզելու կամային հատկությունները, որոնց դրսևորումը տեսնում ենք 60-80-ական թթ բացառիկ բեղմնավոր ժամանակահատվածում, երբ հանդես եկան Մ. Ավետիսյանը, Վ. Էլիբեկյանը, Ս. Մուրադյանը, Գ. Խանջյանը, Ղ. Չուբարյանը, Կ. Լուրիջանյանը, Ա. Չաքմաքչյանը, Լ. Թոքմաջյանը, Ա. Շիրազը և այլոք:

Այս մթնոլորտում էր, որ Չաքմաքչյանը մուտք գործեց գեղարվեստական իրականություն և իր մեծ հետքը թողեց 60-ականների հայ քանդակագործության ձևավորման ճանապարհին:

Հետաքրքիր է առանձնացնել արվեստագետի ինքնուրույն ոճը, նրա ոչ շարուն մտածելակերպը. թե թեմատիկ և թե մշակման առումներով: Չաքմաքչյանի արվեստը բազմազան է: Այն ներկայացնում է ամենամանր պլաստիկայից մինչև մոնումենտալ ստեղծագործություններ: Հակասություններից ծնված հետաքրքիր խորհրդավորությամբ են օժտված նրա յուրատեսակ արվեստի նմուշները: Նրա ստեղծագործական աշխարհը ժամանակակից է՝ միաժամանակ հոգում միշտ կրելով Նարեկացու փիլիսոփայությունը, որն էլ հիմք հանդիսացավ ստեղծելու Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» պոեմի թեմայով գրաֆիկական հարյուրից ավել գործեր:

Ստեղծագործական ակունքները վերցնելով հայրոցի պատմությունից, հայրենի բնաշխարհից, հայրենիքի ողբերգական իրողություններից, տեղափոխվելով

<sup>227</sup> *Արարատ Աղասյան*, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX - XX դարերում, Երևան, 2009, էջ 96:



օտար ավեր, նույնիսկ շատ հեռու, նա չհրաժարվեց իր համար սրբագործված սկզբունքներից և ստեղծեց հայրենի թեմաներով բազում կարևոր ստեղծագործություններ: Օրինակ, նա ստեղծեց հայ հանճարեղ կոմպոզիտորի՝ Կոմիտասի մի շարք արձաններ՝ Կոմիտասի կերպարում ծիլարձակելով հայ հանճարի հատկանիշները: Միրելի թեմատիկան չլքեց նրան թե Հայաստանում և թե Կանադայի Մոնրեալ քաղաքում:

Արվեստագետը ծնվել է 1933 թվականին հունիսի 26-ին Եգիպտոսում, գրավաճառ Սուրեն Չաքմաքչյանի ընտանիքում: Քաղաքակրթության այս օրրանն անշուշտ մեծ ներշնչանք է եղել տաղանդաշատ երիտասարդի համար: Հնամենի երկիր-թանգարանը միշտ մոգական ուժով ձգել և իրեն է ենթարկել մարդկային երևակայությունը: Եվ ահա, մանկության տարիներից ի վեր, աչքի ընկնելով բացառիկ աշխատասիրությամբ, մշտապես փոքրիկ թղթի վրա հետաքրքիր և խորհրդավոր դրվագների դրոշմունով սկսվում է արվեստասերի ու արվեստագետի ձևավորումը: Սակայն ընտանքի բացառիկ հայրենասիրական մթնոլորտը, նրա սիրտն ու հոգին լցրել էին էին հայրենասիրությամբ: Նա մեծանում և ուսանում էր, սրտում մի անհազ կարոտով երբեք չտեսած հայրենիքի նկատմամբ:

Արթո Չաքմաքչյանի առաջին լուրջ շփումն արվեստի աշխարհի հետ եղավ Կահիրեյի Նուբարյան վարժարանի Օսիկ Ավետիսյանի դասարանում:

1948թ. նա իր ընտանիքով ներգաղթում է Հայաստան: Այստեղ, հայրենիքում, սովորում է Թերլեմեզյանի անվան Գեղարվեստական ուսումնարանում: Այնուհետև հաջողությամբ ավարտում է Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտը՝ ստանալով քանդակագործ վարպետի դիպլոմ: Արթո Չաքմաքչյանը մեկն էր այդ եզակիներից, որ շրջել և ուսումնասիրել է երկրվ մեկ փոված հայկական բազմադարյան հարուստ մշակույթը, հայկական հնագույն եկեղեցիներն ու խաչքարերը: Կարևոր աշխատանք է իր կողմից գրված «Միջնադարյան Հայ Արձանագործություն» գործը, որի վրա հեղինակն աշխատել է գրեթե տաս տարի: Այն նվիրված է հայ ճարտարապետությանն ու քանդակագործությանը: Այստեղ գետեղված են բազում վերլուծություններ. վիճելի շատ հարցեր այս գրքի մեջ գտնում են իրենց փաստացի լուծումը: Այս աշխատանքի համար, որպես կարևորագույն աղբյուր, Չաքմաքչյանը օգտագործում է հնամենի բազմաթիվ կոթողներ, որպես կիսավեր և կանգուն վկաներ հայ մշակույթի:

Օտար քաղաքակրթությունները ևս մշտապես եղել են քանդակագործի ուշադրության կենտրոնում: Նա հարցազրույցներից մեկում ասում է. «Համակրում եմ շատ-շատերին, բայց անհատները ավելի լավ է արվեստագետի մեջ մնան ու խոսեն նրա հետ: Որոշ մարդկանց մասին իմ համակրանքը հանրորեն հայտնելով օտարացնում եմ նրանց: Ես նախընտրում եմ խոսել մշակույթների մասին, որոնց ակունքները դրոնել եմ տարիներով: Օրինակ՝ Շումերական արվեստը, էթրուսկյանը և Հունական Արխայիկը: Մրանք մոտիկ են թվում հայկականին ոգիով և ոճով»<sup>228</sup>:

Հայ կերպարվեստի ամենակարևոր բնագավառներից մեկը՝ զարդարվեստը, դեռ շատ պահած գաղտնիքներ ունի: Այս պակասը լրացնելու մղումով, արվեստագետը հրապուրվեց և խորին ուշադրությամբ ուսումնասիրեց հայ միջնադարյան զարդարվեստն ու արձանագործությունը: Ինչ որ չափով թերի ուսումնասիրվածությունը և անսահման հետաքրքրասիրությունը մղեցին ստեղծելով

<sup>228</sup> **Թորոս Թորոնեան**, Արթո Չաքմաքչյան Արուեստագետը, Պեյրուք, 1990, էջ.20

«Միջնադարյան Հայաստանի զարդարվեստը» աշխատությունը: Վերջինս ստեղծելիս Արթուր Չաքմաքչյանը աշխատել է Նոնա Ստեփանյանի հետ: Չաքմաքչյանը հատկապես մեծ ուշադրությամբ է ուսումնասիրել զարդարիկ ճարտարապետության մյուս կարևոր նմուշները՝ պատկերաքանդակները, թռչունների, զանազան կենդանիների պատկերները, իշխանական տների տոհմանշանները: Աշխատությունն ունի բազում սև, սպիտակ և գունավոր վերատպություններ:

Չաքմաքչյանի որոշ գործերի վրա տեսանելի է վաղ միջնադարյան հայկական արվեստի ակնհայտ ազդեցությունը: «Նազան, իմ նազանի», «Բրուտ», «Հայտուհին», արձանները ներկայացված են հայկական տարազով, արտահայտչական ձևերի ընտրությամբ գույսպ են, գեղարվեստական հնարքների օգտագործման մեջ չափավոր և ինքնատիպ են: Քանդակագործը հմտորեն է տիրապետում ծավալային պլաստիկային: Նա ստեղծում է խոր դրամատիզմով լի կերպարներ («Մայր», «Կոմիտաս», «Հայտուհի» և այլն): «Հայտուհու» քանդակը շատ պարզ է, գերծ մանրամասն մշակումներից: Խոսքոված հուզականությամբ են շնչում Չաքմաքչյանի քանդակները: Հաճախ քանդակագործը դրան հասնում է մեկ-երկու շտրիխով: Օրինակ՝ «Հայտուհին», որ թվում է թե գուրկ է մանրամասն մշակումներից, արտաքին այլ ձևերից, ոչ պակաս արտահայտչական է և անմիջապես գրավում է դիտողին իր դալուկ արտահայտությամբ: Նրա ստեղծած կերպարները գույսպ են, ամփոփ, գերծ ձևային և իմաստային ծանրաբեռնվածությունից, երբեմն նաև չոր: Չաքմաքչյանի մարմնավորած կերպարների մեջ մեծ դիմամիկա կա («Նազան, իմ նազանի...»):

Պատահական չէ, որ Չաքմաքչյանն իր կերպարներից շատերը նախընտրում է ներկայացնել բնության գրկում, քանի որ մարդուն էլ նա դիտում է իբրև բնության անքակտելի մաս: Այս մասին նա նշում է տարբեր հարցազրույցներում:

Արթուր Չաքմաքչյանի ստեղծագործությունները հնարավորություն են տալիս ընդարձակելու մեր հասկացողությունը արվեստում առարկաների, երևույթների, ձևերի փոխհարաբերությունների մասին:

Չաքմաքչյանի արվեստում թեման արտահայտում են պլաստիկան և ժամանակակից աշխարհագրացողության վրա հիմնված ձևերի հարաբերությունը, համաչափությունները: Նրան ամենից առաջ հուզում են մարդու էությունը, խառնվածքը, իր բոլոր հոգսերով, ապրումներով, դրամատիզմով հանդերձ: Օրինակ քանդակագործի մոր կերպարը մեզ հուզում է ոչ միայն որպես կոնկրետ անձնավորություն՝ հեղինակին հարազատ մարդու դեմքով, այլ՝ դիմաքանդակն ամենից առաջ գրավում է իր խորությամբ, ներաշխարհի բացահայտմամբ, այն ներաշխարհի, որը բնորոշ է մոր, հայ կնոջ կերպարին:

«Մայրը» դիմաքանդակը արվեստագետն ստեղծել է 1965 թվականին: Դեմքն արտահայտում է և դառնություն, և քնքշանք, և միաժամանակ անսահման մայրական սեր: Այն պատված է խոր կնճիռներով, կարծր է, բայց դալուկ, հայացքում կա խոր տառապանքի արտահայտություն: Դիմագծերը խոսում են նաև կերպարի տրամադրության մասին: Հեղինակը, ինչպես իր մյուս գործերում, այստեղ ևս չի ընդունում կոնկրետությունը, բնօրինակին հավատարիմ մնալու անհրաժեշտությունը: Նրա համար մայրը հավաքական կերպար է, բայց և շատ կոնկրետ: Արթուր Չաքմաքչյանի գրեթե բոլոր ստեղծագործությունների համար շատ բնորոշ է էքսպրեսիայի և ջերմության, տեսողականի և հոգեբանականի համադրությունը: Այս մասին է խոսում նաև «Մայրը» քանդակը: Խորությամբ մշակված են այտոսկրերը, հոնքերը, աչքերը: Մազերը փոքր ինչ բարձրացրած, խնամքով

հարդարված են հետ: Չախ ձեռքը խոր վշտի արտահայտությամբ հենված է այտին: Հեղինակը ձեռքի այս դիրքը հաճախ է օգտագործում նաև այլ գործերում («Կոմիտաս», «Հերոսիմա» և այլն): Պարանոցը նրբորեն մշակված է, և կենտրոնի խոր ակոսը կարծես ներկայացնում է մայրական սրտի մեծությունը՝ դիտողի հայացքը առաջին հերթին գրավելով իր վրա: «Մայրը» դիմաքանդակը արվեստագետը ստեղծել է մի քանի տարբերակով:

«Մայրը» գործը արժանացել է Հայաստանի արվեստագետների միության ոսկե մեդալի, որն արվեստագետի առաջին մրցանակն էր: Այն այժմ գտնվում է Հայաստանի Արդի Արվեստի թանգարանում:

Ծնվելով բուրգերի և սֆինքսների հայրենիքում, Չաքմաքչյանը չէր կարող իր արվեստ չներմուծել եգիպտական հզոր քաղաքակրթության որոշ տարրեր: Դրանց ազդեցությունն իր վրա կրում է բիբլիական հանդարտությամբ դիտողին նայող Չաքմաքչյանի «Հայկական Սֆինքսը»: Տուֆակերտ երեք մետրանոց այս արձանը, որը քանդակագործը կոչել է «Հայկական երկդեմ սֆինքս», իր խորքում, սակայն, կարծես ոչ մի ընդհանրություն չունի եգիպտական սֆինքսների հետ:

Արթո Չաքմաքչյանը առավել նշանավոր դարձավ իր «Հերոսիմա» գործով, որը այժմ գտնվում է մեծ ողբերգությունն ապրած համանուն ճապոնական քաղաքում:

Լուռ, անկենդան հողի վրա, անապատի կենտրոնում, տասնվեց մետր բարձրությամբ, ջղաձիգ, փայտացած ձեռքի վրա հենված՝ վեր է ձգվում մարդու քարացած մի գլուխ: Ստեղծագործությանը նայելիս, առաջինն աչքի է զարնում անբիբ աչքի խոռոչը, որն արտահայտում է Հերոսիմայում գոհվածների և ողջ մնացածների բողոքը:

«Հերոսիմայի» մակետը գնվել է Խաղաղության պաշտպանության Սովետական Կոմիտեյի կողմից և ուղարկվել է Ճապոնիա, որտեղ էլ հավանություն է գտել հուշարձանի տեղադրման համար: Տեղադրվելով ատոմային ռումբի ողբերգական պայթյունի վայրում, հուշարձանը պետք է նախազգուշացներ մարդկությանը նման անմիտ «փորձարկումներից»: Հողից դուրս եկած վիթխարի բետոնե գլուխը հենված է ձեռքի վրա: Դեմքին սարսափի արտահայտություն է հաղորդում բացված, վարկյանում քարացած բերանը:

Արթո Չաքմաքչյանի սրտին մոտ է մարդու ճակատագիրը: Սա բազմիցս դրսևորվել է նրա դիմաքանդակներում: Մարդկային մեծ վիշտ, սարսափ է արտահայտում «Հերոսիմա» քանդակը, որը ինչպես ինքը՝ հեղինակն է ասում, հասկանում են բոլոր զբաղմունքի, բոլոր ճաշակի և նախասիրությունների տեր մարդիկ: Հավանաբար արվեստագետը ներկայացնելով այս ստեղծագործությունը, իղձ է ունեցել դատարկ ակնախոռոչներով ողբերգական գլուխը մարդկության անքուն աչքը դարձնել, շարունակ կոչ անելով զգոն լինել:

Սինթետիկ ընդհանրացում կա Արթո Չաքմաքչյանի արվեստում: Այդ ընդհանրացումը կատարվել է բոլոր ժամանակների և ժողովուրդների մշակույթների մեծ նվաճումները խորապես ուսումնասիրելու և ըմբռնելու հիման վրա: «Հերոսիմա» արձանում յուրովի ներդաշնակվել են ացտեկների և հայկական հինավուրց քանդակագործությանի առանձնահատկությունները: Դրա հետ մեկտեղ այս քանդակը արդիական կնիքներ: (Թեև արտաքնապես նա ոչինչ չունի Պիկասոյի «Գեոնիկայի» հետ, բայց իր ներքին լարումով ասոցացվում է այդ խոշարագույն ստեղծագործությանը): Այս ստեղծագործության էքսպրեսիան և արտահայտչաձևերը, բարձր աստիճանի ընդհանրացումը «խոստանում են» բետոնը վերածել խորհրդ-

դանշական հնչեղության մի մոնումենտալ կերպարի, երբ իրապես ընկալվող ձևերը ընդհանուր ոչինչ չունեն բնության նատուրալիստական նմանողության հետ:

Հայ արձանագործության համար դեռ վաղ ժամանակներից խորթ չի եղել դեֆորմացիան, որը նույնպես արտահայտչական միջոցներից մեկն է: Դեֆորմացիան, որը կերպարներին տալիս է գերարտահայտչականություն, ծնունդ է ոչ թե գիտակցության, այլ զգացողական ինտուիտիվ աշխարհի: Ուստի ուսումնասիրելով հայ միջնադարյան արձանագործությունը, Արթո Չաքմաքչյանն, իբրև դեֆորմացիայի օրինակներ, իր աշխատանքներում հիշատակում է Ախթամարի, Հաղպատի քանդակները: Քանդակագործի կարծիքով այս օրինակները այսօր էլ արդիական հնչողություն ունեն, քանի որ ժամանակակից արվեստում դեֆորմացիան դարձել է մտածելակերպ<sup>229</sup>:

Չաքմաքչյանի ավելի ուշ շրջանի գործերի ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել արդի մի շարք ուղղությունների մասնավորապես սյուրռեալիզմի ազդեցությունը:

Քանդակագործի «Հերոսիմա»-ի մեկ աչքի և «անգթորեն փշրված» մյուս աչքի բացվածքի մեջ կարող ենք տեսնել քսաներորդ դարի մարդկային բռնության և ուժի սարսափը: Նրա քարե ծայքերի մեջ դիտողը կարող է տեսնել պահված այն զուսպ, դառնությունը, որ այս արձանը ուղղում է մարդկությանը:

Ա. Չաքմաքչյանի ուշ շրջանի գործերի վրա նկատելի է որոշակի ազդեցություն համաշխարհային արվեստում իրենց կարևորագույն տեղը զբաղեցրած այնպիսի մեծ արվեստագետներից, ինչպիսիք են Պիկասոն, Մալվադոր Դալին, Հենրի Մուրը:

1984 թվականին Կանադայի Հայկական Կենտրոնն իր հոգևոր Միջնաբերդում բարձրացրեց հայ մեկուկես միլիոն անշիրիմ նահատակների հիշատակին նվիրաբերված «Եղեռնի Հուշարձանը»: Հուշարձանի հանձնաժողովը երկու տարի շարունակ զբաղվել է նախապատրաստական աշխատանքներով: Կանադայի կառավարությունը որոշ նախա-պայմաններ էր ներկայացրել հանձնաժողովին՝ առաջարկելով, որ արվեստագետը պարտադիր լինի կանադաբնակ և ընտրվի մրցույթով: Այս մրցույթում հաղթանակ տարավ Արթո Չաքմաքչյանի անզուգական ստեղծագործությունը: Հայ Կենտրոնի կառույցի հետ ընդելուզվող, երեք մետր բարձրությամբ բրոնզե հուշարձանը պետք է արտահայտեր հայ ժողովրդի ողբերգական կոտորածը և միաժամանակ հայի լավատեսությունը, վերապրելու կամքը և պայքարի վճռականությունը: Ա. Չաքմաքչյանի այս արձանը, արդիական իր հղացումով և համամարդկային նկարագրով, պետք է հպարտության զգացում առաջացներ հայ մարդու սրտում: Եվ ինչու չէ, այն անժխտելի մեծ նպաստ կարող էր համարվել Տորոնտոյի և Կանադայի մշակութային կյանքում: Տորոնտոյի հայ համայնքը մեծ հպարտությամբ ընդունեց այս հուշարձանը, քանզի Կանադայում առաջին Ապրիլյան Եղեռնի Հուշարձանը բարձրացրեց, նաև հավերժացնելով Արթո Չաքմաքչյան արվեստագետի գործերից մեկը: Հեղինակի այսօրինակ գործերը, իր սերնդի արվեստագետների շարքում, համաշխարհային ճանաչման են հասել:

Ճիշտ է, արվեստագետը խորությամբ ուսումնասիրել է հայկական հին արվեստն ու ճարտարապետությունը, սակայն նա նաև դրանց համադրում է 20-րդ

<sup>229</sup> «Գարուն» - հ.2, 1967թ.

դարի արձանագործության և առհասարակ արվեստի առանձնահատկությունները: Նրա արվեստին հատուկ են նաև ձևերի պլաստիկական լուծումները: Քանդակագործը զգայականության է հասնում հատկապես այդ միջոցներով, որոնք արվեստագետի գողտրիկ, ինտիմ և անչափ սիրելի սեղծագործական հետաքրքրություններից մեկն են կազմում:

**Шушан Варданын – Арто Чакмакчян.** – Эта статья посвящена отдельным эпизодам жизни и произведения великого канадского артиста Арто Чакмакчяна. Жизнь и работа в разных странах и внимательное изучение различных цивилизаций, не помешали скульптору оставаться верным своему национальному характеру. Средневековая армянская архитектура, скульптуры, фрески, миниатюры, знание принципов вдохновили скульптора. Особого внимания удостоились такие великолепные образцы современного искусства как "Комитас", "Мать", "Хиросима".

**Shushan Vardanyan – Arto Tchakmakchyan.** – This article is dedicated to the famous Canadian artist Arto Tchakmakchyan's life and works episodes. Meantime by living and working in different countries and carefully investigating the various civilizations, the artist remains faithfully to his national character. The medieval Armenian architecture, sculpture, fresco, manuscripts, decoration knowledge are the main principles and the source of inspiration for the sculptor. The article especially dedicated to his greatest modern art works such as "Komitas", "Mother", "Hiroshima".

# Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԱՐԴԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀՈՒՄԱՆԻՒՍԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ. “ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ - 2000. ՆՈՐ ՊԼԱՆԵՏԱՐ ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ԿՈՉ” (հոդված առաջին)

### ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

“Հումանիստական մանիֆեստ 2000. Նոր պլանետար հումանիզմի կոչ”<sup>230</sup>-ը (հետագա տեքստում՝ Մանիֆեստ) հանգամանորեն մշակված ծրագրային փաստաթուղթ է, հումանիզմի յուրահատուկ խարտիա, որն ուղենիշ է ծառայում արդի համաշխարհային հումանիստական շարժման առավել ազդեցիկ ուղղությունների համար:

Մանիֆեստի՝ միմյանց հետ սերտորեն շաղկապված և օրգանական ամբողջություն կազմող տասը բաժիններում<sup>231</sup> հիմնական գծերով ի մի են բերված մարդկային քաղաքակրթության անցած պատմական ուղու առավել կարևոր արդյունքները, ուրվագծված են նոր հազարամյակում սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական ու հոգևոր առաջընթացի առաջնային ուղղությունները, համաշխարհային զարգացման գլխավոր միտումները, մատնանշված են մարդկության առջև ծառայած հիմնախնդիրների լուծման ուղիներն ու միջոցները: Այն ներթափանցված է մարդկության ապագայի նկատմամբ լավատեսությամբ և կրում է պարզորոշ արտահայտված հետ-հետմոդեռնիստական, հակակղերական և հակաֆունդամենտալիստական բնույթ:

Մանիֆեստում հումանիզմը բնութագրվում է որպես “էթիկական, գիտական և փիլիսոփայական աշխարհայացք, որը վերափոխել է մեր աշխարհը”, և որին մարդկությունը պարտական է այն ամեն արժեքավորի ու առաջադիմականի համար, ինչին նա հասել է իր սոցիալ-տնտեսական ու մտավոր զարգացման ընթացքում: Մանիֆեստում այն կարծիքն է հայտնվում, որ չնայած քաղաքական, ռազմական ու սոցիալական բազում կոլիզիաներին՝ 20-րդ դարը մարդկության կյանքում նշանավորվեց սոցիալական, տեխնիկական ու գիտական մեծ նվաճումներով:

Բժշկական գիտությունը զգալիորեն բարելավել է մարդկանց առողջությունը, հաջողությամբ է ընթանում պայքարը ցավի ու տառապանքների դեմ, բարձ-

<sup>230</sup> Ի տարբերություն “Հումանիստական մանիֆեստ - I”-ի (1933թ.) և “Հումանիստական մանիֆեստ - II”-ի (1973թ.), որոնց հեղինակային իրավունքը պատկանում է Ամերիկյան հումանիստական ասոցիացիային, սույն Մանիֆեստի նախագիծը մշակվել է Հումանիզմի միջազգային ակադեմիայում՝ նրա պրեզիդենտ Պոլ Կուրտցի ղեկավարությամբ: Փաստաթուղթն ընդունվել է 1999 թվականին և դրա տակ իրենց ստորագրություններն են դրել աշխարհում ճանաչված բազմաթիվ հասարակական-քաղաքական գործիչներ ու գիտնականներ, այդ թվում՝ Նոբելյան մրցանակի դափնեկիրներ:

<sup>231</sup> 1. Ներածական մաս, 2. Լավագույն ապագայի հեռանկարները, 3. Գիտական աշխարհայացքը, 4. Տեխնիկական առաջադիմության դրական պտուղները, 5. Էթիկան և բանականությունը, 6. Մեր ընդհանուր պարտքը միասնական մարդկության առջև, 7. Իրավունքների և պարտականությունների մասին Մոլորակային Բիլլը, 8. Գործողությունների նոր գլոբալ ծրագիրը, 9. Մոլորակային նոր ինստիտուտների անհրաժեշտությունը, 10. Լավատեսությունը մարդկության հեռանկարների վերաբերյալ:

րացել է կյանքի միջին տևողությունը: Հակաբիոտիկների հայտնագործումն ու վակցինաների մշակումը, վիրահատության արդի մեթոդները, դեղագործությունն ու գենային ինժեներիան իրենց ավանդ են ներդրել առողջապահության զարգացման մեջ: Հասարակության առողջության պահպանման կանխարգելիչ միջոցները, բարելավված ջրամատակարարումն ու ջրահեռացումը զգալիորեն իջեցրել են ինֆեկցիոն հիվանդությունների ռիսկը: Թերապևտիկ միջոցների լայն տարածումը կտրուկ նվազեցրել է մանկական մահացությունը:

Վերափոխվել է սննդի արդյունաբերությունը, աճել է հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը, փոքրացել է սովի վտանգը, երկրագնդի մեծ մասում բարձրացել է մարդկանց ապահովվածության մակարդակը սննդամթերքով: Մասսայական օգտագործման ապրանքների արտադրության արդի մեթոդները դարձել են ավելի արդյունավետ՝ բանվորներին ազատելով ծանր ու հոգնեցուցիչ ֆիզիկական աշխատանքի շատ տեսակներից և լայնորեն մատչելի դարձնելով սպառողական ապրանքներից ու ծառայություններից օգտվելը:

Մարդկանց տեղաշարժման ժամանակակից միջոցները կրճատել են հեռավորությունները և վերափոխել են հասարակությունը: Ավտոմոբիլն ու ինքնաթիռը մարդկանց հնարավորություն են ընձեռել կտրել-անցնել երկրներ ու մայրցամաքներ, հաղթահարել աշխարհագրական մեկուսացումը միայնացից: Աստրոնավտիկայի բնագավառի նվաճումները մարդկության առջև բացել են տիեզերքը նվաճելու հուզիչ հեռանկարներ:

Տեխնիկական նվաճումները բարձր մակարդակի են հասցրել արդի կապի միջոցները՝ դրանք դարձնելով համընդգրկող: Ի լրումն այն առավելությունների, որ ընձեռում են հեռախոսը, ֆաքսը, ռադիոն, հեռուստատեսությունը և արբանյակային կապը՝ համակարգչային տեխնոլոգիան արմատապես վերափոխել է սոցիալական ու տնտեսական կյանքի բոլոր ասպեկտները: Տնտեսապես զարգացած երկրներում չկա այնպիսի հասարակական կառույց կամ ընտանիք, որն անմասն մնացած լինի տեխնիկական հեղափոխությունից: Ինտեռնետի համաշխարհային ցանցը հնարավոր է դարձրել ակնթարթային կապը երկրագնդի գրեթե բոլոր կետերի հետ:

Հումանիտար հետազոտություններն ի վիճակի գտնվեցին հասնելու նոր արդյունքների և ստանալու գիտության ու բանականության կողմից դրանց հաստատումը, մինչդեռ անցյալի մետաֆիզիկական և թեոլոգիական ուսմունքները չափազանց քիչ են առաջադիմել կամ բոլորովին չեն առաջադիմել:

Գիտական հայտնագործություններն ընդարձակել են տիեզերքի և նրանում մարդկային ցեղի տեղի մասին մեր գիտելիքները: Աստղագիտության և ֆիզիկայի բնագավառի հայտնագործությունները, հարաբերականության տեսությունը և քվանտային մեխանիկան նոր աստիճանի բարձրացրեցին տիեզերքի մեր ըմբռնումը՝ միկրոմասնիկներից մինչև գալակտիկաների մասշտաբները: Կենսաբանությունը և գենետիկան իրենց ավանդը ներդրեցին բիոսֆերայի մասին մեր պատկերացման մեջ: Դարվինի բնական ընտրության տեսությունն օգնեց պարզելու կյանքի էվոլյուցիան: ԴԼԹ-ի հայտնագործումը, մոլեկուլային կենսաբանության բնագավառի հետազոտությունները շարունակում են բացահայտել էվոլյուցիայի և բուն կյանքի թաքնված մեխանիզմները:

Սոցիալական ու մյուս հասարակական գիտությունները խորացրեցին հասարակական և քաղաքական ինստիտուտների, տնտեսության ու մշակույթի զարգացման օրենքների մեր ըմբռնումը:

20-րդ դարում տեղի ունեցան սոցիալական և քաղաքական մի շարք դրական տեղաշարժեր: Գործնականում վերացան XIX դարի գաղութային կայսրու-

յունները: Աշխարհի երկրների մեծ մասն ընդունել է Մարդու իրավունքների համաընդհանուր դեկլարացիան: Ժողովրդավարության, ազատության և բաց հասարակության իդեալները գնալով ավելի լայն տարածում են ստանում աշխարհում: Կանայք շատ երկրներում օգտվում են անձնական անկախությունից, օժտված են իրավական և սոցիալական բոլոր իրավունքներով, մարդկային գործունեության շատ ոլորտներ մուսք գործելու հնարավորությամբ:

Լուծվել է բնակչության աճի պրոբլեմը Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի հարուստ երկրներում: Աշխարհի շատ մասերում բնակչությունն աճում է ոչ թե ծնելիության, այլ մահացության նվազման և կյանքի տևողության ավելացման հաշվին:

Աշխարհում ավելի մեծ թվով երեխաների համար մատչելի է դառնում լավ կրթությունը, տարածվում է գրագիտությունը, ընդլայնվում է մշակութային արժեքներին հաղորդակից լինելու հնարավորությունը:

Մանիֆեստում, դրա հետ մեկտեղ, արտահայտվում է լուրջ մտահոգություն առ այն, որ նոր ժամանակներն իրենց հետ բերեցին նոր պրոբլեմներ, լուծում պահանջող սուր ու անսովոր բազում խնդիրներ, և մենք պետք է բաց աչքերով ու իրատեսորեն նայենք տնտեսական, սոցիալական ու քաղաքական այն բոլոր պրոբլեմներին, որոնք ծառայած են մարդկության առջև՝ նրա զարգացման արդի փուլում:

Երկրագնդի բնակչության զգալի մասը դեռ հեռու է նյութական ապահովվածությունից և շարունակում է իր գոյությունը քարշ տալ աղքատության, սովի և հիվանդությունների պայմաններում. նման վիճակ է տիրում առանձնապես Ասիայի, Աֆրիկայի, Կենտրոնական և Հարավային Ամերիկայի երկրներում: Դա վերաբերում է նաև այսպես կոչված հարուստ երկրներում ապրող բազմաթիվ մարդկանց:

Միլիոնավոր երեխաների և չափահասների կյանքի մակարդակն իր վրա կրում է անբավարար սննդի ու սանիտարական պայմանների, վատ առողջապահության կնիքը: Աճում են առաջներում հաղթահարված համարվող այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են տուբերկուլյոզը և մալարիան, իսկ ՁԻԱՀ-ի (ՇՈՒՄ) հաղթարշավը զարգացող երկրների մեծ մասում ըստ էության դիմադրության չի հանդիպում:

Որոշ շրջանակների համոզվածությունն առ այն, որ ազատ շուկան ընդունակ է ինքնաբերաբար բուժել բոլոր սոցիալական ախտերը, նմում է որպես վերացական ենթադրություն: Եվ աշխարհի երկրների մեծ մասում այսօր էլ լուծված չի այն հարցը, թե ինչպես իրար հետ շաղկապել շուկայի ազատության պահանջը և աղքատներին օգնելու սոցիալական արդար ծրագրերի իրականացումը:

Անհանգստացնող արագ տեմպերով է ավելանում աշխարհի բնակչությունը: Եթե 1900 թվականին աշխարհի բնակչության թիվը կազմում էր 1,7 միլիարդ մարդ, ապա ներկայումս այն արդեն գերազանցել է 7 միլիարդը: Եվ եթե այժմյան դեմոգրաֆիական միտումները պահպանվեն, ապա մինչև 2050 թվականը աշխարհի բնակչության թիվը կհասնի 9 միլիարդի:

Բնակչության աճի և արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ ոչընչացվում են անտառներն ու մշակովի հողերը: Բնտենսիվանում են գլոբալ տաքացման պրոցեսները՝ մի կողմից աղքատ երկրներում անտառների ոչնչացման, մյուս կողմից՝ հատկապես հարուստ երկրներում դեպի մթնոլորտ ածխածնի երկօքսիդի արտանետման հետևանքով, երկրներ, որոնք շարունակում են շոսյոտրեն ու անհաշվենկատ օգտագործել բնական ռեսուրսները: Կենդանական տե-



սակների պոպուլյացիաները անշեղորեն նվազում են, իսկ բուսական և կենդանական աշխարհի շատ տեսակներ մահանում են, և տպավորություն է ստեղծվում, որ մենք գործ ունենք մահացման այնպիսի մեծ մասշտաբների հետ, որոնք ակամա հիշեցնում են 65 միլիոն տարի առաջ երկրագնդի վրա տեղի ունեցած էկոլոգիական աղետը, որը հանգեցրեց դինոզավրերի անհետացմանը:

Աշխարհի շատ պետություններ բախվում են տնտեսական սուր պրոբլեմների՝ կապված քաղաքների գերբնակվածության հետ, որի գլխավոր պատճառը միգրանտների մասսայական հոսքն է գյուղական վայրերից: Այդ մարդկանց զգալի մասը մնում են գործազուրկ և մի կերպ են գոյություն պահպանում: Բսկ ընդհանրապես գործազրկությունը մնում է լուրջ պրոբլեմ նույնիսկ Եվրոպայի բազմաթիվ հարուստ երկրներում, որտեղ չի հաջողվում լուծել երիտասարդ մասնագետների զբաղվածության, նոր տեխնոլոգիաների անցման, դրանց կիրառման հետևանքով աշխատողների վերաորակավորման կամ նրանց համար այլ աշխատանք գտնելու պրոբլեմները: Աշխարհում վատթարացել են տնտեսական աճի պայմանները: Նախկինում գաղութային մի շարք երկրներում ու տարածաշրջաններում առկա է տնտեսական անկում: Բսկ վերջին տարիներին աշխարհում ծայր առած համընդհանուր ֆինանսատնտեսական ճգնաժամը գնալով ավելի է խորանում՝ իր ուղեծրի մեջ ներառելով ավելի ու ավելի մեծ թվով երկրներ, այդ թվում երկրագնդի առավել զարգացած երկրների շարքից:

Ավելի են արագացել ու խորացել համաշխարհային տնտեսության մեջ ընթացող գլոբալացման պրոցեսները: Միմյանց են միանում միջազգային արդյունաբերական միավորումները՝ իրենց բնույթով դառնալով անդրազգային և մի շարք դեպքերում ավելի հզոր, քան աշխարհի շատ պետություններ: Համաշխարհային շուկայում կայուն ու իրենց ներուժին արժանի տեղ են փնտրում Ռուսաստանը, Չինաստանը և այլ երկրներ:

Ստահոգիչ է աշխարհի շատ երկրներում ժողովրդավարության և ժողովրդավարական ինստիտուտների վիճակը: Մի շարք դեպքերում այդ ինստիտուտները կամ թույլ են կամ ընդհանրապես բացակայում են: Աշխարհի երկրների մեծ մասում ինչպես հարկն է չի ծավալվում ֆեմինիստական շարժումը, դանդաղ են ներդրվում գենդերային մտածողության հիմնարար սկզբունքները, չի հաջողվում կանանց համար ապահովել տղամարդկանց հետ հավասար իրավունքներ:

Գնալով ավելի ու ավելի ակնհայտ է դառնում երկրների ու ժողովուրդների կյանքի փոխկապվածությունը և դրա հետ առնչված՝ ուժեղանում է այն բանի ըմբռնումը, որ ոչ մի երկիր չի կարող հաջողությամբ ու դինամիկորեն զարգացնել իր տնտեսությունը մյուս երկրների տնտեսությունից, համաշխարհային տնտեսությունից ու միջազգային շուկայից մեկուսի: Մինչ այդ ամենի ուժով՝ աշխարհն ավելի ու ավելի է ձգտում դառնալ ժողովուրդների միասնական ընտանիք՝ կրոնաէթնիկական մի շարք ուժերի մրցակցությունն ու առճակատումը ձգտում է այն բաժանել թշնամական ճամբարների: Աշխուժանում են ֆունդամենտալիստական կրոնական տարրերը, որոնք պայքարում են հումանիզմի սկզբունքների և աշխարհիկ մշակույթի դեմ և տենչում են վերադարձ դեպի արխայիկ կրոնականություն:

Տագնապ է հարուցում հատկապես հակազիտական և հետադիմական հոսանքների տարածումը, մասնավորապես, ֆունդամենտալիստական սևեռուն կոչերը, կույր ֆանատիզմը և անհանդուրժողականությունը՝ լինի դա կրոնական, քաղաքական կամ էթնիկական բնույթի: Դրանք այն նույն ուժերն են, որոնք աշ-

խարհի շատ երկրներում խոչընդոտում են սոցիալական պրոբլեմների լուծմանը կամ մարդկային գոյության պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

Ավանդական կրոնական հայացքներին կույր նվիրվածությունը էականորեն նպաստում է սոցիալական կյանքի երևույթների նկատմամբ ոչ ռեալիստական, հոռետեսական, միստիկական մոտեցումներին, անվստահություն է սերմանում դեպի գիտությունը և շատ հաճախ հանդես է գալիս ի պաշտպանություն իրենց դարն ապրած ու հետամնաց սոցիալական ինստիտուտների:

Հասարակության մշակութային բազմազանությունը անփոխարինելի հարըստություն է, որը նպաստում է զանազան էթնիկական ու մշակութային ավանդույթների նկատմամբ հանդուրժողականությանը, նրանց իրավունքների ճանաչմանը: Մակայն, զավոք, մենք բախվում ենք նաև հասարակությունը պառակտելու փորձերի հետ, հանդիպում սեպարատիզմի ու մեկուսացման կոչերի: Եվ այդ ամենը տեղի է ունենում այն ժամանակ, երբ նացիստների ռասայական տեսությունները լիովին մերժված են, իսկ Հարավային Աֆրիկայում իր գոյությունը դադարեցրել է ապարտեյդը: Անհանդուրժողականությունը ծնել է այնպիսի երեվույթներ, ինչպիսիք են էթնիկական զոտումները և ռասայական աստվության ուրիշ հրեշավոր դրսևորումներ: Խիստ անհանգստացնող են ահաբեկչության և ցեղասպանության դրսևորումները, որոնց թիկունքում կանգնած են այդ նույն էթնիկական ազգայնամուլներն ու կրոնական շովինիստները: Աշխարհն ավելի ու ավելի հաճախ է դաժան ու արյունալի էթնիկական բախումների, ուժգնացող ազգային երկպառակտությունների թատերաբեմ դառնում: Այդ բախումների կրոնական աստառը դեպքերի մեծ մասում ինչպես հարկն է չի ուսումնասիրվում ու չի բացահայտվում:

Մտահոգիչ է նաև այն, որ գիտության ու տեխնիկայի հաղթարշավի, գիտական մատերիալիստական աշխարհայացքի հաստատման պայմաններում տարածում են ստանում զանազան այսպես կոչված պարանորմալ հավատալիքներ, որոնք տարբեր ուղիներով, այդ թվում զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ փորձում են մարդկանց մատուցել իրականության մասին աղավաղված, միստիկական կամ պարանորմալ պատկերացումներ:

Զանգվածային լրատվության միջոցները ընդգրկել են ողջ աշխարհը և ասես դարձել ինքնաբավ և անկառավարելի ուժ: Հեռուստատեսությունը, ռադիոն, կինոն, մամուլը, գրահրատարակչությունը ավելի ու ավելի են ընկնում զանգվածային լրատվության միջոցների կոնգլոմերատների գերիշխանության տակ, որոնց գրեթե միակ նպատակը գովազդն է և համաշխարհային շուկայում իրենց արտադրանքի իրացումը: Մյուս կողմից՝ գլուխ է բարձրացրել և Արևմուտքի շատ համալսարաններում քարոզվում է հետմոդեռնիզմի ուսմունքը, որը մերժում է գիտության ու տեխնիկայի նվաճումները, կասկածի տակ դնում հումանիստական արժեքներն ու իդեալները:

Թեև աշխարհն արդեն բաժանված չի երկու գերտերությունների միջև՝ մարդկությունը դեռևս ընդունակ է ինքնառնչացման: Ֆանատիկ ահաբեկիչները, նույնիսկ զինվորական իշխանությունները, թեկուզ չուզենալով այդ, կարող են առաջ բերել սպոկալիպտիկ իրադարձություններ՝ առաջինը կիրառելով զանգվածային ոչնչացման զենքեր:

Պետությունների և կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ անցկացված մի շարք միջազգային կոնֆերանսներում լայնամասշտաբ համաձայնություններ են ձեռք բերվել մարդկության առջև ծառայած սոցիալական

ու տնտեսական բազում խնդիրների լուծման վերաբերյալ, սակայն պետություններին այդպես էլ չի հաջողվում ստանձնած պարտավորությունները կյանքի կոչել: Հարուստ երկրներից միայն մի քանիսն են իրենց կարևոր խնդիրը համարում օգնությունը աշխարհի մյուս երկրների աղքատ բնակչությանը կամ հոգատարությունը իրենց իսկ երկրների բնակչության ընչազուրկ և աղքատ խավերի նկատմամբ:

Ինչպես թվարկված, այնպես էլ հորիզոնում ուրվագծվող մյուս հիմնախնդիրները՝ իրենց սրությամբ ու մասշտաբայնությամբ հանդերձ՝ սկզբունքորեն լուծելին են: Սակայն դրանք կարող են հաջողությամբ լուծվել միայն բանակալության, նոր, քննադատական մտածողության օգնությամբ ու համայն մարդկության համատեղ ջանքերով:

Նոր հազարամյակի պրոբլեմներին դեմ-հանդիման՝ մարդկությունն զգում է ավանդական հումանիստական պարադիգմայի փոփոխման կարիք:

Անցյալից ժառանգված բազմաթիվ գաղափարներ ու արժեքներ այլևս չեն համապատասխանում նոր իրողություններին, առավել ևս այն ամենին, ինչ մեզ համար պատրաստում է ապագան: Այդ ամենը, արդի դարաշրջանում մարդկության առջև ծառայած խնդիրների ռացիոնալ լուծումը պահանջում է հրաժարում մտածողության հին, կարծրացած ձևերից և անցում մտածողության, իրականության ճանաչման այնպիսի նոր ձևերի, որոնք համահունչ լինեն այդ խնդիրների մասշտաբներին ու խորությանը: Նման մտածողությունն էլ հենց պետք է կազմի արդի հումանիզմի ամենակարևոր առանձնահատկությունը:

Մանիֆեստում հիմնավորվում է այն գաղափարը, որ ներկայումս համաշխարհային հանրության ամենակենսական հարցը նոր, համամոլորակային, պլանետար հումանիզմի մշակումն է, որը կանգնեք մարդու իրավունքների պաշտպանության դիրքերում, պայքարեք մարդկային ազատության ու արժանապատվության համար և միաժամանակ ցույց տար մեր պարտականությունը համայն մարդկության՝ որպես միասնական ամբողջի նկատմամբ: Սակայն դա արդեն այլ թեմա է՝ առանձին քննարկման արժանի...

**Григор Асатрян – Современное всемирное гуманистическое движение: “Гуманистический манифест - 2000. Призыв к новому планетарному гуманизму”.** – Статья посвящена анализу основополагающего документа современного мирового гуманистического движения - “Гуманистического манифеста - 2000: Призыва к новому планетарному гуманизму”, разработанного Международной академией гуманизма в 1999 году. В статье рассматриваются сущность и специфические особенности планетарного гуманизма, вопросы, касающиеся его роли в решении глобальных проблем современности, преодолении антиподов гуманизма.

**Grigor Asartyan – World modern humanist movement: “Humanist manifesto 2000: A call for new planetary humanism”.** – The article is dedicated to the fundamental document of the world modern humanist movement “Humanist Manifesto 2000: a Call for New Planetary Humanism”, developed in 1999 by the International Academy of Humanism. Analyzed are the gist and peculiarities of planetary humanism, issues related with its role in solving the global problems of modernity, in withstanding the antipodes of humanism.

**ԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ  
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ**

**ՌԱԶՄԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆ**

**1. Օբյեկտիվության հիմնախնդրի էությունը**

Օբյեկտիվության հիմնախնդրի ժամանակակից տարբերակը հասկանալու համար խիստ կարևոր է հստակ պատկերացում ունենալ, թե ինչ նկատի ունեն կողմերն օբյեկտիվություն ասելով:

Սովորաբար օբյեկտիվը նշանակում է սուբյեկտից անկախ գոյություն ունեցող: Մինչև Կանտը սուբյեկտից անկախը նույնանում էր զուտ օբյեկտի հասկոթյուններով պայմանավորվածի հետ: Այդ պատճառով էլ օբյեկտիվություն և ճշմարտություն հասկացությունների բովանդակությունները դասական փիլիսոփայության մեջ գրեթե ամբողջությամբ համընկնում են: Եվ իրոք, եթե ճշմարիտ է այն դրույթը, որը համապատասխանում է մեզնից դուրս գտնվող իրականությանը, ապա այդ դրույթի *բովանդակությունն* իր մեջ չպետք է պարունակի ոչինչ մեզնից, այլապես այդ համապատասխանությունը մեզնից դուրս գոյություն ունեցող իրականության հետ կվերանար: Հետևաբար, այդ դրույթն անպայմանորեն նաև օբյեկտիվ է: Եվ հակառակը, եթե դրույթի բովանդակությունը մեզնից որևէ կերպ կախում չունի, ուրեմն այն պայմանավորված է մեզնից դուրս գտնվող իրականությամբ և համապատասխանում է նրան, հետևաբար նաև ճշմարիտ է:

Կանտը հիմնովին փոխեց օբյեկտիվություն հասկացության բովանդակությունը. Ըստ Կանտի, դրույթն օբյեկտիվ է, եթե ընդունվում է բոլորի կողմից, *հետերսուբյեկտիվ է*: Ընդ որում, այդ ընդունումը ոչ թե կամային ակտ է, այլ պայմանավորված է սուբյեկտի ընկալելու և մտածելու մեխանիզմներով, որոնք, ըստ Կանտի, նույնն են բոլոր մարդկանց մոտ:

Ժամանակակից քննարկումներում շրջանառվող օբյեկտիվություն հասկացությունը որոշ չափով համապատասխանում է օբյեկտիվության կանոնային ըմբռնման հետ: Այսօր ևս դրույթը համարվում է օբյեկտիվ, եթե կախված չէ ցանկացած մեկի կամքից, այլ կան անկախ հիմքեր, որոնք ստիպում են ընդունել կամ մերժել այդ դրույթը: Մակայն, ի տարբերություն Կանտի, որպես այդպիսի անկախ հիմք հաճախ ընդունվում են փորձը, զգայական տվյալները, փաստերը, այլ ոչ թե գիտակցության կառուցվածքը: Պետք է ուշադրություն դարձնել, որ այստեղ փաստը նշանակում է ոչ թե նույնությամբ արտաքին իրականությունն արտացոլող, ինչպես այն ընդունվում էր դասական փիլիսոփայության կողմից, այլ միայն *կոնկրետ սուբյեկտի* կամքից, ցանկություններից, նպատակներից անկախ դատողություն, որը, ենթադրվում է, որ ինչ-որ կերպ կապված է իրականության հետ<sup>232</sup>:

Այսպիսով, *տեսություններն օբյեկտիվ են, եթե ընդունվում կամ հերքվում են փաստական վկայության հիման վրա*:

<sup>232</sup> Փաստի դատողությունը, որպես տեսությունների օբյեկտիվության հիմք, ընդունվում է և՛ պոզիտիվիստ, և՛ պոստպոզիտիվիստ փիլիսոփաների կողմից: Տե՛ս K. Поппер Логика научного исследования, М. 2004, стр. 41 – 53.

Իսկ արդյո՞ք մեր ունեցած գիտական տեսություններն օբյեկտիվ են այս իմաստով: Արդյո՞ք տեսությունների ընտրությունը կատարվում է գուտ փաստական վկայության հիման վրա, թե՞ դա կարող է պայմանավորված լինել նաև այլ գործոններով:

Այս խնդրի շուրջ վիճում են մի շարք տեսակետներ, որոնց մեջ ներկայումս հատկապես առանձնանում են գիտական ռեալիզմի և սոցիալական կոնստրուկտիվիզմի տեսակետները: Ըստ գիտական ռեալիզմի, գիտական տեսություններն օբյեկտիվ են և հիմնվում են փաստական վկայության վրա, իսկ սոցիալական կոնստրուկտիվիզմը, հակառակը, պնդում է, որ տեսությունը ոչ թե հիմնվում է փաստերի վրա, այլ արտացոլում է այն ստեղծող կամ ընդունող գիտնականի սոցիալական շահերը, նպատակները:

Այս հոդվածի նպատակն է քննարկել առաջին տեսակետի՝ գիտական ռեալիզմի տեսակետը, վերհանել նրա փաստարկներն ու առավելությունները, ինչպես նաև հակափաստարկներն ու խոցելի տեղերը:

## **2. *Գիտական ռեալիզմի թեզը***

Գիտական ռեալիզմը գիտության բնույթի վերաբերյալ այն տեսակետն է, որը պնդում է, որ իրերը գոյություն ունեն ինքնին, մեզնից անկախ, և գիտության նպատակն է բացահայտել դրանք: Գիտնականներն ունեն դա անելու մի շարք տեխնիկաներ, և մինչ այժմ, դրանք օգտագործելով, բավականին հաջողությունների են հասել: Քաղաքական կարծիքները և սոցիալական շահերը ոչ մի կապ չունեն պարզելու հետ, թե ինչպես է աշխարհը գործում:

Ըստ գիտական ռեալիզմի կողմնակիցների, գոյություն ունի աշխարհ, որում կան օբյեկտներ, պրոցեսներ, և հատկություններ: Այդ *օբյեկտները, պրոցեսները, և հատկություններն անկախ են մեզնից և նրանց մասին մեր պատկերացումներից*: Ցանկացած դատողություն այդ աշխարհի մասին կա՛մ ճիշտ է, կա՛մ սխալ՝ առնվազն մոտավոր կերպով: *Գիտության նպատակը իրականության ճշմարիտ և օբյեկտիվ նկարագրությունը տալն է՝ պարզելը, թե ինչպիսին են իրերն իրականում*: Գիտությունը կարող է նաև այլ նպատակներ հետապնդել, (օրինակ՝ տեխնոլոգիաների զարգացում), բայց ճշմարտությունը գիտության հիմնական և առաջնային նպատակն է: Գիտնականներն ունեն մի շարք մեթոդներ և մեխանիզմներ՝ պարզելու համար, թե ինչպիսին են իրերն իրականում: Ճիշտ է, այդ մեթոդները սխալական են և երբեմն կարող են մեզ հեռացնել ճշմարտությունից: Այնուամենայնիվ, գիտությունը նշանակալի զարգացում է ապրել մինչև այժմ՝ հենց այդ մեթոդների շնորհիվ: Հետևաբար, ռացիոնալ է շարունակել օգտագործել այդ մեթոդները՝ հավատարիվ, որ դրանք բնության մասին գիտելիքներ ձեռք բերելու ամենահավաստի և վստահելի աղբյուրն են:

Օբյեկտիվության շուրջ մոլորո պայքարում գիտական ռեալիզմի կողմնակիցներներից են Ջ. Ռ. Բրաունը, Փ. Բոդոյանը, Ի. Բ. Կոհենը և բազմաթիվ այլ մտածողներ:

Իրենց տեսակետը հիմնավորելու համար գիտական ռեալիզմի կողմնակիցները բերում են մի շարք փաստարկներ: Գիտական ռեալիզմի գրեթե բոլոր փաստարկները հիմնվում են գիտական փորձի փաստարկի վրա: Գիտական փորձի փաստարկի էությունը հետևյալն է. գիտական ռեալիստները պնդում են, որ գիտության բնույթի վերաբերյալ հակառեալիստական և ռեյաստիվիստական

(այդ թվում նաև սոցիալական կոնստրուկտիվիստական) դիրքորոշում ունեցողները նման թյուր պատկերացումներ չէին ունենա գիտության մասին, եթե իրենք էլ ներգրավված լինեին գիտական գործունեության մեջ և մի փոքր ավելի խորն ուսումնասիրած լինեին գիտությունն ու նրա բովանդակությունը: Այն, ինչ քննարկում ու քննադատում են հակառեալիստները, նույնիսկ հեռավոր նմանություն չունի այն գիտության հետ, որով զբաղվում են իրական գիտնականները: Նրանք հաշվի չեն առնում այն փորձը, որն ունեն գիտնականները՝ գիտական փորձը, այլ փորձում են իրենց կողմից ստեղծված շրջանակները պարտադրել գիտական գիտելիքին: Սա այն հիմնական արձագանքն է, որին կարելի է հանդիպել գրեթե բոլոր գիտնականների և գիտական ռեալիստների մոտ:

Այլ կերպ ասած՝ գիտական փորձի փաստարկը կարող ենք ձևակերպել այսպես. *նրանք (հակառեալիստները) այդպես չեն խոսի, եթե իմանան այն ամենը, ինչ մենք (գիտնականները) գիտենք:*

Իսկ ի՞նչ և ինչպե՞ս գիտեն գիտնականները: Ի՞նչ հետևություններ կարելի է անել նրանց ունեցած գիտելիքից: Այլ կերպ ասած՝ որո՞նք են այն փաստարկները, որոնք կարելի է առաջ քաշել՝ հիմնվելով գիտական փորձի վրա:

Ըստ գիտնականների, գիտական տեսությունները նախ և առաջ *բացատրում են* արտաքին աշխարհը: Ինչպես գրում է Բրաունը. «Գիտությունը փառահեղ է, քանի որ մեզ ասում է, թե *ինչպիսին են իրերն իրականում*»<sup>233</sup>:

Այդ նպատակը գիտությունն իրականացնում է իր մի շարք հատկանիշների շնորհիվ: Հենց այս հատկանիշներն են, որոնք գիտնականին թույլ են տալիս տարբերել գիտական տեսությունը ոչ գիտականից, ճշմարիտը՝ կեղծից:

Այդ հատկանիշներից առաջինը *նոր փաստերի կանխատեսումն* է: Նորույթի դերը գիտության մեջ հասկանալու համար բավական է ընդամենը նշել, որ շատ հեղինակներ հենց նոր փաստի կանխատեսումն են համարում վճռական գործոն տեսությունների ընտրության, ընդունման կամ մերժման գործում:

Ո՞րն է համարվում նոր փաստի կանխատեսում գիտության մեջ:

Դիցուք T տեսությունն ունի c ստուգելի հետևանք, որն անհնար կլիներ հայտնաբերել առանց T տեսության: Ենթադրենք՝ լիստ ստուգումների արդյունքում դիտարկվում է c: Այդ դեպքում այն կարող ենք համարել T-ի ճշմարտությունը հաստատող ապացույց:

Այս մեթոդի լավագույն դեմոստրացիան ընդհանուր հարաբերականության տեսության կողմից լույսի կորացման էֆեկտի կանխատեսումն է, ինչը դժվար, եթե ոչ անհնար կլիներ պատկերացնել առանց այս տեսության, քանի որ մինչ այդ գոյություն ունեցող նյութային մեխանիկայում նման երևույթի հնարավորությունն իսկ բացառվում էր: Սակայն 1919 թ. Էդդինգտոնի կողմից անցկացրած էքսպերիմենտը ցույց տվեց, որ հեռավոր աստղից դեպի մեզ գալիս լույսի ալիքն իրոք կորանում է արեգակի մոտով անցնելիս<sup>234</sup>: Առանց հարաբերականության տեսության, ոչ ոքի մտքով չէր անցնի նման էքսպերիմենտ կազմակերպել, հետևաբար, մենք չէինք իմանա լույսի կորացման փաստի գոյության մասին:

<sup>233</sup> J. R. Brown, Who Rules in Science. An Opinionated Guide to the Wars, Cambridge and London: Harvard University Press, (2001) p.31

<sup>234</sup> Էդդինգտոնի էքսպերիմենտի մասին ավելի մանրամասն տե՛ս *К. Лоптев* Предположения и опровержения, М. 2004, стр. 67-68.

Եթե տեսությունը չի նկարագրում իրականությունը, այլ նրանից լռիվ անկախ կառույց է, ապա ինչպես կարելի է բացատրել կանխատեսված փաստի էքսպերիմենտալ հաստատումը: Արդյո՞ք կարող ենք այնքան հեռու գնալ, որ լույսի կորագման դիտարկումը համարենք երջանիկ գուգադիպության արդյունք:

Ըստ գիտական ռեալիզմի, նման ենթադրությունն այնքան անհեթեթ է և այնքան քիչ հավանականություն է թողնում տեսության հաստատման համար, որ նման պայմաններում տեսություն ստեղծելը կհամարվեր անհույս գործ: Մինչդեռ մենք տեսնում ենք, որ պրակտիկայում բազմաթիվ գիտնականներ ոգևորված կերպով աշխատում են նոր տեսությունների ստեղծման կամ գոյություն ունեցողների զարգացման վրա:

Մյուս կողմից, եթե գոյություն չունենար տեսության հիմնավորման անկախ հիմք, այլ այն կախված լիներ զուտ սոցիալական շահերից, ինչպես պնդում են սոցիալական կոնստրուկտիվիզմի կողմնակիցները, ապա յուրաքանչյուր գիտնական կընդուներ իր շահերից բխող տեսություն, ինչն անհնար կդարձներ տեսության համընդհանուր ճանաչումը: Մինչդեռ գիտական տեսության բնութագրիչներից մեկն էլ այն է, որ ամեն մի կոնկրետ ժամանակաշրջանում ընդունված է լինում հիմնականում մեկ տեսություն:

Ինչպե՞ս կարող են այս ամենը բացատրել սոցիալական կոնստրուկտիվիստները՝ հարցնում են գիտական ռեալիստները:

Գիտական փորձի մյուս փաստարկները նման են նոր փաստի կանխատեսման փաստարկին. նրանք ուշադրություն են հրավիրում գիտության այս կամ այն բնորոշ գծի վրա և ապա հարցնում՝ ինչպես է դա հնարավոր՝ գիտելիքի սոցիալապես կառուցված լինելու դեպքում:

Այսպես, գիտությունը մինչև այժմ իր կանխատեսումները ստուգելիս մեծ աստիճանի ճշգրտություն է ցույց տվել, ինչը տեսությունը ճշմարիտ համարելու հիմնավոր պատճառ է: Ինչպե՞ս է հնարավոր նման ճշգրտությունը համարել պատահականության արդյունք:

Գիտական տեսություններն ընդգրկում են փաստերի այնպիսի լայն շրջանակի բացատրություն, որ անհնար կլիներ դա համատեղել միայն սոցիալական շահերի հետ: Եթե տեսությունը չլինի ճշմարիտ կամ օբյեկտիվ, այն անպայմանորեն կհակասի այդ փաստերից գոնե որոշներին:

Գիտական գիտելիքը ոչ գիտականից տարբերող թերևս ամենակարևոր հատկանիշը հերքումներին տրվող կարևորությունն է: Անկախ այն բանից, թե ինչքան ջանք է գիտնականը թափել իր տեսությունը ստեղծելու վրա, նա մի կողմ է նետում այն, եթե հակասում է փորձին: Իսկ այդ դեպքում ի՞նչ շահի մասին կարող են խոսել սոցիալական կոնստրուկտիվիստները: Ինչպե՞ս կարող են նրանք բացատրել այդ երևույթը:

### ***3. Գիտական ռեալիզմի դեմ բերվող հակափաստարկները***

Քննարկենք գիտական ռեալիզմի դրույթներն առանձին-առանձին: Սկսենք առաջին դրույթից, որը պնդում է մեզնից անկախ աշխարհի գոյությունը. արդյո՞ք ամեն ինչ ընդունելի է այստեղ: Նախ, անհրաժեշտ է պարզել, թե ինչ նկատի ունեն գիտական ռեալիզմի կողմնակիցներն արտաքին, մեզնից անկախ աշխարհ ասելով:

Իմացաբանական պրոբլեմների ի հայտ գալու հենց սկզբնական շրջանում կենտրոնական է եղել ճշմարտության, այլ կերպ ասած՝ *գիտելիքի և արտաքին ի-*

րականության համապատասխանության հարցը: Ընդ որում, այդ իրականությունը պատկերանում էր որպես սուբյեկտից և նրա զգայություններից լրիվ անկախ գոյություն ունեցող իրականություն: Իսկ գիտելիքը լայն իմաստով կարող ենք ներկայացնել որպես զգայությունների ու բանականության կողմից դրանց (զգայությունների) միջև հաստատված կապերի, հարաբերությունների ամբողջություն: Սակայն ճշմարտության նման ըմբռնումը մի շարք պրոբլեմների է բխվում.

1. Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ զգայություններով ստացված ինֆորմացիան համապատասխանում է արտաքին աշխարհին (այդ կերպ հասկացված): Արդյո՞ք հնարավոր չէ, որ մեր զգայարանները որոշակի ձևափոխությունների են ենթարկում այդ աշխարհից եկող ինֆորմացիան:

Ինչպես գրում է Բ. Ռասելն իր «Փիլիսոփայության պրոբլեմները» աշխատության մեջ «... ոչ մի գույն չկա, որն ակնհայտորեն սեղանի կամ նունիսկ նրա որևէ կոնկրետ հատվածի գույնն է. այն տարբեր տեսանկյուններից տարբեր գույներով է երևում և այս գույների մի մասը մյուսներից ավելի իրական համարելու հիմք չկա»<sup>235</sup>: Նույն բանը, ըստ Ռասելի, ճիշտ է նաև լսողության, շոշափելիքի և մյուս զգայարանների միջոցով ստացված զգայությունների մասին: «Այստեղից ակնհայտ է դառնում, որ իսկական սեղանը, եթե այն կա, տեսողության, շոշափելիքի կամ լսողության միջոցով մեր անմիջականորեն զգայածը չէ: Իրական սեղանը, եթե այդպիսին կա, մենք ընդհանրապես անմիջականորեն չենք ճանաչում, բայց այն բխում է անմիջականորեն զգայածից»<sup>236</sup>:

2. Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ բանականության կողմից զգայությունների միջև հաստատված կապերը համապատասխանում են իրական աշխարհի օբյեկտների միջև գոյություն ունեցող կապերին:

3. Ինչքան էլ լուրջ խոչընդոտներ լինեն առաջին երկու կետերը գիտական ռեալիզմի առաջին դրույթն ընդունողի համար, դրանք ինքնին, առանձին վերցրած կարծես չեն ապացուցում այդ դրույթի սխալությունը: Եվ իրոք, այս կետերը խոսում են գիտելիքի և նրանից անկախ գոյություն ունեցող աշխարհի համապատասխանության դեմ, այլ ոչ թե այդ աշխարհի գոյության փաստն են հերքում: Ավելին, նրանք կարծես թե պետք է ընդունեն իրենցից դուրս գտնվող աշխարհի գոյությունը, որպեսզի նման հակափաստարկներ ներկայացնեն:

Սակայն դա ընդամենն առաջին տպավորությունն է: Պնդելու համար, որ մեզնից դուրս գտնվող աշխարհը գոյություն ունի, պետք է նախապես տրված ունենալ այդ աշխարհը, պետք է ինչ-որ կերպ հասանելիություն ունենալ այդ աշխարհին: Բայց չէ՞ որ ցանկացած առարկայի մասին գիտելիքի ձեռքբերման մեր ունեցած միակ աղբյուրները մեր զգայություններն ու բանականությունն են: Բայց եթե նրանց կողմից մեզ տրամադրված ինֆորմացիան պրոբլեմատիկ է, ապա ինչ արտաքին աշխարհի մասին կարող ենք մենք խոսել: Պետք է նշել, որ նույնիսկ եթե մենք ունենայինք գիտելիքի այլ աղբյուրներ, ինչպես, օրինակ, իռացիոնալ ինտուիցիան կամ հավատը, կամ ցանկացած այլ մեխանիզմ, ապա դրանց առջև կկանգնեին նույն պրոբլեմը, ինչ որ զգայությունների կամ բանականության առջև, այն է՝ ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ նրանց տված գիտելիքը համապատասխանում է արտաքին աշխարհին (եթե մի պահ *սպրիտի* կերպով ընդու-

<sup>235</sup> Բ. Ռասել, Փիլիսոփայության պրոբլեմները, Երևան 2004, էջ 10:

<sup>236</sup> Նույն տեղում, էջ 11:



ներք, որ այդ աշխարհը գոյություն ունի) կամ նույնիսկ *որևէ կապ ունի նրա հետ*: Այսինքն՝ արտաքին աշխարհը *սկզբունքորեն է անհասանելի և անմատչելի* մեզ համար: Հետևաբար պնդումը, որ այն գոյություն ունի, նույնքան հավանական է, որքան հակառակ պնդումը, որ գոյություն չունի:

Այսպիսով, իրականության անհասանելիության փաստարկը կարող ենք ձևակերպել այսպես. իրականությունն այնպիսին, ինչպիսին այն կա ինքնին (գոյաբանական իրականությունը) ոչ կոհերենտ հասկացություն է, քանի որ ոչ մի կերպ հնարավոր չէ հիմնավորել, թե ինչպես է որևէ մեկը հասել իրականության վերջնական հասկացությանը: Ըստ հակառեալիզմի, *մենք պետք է արդեն իրականությունն ունենանք մեր մտքում, այսինքն նախապես իմանանք, թե ինչպիսին է և ինչից է բաղկացած իրականությունը, որպեսզի կարողանանք որոշել՝ արդյոք որևէ մեկը հասել է վերջապես այդ իրականությանը*:

Իսկ եթե իրականությունը սկզբունքորեն անհասանելի է մեզ համար, ապա անհնար է որոշել նաև՝ արդյոք տվյալ դատողությունը ճշմարիտ է կամ օբյեկտիվ: Ավելին, անիմաստ է դառնում նաև պնդումը, որ ցանկացած դատողություն արտաքին աշխարհի մասին կամ ճշմարիտ է, կամ սխալ: Մրանով անհիմն է դառնում ռեալիզմի նաև երկրորդ դրույթը:

Գիտական ռեալիզմի՝ գիտության նպատակին վերաբերող երրորդ դրույթը հենց այն հարցն է, որի շուրջ վիճում են կողմերը, և որը հենց հիմնավորման կարիք ունի. արդյոք գիտնականի նպատակը գիտական տեսության միջոցով սուբյեկտից անկախ աշխարհը բացատրելն է, թե նա այլ շահեր է հետապնդում: Առաջին դրույթի չհիմնավորվածությունից բխում է նաև գիտության նպատակին և նրան տանող մեթոդներին վերաբերող դրույթների անհիմն լինելը:

Իսկ եթե այս ամենը ճշմարիտ է, եթե իրականությունն իրոք անհասանելի է մեզ համար, ապա ի՞նչ հիմքեր ունենք մենք հավատալու, որ մեր փորձը որևէ կապ ունի արտաքին, *մեզնից անկախ* աշխարհի հետ: Արդյո՞ք հնարավոր չէ, որ դրանք, հակառակը, ամբողջովին կախված լինեն մեզնից (ոչ թե զուտ մեր կամքից, այլ թեկուզ մեր զգայելու, մտածելու և այլ կարողություններից, մեխանիզմներից):

Վերհիշենք, որ օբյեկտիվության ժամանակակից տարբերակը պահանջում է, որ տեսությունը համապատասխանի մեր փորձի աշխարհին: Սակայն միաժամանակ գիտական ռեալիստները բացահայտ կամ թաքնված կերպով ընդունում են նաև, որ *փորձը պայմանավորված է արտաքին աշխարհով*:

Այնուամենայնիվ, նույնիսկ եթե գիտական ռեալիստները չընդունեն փորձի աշխարհի և արտաքին աշխարհի կապը, նրանք կանգնում են մի շարք ոչ պակաս լուրջ պրոբլեմների առջև՝ կապված հենց փորձի և փաստի դատողության հետ:

Ինչպես ցույց են տվել բազմաթիվ հեղինակներ, զուտ փաստի դատողությունն անհնար է առանձնացնել տեսական դատողությունից: Ի տարբերություն մինչ այդ տարածված տեսակետի, որ փաստի դատողությունը հավաստի գիտելիք է, իսկ տեսությունները միշտ հիպոթետիկ բնույթ են կրում (պոզիտիվիզմ), 20-րդ դարի երկրորդ կեսում սկսում է աստիճանաբար ձևավորվել այն տեսակետը, որ տեսությունից անկախ գոյություն ունեցող զուտ փաստ գոյություն չունի:

Այսպես, ենթադրենք, որ Էդդինգտոնի էքսպերիմենտի արդյունքում դիտարկվել է լույսի կորացման էֆֆեկտ: Արդյո՞ք այդ դիտարկման համար պատասխանատու են միայն արտաքին աշխարհը և մեր զգայարանները: Ակնհայտ

է, որ ոչ առանց համապատասխան սարքերի, նման դիտարկումն անհնար կլինէր: Իսկ այդ սարքերն, իրենց հերթին, կառուցվել են որոշակի տեսության, այս դեպքում՝ որոշակի օպտիկական տեսության հիման վրա: Բացի այդ, մենք պետք է ունենանք երկնային մարմինների շարժումները բացատրող տեսություն, ինչպես նաև տեղեկություններ, թե դիտարկման պահին նրա մեջ ներառված մարմինները ինչ դիրք են զբաղեցնում տարածության և ժամանակի մեջ (նախնական պայմաններ) և այլն: *Հետևաբար, լույսի կորացման փաստը կարող ենք ընդունել միայն այն դեպքում, եթե ընդունենք նաև նրա հիմքում ընկած մի շարք օժանդակ տեսությունները:*

Բայց այդ տեսություններն, իրենց հերթին, եթե հետևենք գիտական ռեալիզմի տրամաբանությանը, կարող ենք ընդունել միայն այն դեպքում, եթե ամբողջական են փորձով և փաստի դատողություններով: Սրանք էլ հիմնված են մի շարք այլ տեսությունների վրա և այսպես շարունակ: Փաստ-տեսություն շղթան կարելի է անվերջ շարունակել առանց հույս ունենալու, որ կարող ենք որևէ արդյունքի հասնել:

Այլ կերպ ասած՝ *փաստի դատողությունը միշտ և բոլոր դեպքերում ծանրաբեռնված է որոշակի տեսությամբ, այն տեսական ծանրաբեռնվածություն ունի:*

Հետևաբար, ռեալիստների այն պնդումը, որ փաստի դատողությունը, եթե նույնիսկ այն չի ներկայացնում իրականությունն այնպես, ինչպես այն կա, այնուամենայնիվ *վերաբերում է այդ իրականությանը*, հիմնավորված չէ:

Ռեալիստների այս վերջին պնդման դեմ, բացի փաստի տեսական ծանրաբեռնվածությունից, կարող ենք բերել նաև մեկ այլ հակափաստարկ. այսպես, ռեալիստներն ընդունում են փաստը՝ որպես տեսության գնահատման օբյեկտիվ հիմք, միայն այն բանի հիման վրա, որ զգայություն ունենալը կախված չէ մեր կամքից: Այսինքն, նույնիսկ եթե այն, ինչ ես տեսնում եմ, չի համապատասխանում իրականությանը, դա վկայում է այն մասին, որ այդ իրականությունը գոյություն ունի: *Մարդը կարող է այլ կերպ տեսնել այդ իրականությունը, բայց ընդհանրապես չտեսնել չի կարող*<sup>237</sup>:

Սակայն նույն բանը կարելի է ասել նաև մտքերի մասին: Մարդը վերահրկուկություն չունի ոչ միայն իր զգայությունների, այլև իր մտքերի վրա: Այսինքն՝ այն, թե ինչ միտք կանցնի մարդու ուղեղով այս կամ այն կոնկրետ պահին, կախված չէ նրա կամքից, Ավելին, մտածելու ֆենոմենը նույնպես անկախ է նրանից: Այսինքն՝ նա կարող է տարբեր մտքեր ունենալ, բայց *ընդհանրապես ոչ մի բանի մասին չմտածել չի կարող*:

Իսկ այդ դեպքում ինչու՞ չենք կարող ընդունել, որ փաստի դատողությունը վերաբերում է իրականությանը նույնքան, ինչքան մտքերը, տեսությունները:

Տեյերաբենդն իր «Բացատրություն, հանգեցում և էմպիրիզմ»<sup>238</sup> հոդվածում քննարկում է փաստի և տեսության կապի դեմ ուղղված մեկ այլ փաստարկ: Փաստարկի էությունը հետևյալն է. *տեսության հետ առնչություն ունեցող և այն ստուգող փաստերը տրված չեն ինքնին, տեսության մեջ, այլ հայտնաբերվում են միայն մրցակից տեսության գոյության պայմաններում:*

<sup>237</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Boghossian P.** Fear of Knowledge: Against Relativism and Constructivism, Oxford, (2006) p. 34-38.

<sup>238</sup> **Feyerabend, P.** "Explanation, Reduction, and Empiricism" in Y. Balashov and A. Rosenberg (eds.), (2001), Philosophy of Science: Contemporary Readings, London and New York: Routledge.

Այսպես, թերմոդինամիկայի համար բրոունյան շարժումը ոչ մի հետաքրքրություն չէր ներկայացնում, մինչև որ կինետիկ տեսությունը չեկավ ու չբացատրեց այդ շարժումը: Այդ պահից սկսած բրոունյան շարժումը ոչ միայն համարվում էր թերմոդինամիկայի հետ առնչություն ունեցող փաստ, այլև թերմոդինամիկայի առաջ կանգնած հիմնական խնդիրն էր, որի բացատրությանն էին ուղղված այդ պարադիգմայում ներգրավված գրեթե բոլոր ֆիզիկոսների ջանքերը:

Եթե «վճռական» փաստը հայտնաբերվում է միայն մրցակից տեսության գոյության պայմաններում, ապա

1. *առնչություն ունեցող փաստերի օգնությամբ տեսության ստուգումը և գնահատումը հարաբերական բնույթ ունի, հետևաբար չի կարող օբյեկտիվության չափանիշ լինել:*

2. *մենք պետք է փորձենք ստեղծել հնարավորինս շատ տեսություններ, նույնիսկ եթե աշխատող տեսությունը կարծես թե ոչ մի պրոբլեմ չունի: Պյուրալիզմը պարտադիր պայման է, եթե մեր նպատակը հնարավորինս շատ փաստեր ունենալն է<sup>239</sup>:*

Բրաունն իր «Ո՞վ է իշխում գիտության մեջ» աշխատության մեջ գրում է, որ Ֆեյերբաքենդի բոլոր անճշտությունները ծագում են տեսությունների ընդունում և կիրառում հասկացությունների միջև տարբերություն չդնելուց: Շատ տեսություններ մենք կիրառում ենք, և աշխատում նրանց վրա, եթե նույնիսկ նրանք հակասություններ են պարունակում կամ չեն համապատասխանում այս կամ այն հայտնի կանոնին, եթե նրանք խոստումնալից են և հետագայում զարգանալու հույսեր են ներշնչում: Բայց մենք չենք ընդունում այդ տեսությունները, մինչև նրանց ճշմարտությունն ապացուցող բավարար հիմքեր չենք ունենում<sup>240</sup>:

Այսպիսով, ըստ Բրաունի, կան տեսություններ, որոնց ճշմարտությունը կարելի է ապացուցել՝ ելնելով հայտնի փաստերից, և կան տեսություններ, որոնք խոստումնալից են: Բայց չէ՞ որ մինչև այդ օրինակները բերելը Ֆեյերբաքենդը և նրան նախորդող փիլիսոփայությունը այդքան ջանքեր էին թափել ցույց տալու համար, որ մենք չենք կարող ապացուցել որևէ տեսության ճշմարտացիությունը՝ ոչ հայտնի փաստերի, և ոչ էլ մեկ ուրիշ միջոցով:

Իսկ ինչ վերաբերում է երկրորդ սիպի տեսություններին, որոնք Բրաունն անվանում է խոստումնալից, ինչպե՞ս ենք որոշում՝ արդյոք նրանք ապագայի համար հույսեր ներշնչում են, թե ոչ: Կամ կարո՞ղ ենք ամենայն վստահությամբ ասել, որ ցանկացած տեսության, նույնիսկ այսպես կոչված ոչ գիտական տեսության վրա համապատասխան ռեսուրսներ (ինտելեկտուալ և ֆինանսական) ներդնելուց հետո նրանք ոչ մի աղյուսք չեն տա: Օրինակ, կարո՞ղ ենք պնդել, որ եթե աշխարհի խելացի մարդիկ աշխատեն աստղագուշակության փաստերը դասակարգելու, նոր պատճառական կապեր հաստատելու, այն տրամաբանորեն անհակասական վիճակի բերելու ուղղությամբ, այն չի դառնա հզոր գիտահետազոտական ծրագիր, ինչպես կանվաներ Լակատտը: Կարծում եմ, ոչ ոք չի կարող բավարար հիմքեր ունենալ նման բան պնդելու համար:

Փորձի՝ որպես տեսությունների գնահատման օբյեկտիվ հիմքի դեմ բերվող հաջորդ փաստարկը փորձի և տեսության ոչ միանշանակ համապատասխա-

<sup>239</sup>Շատ Ֆեյերբաքենդի, ասվածը ճիշտ է ոչ միայն գիտական տեսությունների և փաստերի, այլև մեթոդաբանությունների համար:

<sup>240</sup> Ավելի մանրամասն տե՛ս **J. R. Brown**, *Who Rules in Science. An Opinionated Guide to the Wars*, Cambridge and London: Harvard University Press (2001) p. 91.

նության հանգամանքն է: Սրան առաջին անգամ ուշադրություն է դարձրել Դյու-հենը, այնուհետև սրան անդրադարձել են նաև Քուայնը, Լակատտը, Ֆեյերաբեն-դը, Կունը, Լատդանը և գիտության փիլիսոփայության մի շարք այլ նշանավոր դեմքեր:

Փաստարկը հետևյալն է. տրված *փաստերի ցանկացած խմբի համար կարելի է ստեղծել ոչ թե մեկ, այլ անվերջ թվով տեսություններ*: Կամ *միևնույն փաստերի խումբը կարող է հավասարապես հիմնավորել տարբեր, միմյանց հակադիր տեսությունները*:

Այսպես, և՛ Պտղոմեոսի, և՛ Կոպեռնիկոսի ունեցած փաստական տվյալները մեծամասամբ համընկնում էին: Սակայն փաստերի այդ նույն համախմբությունից նրանք երկու լիովին հակադիր եզրակացություն են բխեցնում: Ըստ Պտղոմեոսի, Արեգակը մյուս մոլորակների հետ միասին պտտվում է անշարժ Երկրի շուրջը, իսկ Կոպեռնիկոսի տեսության մեջ, ընդհակառակը, Երկիրն էր պտտվում Արեգակի շուրջը: Հարց է ծագում. գոյություն ունեցող փաստերի վրա հիմնվելով՝ ինչպե՞ս կարող ենք որոշել, թե որ տեսությունն է ավելի ընդունելի:

Գիտության պատմությունից անընդհատ բերվող բազմաթիվ օրինակները ցույց են տալիս, որ *հնարավոր չէ միայն հասանելի փաստերի հիման վրա արդարացնել այս կամ այն տեսությունը*: Հետևաբար, չենք կարող պնդել, որ փաստը կարող է լինել տեսության գնահատման օբյեկտիվ հիմք:

\*\*\*

Այսպիսով, մի կողմից, գիտական ռեալիզմը՝ որպես գիտության մեթոդաբանություն, չնայած շարունակում է գոյություն ունենալ և ընդունվել բազմաթիվ գիտնականների կողմից, սակայն ակնհայտորեն բախվում է մի շարք խնդիրների: Մյուս կողմից, գիտական ռեալիզմի մրցակից տեսակետը՝ սոցիալական կոնստրուկտիվիզմը, ընդգծված մերժողական վերաբերմունք ունի գիտության և գիտական գործունեության նկատմամբ, ինչը ևս հիմնավորված չէ: Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է պնդել, որ ներկայումս գիտության մեթոդաբանության առջև կանգնած հիմնական խնդիրներից մեկը գիտության օբյեկտիվության հիմնախնդրի վերաբերյալ նոր տեսակետի ձևավորումն է, որը մի կողմից, գերծ կլինի գիտական ռեալիզմի պրոբլեմներից, մյուս կողմից, չի խարխլի գիտության հիմքերը և բացասական վերաբերմունք չի ձևավորի հասարակության մեջ գիտություն երեվոյթի նկատմամբ, որն իր բոլոր թերություններով և հակասություններով հանդերձ՝ մեծ օգուտներ է տվել մարդկությանը:

**Размик Тигранян, Тигрануи Мкртчян – Подход научного реализма о проблеме объективности научных теорий.** – Научный реализм это точка зрения, которая считает, что физический мир и объекты существуют независимо от нас, а целью науки является выяснить, как они существуют. Научные теории являются объективными. Но научный реализм сталкивается со многими серьезными логическими проблемами, которые и обсуждаются в статье.

**Razmiik Tigranyan, Tigranuhi Mkrтчyan – The Scientific Realism View on the Objectivity Problem of Scientific Theories.** – Scientific realism is the view that holds that the physical world and objects exist independent of us, and the aim of science is to discover how they exist. The scientific theories are objective. But stating this scientific realism faces with many serious logical problems which are discussed in the article.

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ. ՆՈՈՍՖԵՐԱՅԻՆ ՀՈՒՄԱՆԻԶՄ

### ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Արդի հումանիզմի առավել ինքնատիպ ու ապագային միտված տարատեսակներից է **նոոսֆերային հումանիզմը**, որի հիմքում ընկած է կոսմիզմի փիլիսոփայությունը և Վ.Ի.Վերնադսկու ու Ա.Ա.Բոգդանովի՝ նոոսֆերայի<sup>241</sup> մասին ուսմունքը:

Նոոսֆերայի տեսության ակունքներում են գտնվել ֆրանսիացի գիտնականներ Էդ.Լերուան ու Պ.Տեյյար դե Շարդենը<sup>242</sup>:

Ռուսական կոսմիզմի փիլիսոփայության հիմնադիրը Կ.Էդ.Ցիպլովսկին<sup>243</sup> է, նրա հետևորդը՝ Ա.Լ.Զիժնսկին<sup>244</sup>:

<sup>241</sup> **Նոոսֆերա** (հունարեն՝ νόσος- բանականություն և սֆերա (ոլորտ)) - կենսոլորտի նոր էվոյուցիոն վիճակ, որտեղ մարդու բանական գործունեությունը դառնում է կենսոլորտի զարգացման գլխավոր գործոն:

<sup>242</sup> **Էդուար Լերուան** (1870-1954) և **Պյեր Տեյյար դե Շարդեն** (1881-1955) են առաջին անգամ (1927թ.) գիտական շրջանառության մեջ դրել նոոսֆերա հասկացությունը: Ընդ որում Լերուան հայտնի է որպես փիլիսոփա և գիտնական, Ա.Բերգսոնի հետևորդ, կաթոլիկական մոդեռնիզմի ներկայացուցիչ: Նա զբաղվել է մաթեմատիկայով, հնէաբանությամբ և մարդաբանությամբ: Շարդենը ճանաչված է որպես հնէաբան, փիլիսոփա և աստվածաբան: Նա սինանտրոպի առաջին հայտնագործողներից է: Նա զարգացրել է «քրիստոնեական էվոյուցիոնիզմի» կոնցեպցիան՝ այն մերձեցնելով պանթեիզմին: Շարդենը մեծ ազդեցություն է գործել կաթոլիցիզմի դոկտրինայի նորացման վրա: **Վրադիմիր Բովանովիչ Վերնադսկին** (1863-1945) զարգացրել է ու հարստացրել նոոսֆերայի՝ որպես կազմակերպվածության որակապես նոր ձևի մասին պատկերացումը, որն առաջանում է բնության ու հասարակության փոխգործակցության ընթացքում՝ որպես գիտական մտքի վրա հենվող մարդու՝ աշխարհը վերափոխող ստեղծագործական գործունեության արդյունք:

<sup>243</sup> **Կոնստանտին Էդուարդովիչ Ցիպլովսկին** (1857-1935) արդի տիեզերագնացության հիմնադիրն է, ում գիտական աշխատանքները վերաբերում են ատեր- և հրթիռային դինամիկային, ինքնաթիռի և դիրիժաբլի տեսությանը: Ցիպլովսկին է առաջին անգամ հիմնավորել միջուկային հաղորդակցությունների համար հրթիռների օգտագործման հնարավորությունը, ցույց տվել տիեզերագնացության և հրթիռաշինության զարգացման ռազմինալ ուղիները, գտել հրթիռների ու հրթիռային շարժիչների կոնստրուկցիայի մի շարք կարևոր ինժեներական լուծումներ: Նրա տեխնիկական գաղափարները լայն կիրառություն են գտնում արդի հրթիռային-տիեզերական տեխնիկայի ստեղծման մեջ: Իր փիլիսոփայական-գեղարվեստական էսսեում Ցիպլովսկին զարգացնում է «տիեզերական փիլիսոփայությունը», որը հենվում է «ատոմի»՝ որպես անմահ շնչավոր տարրական էակի մասին գաղափարի վրա, «ատոմ», որը տիեզերքում շրջում է՝ անցնելով մի օրգանիզմից մյուսը: Ցիպլովսկու տիեզերական տեսությունը՝ իր ուսուցիական երանգներով ենթադրում է մարդկության տարաբնակեցումը արեգակնային համակարգությունում և մյուս աստղային աշխարհներում, իսկ ապագայում՝ Երկրի բնակիչների լիակատար կենսաքիմիական վերակառուցում և նրանց վերածում արեգակնային էներգիան անմիջականորեն վերամշակող բանական «կենդանա-բույսերի»: Ցիպլովսկու գաղափարներն են ընկած ռուսական կոսմիզմի հիմքում (տե՛ս Большой энциклопедический словарь, М., Науч. изд.-во «Большая российская энциклопедия», 1998, стр. 1336):

<sup>244</sup> **Ալեքսանդր Լեոնիդովիչ Զիժնսկին** (1897-1964) հանդիսանում է հելիոկենսաբանության հիմնադիրը: Նա է սահմանել Արեգակի ակտիվության ցիկլերի և կենսոլորտում (բիոսֆերա) տեղի ունեցող բազմաթիվ երևույթների միջև կախումը: Զիժնսկու հիմնական աշխատանքները վերաբերում են օդում բացասական ու դրական իոնների (ատերիոններ) ազդեցությանը կենդանի օրգանիզմների վրա, ատերիոնացման գործնական կիրառությանը (տե՛ս Большой энциклопедический словарь, М., Науч. изд.-во «Большая российская энциклопедия», 1998, стр. 1351):

Վերը նշված մտածողների գաղափարների զարգացումն ու կոնկրետացումը հանդիսացող գիտափիլիսոփայական աշխարհայացքն ստացավ **նոոսֆերային հումանիզմ** անվանումը:

Նոոսֆերային հումանիզմի գաղափարների կոնցեպտուալ ձևակերպումը Ռուսաստանում տեղի ունեցավ 20-րդ դարի վերջին տասնամյակներում: Դրա օրրանի մոտ էր կանգնած Ի.Մ.Բորզենկոն, ով այդ հարցի ամբողջականացմանը նվիրել է մի շարք աշխատություններ՝ “Նոոսֆերային հումանիզմ. աշխարհագրացողությունից դեպի աշխարհըմբռնում”, “Հումանիստական աշխարհայացքի պլանետար ասպեկտները”, “Երրորդ ուղի”, “Նոոսֆերային հումանիզմ”, “Օրգանական և նոոսֆերային հումանիզմ. բացարձակ սկզբունքների հիմնախնդիրը”:

Այդ հետազոտությունների շնորհիվ տեղի ունեցավ “նոոսֆերայի” բովանդակության որոշակի հարստացում ու հստակեցում:

Մեր օրերում նոոսֆերայի մասին ավանդական պատկերացումն ավելի է ընդլայնվել, և այն ըմբռնվում է որպես “հումանիզացված ինտեգրալ ինտելեկտ”, որը “կարող է լուծել գոբալ ու տիեզերական հիմնախնդիրների ավելի լայն, այլ ոչ թե միայն էկոլոգիական շրջանակ”<sup>245</sup>:

Որոշ հեղինակներ էլ այն կարծիքին են, որ “նոոսֆերայի առաջացումը հասկացվում է որպես մարդու ինքնառնչացման, դեգրադացիայի այլընտրանք”, որի առնչությամբ “հումանիզմը գոբալացվող աշխարհում ձեռք է բերում ավանդական մեկնաբանության համեմատությամբ ավելի ծավալուն նշանակություն՝ սեր ոչ միայն մարդու, այլև համայն մարդկության, բնության՝ որպես մարդու կենսական միջավայրի նկատմամբ, որը թելադրում է հրաժարվել այն սոցիալական ու մշակութային արժեքներից, որոնք սատարում են նյութական արտադրության աճը”<sup>246</sup>:

Նոոսֆերային հումանիզմի՝ որպես աշխարհայացքի երևան գալը դարձավ արդի աշխարհում ստեղծված իրադրության վերլուծության արդյունք, իրադրություն, որի առավել նեգատիվ բնութագրիչներն են՝

➤ գիտատեխնիկական զարգացման կրիտիկական չափերը, որոնք բավական են մարդկության ինքնառնչացման համար,

➤ մարդու և նրան շրջապատող բնության անհամաչափ զարգացումը և բնակչության արագ աճով աչքի ընկնող տարբեր տարածաշրջանների միջև հակասությունների խիստ սրումը,

➤ աշխատանքի ինտենսիվացումը և զանգվածային տեղեկատվության միջոցների գլոբալ ընդարձակումը, որոնք տանում են դեպի առանձին անհատների ինքնաօտարում, նրանց ներքաշում արտադրական-սպառողական գոյության և իռացիոնալ պատրանքների աշխարհը,

➤ 20-րդ դարում ծնունդ առած բազմաթիվ սոցիալական կոնֆլիկտներ, որոնք դրսևորվում են տոտալիտարիզմի, ռասիզմի, դոգմատիզմի, էքստրեմիզմի և այլնի ձևով, վտանգավոր ֆենոմենների հզորության անընդհատ աճի միտումը հատկապես հոգեբանության ու գաղափարախոսության ոլորտում, որը մշտա-

<sup>245</sup> **Абрамов Ю.Ф., Бондаренко О.В., Лапшин А.Н., Мантатов В.В.** Регион: научное понятие и реальность: Теоретико-методологические очерки, Иркутск, 2001, стр. 21.

<sup>246</sup> **Арсентьева И.И., Стародубцева К.А.** Феномен ноосферного гуманизма в глобализирующемся мире. Сб.: Современный гуманизм: Проблемы и перспективы, Иркутск, 2004, стр. 177-178.

պես սպառնում է մարդկանց անվտանգությանը և դառնում նրանց տատապանքի աղբյուր<sup>247</sup>:

Մեր ժամանակներում հումանիզմի որոշ տեսաբաններ էլ, անդրադառնալով մարդկության նորագույն պատմությանն ու նրա ծնած սոցիալական կոլիզիաներին, դրանց առաջացումը պայմանավորում են նրանով, որ 20-րդ դարի պատմությունն «իրականացավ հակառուսներային հունով, այդ պատճառով Վ.Ի.Վերնադսկու կողմից առաջադրված հիմնախնդիրներն ակտուալ են մարդկային քաղաքակրթության զարգացման արդի փուլում»<sup>248</sup>:

Այստեղից բխում է այն եզրակացությունը, որ մարդկությունը պետք է, վերջապես, ոտք դնի նոռուֆերայի ուղին, որը պիտի է դառնա բնության ու հասարակության կոեվոլյուցիայի նպատակը և որտեղ որպես բարձրագույն ու անխախտելի սկզբունք պետք է հանդես գա **էկոլոգիական իմպերատիվը**: Վերջինիս պահանջն է՝ հակասության մեջ չմտնել բնական օրինաչափությունների հետ՝ բիոսֆերայում անշրջելի գործընթացներ չհարուցելու համար: Ընդ որում էկոլոգիական իմպերատիվը դիտվում է որպես «մարդկային գործունեության սահմանափակման, արգելքների այնպիսի համակարգ, որոնց կատարումն անհրաժեշտ է հասարակության զարգացման շարունակման համար: Էկոլոգիական իմպերատիվի իրացումը, որն անհրաժեշտ է մոլորակի վրա մարդու կյանքի ապահովման համար, անխուսափելիորեն կփոխի մարդաբանական արժեքների կառուցվածքը և կհանգեցնի նոր բարոյական իմպերատիվի և կայուն զարգացման հասարակության բանականության ոլորտի երևան գալուն»<sup>249</sup>:

Նոռուֆերային հումանիզմի մեկ ուրիշ տեսաբան, շեշտելով հումանիզմի սկզբունքների հաստատման գործում «արդի տեխնիցիզմի ու գիտության հումանիզացիայի անհրաժեշտությունը»<sup>250</sup> և անդրադառնալով մի առիթով Կ.Մարքսի արտահայտած այն մտքին, թե կգա ժամանակ, երբ տարբեր գիտություններ կսկսեն միաձուլվել մարդու մասին մեկ միասնական գիտության մեջ, այն կարծիքն է հայտնում, որ «... այն գիտությունը, որը երևան կգա, երևի, հարկ կլինի կոչել նոռուֆերայի մասին գիտություն: Մարդուն միշտ ներհատուկ է աշխարհի ընդհանուր պատկերն ստեղծելու ձգտումը, պատկեր, որի մեջ կոնկրետ գիտելիքները ոչ միայն միմյանց հետ կապակցված լինեն, այլև հնարավոր դարձնեն, որպեսզի նա տեսնի իրեն, իր տեղը փաստերի ու պրոցեսների այն բազմազանության մեջ, որը կարող է արձանագրել մեր գիտակցությունը: Նոռուֆերայի զարգացման մասին գիտությունն էլ հենց պետք է պատասխանի այդ պահանջմունքին և ուրվագծի համաշխարհային էվոլյուցիոն գործընթացի այն փուլի զարգացման ուղիները, ուր ոտք է դնում մեր մոլորակը»<sup>251</sup>:

Նոռուֆերային հումանիզմը, սահմանելով ապագա հումանիզմի իմպերա-

<sup>247</sup> Տե՛ս **Борзенко И.М.** Планетарные аспекты гуманистического мировоззрения // Здравый смысл, 1999, N3 (12), стр. 59-60:

<sup>248</sup> **Губанов К.Н.** Глобалистика как интегральная парадигма ноосферного мировоззрения // IV Российский философский конгресс «Философия и будущее цивилизации». М., Современные тетради, 2005, т. 3, стр. 259.

<sup>249</sup> **Арсентьева И.И., Стародубцева К.А.** Феномен ноосферного гуманизма в глобализирующемся мире. Сб.: Современный гуманизм: Проблемы и перспективы, Иркутск, 2004, стр. 181.

<sup>250</sup> **Моисеев Н.Н.** Возвращение к гуманистическим традициям. Ежегодник Философского общества СССР, 1989-1990. - М., «Наука», 1990, стр. 26.

<sup>251</sup> Նույն տեղում, էջ 33-34:

տիվները՝ արժանավայել կյանքը յուրաքանչյուր մարդու համար, խաղաղ գոյակցությունը, էկոլոգիական անվտանգությունը, սոցիալ-բարոյական արդարությունը և մարդկային գոյության իմաստավորվածությունը, դրանք համարում է ժամանակակից մարդկության զարգացման հրատապ դիրեկտիվ ուղենիշներ: Ընդ որում հաշվի առնելով արդի աշխարհի բոլոր գլոբալ իմպերատիվներն ու զարգացման միտումները՝ միաժամանակ անհրաժեշտ է համարվում հավատարիմ մնալ անցյալի հումանիստական ավանդույթներին ու արժեքավոր փորձին: Այդ պայմաններում մարդկային կեցության հումանիզացիան դառնում է մարդկության հետագա գոյության միակ իմպերատիվը:

Նոոսֆերային հումանիզմն այդ ճանապարհին հույժ կարևոր խնդիր է հռչակում համամարդկային համերաշխությունը՝ «մարդու ներքին ու նրան շրջապատող բնության՝ տիեզերական մասշտաբներով հումանիստական կերպարանափոխման գործում՝ հանուն համամարդկային տան՝ Տիեզերքի և նրա ազատասեր, պատասխանատու, բանական ու կենսասեր բնակչության՝ երկրի բնակիչների կենսակայունության ապահովման»<sup>252</sup>:

Նոոսֆերային հումանիզմը բնորոշվում է երկու առավել կարևոր հատկանիշներով, այն է՝ հանդես է գալիս որպես ունիվերսալ գիտություն մարդու, կյանքի ու տիեզերքի միասնության և նրանց համակարգային-կազմակերպական կառուցվածքի, գործունեության ու զարգացման համընդհանուր օրենքների մասին և որպես փիլիսոփայական հավատ՝ կոսմոէվոյուցիոն գործընթացում մարդկային բանականության վճռական դերի նկատմամբ:

Նոոսֆերային հումանիզմի տեսանկյունից չափազանց կարևոր է ողջ համաշխարհային ընկերակցության կողմից մարդկության պատմության ներկա մոլորակային-տիեզերական, նոոսֆերային փուլի գիտակցումն ու իմաստավորումը: Անտրոպոլոգիական առումով նոոսֆերային հումանիզմի համար բացարձակ սկզբունք է համարվում մարդը որպես կենսասոցիոտիեզերական էակ:

Ընդունված է այն կարծիքը, որ նոոսֆերային աշխարհայացքը մարդկությանը հնարավորություն կընձեռի ձեռք բերել ընդհանուր լեզու, շփման ունիվերսալ միջոցներ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի ոչ միայն նկարագրել աշխարհագրացողության տարբեր ձևերն ու արժեքների համամարդկային համակարգը, այլև պայմանավորվածություն ձեռք բերել, գալ գլոբալ համաձայնության, ձևավորել գլոբալ համերաշխ մարդկություն: Պլանետար մարդկությունը կսկսի միավորվել ոչ թե տնտեսական, մտավոր և արժեքային կապերի ամրապնդման առումով, այլ «բիոսֆերայի կենսունակության արմատական բարձրացման գործում՝ սկզբում գլոբալ, իսկ այնուհետև նաև տիեզերական մասշտաբներով»:

Մարդկության առջև ծառայած գլոբալ հիմնախնդիրներն ունեն օբյեկտիվ բնույթ և խիստ հրատապ են: Այդ է վկայում նաև դրանց քննարկումն այնպիսի նոր ու հեռանկարային գիտությունների մեջ, ինչպիսիք են գլոբալիստիկան, համընդհանուր համակարգաբանությունը և սիներգետիկան: Մասնավորապես սիներգետիկան որպես բարդ ոչ գծային համակարգերի ինքնակազմակերպման տեսություն, որոնց շարքին են դասվում մարդկությունը և Տիեզերքը, ենթադրում է մարդու և աշխարհի նկատմամբ նոր հայացքի ձևավորում, կյանքի է կոչում մարդու, հասարակության, բնության նկատմամբ մարդու հարաբերությունների նոր

<sup>252</sup> *Борзенко И.М.* Планетарные аспекты гуманистического мировоззрения // Здравый смысл, 1999, N3 (12), стр. 60.



տիպ և ենթադրում է գլոբալ հիմնախնդիրների լուծման նոր մոտեցումներ: Հենց սինթեզետիկական պարադիգմայի շրջանակներում էլ ձևավորվում ու զարգանում է նոոսֆերային հումանիզմի կոնցեպցիան: Այս պայմաններում նոոսֆերային հումանիզմի գաղափարը դառնում է առավել հեռանկարային՝ նոր պլանետար գիտակցության ձևավորման, մարդկային կեցության նոր կողմնորոշիչների ու արժեքների հաստատման համար: Նոոսֆերային հումանիզմն առանձնահատուկ է նրանով, որ նկատելիորեն ընդլայնում է մարդկային արժեքների ու առաքինությունների շրջանակները:

Նոոսֆերային հումանիզմի հեղինակներից շատերը գտնում են, որ «ի լրումն ազատության, հավասարության և եղբայրության կարգախոսների, որոնք որոշում են այն ամբողջ կենսական կտավի տարածությունը, որտեղ պետք է ծավալվի գլոբալ մարդկության զարգացման ուղին, անհրաժեշտ է ավելացնել բռնության մերժման, համաշխարհային մշակույթի արժեքների ինտեգրման և հատկապես կրթության սկզբունքները»<sup>253</sup>: Դա նշանակում է, որ նոոսֆերային հումանիզմն առաջադրում է մարդկային քաղաքակրթության զարգացման էականորեն փոփոխված ուղի, որի գլխավոր նպատակը գլոբալացման արժեքային գերակայությունների վերանայումն է և հումանիստական ընդլայնումը: Դա վերաբերում է, ամենից առաջ, այն վտանգների չեզոքացման ուղղությամբ այլընտրանքների մշակմանը, որոնք իրենց հետ բերում են գլոբալացման ուղեկիցը հանդիսացող ունիֆիկացիան և խոշոր մոնոպոլիաների դիկտատի քաղաքականությունը:

Նոոսֆերային հումանիզմը հանդես է գալիս որպես դեպի նոր գլոբալ ընկերակցություն մարդկության տրանսֆորմացիայի այնպիսի եղանակ, որի նպատակն է արդի մարդկությանն սպառնացող վտանգներին դեմ-հանդիման՝ հնարավորինս չեզոքացնել դրանք, ինչպես նաև վերացնել կամ գոնե մեղմացնել համաշխարհային ինտեգրման գործընթացի նեգատիվ դրսևորումները, աշխարհը դարձնել գեղեցիկ ու ներդաշնակ, մարդկության ապագան՝ հուսալի, անվտանգ ու ապահով:

**Григор Асартян – *Разновидности современного гуманизма: Ноосферный гуманизм.*** – Статья посвящена анализу одной из ведущих разновидностей современного гуманизма - ноосферного гуманизма. В ней рассматриваются сущность и специфические особенности ноосферного гуманизма, основанного на философии космизма, классической теории о ноосфере, указывается особое место этого вида гуманизма в общей системе современных гуманистических учений.

**Grigor Asartyan – *Arieties of modern humanism: Noospheric humanism.*** – The article is dedicated to the analytical research of the most advanced variants of humanism – noospheric humanism, which is based on cosmic philosophy, the classic teaching about noosphere. Analyzed is the gist of noospheric humanism, the characteristic features, the exclusive role it plays in the system of modern humanistic teachings.

<sup>253</sup> *Борзенко И.М.* Третий путь // Здравый смысл, 1999, N 3 (12), стр. 42.

## ԶԼՄ-ՆԵՐԻ ՆԵՐԱԶԴԻՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՀԱՍՄԿԱՐԳԻ ՎՐԱ

### ԱՐԹՈՒՐ ԿՈՖԵԼՅԱՆ

Ապրելով արդի աշխարհում՝ մենք անընդմեջ առնչվում ենք ՉԼՄ-ների հետ: Նրանք այնքան ամուր են հիմնավորվել մեր առօրյայում, որ մենք նույնիսկ չենք կարողանում պատկերացնել մեր գոյությունն առանց նրանց: ՉԼՄ-ների նշանակությունը ժամանակակից հանրության կյանքում դժվար է գերազնահատել: 20-րդ հարյուրամյակի կեսերին սկսված տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը հիմք դրեց բոլորովին նոր տիպի հասարակության՝ տեղեկատվական հասարակության ձևավորմանը: ՉԼՄ-ները հասարակության զարգացման մեջ ուրույն տեղ են զբաղեցնում: Դրանց ազդեցությունը մարդու վրա սկսվում է բավականի վաղ տարիքում և շարունակվում ողջ կյանքի ընթացքում: Ըստ էության ժամանակակից աշխարհում ՉԼՄ-ներն իրենց վրա են վերցրել մարդկանց գիտակցության ձևավորման, ճաշակի, հայացքների, սովորությունների, նախընտրությունների, դաստիարակման գործառույթների նշանակալից մասը: Նախկինում այս կամ այն խնդրին անձնապես չառնչվող մարդը ՉԼՄ-ների հնարավորությունների օգնությամբ կարողանում է ծանոթանալ հասարակական կյանքի տարատեսակ դրսևորումներին, դրանց մասին որոշակի պատկերացում կազմել և դրանց նկատմամբ որոշակի վերաբերմունք ձևավորել:

Չնայած հաղորդակցման միջոցների բուռն զարգացմանը՝ մինչև օրս հեռուստատեսությունը մնում է տեղեկատվության ամենազանգվածային և հասանելի միջոցը:

ՉԼՄ-ները դարձել են հաղորդակցությունների տարածման գլխավոր գործիքը, որոնք ազդում են հասարակական գիտակցության վրա: Ն. Ս. Լեոնովը նշում է. <<Տեղեկատվությունը դարձել է իշխանության գործիքը: Երբ հայտնաբերվեց մարդկային հոգեկանի ներշնչվողականությունը, տեղեկատվությունը՝ պրոպագանդայի և ազդեցության տեսքով դարձել է մարդկանց կառավարման գլխավոր կարգավորիչը: Այն աստիճանաբար փոխարինել է բռնի ուժը իրենով, որը երկար ժամանակ համարվել է կառավարման միակ և անփոխարինելի զենքը>>:

ՉԼՄ-ները հսկայական ազդեցություն են ունենում անձի զարգացման գործում և հաճախ լիովին ձևավորում են հասարակական կարծիքը: Աճող սերունդը ձևավորում է իր կարծիքն ու ճաշակը՝ գրեթե ամբողջովին հիմնվելով ամսագրերի, զվարճալի հեռուստատեսության և ինտերնետի վրա:

ՉԼՄ-ներն ազդում են հասարակական գիտակցության և մարդկանց վարիք վրա՝ դրդելով նրանց այս կամ այն նպատակի իրականացմանը: Էվոլուցիոն զարգացման շրջանակներում ՉԼՄ-ների կառուցվածքն ու ֆունկցիաները որպես կանոն էական ներդրում ունեն հասարակության կայուն գործառության մեջ:

ՉԼՄ-ները համարվում են սոցիալականացման կարևորագույն գործիքներից, որոնք ձևավորում են մարդկանց փախհամագործակցության բնույթը սոցիալական և մշակութային միջավայրի հետ:

ԶԼՄ-ներն առանձնահատուկ ուժեղ ազդեցություն կարող են ունենալ երիտասարդների ձևավորման վրա: ԶԼՄ-ն յուրօրինակ երանգավորում է ստանում, երբ խոսքը հատկապես վերաբերում է երիտասարդներին, որոնց մոտ դժվարություններ են առաջացել շրջապատի հետ շփման մեջ կամ կյանքի այլ ոլորտներում, որը որպես կանոն հանգեցնում է լարված հուզական հոգեվիճակի և դիսկոմֆորտի: Նմանօրինակ երիտասարդները, ակտիվացնելով մեդիամիջավայրի կիրառումը, կարող են դրանով իսկ նվազեցնել մարդկանց հետ շփումները, փախուստի դիմել անհաջողություններից, ճնշել կամ ցրել հուզական անբավարարվածությունը: ԶԼՄ-ն բավական նշանակալիորեն ազդում է անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման վրա՝ անկախ անհատի տարիքից: Այն դրսևորվում է մարդկան մեծ խմբերի կամ կոնկրետ անհատների մոտ նյութական և սոցիալական պահանջումների ձևավորմանը զուգընթաց:

Անձը սոցիալականացվում է գլխավորապես գործունեության մեջ, մյուս մարդկանց, անձնակազմի, հասարակության հետ հարաբերությունների միջոցով: Անձի ձևավորման գործընթացը անհատի կողմից հասարակական կյանքի փորձի յուրացման գործընթաց է: Մարդը, իր ծննդյան պահից սկսած և իր ողջ կյանքի ընթացքում, գտնվում է զարգացման մեջ: Առավել ինտենսիվ անձը սոցիալականացվում է մինչև 25 տարեկանը: Զարգացման հենց այս փուլում են յուրացվում հասարակության մեջ արդի անհրաժեշտ կանոններն ու նորմերը՝ ապահովելով արդեն ուրույն դրսևորում ունեցող արժեհամակարգ:

Սոցիալականացված երիտասարդն ունի սոցիալական էություն, առանձնահատկությունների, կապերի, հարաբերությունների համալիր, նրա բարոյական և հոգևոր աշխարհը՝ դիտարկված զարգացման մեջ, սոցիալական և անհատական կենսական պայմանների փոխհարաբերությամբ: Այս տեսակետից կարելի է առանձնացնել անձի 4 հիմնական կողմեր:

1. Ֆիզիկական առանձնահատկությունները. սեռ, տարիք, ֆիզիկական կառուցվածքային առանձնահատկությունները և այլն:
2. Սոցիալական առանձնահատկությունները. դրան են վերաբերում հասարակական կյանքի /աշխատանքում, ուսման մեջ, ընտանիքում և այլն/ տարբեր ոլորտներում առկա դրսևորումները:
3. Հոգեբանական առանձնահատկությունները, որին վերաբերում են անձի համապատասխան առանձնահատկությունները՝ ըստ հոգեկանի տարիքային հատկանիշների:
4. Բարոյահոգեբանական առանձնահատկությունները. սրան են վերաբերում՝ անձի ուղղվածությունը /այսինքն՝ հիմնական կենսական կողմնորոշումները/, աշխարհայացքը, հետաքրքրությունները, վարքի մոտիվների կայուն համակարգը, բարոյական արժեքները, սկզբունքները և նորմերը, որոնցով անձը առաջնորդվում է իր գործունեության մեջ, անձի բարոյական հմտությունները և անձի սովորությունները, պահանջումների մակարդակը և բնույթը:

Երիտասարդության շրջանը առանձնահատուկ է համարվում մարդու անձնավորության ձևավորման մեջ: Գիտակցության և սոցիալական զարգացման որոշակի մակարդակը, որին հասել են երիտասարդներն այդ տարիքում, թույլ է տալիս նրանց առաջադրել պահանջներ, համապատասխանեցնել իրենց վարքը հանրության կողմից հաստատված կանոնների հետ:

Վ. Բ. Օլջանսկին համեմատում է արժեքները յուրօրինակ փարոսների հետ, որոնք օգնում են տեղեկատվության հոսքում նկատել այն, ինչն առավել կարևոր է մարդու կենսագործունեության համար: Դրանք այնպիսի կողմնորոշիչներ են, որոնց հարելով՝ մարդը պահպանում է իր կողմնորոշվածությունը, իր վարքի ներքին պարբերականությունը:

Արժեքները հանդես են գալիս որպես գնահատականի չափանիշներ ինչպես անձի ողջ կյանքի, այնպես էլ նրա առանձին արարքի կամ գործողության համար, քանի որ դրանք հիմք են տալիս գործողության այլընտրանքային միջոցների ընտրությանը և գնահատմանը: Անձի կողմից այդ գնահատման գործունեությունն իրականացվում է ոչ թե օգտակարության և պիտանիության, այլ լավի և վատի մասին պատկերացումների տեսանկյունից: Արժեքները համարվում են նաև շրջակա իրականության գնահատման չափանիշներ. արժեհամակարգի միջոցով կարծես թե ֆիլտրվում է անձի կողմից ամբողջ ընկալված և վերամշակված տեղեկատվությունը: Արժեքների պրիզման ուժգնացնում է մի ինֆորմացիան և ընդհակառակը՝ թուլացնում կամ անտեսում է մյուսը: Աշխարհում տեղի ունեցող բոլոր երևույթներն ու իրադարձությունները նրան ներկայանում են տարբեր ձևով՝ կախված այն դիրքից, որից նա նայում է դրանց: Այդ պատճառով արժեքները սահմանում են որպես անձի բարոյական գիտակցության կլանիչներ, որոնց գլխավոր գործառույթը համարվում է համակարգված, կայուն, մարդու համար էական նշանակություն ունեցող աշխարհի պատկերի ստեղծումը:

Արժեքներում ամփոփվում է անձի ողջ կենսամտածր: Անձի կառուցվածքի այս բաղկացուցիչը իրենից ներկայացնում է գիտակցության որոշակի առանցք, որի շուրջ պտտվում են մարդու մտքերն ու զգացումները, և որի տեսանկյունից լուծվում են բազմաթիվ կենսական հարցեր: Ըստ Ա. Գ. Ջոդավումիսյովայի և Վ. Ա. Յադովայի՝ կայուն արժեքային կողմնորոշումների առկայությունը բնութագրում է մարդու հասունությունը և ապահովում է դրա կայունությունը: Այսպես, օրինակ, արժեքային կողմնորոշումների կայուն համակարգը որոշում է անձի այնպիսի որակներ, ինչպիսիք են կենսական դիրքի ակտիվությունը, նպատակների նվաճման մեջ համատրությունը, որոշակի սկզբունքներին և իդեալներին հավատարմությունը, ամբողջականությունը, ապահովությունը, և ընդհակառակը՝ արժեքային կողմնորոշումներում հակասությունները իրենցից ենթադրում են անհետևողականություն, վարքի անկանխատեսվածություն. անձի արժեքային կողմնորոշումների չգարգացվածությունը որոշում է նրա ինֆանտիլիզմը, մարդու վարքում արտաքին ազդակների գերիշխվածությունը:

Ինչպես ընդգծում է Է. Ֆրոմը, մարդկանց մեծամասնությունը տատանվում է արժեքների տարբեր համակարգերի միջև, այդ իսկ պատճառով երբեք մարդիկ միանշանակ չեն զարգանում այս կամ այն ուղղությամբ:

Փիլիսոփայության մեջ արժեքային կողմնորոշումները սահմանվում են որպես սոցիալական խմբերի և հանրությունների, մարդկության կենսագործունեության արդյունք, որոնք գոյություն ունեն հասարակական իդեալի տեսքով: Բեկվելով անհատական կենսագործունեության պրիզմայի միջոցով՝ մտնում են անձի կառուցվածքի մեջ՝ համարվելով նրա վարքի մոտիվացիայի աղբյուրներից մեկը, ծառայում են մարդկանց փոխհարաբերությունների և առանձին մարդու վարքի սոցիալական կարգավորման կարևոր գործին:

Արժեքն առաջանում է իրականության հանդեպ մարդկանց պրակտիկ վերաբերմունքից: Այն հարաբերություն է օբյեկտի և մարդկային պահանջումների

միջև, որոնք պատմական դարաշրջանի հետք են կրում: Վ. Ա. Վասիլենկոն սահմանում է արժեքը՝ որպես երևույթների ունիվերսալ փոխկապակցվածության էական պահ, այսինքն՝ մի երևույթի նշանակալիության պահը մյուսի գոյության համար: Այս մոտեցման կողմնակիցները /Ս. Մ. Կորշունովը, Վ. Ա. Վասիլենկոն, Լ. Ն. Ստոլովիչը և այլք/ սահմանում են արժեքը որպես գոյության ֆենոմեն՝ անկախ դրա հանդեպ օբյեկտիվ վերաբերմունքից:

Օ. Մ. Բակուրադզեն, Դ. Ա. Լեոնտեր, Ի. Մ. Պոպովան արժեքները վերագրում են հասարակական իդեալներին: Հիշյալ գիտնականների աշխատություններում արժեքները վերաբերում են հասարակական գիտակցության ոլորտին: Բոլոր մոտեցումների համար ընդհանուրն այն է, որ առարկայի արժեքը հայտնվում է այն ժամանակ, երբ դրանում երևում է որևէ պահանջմունքի բավարարման հնարավորությունը:

Սոցիոլոգիայում արժեքները և արժեքային կողմնորոշումները հանդիսանում են որպես միավորող օղակ հասարակական գիտակցության արժեքների և անձի հոգևոր աշխարհի միջև, հասարակական և անհատական գոյի միջև՝ ապահովելով անձի կողմից հասարակական արժեքների գիտակցվածության մակարդակը և դրանց ազդեղությունը վարքի վրա:

Այսպիսով՝ արժեհամակարգը անձի կառուցվածքի միջուկն է, անձի սոցիալական վարքը կարգավորող բարձրագույն մակարդակը:

ԶԼՄ-ն, լինելով ակտիվ ներագուման միջոց, հսկայական ազդեցություն ունի երիտասարդության արժեհամակարգի ձևավորման գործում՝ ապահովելով վերջիններս արժեհամակարգի պարունակությունը: ԶԼՄ-ների ազդեցությանը հատկապես զգայուն են երիտասարդները, դեռահասները և պատանիները: ԶԼՄ-ները հաղորդում են ժամանակակից գանգվածային կուլտուրային բնորոշ վարքի իդեալական անձնային օրինակներ և նորմեր, որոնք պրոեկտվում են երիտասարդական սուբկուլտուրայի վրա, դրանով իսկ յուրացվում դեռահասների կողմից՝ ձևավորելով նրանց արժեքային կողմնորոշումները և իրական վարքը: Այս առումով առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում սոցիալական վարքի ինչպես դրական, այնպես էլ բացասական մոդելների վերլուծությունը, որոնք տարածվում են ԶԼՄ-ների միջոցով, քանի որ դա ուղղակիորեն կապված է երիտասարդների սոցիալականացման բովանդակային կոնտեքստի և մեխանիզմների ընկալման հետ:

Կարելի է նկատել հակասություններ երիտասարդների արժեքային դիրքորոշումներում: Մի կողմից գիտակցության մակարդակով դեկլարացվում է ձգտումը անձնային անկախության, լավ և կայուն միջանձնային հարաբերություններին, ընտանիքի ստեղծմանը և արժանի աշխատանքի ձեռք բերմանը, մուս կողմից գործունային վերլուծության արդյունքներից դիտարկվում է հստակ կողմնորոշում դեպի կյանքի արևմտյան չափորոշիչները: Հեռուստատեսությունը տվյալ կոնտեքստում որոշիչ դեր է խաղում երիտասարդների արժեքային դիրքորոշումների ձևավորման մեջ: Քանի որ երիտասարդությունը մշակութային պլանով բավականին կախված է ավագ սերնդից, ապա հեռուստատեսությունը, որն իր թողարկումներում մատուցում է արևմտյան հաղորդումներ և ֆիլմեր, բարեհաջող կերպով առաջ է մղում կյանքի արևմտյան կենսակերպը և աշխարհակալումը:

Երիտասարդությունը սոցիալական այն խումբն է, որն առավելագույնս է օգտագործում ԶԼՄ-ն և ազահաբար կլանում տարբեր բովանդակության տեղե-

կատվություն, որովհետև երիտասարդները շատ հետաքրքրասեր են և ցանկանում են լինել բոլոր իրադարձությունների կենտրոնում՝ տեղի ունեցող ոչ միայն իրենց քաղաքում, այլև ողջ աշխարհում: Այսպիսով՝ երիտասարդությունը դրսևորում է հետաքրքրվածություն տեղեկատվությանը, և դա փաստ է:

Այսպիսով՝ ՁԼՄ-ն երիտասարդությանը տեղյակ է պահում տեղի ունեցող իրադարձություններին՝ հազեցնելով նրա տեղեկատվական քաղցր: ՁԼՄ-ները բարձրացնում են բնակչության ընդհանուր, այդ թվում նաև քաղաքական կուլտուրան, ծառայում են իշխանությունների և բնակչության փոխադարձ կապին, հանում են սոցիալական լարվածությունը:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարող ենք ասել, որ մեդիամիջավայրի ժամանակակից աղբյուրները հատուկ դիրք են զբաղեցնում հատկապես երիտասարդության սոցիալականացման գործընթացում: Այդ ծավալուն աղբյուրներն են հեռուստատեսությունը և ինտերնետը, որոնց միջոցով ուղղակի կամ անուղղակի կերպով քարոզվում են որոշակի արժեքներ, որոնք ունակ են ձևավորել մարդանց մոտ համապատասխան դիրքորոշումներ և արժեհամակարգ:

**Анжела Ванесян – Некоторые явление вызывающее полифонию.** – Полифония, то есть многоголосие возникает тогда, «когда в одном овествовании мы слышим совместное звучание нескольких голосов. Основной вывод, к которому мы приходим в данном работе это анализ лингвистических феноменов которые дают способности полифония в политическом дискурсе. Материалом исследования послужили Материалом исследования послужили французские политические дискурсы и статьи из журнала. При исследовании полифонии в дискурсе представляется возможным применить некоторые положения концепции миропорождения.



---

## PROVERBE COMME LA SOURCE DE LA POLYPHONIE

AIDA MARDANYAN, ANZHELA VANESYAN

Nous allons à présent envisager un cas de polyphonie moins visible, ce qui va nous permettre de réfléchir sur les processus de capitulation et de subversion qui permettent à l'énonciateur d'appuyer sa parole sur celle d'un autre. Le proverbe intéresse à plusieurs titres le linguiste. Depuis longtemps on a souligné qu'il oscillait entre le domaine lexical en tant que le domaine discursif; on a également décrit les particularités de son inscription énonciative, qui suppose des repérages de type générique. Dans cet article nous l'envisagerons comme un cas de polyphonie.

Énonciation proverbiale et polyphonie: L'énonciation proverbiale est foncièrement polyphonique; l'énonciateur présente son énonciation comme la prise d'un nombre illimité d'énonciations antérieures, celles de tous les locuteurs qui ont déjà proféré ce proverbe. Mais il ne s'agit pas d'une citation au sens habituel du terme. Dire un proverbe ("Qui trop embrasse mal étroit", "Tel père, tel fils, Tel maître, tel valet"...), c'est en effet faire entendre à travers sa propre voix une autre voix, celle de la "Sagesse des nations", à laquelle on attribue la responsabilité de l'énoncé. L'énonciateur n'explicit pas la source de cet énoncé: c'est au co-énonciateur d'identifier le proverbe appartient à un stock d'énoncés connus comme tels par l'ensemble des usagers d'une langue; les proverbes figurant d'ailleurs dans les dictionnaires;

*-sur des propriétés linguistiques*, parce que le proverbe est soumis à certaines qui le stabilisent et facilitent sa mémorisation. Il est court et structuré en général de manière binaire ("A père avare/fils prodigue", "Bonjour lunettes/adieu fillettes", etc.); il recourt souvent à des rimes (ainsi en *-ette* dans le proverbe ci-dessus) ou met en relation des parties d'un nombre égal ou voisin de syllabes; il établit des symétries syntaxiques ou sémantiques d'une partie à l'autre: "A vaincre sans *péril*/ on triomphe sans gloire"; il recourt volontiers à des constructions qui ne s'encrent pas dans une situation d'énonciation particulière. Le proverbe ne peut donc référer à des individus ou à des événements uniques. Enfin, il s'énonce avec un ethos spécifique, un ton "sentencieux" qui contraste avec le flux habituel de l'échange oral. Cet ethos contribue à marquer le décalage entre l'énonciateur et le responsable de l'assertion, le "on" de la "Sagesse des nations".

En un sens, l'énonciateur du proverbe fait partie de ce "on": dans la mesure où la "Sagesse des nations" est en fait la communauté même des locuteurs d'une langue, chaque locuteur est indirectement un des membres de cette instance. Mais cette appartenance ne peut être qu'indirecte car la "Sagesse des nations" transcende les locuteurs actuels, elle vient du fond des âges, d'une expérience immémoriale: cela n'a pas de sens de se demander qui a pu inventer tel proverbe et dans quelles circonstances. De là le caractère parfois archaïsant des proverbes, qui marque justement leur caractère immémorial.

## BIBLIOGRAPHIE

1. Dominique Maingueneau, *Analyse des textes de communication*, Paris 2012
2. Oswald Ducrot, *Le dire et le dit*, Paris 1984
3. J.-C. Anscombre «Meme le roi de France est sage», *Communications*, Paris, 1973
4. <http://www.persee.fr/web/revues/home/prescript/>
5. <http://www.refdoc.fr/Noticeresultat>

**Աիда Մարդանյան, Անջելա Ванесян – Поговорок источник полифонии.** – Основной вывод, к которому мы приходим в данной работе, анализ лингвистических феноменов, которые способствуют полифонии в пословице и поговорке. При исследовании полифонии в дискурсе представляется возможным применить некоторые положения концепции миропорождения.

**Աիդա Մարդանյան, Անժելա Վանեսյան – Ասացվածքը որպես բազմաձայնության աղբյուր:** – Սույն հոդվածում մենք քննարկել ենք բազմաձայնության մի աղբյուր, որը քիչ տարածված է: Ասացվածքի միջոցով խոսողն իր խոսքն արտահայտում է՝ օգտագործելով այլոց ձայնը:

---

## NEURO-LINGUISTIC PROGRAMMING (NLP) IN ENGLISH LANGUAGE TEACHING

ANAHIT LALABEKYAN, LUSINE MIRZOYAN

In recent years many outstanding linguists have focused their attention on Neuro-Linguistic Programming (NLP), which is considered to be a collection of techniques, patterns, and strategies for assisting effective communication, personal growth, change and learning. The given article is devoted to the illustration of the origin and characteristics of Neuro-Linguistic Programming and investigation of its usage in English Language Teaching as one of the most efficient alternative approaches known all over the world.

To begin with, Neuro-Linguistic Programming was developed by Richard Bandler and John Grinder in the early 1970's. Bandler was studying at the University of Santa Cruz, where he met John Grinder, an assistant professor of linguistics [1, pp. 142-143]. Both of them were interested in discovering how successful communicators achieved their success. They studied various therapists and came to the conclusion that they followed similar patterns in relating to their clients and in the language they were using. Thus, they all held similar beliefs about themselves and what they were doing, i.e. NLP was developed as a system of techniques that could be used by therapists in building rapport with clients, gathering information about their internal and external views of the world, as well as helping them achieve goals and bring about personal change.

The development of NLP was influenced in particular by conversations with Gregory Bateson, who was Bandler and Grinder's neighbour in Santa Cruz in the 1970's [1, pp. 118]. Bateson was an English epistemologist who made vital contributions to many spheres, including anthropology and family therapy. This cooperation resulted in implementing several investigations and editing books relating this sphere.

It goes without saying that NLP model provides a theoretical framework and a set of working principles for directing or guiding therapeutic change. However, its principles have been applied in a variety of other fields, including management training, sports training, communications sales and marketing, and language teaching. Being a set of general communication techniques, NLP practitioners generally are required to take training in how to use the techniques in their respective fields. NLP was not developed with any applications to language teaching in mind. However, because the assumptions of NLP refer to attitudes to life, to people, and to self-discovery and awareness, it has had some appeal within language teaching to those interested in what we have called humanistic approaches-that is, approaches that focus on developing one's sense of self-actualization and self awareness, as well as to those drawn to what has been referred to as New Age Humanism [3, pp. 125-126].

NLP has been defined in various ways by different philosophers and linguists. According to Dilts and DeLozier NLP can be seen as a technology, a methodology, and

an epistemology. The term “neuro-linguistic programming” needs to be analyzed in details. In NLP *neuro* refers to beliefs about the brain and how it functions. *Linguistic* has nothing to do with the field of linguistics but refers to a theory of communication, i.e. it explains both verbal and nonverbal information processing. As for *programming*, it refers to observable patterns of thought and behaviour. Thus, the *neuro* part of NLP shows how we experience the world through the five senses and represent in the mind through the neurological processes. The *linguistic* part of NLP examines the way the language we use shapes and reflects the experience of the world. Language is used by us in thought as well as in speech to represent the world to ourselves and to embody our beliefs about the world and the life. By changing the way we speak and think about things we can change. Hence, language can also be used to help other people who want to make changes in their lives. The programming part of NLP trains us to think, speak, and act in new and positive ways in order to release our potential and reach those heights of achievement which we previously only dreamt of [2, p. 849].

Nowadays, NLP is widely used in the sphere of education and language teaching the evidence of which can be found in practitioner magazines and journals, websites and discussion groups, and at conferences. However, it's difficult to say for granted how widespread or popular NLP has become in practice. As an indication the number of people to have been trained to 'Practitioner' level in the UK since NLP's inception seems likely to number at least 50.000. Trainings in NLP are found all over the world, particularly in English speaking countries.

The usage of NLP has become too actual in language teaching process recently. Those educators who incorporate elements of suggestopedia, community language learning, music, drama and body language into their lessons are already drawing on NLP. They claim that NLP model explains how we process information which comes to us from the outside and is based on the work of Richard Bandler and John Grinder, who initially recognized the importance of eye contact and movement in identifying emotional states and how individuals think. It's obvious that in language teaching process NLP functions as follows: information arrives via the senses and modalities which clearly form the basis of what we know as 'VAK'-the identification of visual, auditory and kinesthetic learners and the need to cater for different learning styles in the classroom. Our perception of these is modified by three major elements-deletion, distortion and generalization. These processes are quite recognizable in language learners. In the case of deletion, there is too much information for the learner to handle. They delete or omit some information in order to make input manageable. Moreover, language learners will distort information into forms which are understandable and learnable. This process is both negative, as it produces errors and misunderstandings, and positive in that it contributes to learnability and motivation. Deletion and distortion are followed by generalization which is one of the ways that we learn, by taking the information we have and drawing broad conclusions. However, what is actually learnt by individuals is dictated by their own personal filters. These filters are identified by NLP as 'beliefs', 'values', 'decisions' and 'memories'. These filters play a vital role in language teaching process. For instance, learners make decisions based on beliefs and value judgments. They are often in a state of conflict because their previous learning experiences do not coincide with their current learning environment. Values provide the basis for decisions

about what is right and wrong, what they want or don't want to know. Memories and prior decisions create beliefs which affect our current behaviour. Learners often revert to previously adopted strategies and require deconditioning, while it can be argued that adult learning patterns merely replace earlier learning strategies which have been forgotten.

The importance of non-verbal communication, particularly eye contact, posture, breathing and movement is recognized by NLP as well. 'Congruency' is achieved when there is a match between verbal and non-verbal communication. Congruency, here, may have a language learning parallel in the concept of fluency, suggesting that non-verbal communication should be taught alongside functional language and phonology in order to achieve natural language production.

Teachers using music to create atmosphere and stimulate creativity, or using mime and drama techniques to build confidence and add body language to speech acts are already drawing from the NLP repertoire. Only recently, however, have classroom activities specifically and overtly based on NLP been developed by ELT practitioners. Many of these activities also integrate the skills and are extensions or modifications of existing techniques such as storytelling, guided fantasy, role-play and simulation. Areas where NLP can have a real impact, however, are those which explore the relationships between students and between students and teacher, and those which help to create a healthy and positive learning environment. According to NLP, they seek to apply the principles in their teaching which leads to different responses to many classroom events and processes. Many of the activities used by the teachers also integrate the skills and are extensions or modifications of existing techniques such as storytelling, guided fantasy, role-play and simulation. For example, one of the four central principles of NLP centres on the need for "rapport":

Rapport is meeting others in their world, trying to understand their needs, their values and their culture and communicating in ways that are congruent with those values. You don't necessarily have to agree with their values, simply recognize that they have a right to them and work within their framework, not against it [4, p. 121].

Next principle is mirroring, when the teacher tries to mirror the behaviour of those wishing to influence or to be influenced by. Mirroring of posture, gestures, facial expressions and even breathing can be easily practiced in the classroom, while simple drilling achieves the same results with phonological features of connected speech and key lexical phrases. To achieve natural communication, verbal and non-verbal aspects need to be combined in communicative activities. Learners may be asked to mirror the behaviour of characters on television before mirroring each other and the teacher.

Another vital principle is creating positive states and anchoring, i.e. motivation and positive attitudes to learning. In NLP, a positive state is created through a mental image formed by the process of achieving something mentally or physically, and this state is anchored by a gesture, expression or body movement which is repeated to maintain or recall the state. Guided fantasy may be used to create the state, and a movement or sound selected to represent it. Some teachers, often subconsciously, opt for different positions in the classroom to carry out certain actions, such as give instructions, teach grammar or tell a story. In ELT this is a type of anchoring by which students automatically know what is going to happen next in a lesson, and are prepared for it.

Maintaining flow is also considered to be an effective way of establishing a good rapport. It's a well known fact that NLP fits nicely with "Flow Theory", the notion that learning flows like water and that the best learning takes place when uninterrupted. For the purposes of lesson planning, flow is achieved when there is a balance of skills development and new challenges, clear task goals and the need for concentration. Successful learning takes place when learners feel a sense of control over what is happening in the classroom, do not feel self-conscious, and receive positive feedback from each other and the teacher. In ideal lessons, time seems to pass quickly. There are clear messages here about balance of activities, interest, attitude to errors, confidence building, learner training and autonomy. Competitive and collaborative games, jokes, songs and anecdotes, personalization and well structured information gap activities all help to maintain flow.

Not less crucial principal is pacing and leading. It is a set of strategies requiring the listener to "tune in", accept and correctly state the speaker's point of view (pacing) before suggesting an alternative point of view (leading). Acceptance of an argument will be accompanied by the listener's mirroring of the speaker's behaviour. Activities involving listening without response, turn-taking, planning and decision-making are useful for raising awareness of this process.

Thus, it goes without saying that NLP is not a teaching method. It does not consist of a set of techniques for teaching a language based on theories and assumptions at the levels of an approach and a design. Rather, it's a humanistic philosophy and a set of beliefs and suggestions based on popular psychology, designed to convince people that they have the power to control their own and other people's lives for the better, and practical prescriptions on how to do so. NLP practitioners believe if language teachers adopt and use the principles of NLP, they will become more and more effective teachers. In language teaching, the appeal of NLP to some educators steams from the fact that it offers a set of humanistic principles providing a new justification for well-known techniques, as well as a different interpretation of the role of the teacher and the learner.

## REFERENCES

1. Bostic St. Clair, C. & Grinder, J, *Whispering in the Wind*, J & C Enterprises, Scotts Valley, CA, 2001
2. Dilts, R & DeLozier, J., *Encyclopedia of Systemic NLP and NLP New Coding*, Meta Publications, Capitola, California, 2000
3. Richards Jack C. and Rodgers Theodore S., *Approaches and Methods in Language Teaching*, Cambridge University Press, 2001
4. Rylatt, A., and K. Lohan, *Creating Training Miracles*, Sydney: Prentice Hall, 1995

**Անահիտ Լալաբեկյան, Լուսինե Միրզոյան – Նյարդալեզվաբանական ծրագրավորումը անզլերեն լեզվի ուսուցման գործընթացում:** – Նյարդալեզվաբանական ծրագրավորումը, որը գոյություն ունի երեսուն տարուց ի վեր, լայնորեն կիրառվում է լեզվի ուսուցման գործընթացում: Նմանատիպ մոդելավորման միջոցով կարելի է պարզել, թե ինչպես է մարդկային ուղեղն ընկալում մատուցվող

նյութը և ինչպես է արձագանքում: ՆԼԾ-ի հետևորդները վստահ են, որ ուսուցիչներն, ովքեր կկիրառեն այն լեզվի ուսուցման գործընթացում, կգրանցեն զգալի դրական արդյունքներ: Այդ իսկ պատճառով նյարդալեզվաբանական ծրագրավորումը մինչ օրս շարունակում է մնալ բազմաթիվ լեզվաբանների ուշադրության կենտրոնում:

**Анаит Лалабекян, Лусине Мирзоян – *Нейролингвистическое программирование в процессе обучения английскому языку.*** – Нейролингвистическое программирование, которое существует более тридцати лет, широко употребляется в процессе обучения языку. С помощью подобного моделирования, возможно выяснить, как человеческий мозг воспринимает и реагирует на предложенный материал. Последователи НЛП уверены, что те преподаватели, которые будут употреблять его в процессе обучения языку, отметят ощутимые положительные результаты. По этому поводу нейролингвистическое программирование до сегодняшнего дня продолжает оставаться в центре внимания многих языковедов.

**ՄԱՅԱԹՆՈՎՅԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ  
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 20-ՐԴ ԴԱՐԱՄԿԶԲԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅՑ  
ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

**ԱՐՄԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ**

Հայ միջնադարյան տաղերգության ամենանուրբ ու ինքնատճ սիրերգակներից մեկի՝ Մայաթ - Նովայի ստեղծագործությունը նորահրաշ գույներով ու բույրերով լուսավառեց հայ քնարերգության բազմակունք անդաստանը՝ անդիմադրելի գայթակղության աղբյուր դառնալով ինչպես անցյալի, այնպես էլ նորօրյա հայ և օտարազգի ուսումնասիրողների ու մտավորականների համար:

Մայաթնովագիտության արշալույսի առաջին բոսորավառ շողը ճառագեց 19-րդ դարակեսին, երբ հայ երիտասարդ բժիշկ և գրական-հասարակական գործիչ, հայ ժողովրդական բանահյուսության և հայ աշուղական պոեզիայի սիրահար Գևորգ Ախվերդյանի ջանքերով հայտնաբերվեց Մայաթ - Նովայի երգերի «Դավթար»-ը, իսկ 1852 թ. Մոսկվայում լույս տեսավ նույն երախտավորի՝ Մայաթ - Նովային նվիրված գիրքը՝ «Գուսանք» վերտառությամբ: Ուշագրավ է այն իրողությունը, որ մինչև 1900-ական թթ. սկիզբը սայաթնովյան ստեղծագործության բուն ու հետևողական ուսումնասիրություններ գրեթե չէղան: Մայաթ - Նովայի գրական ժառանգության արժևորման և նոր տաղերի հայտնաբերման առումով որոշ ակնառու ձեռքբերումներ, իհարկե, եղան (Յակով Պոլունսկի, Գեորգ Տեր-Աղեքսանդրյան, Գևորգ Ասատուր և ուրիշներ), սակայն սիրո այս հոյակապ երգչի խաղերի գնահատման դիտանկյունից վճռորոշ և նշանակալից էին հատկապես 1910-ական թվականները, երբ Գ. Ախվերդյանի վաստակն իրապես և խորությամբ արժևորվեց, իսկ հարազատ ժողովուրդը համզգաց սայաթնովյան տաղերի անմիջական ու սրտահույզ հմայքը, վերագտավ իր տառապյալ հանճարին:

Ախվերդյանի գրական-մշակութային սխրանքին հաջորդած շուրջ կեսդարյա թմբիկի առեղծվածը յուրովի մեկնաբանեց մեծն Թումանյանը 1913 թ. կազմակերպված նշանավոր երեկույթի ժամանակ, որ նվիրված էր Մայաթ - Նովայի հիշատակին: Ներբողելով մեկուկես դար շարունակ գրեթե մոռացված, իսկ իր օրերում մարդկանց սրտերում վերագարթնած ու հոգիացած անմահ երգչին՝ Թումանյանը նշում է. «Այն ժամանակ ժողովրդի աչքը դեռ չէր բացվել՝ այդպիսի մի գործը տեսնելու, գին դնելու համար, իսկ այժմ այլևս ուրիշ է ժամանակը. մարդկանց աչքերը բացվել են, հիմա Մայաթ - Նովան կկենդանանա մեր ժողովրդի հոգում և էլ չի մոռացվի»<sup>269</sup>: Եվ պատահական չէ, որ իր իսկ՝ բանաստեղծի անմիջական նախաձեռնությամբ 1910-ական թվականներին պարբերաբար կազմակերպվող սայաթնովյան երեկոների և թումանյանական ջերմ ու բովանդակալից ելույթների, հոդվածների շնորհիվ էր նաև, որ Մայաթ - Նովան վերադարձավ իր անմահ երգի հնչյուններին կարոտ ժողովրդի գիրկը:

Մայաթ - Նովայի գրական ժառանգությունը ժողովրդականացնելու գործում իսկապես անուրանալի է Հովհ. Թումանյանի ավանդը. ուշ միջնադարի մեծ

<sup>269</sup> Թումանյանը քննադատ, Եր., 1939, էջ 250:



աշուղին նվիրված իր մի շարք հոդվածներում և բանավոր զեկուցումներում Թումանյան քննադատը նուրբ ու խորունկ դիտողականությամբ մեկնաբանում է սայաթնովյան երգերի բնույթն ու առանձնահատկությունները: Սայաթ - Նովան սրտի, զգացմունքի, հույզի երգիչ է, Թումանյանի բնորոշմամբ՝ «Մի առողջ, ոգևորված բանաստեղծ, որ աշխարհք է մտել սազով ու սիրով»<sup>270</sup>...

Ինչ խոսք, երփնավառ Արևելքի երազին փարած Թումանյանի հայացքից աննկատ չպիտի մնար Արևելքի մեծ բանաստեղծներին ևս հատուկ սայաթնովյան փիլիսոփայությունը. կյանքը փութանցիկ մի երազ է. երեկվա լավը սովորվում է այսօրվա վատով, դե իսկ այդ ամենն ապրողն ու զգացողը՝ մարդը, թումանյանական պատկերավոր բնութագրմամբ, «խտի նման դալարում է ու չորանում և ապրելով ու տանջվելով՝ վերջը բացականչում է.

Աշխարհըս մե փանջարա է. թաղերումեն բեզարիլ իմ.

Մըտիկ տըվողն կու խուցվի. դաղերումեն բեզարիլ իմ.

Էրեզ լավ էր, կանց վուր էսօր, վաղերումեն բեզարիլ իմ...»<sup>271</sup>:

Թումանյանն ընդգծում է սայաթնովյան հոգեկերտվածքի ամենախոսուն ելևէջներից մեկը. «...Սակայն տանջվելով ու վշտանալով հանդերձ և տանջանքից ու վշտերից բեզարելով հանդերձ՝ միշտ էլ մնում է նույն բարին, քնքույշն ու ազնիվը»<sup>272</sup>:

Զարմանալի ու հուզիչ մի հարազատությամբ այս տողերը բնորոշում են հենց իրեն՝ Թումանյան մարդուն և գրողին: Սայաթ - Նովայի հուզաշխարհի այս սրտառույ թըր-թիռները պիտի արձագանքեին Թումանյանի հոգում, ավելի ուշ՝ արտացոլվեին նրա քառյակներում, քանզի Թումանյանն ինքն էլ այդպիսին էր՝ բարի ու աննենգ:

Հիշենք՝

Ինչքան ցավ եմ տեսել ես,  
Նենգ ու դավ եմ տեսել ես,  
Տարել, ներել ու սիրել,-  
Վատը՝ լավ եմ տեսել ես<sup>273</sup>:

Կամ՝

Ո՛նց է ժպտում իմ հոգին  
Չարին, բարուն, - ամենքին,  
Լույս է տալիս ողջ կյանքիս  
Ու էն ճամփիս անմեկին<sup>274</sup>:

Բավականանաք թերևս այս երկու քառյակների հիշատակմամբ. օրինակները շատ են, ու բոլորն էլ՝ սիրագործով սրտի վճիտ կայլակներ («Ծով է իմ վիշտն, անափ ու խոր...», «Քանի՜ ձեռքից եմ վառվել...» և այլն):

Թումանյանի համոզմամբ՝ Սայաթ - Նովայի կյանքն ու մահն ազնվանում են միևնույն նրբագծով: «Ինչ բանաստեղծական գեղեցկությամբ կյանք ու աշխարհք էր մտել, նույն գեղեցկությամբ էլ թռչում է կյանքից ու աշխարհքից...», - գրում է նա՝ մեջբերելով հանրահայտ տաղի գեղեցիկ տողը. «Գուզիմ թռչի բլբուլի պես. բաղերումեն բեզարիլ իմ»<sup>275</sup>:

<sup>270</sup> Թումանյանը քննադատ, էջ 258:

<sup>271</sup> Նույն տեղում:

<sup>272</sup> Նույն տեղում:

<sup>273</sup> **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ տասը հատորով, հ. 2, Եր., 1991, էջ 21:

<sup>274</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>275</sup> Թումանյանը քննադատ, էջ 258:

«Մայաթ - Նովայի երգերի բնավորությունը» խորագրով իր հոդվածում Թուսանյանն անդրադառնում է նաև ռուս բանաստեղծ Յա. Պոլոնսկու՝ Մայաթ - Նովայի ստեղծագործությանը տված հիացական գնահատականին («Кавказ», Թիֆլիս, 1851, 1852): Ըստ Պոլոնսկու՝ Մայաթ - Նովայի երգերին բնորոշ չեն այն վառ ու փայլուն գույները, որոնք արևելյան բնությանը հաճախ հաղորդում են տարօրինակ ու խաբուսիկ արտաքին մի փայլ: Չկան և այն երևակայական պատկերները, որոնց ասես թե հաշիժն է ծնում: Մայաթ - Նովայի տաղերը հասկանալիվում են զուսպ երևակայությամբ և հորդուն զգացմունքներով:

«Աշուղի լեզուն բլբուլ է. օրհնանք ունի, անեծք չունի», - սայաթնովյան խոսքերն է հիշում Պոլոնսկին՝ ավելացնելով. «Թեև երբեմն նրան համակում է սուկալի թախիծը»<sup>276</sup>:

Հիմնավորված վերապահումով ու ներողամտությամբ դիտարկելով հիշյալ հարցի շուրջ ռուս բանաստեղծի տեսակետը՝ Թումանյանը գոհունակությամբ է արձանագրում այն փաստը, որ օտարագրի մտավորականը Մայաթ - Նովայի երգերի մեջ կարողացել է տեսնել ու ճանաչել աշուղի բարի ու խոր, վեհ ու վսեմ հոգին:

20-րդ դարակազմին Մայաթ - Նովայի ստեղծագործության վերաբերյալ հնչած մեկնաբանությունների մեջ ուշարժան է հայ մեծավաստակ բանասեր Մանուկ Աբեղյանի վերլուծությունը: 1899-1900 և հետագա թվականներին Գևորգյան ճեմարանում կարդացած իր դասախոսություններում, ի թիվս միջնադարյան մի շարք տաղերգուների, Աբեղյանն անդրադարձել է նաև Մայաթ - Նովայի քնարին՝ երբեմն, սակայն, առաջադրելով ծայրահեղ և անընդունելի տեսակետներ: Այսպես՝ տեսաբանը միանգամայն դիպուկ է բնորոշում Մայաթ - Նովայի երգերի հիմնական երանգները, վերլուծում նրա մի շարք տաղեր՝ իրավամբ նշելով, թե մեծ աշուղի տաղերում «Ամենից առաջին տեղը բռնում է կնոջ արտաքին գեղեցկության գովքը, կնոջ պաշտամունքը, սիրո արտահայտությունը, մարմնական աննման գեղեցկությունը, որի «նման աշխարհիս մեջ չի տեսած», կամ՝ «Թամամ աշխարհ պըրտուտ էկա, չըթողի Հաբաշ, նագա՛նի, Չըտեսա քու դիդարի պես՝ դուն դիփունեն բաշ, նագա՛նի...»<sup>277</sup>: Քննելով, սակայն, հոգեհմա նագանու կերպարը՝ Աբեղյանը կարծիք է հայտնում, թե կանացի այդ իդեալը «երբեմն մի կանխանմանություն է միայն, մի թեմայի զարգացում», որ հանդիպում է նաև Մայաթ - Նովայի նախորդների՝ 15-16-րդ դդ. տաղերգուների տաղերում: Իբրև օրինակ՝ Աբեղյանը հիշատակում է Գր. Աղթամարցու տաղերի չքնաղ հերոսուհուն. «Եվ եթե մենք Մայաթ - Նովայի տիկինը համեմատելու լինենք Աղթամարցու տիկնոջ հետ, ոչ մի առանձին տարբերություն չենք գտնիլ, որովհետև դա մի որոշ տիկին չէ, որ գովում են, այլ տիկնոջ՝ «արեգակնափայլ» երեսով տիկնոջ գաղափարը, գեղեցկությամբ և գրեթե միայն արտաքին գեղեցկությամբ կնոջ վերացականությունը»<sup>278</sup>:

Այս դեպքում, թերևս, կարելի է մի փոքր չհամաձայնել մեծն գիտնականի բնորոշման հետ, քանզի սայաթնովյան գեղեցկուհին՝ էն անսիրտ «զալումը», ուրույնանում է սայաթնովյան տաղերում. նա վերացական գեղեցկության սուկական գաղափար, խորհուրդ չէ, այլ՝ մարմնեղեն ու մարմնագեղ, իրական ու ան-

<sup>276</sup> Նույն տեղում, էջ 256, 258:

<sup>277</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Եր., 1970, էջ 538:

<sup>278</sup> Նույն տեղում:

մատչելի, աննման մի գոգալ, որին սիրում է Մայաթ - Նովան, և որի նուրբ ու թեթև հետքերը, ըստ որոշ վար-կածների, տանում են դեպի վրացական արքունիք...

Ի դեպ, սայաթնուվյան սիրո բնույթը մեկնաբանելով՝ Մ. Աբեղյանը նկատում է, որ Մայաթ - Նովայի սերն անարատ, մաքուր է. «Մայաթ - Նովայի միտքը հեռու է երկրավոր զգայականությունից»<sup>279</sup>: Մայաթ - Նովայի սիրո այս կարևոր առանձնահատկությունն ընդգծվել է նաև ժամանակի այլ տեսաբանների կողմից: Պոլոնսկին, օրինակ, նշում է. «Նրա հոգու տարրը, ոգևորության ժամերին, չի կարողանում հաշտվել զգայականության հետ, ինչպես կրակը չի կարող հաշտվել ջրի հետ: Նա այնքան է բարոյական, որ աշուղի կոչմանն էլ նայում է բարոյական տեսակետից»<sup>280</sup>:

Ավ. Իսահակյանն էլ, իր՝ «Անմահ Մայաթ - Նովան» վերնագրով հոդվածում բնութագրելով Մայաթ - Նովայի քնարերգության յուրահատկությունները, շեշտում է. «Զգայականությունը՝ զուսպ»<sup>281</sup>:

Թե՛ Աբեղյանը, թե՛ Թումանյանը համահունչ հետևության են հանգում. Մայաթ - Նովան դժբախտ է իր սիրո մեջ: Թումանյանը, Նաղաշ Հովնաթանի, Նահապետ Քուչակի և Մայաթ - Նովայի տաղերի համեմատական քննությանը նվիրված իր հայտնի հոդվածում լուսաբանելով նրանցից յուրաքանչյուրի սիրո կերպն ու գույնը, հանդիպադրում է սիրո երջանկությամբ զվարթ ու քմահաճ երկու սիրված բախտավորներին՝ Նաղաշ Հովնաթանին ու Նահապետ Քուչակին, և սիրո մեծ տառապալին՝ Մայաթ - Նովային. «Էստեղ առջևս է գալիս Մայաթ - Նովայի տխուր-ազնիվ դեմքը: Կանգնեցնենք նրան Նաղաշ Հովնաթանի ու Քուչակ Նահապետի զվարթ պատկերների դեմը: Ահա թե ով է դժբախտը սիրո մեջ, և ահա թե որտեղ են մերժված սիրո իսկական հառաչանքն ու տառապանքը: ...Մինչդեռ Քուչակին ու Հովնաթանին իրենց սիրածները միշտ դիմավորում են ժպիտներով ու ծաղիկներով, մինչդեռ Նաղաշ Հովնաթանը սիրո արբեցության մեջ գեղգեղում է.

«Իմ սիրելին ետ ինձ բարև,  
Մրտիս բուսավ կանանչ տերև...»,

Մայաթ - Նովան գանգատվում է.

«Յա՛ր, յիս քիզ բարով իմ տալիս. շուռ իս գալի՛ դալ իս անում...»<sup>282</sup>:

Թումանյանը ոչ միայն գուգադրում է միջնադարյան այս նշանավոր քնարերգուների սիրո բնեբանգները, այլև տարրորոշում նրանց սիրերգության հերոսուհիների նկարագրող հանդերձների, հագուկապի գույները. նրանցից յուրաքանչյուրը, ըստ Թումանյանի, իր գույնն ու դրանով պայմանավորված հմայքն ունի. գունային նրբերանգների հրաշավառ խաղը պարուրում է գեղուհուն և ամբողջացնում նրա թովյանքը: Նաղաշ Հովնաթանի «գալումը», օրինակ, թե՛ ինքն է կարմիր, թե՛ ոտքից գլուխ կարմիրի մեջ է շողշողում, Քուչակի «խոշ յարն» ինչ հագել՝ ամենն է կանաչ, իսկ ահա Մայաթ - Նովայի «բեմուրվաթը», որի «ռանգը գուլգազի է նման», ինքն էլ՝ «կրակե, ծովեմեն դուս էկած ռաշ ու ջեյրանի», ըստ երևույթին գուլգազ երանգն է նախընտրում, և սուկ բառախաղի համար չէ, որ

<sup>279</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 540:

<sup>280</sup> Տե՛ս Թումանյանը քննադատ, էջ 256:

<sup>281</sup> Ավ. Իսահակյան, Եժ վեց հատորով, հ. 5, Եր., 1977, էջ 224:

<sup>282</sup> Թումանյանը քննադատ, էջ 195:

բանաստեղծն իր գանգատի մեջ նշում է. «Դու՛ն կրակ, հա՛ գածըդ կրակ, վու՛ր մե կրակին դիմանամ...»<sup>283</sup>: Իսկապես, Նաղաշ Հովնաթանի սիրո տաղերում ամենուր վառվում է կարմիրը՝ իբրև գեղեցկուհուն զգվող և նրա բյուր հրապույրները բազմապատկող գույն, ընդ որում՝ սիրելիի դեմքը ամենից շատ համեմատվում է կարմրավառ վարդի հետ, իսկ իբրև հագուստի հիմնական տեսակ՝ հիշատակվում է կարմիր ատլասը: Բերենք օրինակներ.

....Կարմիր երես նման վարդի, ինչպես ծաղիկ ծաղկազարդի...<sup>284</sup>

....Երեսդ նման է կարմրափայլ վարդին...(345)

....Կարմիր երեսդ կու շողշողա...(346)

....Նման ես դու կարմիր վարդի...(349)

....Արյուն անելու մի՞ տք ունես, հագել ես կարմիր սարասար...(343)

....Շուրջ կու գաս վարդի նման դու զարդարած կարմիր ատլասով...(343)

....Ես դուլ եմ քո հագիդ կարմիր ատլասին...(345)

Ահա և համապատասխան օրինակները Մայաթ - Նովայի քնարից. գուլգազ՝ վարդակարմիր երանգով են ծփում և՛ նազանին, և՛ նրա հանդերձները.

....Էրեսն՝ գուլգազ լալի պես, պըռռոշըն լուլա-փարա է...<sup>285</sup>

....Հագիլ իս ատլաս՝ ռանգն է գուլգազ - ալ քիզի լալիդ...<sup>286</sup>

Քուչակյան սրտի համարձակ տիրուհին էլ հաճախ համեմատվում է կանաչ կապա հագած բոսոր վարդի հետ:

Մայաթ - Նովայի ստեղծագործությունը մոռացման փոշիներից դուրս բերելու և ժողովրդի գիրկը դարձնելու հարցում Թումանյանին գաղափարակից և իր հողվածներով ու դասախոսություններով այդ ոգեղեն գործին մեծապես նպաստած մյուս գրական-հասարակական գործիչը Նիկոլ Աղբալյանն էր՝ 20-րդ դարակերպի հայ քննադատության արգասավոր դեմքերից մեկը:

Մուշեղ Իշխանն անսքող հիացմունքով է խոսում հանճարեղ երգչի նկատմամբ Աղբալյանի բուռն ու մշտածուփ պաշտամունքի մասին. աննախադեպ ներշնչանքով ու հոգեպաղ խանդավառությամբ է Աղբալյանն ամենուր ներկայացրել, երգել ու վերլուծել Մայաթ - Նովայի խաղերը՝ լինել դա գրական ելույթների թե դասախոսությունների ժամանակ, մտերիմների հետ իր հանդիպումների թե սովորական զբոսանքի պահերին: Մեծանուն քննադատի գրական գրույցների նախասիրած թեմաներն են եղել հայ ժողովրդական երգերը և Մայաթ - Նովայի անձն ու տաղերգությունը<sup>287</sup>:

Հիշատակելով Մայաթ - Նովայի կյանքի ու գործի քննությամբ զբաղվող մեծաթիվ ուսումնասիրողներին՝ Մուշեղ Իշխանն իրավացիորեն նշում է, թե հազվագյուտ են այն շնորհալիները, որոնք կարողանում են վեր բարձրանալ «տեղեկություններու և թվականներու դաշտավայրեն և հոգիի նայվածքով ընդգրկել Մայաթ - Նովայի բանաստեղծական բարձունքին հոյակապ գեղեցկությունները»<sup>288</sup>:

<sup>283</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>284</sup> Հայ հին և միջնադարյան քնարերգություն, Եր., 1987, էջ 336 (Նույն աղբյուրից բերված մյուս մեջբերումների հղումները կտրվեն տեղում՝ փակագծի մեջ՝ անմիջաբար, կնշվի միայն էջը):

<sup>285</sup> **Մայաթ - Նովա**, Խաղեր, Եր., 1987, էջ 75:

<sup>286</sup> Նույն տեղում, էջ 60:

<sup>287</sup> Տե՛ս **Ն. Աղբալյան**, Ամբողջական երկեր, հ. 2 (Առաջաբանը՝ Մ. Իշխանի), Պեյրութ, 1966, էջ 6:

<sup>288</sup> Նույն տեղում, էջ 8:

Նիկոլ Աղբալյանը նրանցից մեկն էր: Ասվածը կարևորվում և հիմնավոր արժեքի կշիռ է ստանում նաև այն ուշագրավ առավելությամբ, որ ուներ Ն. Աղբալյանը, և որը հնարավոր չէ ձեռք բերել անձնական ջանքերով. Աղբալյանը ևս, ինչպես Մայաթ – Նովան, ծնվել և մեծացել էր Թիֆլիսում, ավելին՝ այն նույն թաղամասում, որտեղ ծնվել և ապրել էր մեծատաղանդ երգիչը, հռչակավոր Հավլաբարում: Այս իրողությամբ գերազանցապես կարելի է բացատրել Մայաթ – Նովայի անձի ու երգերի նկատմամբ Աղբալյան հավատավորի սրբաշուք խոնարհումն ու ջերմագին երկրպագությունը: Մեծ աշուղի երգերին դեռևս մանկուց ականջալուր Աղբալյանը ոչ միայն անխախտ ճշգրտությամբ հիշել ու վերարտադրել է «համաթաղեցի» աշուղի երգերի հարազատ հնչյուններն ու կատարման եղանակները, այլև վերապատկերել աշուղի «կյանքն ու տաղանդը կազմող» ծանոթ միջավայրն ու գունաշխարհը (տե՛ս «Մայաթ – Նովայի հետ» մեծարժեք ուսումնասիրությունը): Հիշյալ աշխատությունը սայաթնովագիտության և հայ ազգային երգարվեստի նվաճումներն արժևորում է մի նորագույն բացահայտումով, ինչը, կարծում ենք, դիտարժան փաստ է: Պարզվում է, որ Մայաթ – Նովայի հոյակապ տաղերից մեկի՝ «Դուն է՛ն գրլխեն իմաստուն իս...» տողով սկսվող բանաստեղծության եղանակի փրկությամբ և վերածնությամբ մենք պարտական ենք նույն Աղբալյանին, որն անդրադառնալով թիֆլիսյան բներանգներով թաթախուն իր մանկական հիշատակներին՝ հիշում է հետևյալ դրվագը. մի օր Ներսիսյան դպրոցից տունդարձի ճանապարհին, երբ անցնում էր ծանոթ խանութի առջևով, տեսնում է մի ծերունու, որը երգում էր խանութի մեջ հավաքված և գինով ու խորովածով ծանրաբեռնված սեղանի շուրջ նստոտած մարդկանց հորդորով:

«Կանգնեցի. երգում էր Մայաթ – Նովայից «Դուն է՛ն գրլխեն իմաստուն իս...»: Եղանակը անմիջապես սովրեցի և խաղի վերջին՝ դունդունալով շարունակեցի ճամբաս: Այդ եղանակը, հետո երևաց, որ միայն ես գիտեմ: Արդեն հասուն հասակիս Մայաթ – Նովա երգող չկար այլևս: Մեր սիրելի Հովհ. Թումանյանը շատ էր սիրում այդ եղանակն ու երգը, և ամեն անգամ, որ նրա շեն սեղանին նստած խմում էինք Կախեթի գինին, ստիպում էր, որ երգեմ այդ երգը: Ինձանից սովրեցին շատերը... Այսպիսով՝ ակամա փոխանցող եղած եմ վաղեմի սերունդի մի հին եղանակի»<sup>289</sup>:

«Մայաթ – Նովայի հետ» ուսումնասիրությունը<sup>290</sup> հատկանշվում է իբրև լեզվաբանական-ստուգաբանական աշխատանք, որտեղ տեսաբանը տող առ տող և գրեթե բառ առ բառ մեկնաբանում է Մայաթ – Նովայի՝ «միջնադարյան հայ գրականության իշխանի» (Մ. Իշխան) տաղերի «լեզուն ու բարքը», քննում այդ շողշողուն գանձերի բառապաշարը, իմաստային և լեզվառճական յուրահատկությունները, առանձնահատուկ հոգածությամբ և զգուշությամբ փորձում վերծանել երկիմաստ կամ անըմբռնելի բառերն ու դարձվածքները: Այս հետևողականությամբ

<sup>289</sup> **Նիկոլ Աղբալյան**, Ամբողջական երկեր, հ. 2, Մայաթ – Նովայի հետ, էջ 20-21:

<sup>290</sup> Թեև «Մայաթ-Նովայի հետ» ուսումնասիրությունն իր գրության տարեթվով դուրս է 20-րդ դարասկզբի առաջին տասնամյակի տիրույթից և ավելի ուշ ժամանակահատվածի ծնունդ է, բայց ելնելով այն հանգամանքից, որ Ն. Աղբալյանը 20-րդ դարասկզբի գրականագիտական մտքի նոր սերնդի ներկայացուցիչներից է, և հիշյալ հետազոտությունն իր արձարձած հարցադրումների բնույթով սերտ ու անմիջական առնչություն ունի Մայաթ – Նովայի ստեղծագործության մասին 1910-ական թթ. գրված աղբալյանական հոդվածների և առանձին պատառիկների հետ, մենք նպատակահարմար գտանք այն ներառել ուսումնասիրվելիք նյութի մեջ՝ արված դիտարկումները համաձուլյ և ամբողջական դարձնելու համար:

քննադատին հաջողվել է տալ սայաթնոլյան տասը տաղերի բանասիրական լիարյուն մեկնությունը. ցավոք, այս հիասքանչ ուսումնասիրությունն ընդհատվեց ներհուն մտավորականի մահով...

Թեև բացառապես իր աշխատանքի բնույթից ելնելով՝ Աղբայանը գրական-գեղարվեստական դիտարկումներ չի անում, Մայաթ - Նովայի երգերի բացատրությունից անցում չի կատարում դեպի մեծ երգչի քնարերգության ներքին տարերքի ու արժեքային համակարգի գնահատումը, սակայն մեկնաբանված այս կամ այն տաղի առնչությամբ տեղ-տեղ հանդիպում են աղբայանական մտքի վառ ընդհանրացումներ՝ երբեմն հոգեբանական զարմանալի զուգահեռներով համեմված, որոնք հուշում են տաղանդաշատ քննադատի և նրբաճաշակ գեղագետի բնատուր ձիրքի ու շռայլ հնարավորությունների մասին: Այսպես՝ քննելով Թ տաղը («Յիս մե դարիբ բըլբուլի պես, դուն օսկե դափազի նրման»)՝ տեսաբանն այն համարում է բանաստեղծի՝ հայերենով ստեղծագործելու փորձերից մեկը՝ մի «խճագարդ», որն իր թերություններով, հեղինակի՝ մայրենի լեզվով գրելու նորավարժությամբ հանդերձ, նաև «հաջող տողեր ունի»: Մայաթ - Նովայի գեղանրկարչական շնորհն այնքան հրաշամաղ ու գրավիչ ճառագումներով է երփներփին տալիս անգամ առանձին, ընդհանուր բանաստեղծական կառույցին չճուլվող տողերում, որ Աղբայանը, անկարող զսպելու իր սքանչացումը, ոչ պակաս նրբամիտ գեղագետի վայելքով խոստովանում է. «Հիմա մտածում եմ, թե այս ցրիվ տողերը, որոնցից մի քանիսը հղկված աղամանդ են, արդյոք բուռն հափշտակության հետևանք չէ ն: Թվում է, թե շմած է երգիչն իր գեղուհու տեսքից, պահվածքից, նագանքից և չի կարողանում իր բուռն ապրումներին մի կայուն հորինվածք տալ, այլ իր տողերը շաղ է տալիս թանկարժեք քարերի նման: Այդ շարոցի թելը փրթած է զգացական ցունցի հետևանքով, և ուրեմն տաղը լիովին արտահայտում է երգչի հոգեկան վիճակը»<sup>291</sup>: Եվ ապա հաջորդում է ինքնօրինակ ձևակերպումն արվեստի գեղեցկորեն քմահաճ բնույթի մասին. «Արվեստը կարգ ու կապ է ամենից առաջ, բայց թվում է, թե կա և կարող է լինել մի արվեստարժեք անկապություն, մի գեղեցիկ ցրվածություն...»<sup>292</sup>:

Գեղագիտական միևնույն ընկալմամբ քննադատը վերլուծում է և Ժ տաղը («Ուստի՞ գուքաս, դարիբ բըլբուլ»): Ի թիվս այլ դիտարկումների նշելով, թե Մայաթ - Նովայի տասներորդ տաղը «լավ հղացված, բայց թերի իրագործված» մի բանաստեղծություն է, որ այն թեև կատարյալ գործ չէ, բայց «սիրուն տաղ է և հուզիչ», Աղբայանն այնուհետև արտահայտում է իր պերճագեղ բնորոշումներից հերթականը՝ պատկեր-համեմա-տության եզր դարձնելով կին արարածին. «Մի-միայն այն կիները չեն գեղեցիկ, որոնց գծերը դասականորեն չափկից են: Կան շատ անչափակից կիներ, որ սիրուն են, գրավիչ և մինչև իսկ գեղեցիկ՝ զգայուն սրտերի համար: Այս տաղը հորինված է այնքան սրտանց, և զուգահեռը քաշված է այնքան արվեստով, որ թերին չի երևում վայելողին»<sup>293</sup>:

Եվ եզրափակիչ ընդհանրացման մեջ դարձյալ ծավալվում են խորագետ մտածողի ներքին, վետվետուն խոհերն արվեստի դերի և խորհրդի մասին, որոնք ըստ էության գուրկ չեն փիլիսոփայական հենքից. «Գեղեցիկ գործի վայելքը իմացական է և զգացական, սիրուն գործի վայելքը՝ զգացական է մեծապես: Արվեստի

<sup>291</sup> Ն. Աղբայան. Ամբողջական երկեր, հ. 2, Մայաթ - Նովայի հետ, էջ 121:

<sup>292</sup> Նույն տեղում:

<sup>293</sup> Նույն տեղում, էջ 129:

կատարյալ գործերը վայելք են տալիս սրտին ու մտքին միաժամանակ, բայց ո՞վ կարող է մերժել սրտի վայելքը, թեկուզ և միտքը շատ գոհ չմնա: «Ուստի գուքաս»-ն իր արվեստով հուզում է մեր սիրտը. այդքանը բավ է, որ մարդկորեն հավնինք ու սիրենք այդ տաղը»<sup>294</sup>:

Նշենք, որ Աղբայրյան տեսանողի վերլուծական պատկերավոր մտքին հատուկ է հետևյալ գիծը. գրական տարբեր երևույթների շուրջ խորհրդածելիս նա սիրում է իր ճկուն և անսպասելի, երբեմն էլ սրամիտ համեմատությունների չափորոշիչ դարձնել կին էակին՝ իր այս կամ այն հատկանիշներով: Բ տաղի («Թեգուզ քու քաշըն մարքրիտ տան՝ բրո յի-բրո յի») մասին խոսելիս, օրինակ, հիացած քննադատն իրեն հատուկ երևակայության ողջ պերճությամբ կենդանագրում, ասես վերապրում է սիրային ապրումի այդ գորավոր պահը՝ համանման մի հետևության հանգելով. «Եվ ո՞ր կինն է, եթե Հռիփսիմն չէ, որ դիմացած է տարերային պտոթկումի և չի ճկած փոթորիկի ուժից...»<sup>295</sup>:

Աղբայրյանը կենդանի թրթիռ է տեսնում այս տաղի մեջ, դեռ չհանգած մի ապրում, դեռ տաք մի հուզում... Նա առհասարակ բարձր է գնահատում Մայաթ - Նովա աշուղի անգուզական հնարավորությունները և ընդգծում նրա ակներև առավելությունն աշուղական արվեստի մյուս ներկայացուցիչների նկատմամբ. «Աշուղական ստեղծագործությունը հանգի և ձևի գերին է, բայց մեր երգիչը սովորական աշուղ չէ, այլ մի բանաստեղծ, որ ստեղծագործում է»<sup>296</sup>: Ավելին. «Նկատի առնելով Մայաթ - Նովայի լեզվի կազմը՝ ժողովրդական մի բարբառ՝ ընդելուզված գրական բառամթերքով, մենք կարող ենք Մայաթ - Նովային ոչ թե մի պարզ աշուղ համարել, թեև մեծատաղանդ ու անվանի, այլ հայոց նոր գրականության ուղեհարդարներից մինը, որ առնելով Թիֆլիսի բարբառն ու հարստացնելով գրական բառերով՝ իր հմուտ ձեռքում դարձրել էր մի կարող գործի ստեղծագործություն»<sup>297</sup>:

20-րդ դարի առաջին տասնամյակներին ժամանակի ամենատարբեր պարբերականներում («Հորիզոն», 1916, «Գործ», 1917, «Հանդես Ամսօրյա», 1924) «Դիտողություններ Մայաթ - Նովայի մասին» ընդհանուր խորագրով լույս տեսած հոդվածաշարը հատկանշվում է իբրև զուտ լեզվական-բանասիրական ուսումնասիրություն, ուր հեղինակը քննում է Գ. Ախվերդյանի տպագրած ձեռագրում առկա բնագրային, այդ թվում՝ բառագրական, կետադրական, տառադարձական սխալներն ու տաղաչափական խախտումները և նմանաբնույթ զանազան թերություններ: Նպատակամիտված ուղղումներ կատարելով՝ նա ցանկություն է հայտնում դյուրին դարձնել հետագա ուսումնասիրողների աշխատանքը և հնարավոր սխալներից զերծ պահել սայաթնովյան տաղերի գալիք հրատարակությունները:

Ժամանակին Բեյրութում հնչեցրած և ավելի ուշ հոդվածի վերածած իր հրապարակային դասախոսություններից մեկում («Մայաթ-Նովայի սերը») Աղբայրյանը Մայաթ - Նովայի տաղերգությունն անվանում է «անպատասխան սիրո քնարական պատմություն»՝ ոչ պակաս հուզականությամբ բնութագրելով սիրո այդ տեսակը՝ սայաթնովյան սիրո կերպը. այդ սերն իրական է և ոչ երևակայա-

<sup>294</sup> Նույն տեղում:

<sup>295</sup> Ն. Աղբալեան, Ամբողջական երկեր, հ. 2, Մայաթ-Նովայի հետ, էջ 46-47:

<sup>296</sup> Նույն տեղում, էջ 127:

<sup>297</sup> Ն. Աղբալեան, Ամբողջական երկեր, հ. 2, Դիտողություններ Մայաթ - Նովայի մասին, էջ 165:

կան: Դա պատանեկան երագանք կամ երիտասարդի տենչանք չէ, այլ՝ հասուն մարդու սեր: Միրողն ամուսնացած է, գավակներ ունի, բայց բռնված է նոր ու խոր սիրով: Վերջին սերն է սա՝ հզոր, քան մահը. «Այս այն հզոր սերն է, որ երբեմն կ'երագե զուսպ ու պարկեշտ դեռատին, որ երբեմն կ'ապրեր միջնադարը, որ զույգ կ'ընթանար Աստուծո սիրույն, երբ որքան բարեպաշտ էր մարդ, այնքան զորավոր էր իր սիրո ապրումը»<sup>298</sup>: Հիշյալ դասախոսության մեջ Աղբայրյանն անդրադառնում է նաև Սայաթ - Նովայի աննման տաղերի երկրային մուսայի ինքնության խնդրին. տեսաբանն առաջադրում է իր վարկածը, ըստ որի՝ բնածին հմայքով օժտված և հրապույրի արվեստին կատարելապես տիրապետող այդ սիրագեղ էակն ազնվական ծագմամբ և բարոյական աննվաճ բարձրության վրա կանգնած հայուհի է եղել՝ վրաց բարձրաշխարհիկ խավի շրջանակում հայտնված: Չուսպ գեղեցկուհու և հանճարեղ բանաստեղծի ծանոթությունից սկիզբ առած սիրո տագնապը ծնունդ է տվել հոգեթով մի բանաստեղծության, որը ոչ միայն Սայաթ - Նովայի կյանքի, այլև նրա ստեղծագործության լուսապսակն է, համոզված է քննադատը:

Սայաթ - Նովայի անձի և արվեստի վերաբերյալ Ն. Աղբայրյան վերլուծողի և գեղագետի՝ տարբեր տարիների լուրջ ու տևական ուսումնասիրությունները նշանակալից ավանդ են սայաթնովագիտական ձեռքբերումների համաշրջայում:

Դարասկզբի քննադատների՝ սայաթնովյան տաղերի դիտարկումների համապատկերում առանձնանում է Լեոյի (Առաքել Բաբախանյան) մեկնաբանությունը: Սայաթ - Նովայի կյանքին և ստեղծագործությանը Լեոն անդրադարձել է իր մի քանի հոդվածներում: Մասնավորապես հիշատակենք մեկ-երկու հիմնագիծ: Լեոյի համոզմամբ՝ գրեթե «բացառապես մի ուխտ, մի երկրպագություն, մի սրբության սեղան ունի մեր երգիչը՝ սեր», որի առաջ «խոնարհ ու նկուն է» նա. «Պաշտողը՝ ծնկաչոք, պաշտվածը՝ ծիածանի վրա գահ նստած: Եվ մրմնջում է պաշտողը.

«Աշխարհս աշխարհով կըշտացավ, յիս քիզանից՝ սով, ա՛չկի լուս»<sup>299</sup>:

Լեոն առանձնակի համակրանքով է ընդգծում Սայաթ - Նովայի սիրո լեզվի բողոքա-վոր շեշտը, խոր ու անպատասխան հույզերից ծնված տրտունջը. «Սայաթ - Նովան սիրում է իր սիրուհու հետ խոսակցություններ վարելու ձևը: Այդ դիմումների մեջ դյուրիչ տպավորություն թողնողը նրա գանգատավոր շեշտն է, որ զգացմունքի անհատական խորություն է բաց անում»<sup>300</sup>:

Լեոյին ևս, ինչպես շատ ուսումնասիրողների, այդ թվում և Թումանյանին, հետաքրքրել է Սայաթ - Նովայի կենսագրությանն առնչվող վիճահարույց մի հարց. կյանքի վերջին շրջանում իր սագին հրաժեշտ տված ու կրոնավորի սքեմ հագած մեծ աշուղի կենսասեր հոգին արդյոք համակերպվե՞ց և ներձուլվե՞ց Հաղպատի մենաստանի գորշ պատերի ամենակուլ լռությանը, թե՞ շարունակեց վառվել ու մխալ մեծ կյանքի, մեծ սիրո ու մեծ գեղեցկության անհագուրդ կարոտով. «Նա, որ սիրում է իր քամանչան տեսնել շրջապատված գոգալներով, փոխե՞ց արդյոք իր այդ հեթանոս բոցավառ հոգին վանական ձեթի հետ, ընդմիջտ հրաժե՞շտ տվեց իր կախարդիչ քամանչային»<sup>301</sup>:

<sup>298</sup> Ն. Աղբայրյան, Ամբողջական երկեր, հ. 2, Սայաթ - Նովայի սերը, էջ 131:

<sup>299</sup> Լեո, Եժ տարբ հատրով, հ. 3, Եր., 1973, էջ 579:

<sup>300</sup> Նույն տեղում:

<sup>301</sup> Լեո, Եժ, հ. 9, Եր., 1989, էջ 410:



Այս հարցում գրականության պատմաբանը հավատացած է, որ վանքի պատերը չէին կարող կապել-կաշկանդել սիրավառ, կենսատենչ հոգու սլացքը<sup>302</sup>. նշված երևույթի պերճախոս փաստերով լի է հայ գրականության պատմությունը: Եթե միջնադարյան «այնպիսի մի մոռյլ և հուսահատ միստիկ բանաստեղծական տաղանդ», ինչպիսին էր Գր. Նարեկացին, Աստվածամոր պատկերով գեղանկարում և աստվածացնում էր կանացի գեղեցկությունը, եթե «այնքան սիրառատ մի քնարերգակ», ինչպիսին էր Կոստանդին Երզնկացին, կրոնական հալածանքներից ազատվելու համար ստիպված էր ասել, թե իր սիրերգերում պաշտված կինը Մարիամ Աստվածածինն է, «կարո ղ էր մի Հաղպատ, որքան և ամուր ու հոյակապ լիներ իբրև միստիկական կառուցվածք, սպանել մի այնպիսի հրաբորբոք սիրային սիրտ, որպիսին էր Մայաթ - Նովան»<sup>303</sup>: Իհարկե, ոչ, համոզված է Լեոն. գոգավների՝ վանքում հայտնված աննման երգիչը չէր կարող հավատալ, թե անմահությունը վանական ձեռքի, խնկի և ցուրտ քարերի մեջ է և ոչ թե բոցավառ սրտում ծփացող գեղեցիկ պաշտամունքի: Լեոյի հավաստմամբ՝ այս հարցադրումը, որ խիստ կարևոր է՝ Մայաթ-Նովա բանաստեղծի դիմանկարն ամբողջացնելու համար, ժամանակին ծառայել է նաև Գ. Ախվերդյանի առջև: Երբ վերջինս իրեն ժամանակակից թիֆլիսեցի ծերերի համար արտասանում էր Մայաթ-Նովայի խաղերից, որպեսզի հիշողություններ արթնացնի նրանց հոգում և կենսագրական անհրաժեշտ նյութեր հավաքի, այդ ծերունիներից ու մամիկներից միշտ լսում էր միևնույն հիացական բացականչությունը. «Էտ խո մեր Մայաթ-Նովո խաղն է. վա յ քի, Սա յաթ - Նովա, ինչ գողիր իս շանց տվի»<sup>304</sup>:

Լեոն բարձր է գնահատում աշուղ Մայաթ-Նովային, ժամանակակիցներից շատերի նման նրան համարում անգուգական. գերող անմիջականությամբ է նա հայտարարում, թե «Մայաթ - Նովայից հետո աշուղներ շատ դուրս եկան, նույնիսկ Թիֆլիս քաղաքից, բայց Մայաթ - Նովան մի հատիկ մնաց: Նրան ոչ ոք չհասավ»<sup>305</sup>:

20-րդ դարակյան արևելահայ գրական կյանքը նշանավորվեց ուշագրավ մի հայտնությամբ. 1916 թ. Մոսկվայում լույս տեսավ «Հայաստանի պոեզիան» անթոլոգիան՝ ռուս տաղանդավոր բանաստեղծ և թարգմանիչ, գրական գործիչ Վ. Բրյուսովի խմբագրությամբ: Գիրքը եզակի և արժեքավոր երևույթ էր, գնահատելի՝ ոչ միայն հայ քնարերգությունից Բրյուսովի և մի շարք շնորհաշատ ռուս բանաստեղծ-թարգմանիչների կատարած հիանալի թարգմանություններով, այլև հայ քնարերգության մասին Բրյուսովի գրած պատմագրական ակնարկով: «Поэзия Армении с древнейших времен до наших дней» ժողովածուի առաջաբանում Վ. Բրյուսովը հանդես է գալիս իբրև հնուտ մեկնաբան՝ յուրովսանն բնութագրելով հայ քնարական գրականության բազմադարյան ընթացքը հին շրջանից մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը: Հայ քնարերգությանը նվիրված այս ուսումնասիրության մեջ քննադատն անթաքույց համակրանքով է բնորոշում Մայաթ - Նովայի տաղերգության գեղարվեստական արժանիքները, ընդգծում մեծ երգասացի հիմնարար և անփոխարինելի դերը հայ աշուղական արվեստի կայացման և կատարելագործման գործում:

<sup>302</sup> Այս հարցի շուրջ ինչպես անցյալի, այնպես էլ մերօրյա գրականագետների հնչեցրած կարծիքները տարաբնույթ են:

<sup>303</sup> Լեո, ԵԺ, հ. 9, էջ 413:

<sup>304</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 410:

<sup>305</sup> Լեո, ԵԺ, հ. 3, էջ 580:

«Այն ամենը, ինչ արել են Սայաթ - Նովայի նախորդները, չնչին բան է նրա սխրանքի առաջ և ասես աղոտացած նրա փառքի ճաճանչների մեջ, - գրում է Բրյուսովը: - Սայաթ - Նովան առաջինը ցույց տվեց և ապացուցեց, թե ինչ ուժ է պարունակում ժողովրդական երգչի ձայնը: Նա ցույց տվեց, որ այդ երգիչը սովորական զվարճացնող աշուղ չէ, այլ ուսուցիչ և մարգարե»<sup>306</sup>: Բրյուսովի համոզմամբ՝ Սայաթ - Նովան յուրացրեց իր նախորդների ոճարվեստը՝ դրան, սակայն, կատարելության դրոշմ հաղորդելով: Այսպիսով, ասհա, պարզ դարձավ, թե ինչպիսի հարստություն, ինչպիսի շքեղություն է թաքնված աշուղական այն երգերում, որոնց շատերը խիստ թեթևամտորեն էին վերաբերում: Սայաթ - Նովայի ժողովրդայնությունը սահմաններ չի ճանաչում. նրա շնորհիվ հայ երգը, հայ պոեզիան դուրս եկավ վանքի պատերից և փոխանցվեց ժողովրդին՝ հնչելով ամենուր՝ թե՛ պալատներում, թե՛ հասարակ մարդկանց խրճիթներում, թե՛ շուկաների հրապարակներում, թե՛ ընտանեկան հանդիսությունների ժամանակ: Ճիշտ հետևություն է անում քննադատը. «Սայաթ - Նովան իր կյանքով լցրեց ողջ 18-րդ դարը»<sup>307</sup>:

Առաջին հայացքից միօրինակ թվացող սայաթնովյան տաղերում Բրյուսովն ակնառու բազմազանություն է նկատում. գրեթե բոլոր երգերում սիրերգակ Սայաթ-Նովան իր սիրո մասին է խոսում, «բայց որքան բազմերանգ են նրա գույները տարբեր տաղերում, բոլոր այդ անցումները մեղմ քնքշությունից դեպի բոցակեզ կրքեր, հուսախաբությունից դեպի հիացում, կասկածանքից՝ հպարտ ինքնագիտակցություն: Իսկապես, Սայաթ - Նովային կարելի է անվանել «երանգների բանաստեղծ»<sup>308</sup>: Նուրբ ու թեթև վրձնով է գեղանկարել Սայաթ-Նովան, և անդիմադրելի է նրա մշտաթով տաղերի հմայքը: Ըստ Բրյուսովի՝ աշուղական երգարվեստի ոլորտում Սայաթ-Նովան հաստատեց, սրբագործեց պարսկական գազելին նմանվող հատուկ տաղաչափական ձևը, որն այսուհետ սիրվեց ու մեծապես կիրառվեց բոլոր տաղասացների կողմից: Միևնույն բառի կամ նմանահունչ բառերի պարտադիր կրկնությամբ վերջավորվող տողերի անկայությունը, որ պահանջում է տաղաչափական այս ձևը, արդեն իսկ բանաստեղծին ստիպում է բազմազանություն փնտրել միօրինակության մեջ: Այն միաժամանակ, գրեթե պոետից անկախ, յուրահատուկ հնչեղություն, խորունկ երգայնություն է հաղորդում նրա տաղերին: Սայաթ - Նովան հնչյունային համանվագի, ձայնային համադաշնության հրաշալի վարպետ է, որ կարողանում է թարմ մեղեդայնություն ստեղծել համագործածական չափերում: Այս վերջին հարաբերությամբ տեսաբանը Սայաթ - Նովային համեմատում է իր հայրենակից Կ. Բավունտի հետ: Մեծ և սրտաբուխ է Բրյուսովի խոնարհումն ու շնորհակալությունը հսկայի առջև. Սայաթ - Նովայի ստեղծագործության մեջ «ամեն ինչ կենդանացած ու ոգեշնչված է ճշմարիտ բանաստեղծական հանճարի ուժով: Բանաստեղծն իրավացի էր, երբ հպարտագին հայտարարում էր. «Բունիաթըս ավագ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է»: Այնպիսի բանաստեղծներով, ինչպիսին Սայաթ-Նովան է, կարող է և պետք է պարծենա ողջ ժողովուրդը: Նա երկնքի մեծ պարզն է, որ ուղարկվում է ոչ բոլորին և ոչ միշտ: Նա նախախնամության ընտրյալն է, որ օրհնանք է դառնում իր դարաշրբ-

<sup>306</sup> Поэзия Армении /вступительный очерк В. Брюсова/, Ереван, 1966, էջ 64:

<sup>307</sup> Նույն տեղում:

<sup>308</sup> Նույն տեղում, էջ 66:

ջանի և իր հայրենիքի համար»<sup>309</sup>: Ահա այսպիսին է, ընդհանուր առմամբ, Մայաթ-Նովայի տաղերի բրյուսովյան ընկալումը:

Մայաթ - Նովայի լուսե ստեղծագործությունը և ինքը՝ պայծառ աշուղը, նորովի բնութագրվեցին 20-րդ դարի 20-ական թթ. ձևավորված «մարքսիստական» գրականագիտության հայ ներկայացուցիչների կողմից: Հայ «մարքսիստական» քննադատության եռանդուն ջատագովներից մեկը՝ Հ. Սուրիսայանը, «Վանական-ֆեոդալական պատկերացումները հայ քնարերգության մեջ» վերնագրով իր հոդվածում գրում էր. «Մայաթ - Նովան ապրել է ֆեոդալիզմի երկրներից մեկում՝ թավադական Վրաստանում, և եղել է պալատական երգիչ: Որքան էլ ծագումով դեմոկրատ լիներ նա, այնուամենայնիվ, միջավայրն իր դրոշմը դրել է նրա հոգեբանության վրա: Թավադը, Մուլթանն ու խանը նրա համար ճշմարտություններ էին ... հավիտենական, որքան երկինքը, արևը, լուսինը և այլն»<sup>310</sup>:

Ինչ խոսք, Սուրիսայանի այս մեկնաբանությունները մեծապես կրում են գոեհիկ սոցիոլոգիզմի բացասական ազդեցությունը: Եվ, այնուամենայնիվ, Մայաթ-Նովայի հանձարը վեր էր և անհաղթահարելի. այն չէր կարող կաղապարվել նեղ գաղափարախոսական ինչ-ինչ մտայնություններով, այնպես որ հենց ինքը՝ հոդվածագիրը, քիչ անց ստիպված էր խոստովանել, թե այդ ամենը «չի խանգարում բարձր համարել Մայաթ - Նովայի արվեստը»<sup>311</sup>:

Հ. Սուրիսայանի վերոնշյալ սխալը զարմանալիորեն կրկնեցին նաև ժամանակի այնպիսի քաջահմուտ գրականագետներ, ինչպիսիք էին Պողոս Մակինցյանը և Գարեգին Լևոնյանը: 1931 թ. Երևանում լույս տեսավ «Մայաթ - Նովա, հայերեն խաղերի լիակատար ժողովածու»-ն, որին կցված իրենց առաջաբաններում հիշյալ տեսաբանները Մայաթ - Նովային որակում էին իբրև միջնադարյան կրոնական և ավատական հայացքների արտահայտիչ, նրա երգերը համարում ֆեոդալական-դասակարգային շահերի թելադրանք. «Մեր աշուղը, - գրում էր Մակինցյանը, - .... ամենահարագատ կերպով կատարել է կալվածատերերի սոցիալական պատվերը, ինչպես միջնադարյան բոլոր արվեստագետները»<sup>312</sup>: Ամբողջ առաջաբանում Մայաթ - Նովան հիշատակվում էր կա՛մ իբրև կրոնավոր, կա՛մ իբրև պալատական երգիչ. անարդարացիորեն անտեսվում էր «խալխի նոքար Մայաթ - Նովու» ջերմ ու անմիջական կապը ժողովրդի հետ, իսկ նրա «Աղքատ սիրե, դոնաղ սիրե, յար սիրե» խրատը որակվում էր իբրև ժողովրդավարության հետ կապ չունեցող «միջնադարյան ավանդ»...

Պողոս Մակինցյանի պես նուրբ ու խորթափանց քննադատի այս լուրջ վրիպումը ևս պայմանավորված էր գոեհիկ սոցիոլոգիզմի գորեղ ազդեցությամբ:

Մայաթ - Նովայի ստեղծագործության դիտարկումները 20-րդ դարասկզբի արևելա-հայ գրաքննադատական մտքի պարույրներում ըստ էության միտված էին մեծ երգչի անմահ ժառանգության նորովի բացահայտմանն ու արժևորմանը և նշանակալից դեր խաղացին սայաթնովագիտության բնագավառում:

**Армине Адамян – Несколько обзоров творчества Саят – Новы в панораме восточно-армянской критики начала 20 – ого века. – Певцом, вознесшим поэзию**

<sup>309</sup> Поэзия Армении /вступительный очерк В. Брюсова/, էջ 67:

<sup>310</sup> Տե՛ս *Զվարթ Ղուկասյան*, Սովետահայ գրականագիտությունը, Եր., 1981, էջ 65:

<sup>311</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>312</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 182:

ашугов на недостижимую до него высоту, был Саят-Нова – один из тончайших и самобытных лириков песнопения армянского средневековья, творчество которого являлся источником неудержимого соблазна для армянских и иностранных исследователей и литературоведов как прошлого столетия, так и современности.

В статье рассматривается лирика Саят-Новы в панораме восточноармянской критики начала 20-ого века, в частности, в отзывах великого армянского поэта и мыслителя Ов. Туманяна, заслуженного словесника М. Абегяна, критика Н. Агбальяна, литературоведа и историка Лео (Аракел Бабаханян).

Знаменитая антология „Поэзия Армении”, вышедшая в свет под редакцией известного русского поэта, переводчика и критика Валерия Брюсова (1916, Москва), стала долгожданным и значительным явлением в восточноармянской литературной жизни начала 20-ого века. Во вступительном очерке этой книги критик дал обобщенную характеристику песен Саят-Новы и оценил литературную деятельность великого певца. Именно поэтому мы сочли целесообразным представить в статье бруссовскую интерпретацию песнопения Саят-Новы.

Светлая лирика Саят-Новы и сам он - именитый ашуг по-новому характеризовались со стороны армянских представителей марксистского литературоведения, сформировавшееся в 20-ые годы начала 20-ого века, некоторые интерпретации которых, обусловленные идеологией того времени, носили ограниченный и пристрастный характер. В статье вскользь упоминается также некий анализ творчества Саят-Новы в трактовке некоторых из этих критиков.

**Armine Adamyan – *Some observation about Sayat Nova's works in the panorama of Eastern Armenian criticism at the beginning of the 20<sup>th</sup> century.*** – It was singer Sayat Nova who led the bard poetry to unachievable height. Sayat Nova was one of the finest and distinctive lyric poets of Armenian medieval poetry whose works have been a source of irresistible temptation not only in the last 100<sup>th</sup> anniversary but also for up-to-date Armenian and foreign researchers and literary critics.

In the article Sayat Nova's lyric poetry is observed in the panorama of the Eastern Armenian criticism at the beginning of the 20<sup>th</sup> century, particularly with the appreciation of great Armenian poet and thinker H. Toumanian, honoured linguist M. Abeghian, literary critic N. Aghbalian, literary critic and historian Leo (Arakel Babakhanian).

In the literary life of Eastern Armenian at the beginning of the 20<sup>th</sup> century, published (1916, Moscow) “Armenian Poetry” anthology, edited by Russian famous poet and translator, critic Vallery Brussov was an awaited and significant fact. In its attached preface the critic gives general testimonial of Sayat Nova's songs and estimates the literary merit of the great singer.

Hence we found suitable to present the poetry of Sayat Nova's Brussov commentary in the article.

Sayat Nova's bright works and he – the distinguished bard were characterized in a new form by the Armenian representatives of the history of literature, established at the beginning of the 20<sup>th</sup> century. Some observation depending on the ideology of time was deeply limited and took partial turn. The estimations of some of those critics' given to Sayat Nova's works are slightly touched upon in the article.

# Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱԼԻՐԱՅԻՆ ՏԻՊԱՅՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴՐԱՆՑ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔ

### ՄԿՄԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, ՎԱՀԱՆ ՊՈՏՈՍՅԱՆ

ՀՀ գյուղական բնակավայրերի զարգացման ժամանակակից միտումները բացահայտելու և տարաբնակեցման հեռանկարը պարզելու անհրաժեշտությունը պահանջում են կատարել գյուղական բնակավայրերի համալիրային այնպիսի տիպայնացում, որի ժամանակ հաշվի կառնվեն բոլոր այն հատկանիշները, որոնք գտնվում են պատճառահետևանքային փոխադարձ կապի մեջ և հնարավորություն կտան որոշել յուրաքանչյուր բնակավայրի տեղը տարաբնակեցման հիերարխիկ կառուցվածքում: Բացի այդ, այդպիսի տիպայնացումը թույլ է տալիս ստանալ տվյալներ գյուղական տարաբնակեցման հետագա կատարելագործումը գիտականորեն հիմնավորված պլանավորելու և տարաբնակեցման զարգացման գործընթացները կառավարելու համար:

Նկատի ունենալով գյուղական բնակավայրերի բացառիկ տեղը ՀՀ-ն և տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման գործում, ինչպես նաև ՀՀ գյուղական տարաբնակեցման ձևավորման և զարգացման առանձնահատուկ պայմանները, գյուղական բնակավայրերի համալիրային տիպերի առանձնացման համար առավել նպատակահարմար է հաշվի առնել հետևյալ հիմնական ցուցանիշները. գյուղերի մարդաշատությունը, ապահովվածությունը հողային ռեսուրսներով, աշխարհագրական դիրքը և տեղադիրքը, հեռավորությունը քաղաքային բնակավայրերից, մարզկենտրոններից և տարածաշրջանային կենտրոններից, բնակչության տարիքային կառուցվածքի ցուցանիշները գյուղական համայնքներում, գյուղական համայնքների ապահովվածությունը տրանսպորտային ուղիներով և գյուղական բնակավայրերի տարածաշրջանային բնութագիրը (դիրքն ըստ սահմանային գոտիների): Վերջիններս գյուղական բնակավայրերի այն հիմնական բնութագրիչներն են, որոնց միասնությունը ամբողջական պատկերացում է տալիս ինչպես յուրաքանչյուր գյուղի կամ համայնքի, այնպես էլ դրանց առանձին խմբերի մասին:

ՀՀ գյուղական բնակավայրերի համալիրային տիպայնացման խնդրի լուծումը պահանջում է նախօրոք կատարել ըստ տարբեր հատկանիշների գյուղերի խմբավորում և բնութագրում:

Ըստ մարդաքանակի ՀՀ-ում կարելի է առանձնացնել մինչև 50, 51-100, 101-500, 501-1000, 1001-3000, 3001-5000 և 5001-ից ավելի մարդ ունեցող բնակավայրերի խմբեր, որոնք ունեն իրենց առանձնահատուկ կողմերը [2, էջ 233-306]:

Լեռնային երկրներում գյուղական բնակավայրերի բնութագրման կարևոր հատկանիշներից է դրանց **աշխարհագրական դիրքը և տեղադիրքը**: Ըստ այդ հատկանիշի ՀՀ գյուղական բնակավայրերը բաժանվում են երեք խոշոր խմբի. լեռնային, բարձր լեռնային և նախալեռնային-հարթավայրային: ՀՀ գյուղական

համայնքների շուրջ 65 %-ը նախալեռնահարթավայրային տեղադիրք ունեն (562 գյուղական համայնք), 21,6 %-ը՝ լեռնային են, իսկ 117 գյուղական համայնքներ՝ (13.5 %-ը) բարձր լեռնային են [1, էջ 18]:

ՀՀ գյուղական համայնքներն ու բնակավայրերն ըստ բնակչության թվաքանակի առանձնացված համայնքների խմբերը միմյանցից էապես տարբերվում են նաև **վարչական և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներով կամ հողային ռեսուրսներով ապահովվածությամբ**: Մեկ բնակչի հաշվով հողային ռեսուրսներով առավել բարձր ապահովվածություն ունեն մինչև 100 բնակիչ ունեցող գյուղական համայնքները՝ (17,3 հա), [1, էջ 58], իսկ առավել ցածր ապահովվածություն (0,73 հա)՝ 1500-ից ավելի բնակիչ ունեցող գյուղական համայնքները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում գյուղական համայնքների միջին մարդաքանակի ավելացմանը զուգընթաց նվազում է դրանց ապահովվածությունը հողային ռեսուրսներով մեկ բնակչի հաշվով: Մարզային կտրվածքով գյուղական մեկ բնակչի հաշվով հողային ռեսուրսներով ապահովվածությունն ունի հետևյալ պատկերը՝ առավել ցածր ապահովվածություն ունեն Արարատի (0,51 հա/ մեկ բնակիչ), Արմավիրի (0,58) և Կոտայքի (1,00) մարզերը, իսկ առավել բարձր ապահովվածություն՝ Սյունիքի (4,77) և Վայոց ձորի (4, 03) մարզերը [1, էջ 59]: Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Լոռու և Շիրակի մարզերի գյուղական համայնքներն ունեն համապատասխանաբար 1,12, 1,29, 1,65 1,78, 1,76 հա/ մեկ բնակիչ ապահովվածություն [1, էջ 56]:

Ցանկացած երկրի համար կարևոր դեր ունեն **բնակավայրերի տարածաշրջանային բնութագրերը**, որոնք զգալի ազդեցություն են թողնում բնակավայրերի սոցիալ-տնտեսական բնութագրերի ձևավորման և փոփոխությունների վրա: ՀՀ գյուղական համայնքների տարածաշրջանային բնութագրերի մասին ավելի հստակ պատկերացում ունենալու տեսակետից մեծ հետաքրքրություն և օգտակարություն ունի դրանց բարձրաչափական և սահմանամերձության համատեղ օգտագործմամբ ձևավորված տիպաբանությունը: Ըստ այդպիսի տիպաբանության ՀՀ գյուղական համայնքների մոտ 50 %-ը նախալեռնային կամ հարթավայրային և ոչ սահմանամերձ են և այդ առումով զարգացման համար ունեն նպաստավոր պայմաններ: ՀՀ գյուղական համայնքների 14,4 %-ը (125 համայնք) նախալեռնային-հարթավայրային և սահմանամերձ են, 18,1 %-ը՝ լեռնային ոչ սահմանամերձ, 3,5 %-ը՝ լեռնային սահմանամերձ, 11,4 %-ը՝ բարձրլեռնային ոչ սահմանամերձ և 2,1 %-ը՝ բարձրլեռնային սահմանամերձ [1, էջ 19-20]: Վերջիններս համարվում են զարգացման համար առավել անբարենպաստ պայմաններում գտնվող գյուղական համայնքներ:

Մեր կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ ՀՀ 37 տարածաշրջաններից 26-ը ունեն սահմանամերձ գոտի: Սահմանային առաջին գոտում ընկած են 51, երկրորդ գոտում՝ 217, երրորդ գոտում՝ 208 գյուղ, իսկ այլ տարածքներում՝ 269 գյուղ:

Առանձին տարածաշրջանների գյուղական տարաբնակեցման և բնակավայրերի համար կարևոր նշանակություն ունի **քաղաքային բնակավայրերից ունեցած հեռավորությունը**: Վերջինս էապես ազդում է գյուղերի սպասարկման ոլորտի մակարդակի, բարեկարգվածության աստիճանի, տրանսպորտային պայմանների, ճոճանակային միգրացիայի ինտենսիվության, բնակչության տեղեկացվածության և այլ երևույթների վրա:

ՀՀ գյուղերի շուրջ 65 %-ը գտնվում են քաղաքների ազդեցության ոլորտում: Հանրապետության գյուղական բնակչության 60 %-ից ավելին ապրում է մայրաքաղաքի, Գյումրու և Վանաձորի մերձակա գյուղերում: Հասկանալի է, որ որքան մեծ է քաղաքը, այնքան ավելի մեծ են շրջակա գյուղական բնակավայրերի վրա ազդեցության և զարգացման հնարավորությունները: ՀՀ հատկապես սահմանամերձ և հեռավոր տարածաշրջանների գյուղական բնակավայրերի զարգացման համար առանձնակի նշանակություն ունեն հեռավորությունը մարզկենտրոնից և տարածաշրջանային կենտրոններից:

ՀՀ գյուղական բնակավայրերն ըստ քաղաքային բնակավայրերից ունեցած հեռավորության և ազդեցության աստիճանի կարելի է բաժանել երեք խմբի.

**1. Մայրաքաղաք Երևանի և միաժամանակ մարզկենտրոնների ու այլ քաղաքների ազդեցության գոտում գտնվող գյուղական բնակավայրեր:** Այս խմբի մեջ մտնում են Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի մեջ մտնող տարածաշրջանների գյուղերը, որոնք ընկած են Երևանից մինչև 50 կմ շառավղային գոտում և ունեն Երևանի հետ մինչև մեկ ժամյա տրանսպորտային մատչելիություն: Մրանք առավելապես գյուղատնտեսական գործառույթ իրականացնող մեծ, խոշոր և գերխոշոր գյուղեր են, որոնց գլխավոր խնդիրներից մեկը Երևանին և մերձակա քաղաքային բնակավայրերին գյուղատնտեսական մթերքներով ապահովելն է, իսկ արդյունաբերական ձեռնարկություններին՝ համապատասխան հումքով: Այս գոտում գտնվող գյուղերի մեծ մասն ունեն աշխատանքային, արտադրական, մշակութային-կենցաղային սերտ կապեր Երևանի և մարզկենտրոնների հետ, իսկ շատ գյուղեր՝ անմիջական տրանսպորտային կապ մայրաքաղաքի հետ: Գյուղական բնակավայրերի խտությունն այս գոտում ամենաբարձրն է հանրապետությունում [4]: Գյուղերն հիմնականում տեղաբաշխված են Երևան-Վաղարշապատ-Արմավիր, Երևան-Արտաշատ-Արարատ և Երևան-Սևան ավտոճանապարհների և երկաթուղագծերի երկայնքով:

**2. Մարզկենտրոնների և միաժամանակ տարածաշրջանային կենտրոնների ազդեցության գոտում գտնվող գյուղեր:** Մրանք Գյումրի, Վանաձոր, Գավառ, Իջևան, Կապան, Եղեգնաձոր մարզկենտրոնների և տարածաշրջանային կենտրոնների ազդեցության գոտում գտնվող գյուղերն են, որոնք ընկած են նշված քաղաքներից առավելագույնը 25-30 կմ շառավղային գոտում: Նախորդ գոտու համեմատությամբ այստեղ գյուղերի արտադրական, աշխատանքային, կենցաղային և մշակութային կապերը մարզկենտրոնների և տարածաշրջանային կենտրոնների հետ համեմատաբար թույլ է, վերջիններիս արտադրատնտեսական ներուժի կրճատման պատճառով: Մինչև 1990-ական թվականներն այս գոտում, հատկապես Վանաձորի և Գյումրու մերձակա գյուղերը, զարգանում էին վերջիններիս արդյունաբերական զարգացման շնորհիվ՝ նպաստելով դրանց ազդեցության երկրի ձևավորմանը: Ներկայումս այս գոտու գյուղերի և նշված քաղաքային բնակավայրերի միջև կապերը զարգանում են առավել մեծ չափով վարչական և սոցիալառողջապահական խնդիրների առումով, միաժամանակ մարզկենտրոնները և տարածաշրջանային կենտրոնները շրջակա գյուղական բնակավայրերի համար կատարում են կազմակերպիչ-կորիզի գործառույթ՝ իրավական, սոցիալական, առողջապահական և կենցաղային տարբեր բնույթի ծառայությունների կազմակերպման համար:

**3. Տարածաշրջանային կենտրոնների և այլ քաղաքների ազդեցության գո-**

**տում գտնվող գյուղեր:** Մրանց վրա տարածաշրջանային կենտրոնների ազդեցությունը համեմատաբար թույլ է: Քաղաքների հետ այս գյուղերի կապերի ինտենսիվությունը միատեսակ չէ և պայմանավորված է տեղանքի ռելիեֆային և տրանսպորտային պայմաններով: Բացի այդ այս խմբի գյուղերի վրա իրենց ազդեցությունն ունեն նաև մերձակա այլ քաղաքային բնակավայրեր, որոնք, ճիշտ է, չունեն վարչական գործառույթ, սակայն իրենց որոշակի արտադրատնտեսական ներուժով և տարաբնույթ այլ գործառույթներով իրենց ազդեցությունն են թողնում շրջակա գյուղական բնակավայրերի վրա: Այդպիսի քաղաքներից են Չարենցավանը, Բյուրեղավանը, Օտղկաձորը, Ջերմուկը, Քաջարանը, Ագարակը, Մեծամորը, Այրումը, Ախթալան և այլն:

Գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական իրավիճակի կարևորագույն բնութագիր է **բնակչության տարիքային կառուցվածքի պատկերը**, որը հնարավորություն է տալիս գնահատել բնակավայրի աշխատանքային ռեսուրսներով ապահովվածությունը և ներուժը, բնակչության թվաքանակի աճի հնարավորությունները և պլանավորել սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրներ: ՀՀ գյուղական համայնքներում բնակչության տարիքային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակչության թվաքանակի ավելացմանը համապատասխան նվազում է 65 և ավելի տարիք ունեցող մարդկանց տեսակարար կշիռը: Մինչև 100 մարդ ունեցող գյուղական համայնքներում այդպիսիք միջինը կազմում են 26.3 %, որը երկու անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշին, իսկ 1500-ից ավելի մարդ ունեցող գյուղական համայնքներում՝ 12 % [1, էջ 26-27]: Սա վկայում է փոքր գյուղական համայնքների բնակչության ծերանալու մասին: Գյուղական համայնքների բնակչության թվաքանակի ավելացմանը համապատասխան ավելանում է աշխատանքային տարիքի բնակչության տեսակարար կշիռը: Ամենաբարձր ցուցանիշն ունեն (63.19 %) 1500-ից ավելի մարդ ունեցող գյուղական համայնքները, որը խոսում է խոշոր գյուղական համայնքների զարգացման ավելի մեծ հնարավորությունների մասին: Տարիքային մյուս խմբերում (0-5 տարեկան և 6-15 տարեկան) գյուղական համայնքների բնակչության թվաքանակի փոփոխման հետ կապված որոշակի օրինաչափություն չի դիտվում: Միայն փաստենք, որ 0-15 տարեկան բնակչության տեսակարար կշիռն ամենացածրը մինչև 100 մարդ ունեցող համայնքներում է, որը ևս վկայում է այդ կարգի գյուղերում բնակչության միջին թվի կրճատման մասին [1, էջ 26-27] :

Գյուղական բնակավայրերի զարգացման կարևոր գործառույթներից է **ենթակառուցվածքներով ապահովվածությունը**: ՀՀ գյուղական համայնքների ենթակառուցվածքների կազմում առանձնահատուկ դեր ունեն ճանապարհները: Դրանց վատ վիճակը հանգեցնում է գյուղական համայնքների արտադրանքի իրացման բարդությունների և զգալի կորուստների: Գյուղական համայնքներում բիզնեսի զարգացումը պայմանավորված է նաև քիչ թե շատ բարվոք ճանապարհների առկայությամբ, որը հնարավորություն է ստեղծվում տնտեսության զարգացման և աղքատության հաղթահարման համար:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ գյուղական համայնքների 24.6 %-ը մայրուղուն և այլ համայնքներին միացնող ճանապարհների տեսակետից ունի շատ վատ, 31.7 %-ը՝ վատ, 35.1 %-ը՝ միջին, 8.2 %-ը լավ և 0.0 %-ը գերազանց վիճակ [1, էջ 79]: Ըստ բնակչության թվաքանակի ճանապարհային ապահովվածության լավ և միջին վիճակի առավել բարձր ցուցանիշ



ունեն 3501-5000 մարդ ունեցող գյուղական համայնքները (76.3%): Հանրապետության 116 գյուղական համայնքներում ճանապարհներն անանցանելի են ձմռան ամիսներին, որոնք առավել մեծ թիվ են կազմում Արագածոտնի (26 համայնք), Գեղարքունիքի (23 համայնք), Սյունիքի (19 համայնք) և Շիրակի (19 համայնք) մարզերում: Հանրապետության ներհամայնքային ճանապարհների վիճակը նույնպես բավարար գնահատել չի կարելի: Գյուղական 279 համայնքներում ներքին ճանապարհներն ընդհանրապես ծածկույթ չունեն, 421 համայնքներում ճանապարհները հիմնականում ծածկույթ չունեն և միայն 12 համայնքներում բոլոր ճանապարհները ասֆալտապատ են: Տավուշի և Վայոց ձորի մարզերում այդպիսի համայնքներ ընդհանրապես չկան, իսկ մյուս մարզերում դրանք խիստ սահմանափակ են (1-4 համայնք): Ներհամայնքային ճանապարհները բարվոք վիճակ ունեն ՀՀ գյուղական համայնքների միայն 20 %-ը [1, էջ 80]:

ՀՀ գյուղական համայնքների մոտ 30 %-ի (241 համայնք) տարածքով չեն անցնում միջհամայնքային կամ ներհանրապետական հասարակական տրանսպորտի միջոցներ՝ այսինքն այդ համայնքների համար մատչելի չեն հասարակական տրանսպորտի միջոցները և դրանցից օգտվելու համար բնակիչները պետք է անցնեն 3-ից մինչև 20 կմ ճանապարհ: Հանրապետության 51 գյուղական համայնք բոլոր օրերին տրանսպորտ չունեն [1, էջ 80]:

Ամփոփելով և ընդհանրացնելով կատարված վերլուծության արդյունքները կարող ենք առանձնացնել ՀՀ գյուղական բնակավայրերի (համայնքների) համալիրայի 7 տիպ:

**Առաջինը** մինչև 100 մարդ ունեցող մանր գյուղական բնակավայրերի տիպն է, որոնք կազմում են 56 բնակավայր կամ ՀՀ բնակելի գյուղերի 6.2 %-ը: Մրանք առավել մեծ թիվ են կազմում Սյունիքի (29 գյուղ), Շիրակի (11) և Լոռվա (6 գյուղ) մարզերում: Դրանց մի մասը հանդիսանում են ինքնուրույն համայնքներ և կատարում են նաև վարչական գործառույթ, մնացածները մտնում են այլ գյուղական համայնքների կազմի մեջ: Առավելապես ունեն գյուղատնտեսական նշանակություն, իսկ որոշներն էլ ժամանակին ստեղծվել են երկաթուղային կայարաններին, անտառտնտեսություններին, օդերևութաբանական կայաններին և այլ կառույցներին կից: Ունեն բարեկարգվածության ցածր մակարդակ, տրանսպորտային վատ ապահովվածություն: Շիրակի մարզում՝ այդպիսի գյուղերն առավելապես լեռնային բնակավայրեր են (բացառությամբ Մայիսյան, Ախուրյան, Ջաջուռ ե/կ կից ավանների), իսկ Սյունիքի և Լոռվա մարզերում դրանք ունեն բարձրաչափական տարբեր տեղադիրք և ընկած են ծովի մակարդակից 900-ից մինչև 2100 մ բարձրությունների վրա: Տարաբնույթ ծառայությունների և կենցաղային սպասարկման տեսակետից այս խմբի գյուղերն ամբողջությամբ կախված են մերձակա ավելի մեծ գյուղերից (համայնքային կենտրոններից) կամ էլ քաղաքային բնակավայրերից: Մեկ բնակչի հաշվով ապահովվածությունը հողային ռեսուրսներով հանրապետության միջինից բարձր է ավելի քան 10 անգամ:

Աշխարհագրական ոչ բարենպաստ դիրքի ու տեղադիրքի և տրանսպորտային վատ ապահովվածության պատճառով այս տիպի գյուղերի մեծ մասի վրա շատ թույլ է կամ գրեթե բացակայում է մարզկենտրոնների կամ այլ քաղաքների ազդեցությունը: Տարածաշրջանային նշանակության առումով առանձին գյուղեր համարվում են սահմանամերձ: Այս տիպի գյուղեր չկան Արարատի և Արմավիրի մարզերում, իսկ Գեղարքունիքում, Կոտայքում, Վայոց ձորում և Տավուշում

դրանք մեկական կամ երկուսն են:

**Երկրորդ** 101-200 մարդ ունեցող փոքր գյուղերի տիպն է, որոնք կազմում են հանրապետությունում բնակելի գյուղերի 9.4 %-ը (85 գյուղ): Բացառությամբ Արարատի մարզի այս տիպի գյուղեր կան մնացած բոլոր մարզերում, սակայն դրանք առավել մեծ թիվ են կազմում Սյունիքի (25), Լոռու (14), Արագածոտնի (13) և Շիրակի (12) մարզերում): Մրանք առավելապես գյուղատնտեսական գործառույթ իրականացնող և մեծամասամբ համայնքի կարգավիճակ ունեցող բնակավայրեր են: Շիրակի մարզում այս տիպի գյուղերը տարածված են հիմնականում Աշոցքի սարահարթում՝ Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, ունեն գլխավորապես անասնապահական մասնագիտացում և բարձր լեռնային բնակավայրեր են: Սյունիքի մարզում դրանք առավելապես մեծ թիվ են կազմում Կապանի և Սիսիանի (6 գյուղ) տարածաշրջաններում: Սիսիանի տարածաշրջանում դրանք հիմնականում լեռնային են, իսկ Կապանում՝ ունեն աշխարհագրական դիրքի և տեղադիրքի բազմազանություն: Տարածաշրջանային առումով դրանց մեծ մասը սահմանամերձ բնակավայրեր են:

Լոռու մարզում այս տիպի գյուղերի մեծ մասը տարածված են Տաշիրի և Թումանյանի տարածաշրջանում և ունեն անասնապահական-երկրագործական մասնագիտացում, Արագածոտնի մարզում՝ անասնապահական-այգեգործական և ոչխարաբուծական:

Նախորդի տիպի նման գյուղական բնակավայրերի այս խումբը ևս առանձնանում է մեկ բնակչի հաշվով հողային ռեսուրսների առավել բարձր ապահովվածությամբ, տարաբնույթ ծառայությունները և կենցաղային սպասարկումը իրականացվում է մերձակա ավելի խոշոր գյուղերի կամ համայնքային կենտրոնների կողմից, թույլ է մարզկենտրոնների և քաղաքային այլ բնակավայրերի ազդեցությունը:

**Շրորդ** տիպին են պատկանում 201-500 մարդ ունեցող գյուղերը, որոնք կազմում են ՀՀ գյուղերի գրեթե 19 %-ը (170 գյուղ): Մրանց ճնշող մեծամասնությունը նույնպես միագործառույթային է: Նախորդ երկուսից տարբերվում են տրանսպորտային քիչ թե շատ լավ և կայուն պայմաններով, որը նպաստում է գյուղերի տնտեսա-արտադրական, սոցիալական, մշակութային և կենցաղային սպասարկման հարցերի կազմակերպմանը: Հիմնականում համարվում են համայնքային կենտրոններ: Ունեն հողօգտագործման և տնտեսական զարգացման ավելի լավ հնարավորություններ քան նախորդները, սակայն վերջին երկու տասնամյակում ստեղծված սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական իրավիճակի պատճառով այս տիպի գյուղերի զգալի մասն անցել են նախորդ խումբը: Տարածման հիմնական շրջաններն են նախալեռնային և լեռնային շրջանները և շատ սահմանափակ տարածում ունեն Արարատի և Արմավիրի մարզերում (4-ական գյուղ): Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Լոռու և Վայոց ձորի մարզերում և Սիսիանի տարածաշրջանում այս տիպի գյուղական բնակավայրերը մեծամասամբ լեռնային և բարձրլեռնային են, իսկ դրանց մի մասն էլ սահմանամերձ են: Տավուշի մարզում և Կապանի ու Մեղրու տարածաշրջաններում այս տիպի գյուղերն ունեն նախալեռնային հարթավայրային տեղադիրք, տարածաշրջանային բնութագրի առումով՝ սահմանամերձ:

Վերջին երկու տասնամյակում այս տիպի գյուղերում նկատելիորեն փոխվել է բնակչության սեռատարիքային կառուցվածքը՝ ավելացել է մեծահասակ

բնակչության և միայն ծերերից բաղկացած ընտանիքների տեսակարար կշիռը: Մրանց սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտում են ոչ նպաստավոր աշխարհագրական դիրքը, մարզկենտրոններից և քաղաքային բնակավայրերից ունեցած համեմատաբար մեծ հեռավորությունը և վերջիններիս թույլ ազդեցությունը: Արագածոտնի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում ձմեռային ամիսներին այս գյուղերից մի մասն ունենում են տրանսպորտային կապի խնդիրներ՝ ճանապարհները դառնում են անանցանելի:

**Չորրորդ տիպը** 501-1000 մարդ ունեցող գյուղերն են, որոնք թվաքանակով գրեթե հավասար են նախորդին: Առավել մեծ տարածում ունեն Արագածոտնի, Շիրակի, Լոռվա և Գեղարքունիքի լեռնային և բարձրլեռնային շրջաններում, սահմանափակ տարածում՝ Արմավիրի և Վայոց ձորի մարզերում: Առավելապես գյուղատնտեսական գործառույթ իրականացնող այս գյուղերը միաժամանակ նաև համայնքային վարչական կենտրոններ են: Գտնվելով առավել նպաստավոր աշխարհագրական, տեղադիրքային և տրանսպորտային պայմաններում այս տիպի գյուղերի մի մասը իրականացնում է նաև սպասարկման որոշ գործառույթներ, սակայն մշակութային և կենցաղային սպասարկման առումով զգալիորեն կախված են մերձակա խոշոր գյուղերից և քաղաքային բնակավայրերից: Եթե նախկինում այս խմբի բնակավայրերի որոշ մասը զարգանալով համալրում էր հաջորդ գյուղերի խումբը, ապա ստեղծված սոցիալ ժողովրդագրական և տնտեսաարտադրական իրավիճակի պատճառով վերջին երկու տասնամյակում այս տիպի գյուղական բնակավայրերից տասնյակներով անցել են նախորդ խումբը և 1970-ական թվականների համեմատությամբ մոտ 10 %-ով նվազել է այս տիպի գյուղերի տեսակարար կշիռը ՀՀ-ում: Արագածոտնի, Շիրակի, Կոտայքի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում այս խմբի գյուղերն ունեն մեծամասամբ անասնապահական-երկրագործական ուղղվածություն, իսկ մնացած շրջաններում՝ այգեգործական-տավարաբուծական: Սոցիալ-տնտեսական զարգացման և առաջընթացի համար ներկայիս պայմաններում խոչընդոտող գործոններ են հանդիսանում գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման ոչ բարձր արդյունավետությունը, մարզկենտրոններից և քաղաքային այլ բնակավայրերից կրած թույլ ազդեցությունը, առկա ժողովրդագրական իրավիճակը և ենթակառուցվածքային տարրերի ոչ բավարար զարգացվածությունը:

**Հինգերորդը** 1001-3000 մարդ ունեցող գյուղերն են, որոնք կազմում են ՀՀ գյուղական բնակավայրերի 35 %-ից ավելին: Մրանց շուրջ 36 %-ն գտնվում են Արարատի և Արմավիրի մարզերում, իսկ 49.2 %-ը՝ Արարատի, Արմավիրի և Շիրակի մարզերում: Քիչ են Սյունիքի մարզում: Առավելապես ընկած են մայրաքաղաք Երևանի, մարզկենտրոնների և քաղաքային այլ բնակավայրերի ազդեցության գոտում, մայրուղիների և ջրանցքների երկարությամբ կամ դրանց մերձակայքում, հիմնականում հարթավայրային և նախալեռնային-հարթավայրային տարածքներում (Արարատյան, Շիրակի և Լոռվա դաշտերում), իսկ Գեղարքունիքի, Կոտայքի և Արագածոտնի մարզերում՝ նաև լեռնային և բարձր լեռնային շրջաններում: Շատ գյուղական համայնքներ գյուղատնտեսական և վարչական գործառույթից բացի իրականացնում են սպասարկման, սոցիալ-մշակութային, առողջապահական և այլ գործառույթներ: Գյուղերի մի մասում խորհրդային տարիներին ստեղծվել են արտադրական-տնտեսական կառույցներ և արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղեր, որոնք ներկայումս հիմնականում չեն գոր-

ծում: Արարատի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերի որոշ գյուղերում գործում են գյուղատնտեսական հումքի ընդունման և վերամշակման ձեռնարկություններ: Վերջին երկու տասնամյակում այս գյուղերում լիարժեք չեն օգտագործվում առկա տնտեսական բազան և մարդկային ռեսուրսները, ինչը հանգեցրել է գյուղերի միջին մարդաշատության նվազմանը: Եթե 1970-ական թվականներին սրանց բաժին էր ընկնում ՀՀ գյուղական բնակչության 53-54 %-ը, ապա ներկայումս՝ 45%-ը:

Այս տիպի գյուղական բնակավայրերի զգալի մասն ունեն հատակագծման և կառուցապատման գլխավոր սխեմաներ, գազամատակարարում, ջրմուղ և կոյուղի, բարեկարգման մակարդակը բավարար է: Կառուցապատման համար բնորոշ է բազմահարկ տների և հասարակական շենքերի զգալի տեսակարար կշիռը: Գյուղերի մեծ մասը մշտական տրանսպորտային կապ ունեն մարզկենտրոնների, իսկ որոշ մասն էլ՝ Երևանի հետ: Տարածաշրջանային առումով առավել մեծ թիվ են կազմում ոչ սահմանամերձ գյուղական բնակավայրերը:

**Վեցերորդ տիպին** են պատկանում 3001-5000 մարդ ունեցող գյուղական համայնքները, որոնք թվաքանակով 69-ն են (7.5 %): Բացակայում են Սյունիքի և Վայոց ձորի մարզերում և առավել մեծ թվաքանակ ունեն Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում: Սրանք հիմնականում բազմագործառույթային գյուղական համայնքներ են, ունեն նպաստավոր աշխարհագրական դիրք և տեղադիրք, կառուցապատման և բարեկարգման պայմանները համեմատաբար բարենպաստ են: Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերում, բացառությամբ Բյուրական, Արագած, Կարբի և Կոշ գյուղերի, դրանք հարթավայրային գյուղեր են, ծովի մակարակից մոտ 850-ից 1100 մ բարձրությունների վրա: Ոչ սահմանամերձ են և ունեն խաղողագործական, այգեգործական և բանջարաբուծական մասնագիտացում: Մի շարք գյուղերում կան գյուղատնտեսական հումքի մթերման և վերամշակման ձեռնարկություններ: Շիրակում, Կոտայքում և Գեղարքունիքում դրանք հիմնականում նախալեռնահարթավայրային և լեռնային տեղադիրք ունեն՝ հացահատիկայինների, կարտոֆիլագործության և տավարաբուծության ճյուղերի մասնագիտացումով: Մինչև 1990-ական թվականների կեսերը սրանցից շատերը գյուղատնտեսության և արդյունաբերության որոշ ճյուղերի ինտեգրացման շնորհիվ ձեռք էին բերել ագրարային-արդյունաբերական բնակավայրերին բնորոշ գծեր՝ դառնալով կոլտնտեսային և սովխոզային խոշոր բնավաններ, իրենց ենթակառուցվածքային համապատասխան տարրերով: Ներկայումս սրանք կառուցապատվում են մշակված գլխավոր հատակագծերին համապատասխան: Ունեն մշակույթի ժամանակակից տներ, բուժփմնարկներ, առևտրի և սպասարկման այլ ծառայություններ: Շատ դեպքերում շրջակա ավելի փոքր բնակավայրերի համար հանդիսանում են միջհամայնքային սպասարկման տեղական կենտրոններ:

Ներկայումս գյուղական բնակավայրերի այս տիպի համար սոցիալ-տնտեսական կարևորագույն հիմնախնդիր է համարվում խորհրդային տարիներին ստեղծված արտադրատնտեսական հզոր ներուժի վերականգնումը՝ գյուղատնտեսության ինտենսիվացումը և հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, կրթական, առողջապահական, մշակութային, կենցաղսպասարկման և այլ հաստատությունների գործունեության լիարժեք վերականգնումը և այդ ամենի շնորհիվ աշխատատեղերի ստեղծումը: Հակառակ դեպքում դրանց զգալի մասը կկորցնի իր գլխավոր արտադրական ներուժի՝ մարդկային ռեսուրսների մի մա-

սը և կունենան ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրներ:

**Վերջին՝ յոթերորդ տիպին** են պատկանում 5001-ից ավելի մարդ ունեցող գյուղական համայնքները, որոնք թվաքանակով շատ չեն (37), սակայն դրանց բաժին է ընկնում ՀՀ գյուղական բնակչության 19 %-ից ավելին: Այդպիսի գյուղեր չկան Սյունիքի և Տավուշի մարզերում, իսկ առավել մեծ թիվ են կազմում Գեղարքունիքում, Կոտայքում և Արարատում: Դրանցից Փարաքար, Այնթափ, Նոր Խարբերդ, Մխչյան, Առինջ, Ջովունի, Նոր Գեղի, Պռոշյան, Ջրվեժ, Քասախ և Օշական համայնքներից որոշներն ընկած են մայրաքաղաքի անմիջական մերձակայքում և հեռանկարում կարող են դառնալ Երևանի թաղամասեր, իսկ մյուսները գտնվում են Երևանից 10-15 կմ շառավղային գոտում: Հասկանալի է, որ այս բնակավայրերի զարգացման վրա էական դեր ունի Երևանի ազդեցությունը: Արագածավան, Նոր Խարբերդ, Գուգարք և Ախուրյան գերխոշոր գյուղերից առաջին երկուսն ունեցել են քաղաքատիպ ավանի կարգավիճակ, իսկ վերջին երկուսը եղել են շրջկենտրոններ և այժմ ևս որոշակիորեն պահպանում են տարածաշրջանային կենտրոնների այդ կարգավիճակը՝ հանդիսանալով սպասարկման տեղական կենտրոններ և տարաբնակեցման հենակետեր շրջակա գյուղական բնակավայրերի համար:

Արարատի և Արմավիրի մարզերի մնացած գյուղերը (Արարատ, Ավշար, Ոսկետափ, Մրգաշատ, Նալբանդյան, Սարդարապատ), չնայած գտնվում են մայրաքաղաքից ավելի մեծ հեռավորության վրա, սակայն ունենալով նպաստավոր աշխարհագրական դիրք (ընկած են գլխավոր մայրուղիների վրա կամ դրանց մերձակայքում, գտնվում են տարածաշրջանային կենտրոններից և մարզկենտրոններից ոչ մեծ հեռավորության վրա) և ոռոգելի երկրագործության համար առավել բարենպաստ ագրոկլիմայական ռեսուրսներ ունեցող տարածքներում, օգտվելով նաև մերձակա քաղաքային բնակավայրերի (Արարատ, Արմավիր) արդյունաբերական ներուժի հնարավորություններից, դարձել են գերխոշոր գյուղական բնակավայրեր:

Գեղարքունիքի մարզի բոլոր 12 գերխոշոր գյուղերն այդպիսին դարձել են ոչ միայն նպաստավոր դիրքի և ագրոկլիմայական համեմատաբար բարենպաստ ռեսուրսների շնորհիվ, այլ կարևոր դեր են ունեցել նաև Սևանա լճի ձկնային ռեսուրսները, հանրապետության մյուս տարածաշրջանների համեմատությամբ գյուղական բնակչության բնական աճի առավել բարձր ցուցանիշները և դեռևս խորհրդային տարիներին (1960-ական թվականներից սկսած) ձևավորված և այժմ էլ շարունակվող արտագնա աշխատանքից ստացող բնակչության որոշ հատվածի եկամուտները:

Այս խմբի մնացած բնակավայրերի (Մալիշկա, Մեծավան, Օձուն, Գառնի, Ագատան) համար ևս իրենց կարևոր դերն են ունեցել նպաստավոր աշխարհագրական դիրքը և բնատնտեսական ներուժի բաղադրիչները: Մակայն վերջիններիս համար պակաս կարևոր նշանակություն չի ունեցել նաև պատմական գործոնը:

Չնայած որ ՀՀ գերխոշոր գյուղական համայնքները գտնվում են բարձրաչափական տարբեր տեղադիրքերում (ծովի մակարդակից 825-ից 2100 բարձրությունների վրա), սակայն դրանք ընկած են հարթավայրային կամ բլրահարթավայրային մակերևույթի վրա և համարվում են նախալեռնահարթավայրային, լեռնային և բարձրլեռնային համայնքներ:

Այս տիպի գյուղերում մեկ շնչի հաշվով հողային ռեսուրսներով ապահովվածությունն ամենացածր է հանրապետությունում և ՀՀ միջին ցուցանիշից պակաս է մոտ 2 անգամ: Տարածաշրջանային նշանակության առումով դրանք բոլորն էլ ոչ սահմանամերձ բնակավայրեր են:

Շուկայական տնտեսական հարաբերությունների անցնելուց հետո սոցիալ-տնտեսական առավել խոշորամասշտաբ հիմնախնդիրներ են առաջացել ՀՀ գյուղական բնակավայրերի այս տիպում: Պլանային-պետական տնտեսական համակարգի պայմաններում ձևավորված արտադրատնտեսական կառույցների և ենթակառուցվածքային տարրերի գործունեության խաթարումը էականորեն նվազեցրել է այս տիպի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական ներուժի օգտագործման հնարավորությունները. գրեթե չեն գործում խորհրդային տարիներին ստեղծված արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղերը, էականորեն նվազել է գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման մակարդակը և արդյունավետությունը, ոչ լիարժեք կամ մասամբ են գործում սոցիալ-մշակութային, առողջապահական ծառայությունների ոլորտի հաստատությունները: Եթե մինչև 1990-ական թվականներն այս տիպի գյուղերի բնակչության զբաղվածության կառուցվածքում գյուղատնտեսության բաժինը չէր անցնում 50 %-ից, ապա այժմ այն անցնում է 80 %-ից, /գյ.համ. էջ 46/ և խիստ նվազել է տնտեսության մնացած ոլորտներում զբաղվածների տեսակարար կշիռը: Էականորեն մեծացել է գյուղական համայնքների այս խմբում բնակչության մշտական և առկա թվաքանակի տարբերությունը (առանձին գյուղերում այն հասնում է 1500-2000 մարդու): Այս ամենը նպաստում են նշված գյուղերից արտագնացության և արտագաղթի ծավալների մեծացմանը, բնակչության սեռատարիքային կառուցվածքի խախտմանը և սոցիալ-տնտեսական առկա հիմնախնդիրների խորացմանը:

Ամփոփելով կատարված վերլուծության արդյունքները կարող ենք եզրակացնել, որ.

1. ՀՀ գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական համալիրային տիպերի առանձնացումը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել գյուղական տարաբնակեցման համակարգում բնակավայրերի առանձին խմբերին բնորոշ սոցիալ-տնտեսական բնութագրիչների և առկա խնդիրների մասին,

2. Առաջիկա տարիների ընթացքում գյուղական բնակավայրերում տեղի ունեցող բազմաբնույթ տեղաշարժերը կարող են փոփոխություններ մտցնել վերը բերված տիպերի բնութագրական առանձնահատուկ կողմերի մեջ, որոնց ուսումնասիրումը թույլ կտա բացահայտել գյուղական բնակավայրերի առանձին տիպերի և ողջ գյուղական տարաբնակեցման համակարգում տեղի ունեցող գործընթացների էությունը և զարգացման միտումները,

3. Շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորումը զգալի չափով փոխել է ՀՀ գյուղական բնակավայրերի տարբեր խմբերին բնորոշ սոցիալ-տնտեսական պատկերը և ծնել հիմնախնդիրներ, որոնց լուծումից է կախված գյուղական բնակավայրերի զարգացման հեռանկարը,

4. ՀՀ գյուղական բնակավայրերի համալիրային սոցիալ-տնտեսական տիպերի առանձնացումը հիմք է հանդիսանում գյուղական տարաբնակեցման զար-

գացման գործընթացների կազմակերպման և կառավարման գիտականորեն հիմնավորված ծրագրերի մշակման և իրականացման համար:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դարբինյան Ա., Եղիազարյան Բ. և ուրիշներ, *Հայաստանի գյուղական համայնքները, տեղեկատվական ապահովում, վերլուծություններ և տիպաբանություններ*, Ե., 2007 թ.
2. *ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011*, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ Ե. 2011 թ.
3. *Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2011*, ՀՀ ԱՎԾ, Ե. 2011 թ.
4. Պոտոսյան Ա., *ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման առանձնահատկությունները որպես լեռնային երկրի*, «Ագրո-գիտություն» գիտական ամսագիր, 2012, թիվ 3-4, էջ 162-169

**Аксел Подосян, Ваган Потосян – *Комплексная типология сельских поселений РА как основа их перспективного развития.*** – Для определения современных тенденций и перспектив развития сельских поселений РА необходимо провести комплексную типологию. С этой целью учитываются все те характерные черты (признаки) сельских поселений, которые находятся в причинно-следственной связи и дают возможность определить роль каждого поселения в иерархии структуры расселения. Подобная типология дает возможность получить данные для научного обоснования дальнейшего планирования сельского расселения и совершенствования управления процессами развития расселения.

**Aksel Potosyan, Vahan Potosyan – *Complex typology of rural settlements as a basis of their perspective development.*** – In order to define the modern trends and perspectives of development of rural settlements in RA, its necessary to work out a complex typology. All the features of rural settlements being in reason-result relations and giving opportunity to define the role of each settlement in hierarchy of structure of settlements' distribution are taken into account.

This typology is giving opportunity to get data for planning rural settlements' distribution and improve the processes of its' regulation.

# ՈՒՍՈՒՄՆ ԱՄԵԹՈՂԱԿԱՆ

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԵՎ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ

### ՎԱՆԴՈՍ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ, ԱՆՆԱ ՆԱՍԻԼՅԱՆ

Արդի ժամանակներում աճող սերնդի առողջական վիճակը մեծ մտահոգություն է առաջացնում ինչպես առանձին երկրների դեկլավարության, այնպես էլ միջազգային բազմաթիվ կազմակերպություններում: Տարեցտարի ավելանում են տարբեր հիվանդությունների քանակը, բազմաթիվ հիվանդություններ սկսել են ի հայտ գալ ավելի վաղ հասակում: Մասնագետների հետազոտությունները բացահայտել են դրանց պատճառները (աղտոտված մթնոլորտ, ծանրաբեռնված ուսումնական ծրագրեր, ժամանակակից տեխնոլոգիաներ, սնունդ, ապրելաձև և այլն): Առաջարկված են նաև այս խնդրի լուծման տարբեր ուղիներ, որոնցից մեկը և կարևորը ֆիզիկական կուլտուրայի նպատակաուղղված դերն է առողջ ապրելակերպի ձևավորման գործում: Լուրջ ուշադրություն է դարձվում նաև մանկավարժական տեխնոլոգիայի կիրառման խնդիրներին: Այս խնդիրներից զերծ չի մնացել նաև Հայաստանը, և, թեպետ ներկա ժամանակաշրջանում ֆիզիկական կուլտուրան և սպորտը դարձել են ՀՀ քաղաքականության առաջնային ուղղություններից, այնուամենայնիվ հնարավոր չէ թաքցնել, որ հանրապետության երիտասարդության առողջության մակարդակը գտնվում է ոչ բարվոք վիճակում, որն իր անբարենպաստ ազդեցությունն է թողնում երկրի տնտեսության, արտադրության, գիտության, պաշտպանության և այլ ոլորտների զարգացման վրա:

Փաստորեն ժամանակակից կրթական համակարգը, պահանջելով սովորողներից մեծ էներգոծախսեր, որպես վճարման գին վերցնում է նրանց առողջությունը: Այս խնդրի լուծման կարևորագույն ուղղություններից է անցումը զուտ առողջության պահպանման և ամրապնդման կողմնորոշումներից դեպի նորամուծական տեխնոլոգիաների ներդրումը, որոնք կարող են ձևավորել սովորողների շահադրդումը դեպի առողջ ապրելակերպ: Կապված վերջիններիս հետ՝ սպորտային մանկավարժության առաջնային հիմնախնդիրն է երկրի բնակչության և հատկապես աճող սերնդի ֆիզիկական դաստիարակության առավել արդյունավետ տեխնոլոգիաների որոնումը և ներդրումը մասնագիտական գործունեության մեջ:

Սովորողների առողջությունը ձևավորող և զարգացնող մանկավարժական բազմաթիվ տեխնոլոգիաներ մշակված են և կիրառվում են ուսումնական գործընթացներում: Դրանց անփոփոխ օգտագործման համար անհրաժեշտ է ճշտել, թե որքանով է գործող տեխնոլոգիան համապատասխանում կոնկրետ ուսումնական հաստատության առողջության պահպանման ծրագրերին:



Գիտական հետազոտությունների տվյալները և գործնական փորձը թույլ է տվել Ժ. Տորիբաևային բացահայտել այս հիմնախնդրի զարգացման հետևյալ մոտեցումները<sup>313</sup>:

1. Սովորողների առողջության վատացումը, որն ուղղակիորեն կապված է կրթական գործունեության կազմակերպման հետ, դեֆորմացնում է շահադրդող և իմաստային ոլորտը, առաջացնում է քրոնիկ անբավարարվածություն և հոգնածություն, նպաստում է վնասակար սովորույթների առաջացմանը, և արդյունքում թուլանում է առողջությունը: Ելնելով դրանից՝ առաջ է մղվում այնպիսի մանկավարժական խնդրի լուծում, որը, վերափոխելով կրթական համակարգը, կարող է խթանել սովորողների ակտիվությունը: Այստեղ անհրաժեշտ է բացահայտել սովորողի առողջության թաքնված ներուժերը:

2. Անհրաժեշտ է լայնացնել հիմնախնդրի դաշտը՝ «առողջապահպանական» խնդրից անցում կատարել դեպի «առողջաստեղծական» մանկավարժական գործունեությանը, ձևավորել «առողջության դպրոցի» մոդելը:

3. Անհրաժեշտ է անընդհատ կատարելագործել և բարեփոխել (թարմացնել) աշխատանքի մեթոդները, ձևերը, մանկավարժական տեխնոլոգիաները:

Մանակավարժական գրականությունում ներկայացված են մի շարք տեխնոլոգիաներ, սակայն, ելնելով ուսումնական գործընթացի որոշ առանձնահատկություններից և պահանջներից, կարելի է մշակել սեփական տեխնոլոգիան:

Այս դեպքում անհրաժեշտ է իմանալ որոշ մեթոդական պահանջներ, որոնք, օրինակ, շատ բազմակողմանի ներկայացրել է Ե. Դյատկովսկայան<sup>314</sup>: Նա գտնում է, որ անհրաժեշտ է առողջապահության և առողջ ապրելակերպի առաջընթացները սերտ կապել կրթական գործընթացի վերափոխումների հետ: Այս տեսանկյունից խիստ կարևոր է հաշվի առնել արդի կրթական համակարգի հարացույցները, այսինքն՝ բոլոր առողջապահական տեխնոլոգիաները պետք է լինեն կրթական ուղղվածության: Դրանք հատուկ մասնագիտական տեխնոլոգիաներ են, որոնք չեն փոխում սովորողների ուսումնաճանաչողական գործունեության էությունը, այլ ավելի շատ ուղեկցում են նրան՝ ռացիոնալ դարձնելով ուսումնական գործընթացի կազմակերպումը, բարձրացնելով սովորողների աշխատունակությունը, վերացնելով բժշկահոգեբանական խոչընդոտները: Հեղինակը առաջարկում է առողջապահական, կրթական տեխնոլոգիա, որն իրենից ներկայացնում է 3 բաղադրամասերից բաղկացած մեկ համալիր: Այդ բաղադրամասերն են՝ մանկավարժի կողմից օգտագործվող մանկավարժական տեխնոլոգիան, սովորողի վրա ոչ բարենպաստ ազդող տարբեր գործոնների նվազեցման հոգեբանամանկավարժական միջոցները և սովորողների մոտ առողջության կուլտուրայի դաստիարակման աշխատանքները: Հեղինակն առաջարկում է նաև անընդհատ վերահսկել տեխնոլոգիայի կիրառման գործընթացը և գնահատել դրա արդյունավետությունը:

Մեզ համար հետաքրքրություն են առաջացնում մասնավորապես այն տեխնոլոգիաները, որոնք սովորողների առողջությունը կապում են ֆիզիկական կուլտուրայի կրթական համակարգի հետ: Այսպես՝ ուսումնասիրելով ֆիզիկա-

<sup>313</sup> *Торыбаева Ж.З.*, О педагогических технологиях формирования здорового образа жизни школьников, // Педагогика, N5, 2012, с. 119-121

<sup>314</sup> *Дзятковская Е.Н.*, Здоровьесберегающий ресурс методической системы, Педагогика, N1, 2011, с.25-

կան կուլտուրայի կրթական տեխնոլոգիայի կիրառման հիմնախնդիրները՝ Ա. Ստեփանյանը առաջարկում է հետևյալ ուղիները՝ վերակառուցել կրթական համակարգը և կիրառել բազմապարֆիլ պատրաստության նորագույն տեխնոլոգիաներ և մեթոդոլոգիաներ: Ընդ որում՝ ֆիզիկական կուլտուրայի կրթության մեջ նա առաջարկում է կազմակերպչական մակարդակներ (առողջարարական և դաստիարակչական, պրոֆեսիոնալ, գիտական և նորարարության ներդրման մակարդակներ) և դրանց փոխկապակցվածություն: Ա. Ստեփանյանը կրթության որակը դիտարկում է որպես համալիր հասկացություն, որը բնութագրում է գործունեության բոլոր կողմերի միասնությունը՝ ռազմավարության մշակում, ուսումնական գործընթացի, մարքեթինգի, մենեջմենթի կազմակերպում, որտեղ առաջնայինը հանդիսանում է սովորողի մասնագիտական մակարդակը<sup>315</sup>: Ստեփանյանն անդրադարձել է նաև այս հարցին՝ կարևորելով նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կրթական գործընթացում: Սովորողների առողջությունը ձևավորող և զարգացնող տեխնոլոգիաներին են անդրադարձել նաև ռուս մասնագետները: Այսպես, արդեն նշված Ժ. Տորիբանան նշել է, որ առողջ ապրելակերպ ձևավորող տեխնոլոգիաները պետք է պարունակեն մի շարք բաղադրամասեր՝ ֆիզիկական, մտավոր, անհատական, սոցիալական, հոգևոր, զգացմունքային և այլն: Ընդ որում վերջինը ձևավորում է անհատի կայուն պահանջունքները, նույն թվում և առողջ ապրելակերպի պահանջունքը:

Առողջ ապրելակերպի մանկավարժական տեխնոլոգիաներին է անդրադարձել նաև Ռ. Կուրաշևը, որը գտնում է, որ առողջություն ձևավորող կարևոր ուղղություններից է ինքնադաստիարակումը, որի արդյունքում պետք է ձևավորվի արժեքավորված վերաբերմունք սեփական առողջության հանդեպ: Նման վերաբերմունքը պետք է ձևավորվի ուսումնական գործընթացում, և մանկավարժների կողմից այն պետք է ներկայացվի և դիտարկվի որպես հասարակության գերագույն արժեք: Առողջության արժեքը պետք է հիմնավորված լինի նրա կենսաբանական, սոցիալական, անհատական և հոգեբանական կարևորությամբ: Սովորողների մոտ նման վերաբերմունք ձևավորելու համար անհրաժեշտ է առողջարար գործունեությունը վերածել պահանջունքի: Դիտարկելով առողջությունը որպես ամբողջական գիտելիք մարդու մասին՝ ֆիզիկական կուլտուրայի դասավանդման տեխնոլոգիաները պետք է ներառեն նաև մշակութային ուսուցում: Այսպիսով՝ Ռ. Կուրաշևը գտնում է, որ սովորողների առողջության ձևավորումը և զարգացումը պետք է լինի անձի մշակութային զարգացման բոլոր մեխանիզմների միջոցով, որոնք գոյություն ունեն կոնկրետ ուսումնական հաստատության կրթական համակարգում<sup>316</sup>:

Հիմնվելով այս սկզբունքի վրա՝ Ռ. Կուրաշևը ներկայացրել է Բաշկիրիայի պետական համալսարանում մշակված «Սովորողի առողջության ձևավորման» փորձնական ծրագիրը: Այն բաղկացած է հետևյալ հինգ տեխնոլոգիական մոդուլներից.

1. առողջության կուլտուրայի և կենսագործունեության անվտանգության տեսական, մեթոդական հիմքեր,

<sup>315</sup> **Ստեփանյան Ա.**, Ֆիզիկուլտուրայի կրթության տեխնոլոգիաների կիրառման ուղիները, «Մանկավարժական միտք», N2-3, 2008թ., էջ 89-93

<sup>316</sup> **Курдашев Р.**, Организационно – педагогические предпосылки формирования культуры здоровья студентов в процессе физического воспитания, Педагогическое образование и наука, 2008, N9

2. սովորողի առողջ կերպարը և կենսառճը,
3. ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և մասնագիտական առողջության հոգեբանություն,
4. առողջության կուլտուրայի և կենսագործունեության անվտանգության ձևավորում,
5. առողջության կուլտուրայի ձևավորման գործընթացում առողջապահական տեխնոլոգիաներ:

Այս վերջին՝ հինգերորդ մտղուլը նախատեսում է ֆիզիկական կուլտուրայի և առողջապահականական նոր տեխնոլոգիաներ: Ինչպես նշում է հեղինակը, առաջարկված տեխնոլոգիայի գործնական կիրառումը բացահայտել է բարձր արդյունավետություն և դրական դինամիկա՝ ըստ երեք բաղադրամասերի՝ մտավոր, զգացմունքային և գործարար առողջություններ: Մ. Կորբինսկին, օգտագործելով Կուդաշևի սկզբունքները, առաջարկել է ֆիզիկական կուլտուրայի դասավանդման գործընթացում մտցնել նաև տեղեկատվական տեխնոլոգիաներ<sup>317</sup>:

Առողջապահականական տեխնոլոգիաներին է անդրադարձել նաև Ա. Վիրաբովան, ով որպես հիմք ընդունել է ուսումնական հաստատության ռեսուրսների առկայությունը, այսինքն՝ այն գործոնները, որոնք ազդում են առողջապահականական կրթական միջավայրի ձևավորման վրա: Առաջարկված տեխնոլոգիայի խնդիրներն են՝ առողջության պահպանումը, ամրապնդումը, զարգացումը և վերաբերմունքը առողջության հանդեպ: Որպես ռեսուրսներ՝ առաջարկված են մարդկային, նյութական, մանկավարժական, հոգեբանական, սոցիալական և ժամանակակից այլ գործոններ: Այս բոլորի համատեղման, համակարգման և կառավարման համար անհրաժեշտ են կառավարչական ռեսուրսներ, որոնք ուղղված են նշված ռեսուրսների համատեղ արդյունավետ օգտագործմանը: Հեղինակն առողջապահականական, կրթական համակարգի կայուն զարգացման համար կարևոր է համարում բոլոր նշված ռեսուրսների անընդհատ կատարելագործումը: Ա.Վիրաբովան գտնում է, որ կրթական համակարգի առողջապահականական տեխնոլոգիաների վերափոխումը առողջաստեղծականի պահանջում է լուրջ վերլուծություններ և մշտադիտարկումներ<sup>318</sup>:

Մշտադիտարկումներին, որպես սովորողների առողջությունը ձևավորող և զարգացնող տեխնոլոգիայի, անդրադարձել է Բեյնիշ Լանդան [7, էջ 118-124]: Նա նշում է, որ խիստ անհրաժեշտ են այնպիսի մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր է հաստատել, թե ուսումնական գործընթացի կազմակերպման ո՞ր ձևով կարելի է նպաստել սովորողների առողջության պահպանմանը և ամրապնդմանը: Եվ որպես առաջադրված հարցի պատասխան՝ նա առաջարկում է ֆիզիկական զարգացման և պատրաստվածության հանրահայտ ցուցանիշների մշտադիտարկումների, հետազոտությունների մեթոդիկա, որը թույլ կտա յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ընդունել ֆիզիկական դաստիարակության գործընթացին վերաբերող գիտականորեն հիմնավորված որոշումներ: Նախքան առաջարկված մշտադիտարկման տեխնոլոգիայի նկարագրությունը՝ հեղինակը բացահայտել է մի շարք հիմնախնդիրներ, որոնք նույնչափ կարևոր են մեր հանրապետության հանրա-

<sup>317</sup> *Корбинский М. Е.* с соавт., Проблемы внедрения информационных технологий в образовательный процесс вузов физической культуры, Материалы 9-го между. научного конгресса, Киев 2005, с. 905

<sup>318</sup> *Вирабова А. Р.,* Управление развитием здоровьесберегающей среды в школе на ресурсной основе, Педагогическое образование и наука, 2008, N 1, с. 84-89

կրթական համակարգի համար: Մասնավորապես նշված է, որ անհրաժեշտ է կրթական համակարգը համապատասխանեցնել սովորողների առողջական իրավիճակի հետ: Եվ այդ հարցի լուծման համար առաջ են գալիս 2 խոշոր չլուծված հիմնախնդիրներ: Դրանք են.

1. երկրի կառավարության կողմից առողջապահության և կրթության համար նախատեսված ֆինանսական միջոցների ռացիոնալ բաշխում և օգտագործում,
2. առողջապահությանը և կրթությանը վերաբերող ազգային նախագծերի արդյունավետության գնահատում՝ ըստ վերջնական արդյունքների և տարբեր չափորոշիչների:

Այս տեսանկյունից հետաքրքիր է հեղինակավոր փորձագետների կարծիքն այն մասին, որ ռուսական նորամուծական համակարգի ավելանեժ թերությունն այն է, որ գոյություն ունի զարմանալի անհամաչափություն՝ ներդրված միջոցների և ստացված արդյունքների միջև<sup>319</sup>: Կարծում ենք՝ հարկ չկա կասկածի ենթարկել այն փաստը, որ ՀՀ-ում այս խնդիրն ավելի վատ վիճակում է թեկուզ այն պարզ պատճառով, որ պետք է նախատեսված ֆինանսական միջոցները ՌԴ-ի համեմատ զգալի ցածր են:

Ազգային նախագծերի իրականացման համար նախատեսված միջոցները պետք է ներդրվեն սպորտային օբյեկտների և բժշկական կենտրոնների կառուցման, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնավարժների, մարզիչների, ուսումնական հաստատությունների բժշկական համակարգի աշխատանքի խրախուսման մեջ, և ներդրման արդյունավետությունը պետք է գնահատվի սովորողների ֆիզիկական զարգացման չափորոշիչների միջոցով, որը կարելի է իրականացնել հարցման (թեստավորման) միջոցով: Որպես հիմնական գործոններ առաջարկում ենք թեստային առաջադրանքների որակական և քանակական ցուցանիշներ, որոնք կարող են խմբավորված լինել չորս բաժիններում՝ ընդհանուր բաժին, ֆիզիկական զարգացում, գործառնական և ֆիզիկական պատրաստվածություն:

Աշակերտների առողջության թեստավորման ցուցանիշները մտցվում են մեր կողմից մշակված <<Սովորողների ֆիզիկական զարգացման ցուցանիշների գնահատում>> քարտի մեջ, որ ներկայացված է <<Ֆիզիկական կուլտուրայի միջոցով սովորողների առողջության շարունակական գնահատման փաստաթղթերի փաթեթում>>:

Այսպիսով՝ նշված մշտադիտարկման միջոցով կարելի է վերահսկել նորամուծական կրթական յուրաքանչյուր տեխնոլոգիայի արդյունավետությունը: Առաջարկում ենք նաև մտցնել այդ տեխնոլոգիան ուսումնական ձեռնարկների մեջ և համաձայն այդ տեխնոլոգիայի՝ կազմակերպել մանկավարժների որակական բարձրացման ուսուցում, ինչը հնարավորություն կտա մանկավարժին, ելնելով իրավիճակից, ցուցաբերել ստեղծագործական մոտեցում:

Այս խնդրին են անդրադարձել նաև առողջապահության մասնագետները: Այսպես առողջապահականական նմանատիպ տեխնոլոգիա է առաջարկել նաև բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ռևոն<sup>320</sup>:

<sup>319</sup> *Ландя Бейниш*, Мониторинг физического развития и физической подготовленности школьников, Народное образование, N8, 2008, с. 118-124

<sup>320</sup> *Рево В.*, Паспорт здоровья как инструмент здоровьесберегающей технологии, Народное образование, N8, 2008, с. 193-195

Հեղինակի առաջարկած մոդելը իրենից ներկայացնում է «սովորողի առողջության անձնագիր», որը, որպես տեխնոլոգիական գործիք, բացի ընդհանուր տվյալներից, պետք է պարունակի նաև առողջացման, կանխարգելման անհատական կոնկրետ փուլային ծրագիր և անհրաժեշտության դեպքում մի շարք այլ բաղադրամասեր: Վ. Ռևոն նաև նշում է, որ առողջության պահպանման վատ արդյունքների պատճառը դրա համար նախատեսված ֆինանսական միջոցների անարդյունավետ օգտագործումն է: Եվ նման իրավիճակի փոփոխման համար նա առաջարկում է առողջության ախտորոշման, կանխարգելման, վերականգնման, պահպանման և ամրապնդման ինտենսիվ համակարգային տեխնոլոգիա: Այդ տեխնոլոգիաներն են «սովորողի առողջության անձնագիր» բուն իմաստը, որոնց արդյունքում յուրաքանչյուր սովորողի համար նախատեսված են առողջացման անհատական ծրագրեր:

Սովորողների առողջության անձնագրման ծրագիրը պետք է համապատասխանի հետևյալ երեք պայմաններին՝ անվտանգություն, վստահելիություն և արդյունավետություն: Անձնագրացումը թույլ կտա ստեղծել տվյալների կենտրոնացված համակարգ, որի միջոցով կարելի է իրականացնել սովորողների առողջության սերտիֆիկացման և ստանդարտացման ծրագրեր:

Սովորողների առողջությունը ձևավորող և զարգացնող մանկավարժական տեխնոլոգիաների ուսումնասիրությունը մեզ թույլ կտա ստեղծել առողջության վերահսկման մի ամբողջ համակարգ և դրան ուղեկցող փաստաթղթեր (առողջության քարտ, առողջության անձնագիր): Քանի որ այս գործընթացը պետք է իրականացվի սովորողի ուսումնական ամբողջ կյանքի ընթացքում և տեղափոխվի մի կրթական հաստատությունից մյուսը, ապա առաջարկվում է նաև առողջության ցուցանիշների տիտղոսաթերթի ձև, որը նույնպես պետք է ընդգրկվի սովորողի առողջությունը վերահսկող փաստաթղթերի փաթեթում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Торыбаева Ж.З., *О педагогических технологиях формирования здорового образа жизни школьников*, Педагогика, N5, 2012, с. 119-121Т
2. Дзятковская Е.Н., *Здоровьесберегающий ресурс методической системы*, Педагогика, N1, 2011, с.25-33
3. Ստեփանյան Ա., *Ֆիզկուլտուրային կրթության տեխնոլոգիաների կիրառման ուղիները*, «Մանկավարժական միտք», N2-3, 2008թ., էջ 89-93
4. Кудашев Р., *Организационно – педагогические предпосылки формирования культуры здоровья студентов в процессе физического воспитания*, Педагогическое образование и наука, 2008, N9
5. Корбинский М. Е. с соавт., *Проблемы внедрения информационных технологий в образовательный процесс вузов физической культуры*, Материалы 9-го межд. научного конгресса, Киев 2005, с. 905
6. Вирабова А. Р., *Управление развитием здоровьесберегающей среды в школе на ресурсной основе*, Педагогическое образование и наука, 2008, N 1, с. 84-89
7. Ланда Бейниш, *Мониторинг физического развития и физической подготовленности школьников*, Народное образование, N8, 2008, с. 118-124

8. Рево В., *Паспорт здоровья как инструмент здоровьесберегающей технологии*, Народное образование, N8,2008, с. 193-195

**Вандос Карагезян, Анна Насилян – *Применение педагогических технологий в учебном процессе физического воспитания учащихся, направленных на формирование и развитие здорового образа жизни.*** – Статья посвящена изучению тех педагогических технологий, которые направлены на формирование и развитие здорового образа жизни и могут быть эффективно использованы в учебном процессе физического воспитания. В связи с этим, описан опыт армянских и русских педагогов и, в частности, изучены важнейшие для здорового образа жизни физические, интеллектуальные, личностные, социальные, духовные, эмоциональные, культурные аспекты педагогических технологий. В статье представлены также рекомендации по применению этих технологий.

Применение педагогических технологий в учебном процессе физического воспитания учащихся, направленных на формирование и развитие здорового образа жизни.

**Vandos Gharagyozyan, Anna Nasilyan – *The use of pedagogical technology in the process of physical education, which forms and develops the learners' healthy lifestyle.*** – The article is devoted to the use of such technological problems that form and develop the learners' health, which is necessary in the process of physical education. In connection with this there is represented Armenian and Russian pedagogues' experience, especially there is examined the importance of pedagogical technologies' physical, mental, individual, social, spiritual, emotinal, cultural spheres. In the article is represented also offers about the use of technologies.

**ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ  
ԱՌԱՆՁԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ**

**ԱՆՈՒՇ ՈՍԿԱՆՅԱՆ**

Մասնագիտական ուսուցման և մասնագիտական պատրաստվածության խնդիրներն օրեցօր դառնում են ավելի արդիական: Դրան նպաստում է գործոնների մի ամբողջ շարք.

- Մասնագիտական աշխարհի դինամիկան. ամեն տարի առաջ են գալիս նորանոր տարբեր մասնագիտություններ և մասնագիտացումներ:
- Մասնագիտական գիտությունների դինամիկան. Վերջին տասնամյակը բնութագրվում է մասնագիտական գիտելիքների դինամիկայի ավելացմամբ: Պահանջվում են անընդհատ թարմացվող գիտելիքներ և հմտություններ, նույնիսկ միննույն մասնագիտության շրջանակներում:
- Կոնկրետ մասնագիտությունների նյութական բազայի փոփոխություն: Ժամանակակից պայմանների յուրահատկությունը համարվում է արտադրության արագ բարոյական, տեխնիկական և տեխնոլոգիական ծեփացում: Ավելի հաճախ մասնագետներից պահանջվում է նոր տեխնոլոգիաների, համակարգերի, հասկացությունների յուրացում:

Այս և մի շարք ավելի մասնավոր գործոններ բերում են հասարակության մեջ մասնագիտական պատրաստվածության դերի բարձրացմանը: Մասնագիտական ուսուցումը՝ կապված լինելով մարդու վարքի փոփոխությունների հետ, կոնկրետ մասնագիտությունների ուսուցման սոցիալական համակարգ է:

Հաշվի առնելով վերոհիշյալ առանձնահատկությունները և օրեցօր զարգացող մասնագիտական աշխարհի դինամիկան՝ հանձն առանք ուսումնասիրել հոգեբանական աջակցության և նրա առանձնահատկությունների դերն ու նշանակությունը ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման գործընթացում:

Հատկապես վերջին տասնամյակում հատուկ ուշադրություն է դարձվում զարգացող մասնագիտական աշխարհի և առաջարկվող ու հրամցվող մասնագիտությունների համեմատական վերլուծությանը: Մասնագիտական գրականության վերլուծության միջոցով մասնագիտական կողմնորոշման հիմնական օրինաչափությունների և առանձնահատկությունների ուսումնասիրում, մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական աջակցության համապատասխան թրեյնինգային ծրագրի կազմում և կիրառում, թրեյնինգային ծրագրի անձնային և մասնագիտական ուղղվածության ազդեցությունների վերլուծություն:

Ավագ դպրոցականները, ունենալով համապատասխան գիտելիքներ, տեղեկատվություն ընտրվող մասնագիտության և սեփական կարողությունների և հետաքրքրությունների մասին, կատարում են ավելի հստակ և արդյունավետ մասնագիտական ընտրություն, ինչպես նաև կարողանում են հիմնավորել իրենց ընտրությունը:

Այդ ուղղությամբ մեր կողմից կատարված հետազոտական աշխատանքներին մասնակցել են ավագ դասարանցիների երկու խումբ՝ փորձարարական և ստուգիչ՝ բաղկացած 12 աշակերտներից:

Հետազոտությունն անց է կացվել թեստավորման, ռեթեստավորման, ինչպես նաև լուսավորչական աշխատանքների մեթոդներով ու մեթոդիկաներով: Կիրառվել են.

1. Մեր կողմից կազմված համապատասխան հարցաթերթ
2. Թեստ՝ «Մասնագիտական գործունեության նախընտրելի տեսակները» (Կլիմով)
3. Թեստ՝ «հետաքրքրությունների քարտ»(Ելիսեն)
4. Խաղ՝ «Կղզի»
5. Խաղ՝ «Եկվորները» կամ «Գուշակիր մասնագիտությունը»
6. Խաղ՝ «Փորձիր ապացուցել» կամ «Մասնագիտական խորհրդատվություն»
7. Իրավիճակների քննարկում:

Մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական ընտրության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվել են նաև Ն. Ս. Կալուգինը, Ա. Պ. Մենշիկովը, Ն. Ս. Պրյաժնիկովը, Ա. Կ. Մարկովան, Տ. Վ. Դրագունովը և այլոք:

Գոյություն ունեն մասնագիտական կողմնորոշման մի շարք տեսակներ, որոնցից քննարկել ենք հատկապես առավել հաճախ հանդիպողները [7, էջ 19-25].

Մասնագիտական լուսավորչական աշխատանք – կարևորվում է նրանով, որ սովորողների մոտ ձևավորվում են գիտելիքներ մասնագիտությունների աշխարհի, մասնագիտություն ընտրելու միջոցների ու պայմանների մասին: Առանձնացնում են լուսավորչական աշխատանքի երկու ձև.

- 1 մասնագիտական ինֆորմացում,
- 2 մասնագիտական պրոպագանդում:

*Մասնագիտական ինֆորմացումն* իրենից ներկայացնում է երիտասարդության ծանոթացում հիմնական մասնագիտությունների, դրանց առանձնահատկությունների հետ: Դպրոցականներին ծանոթացնում են տվյալ աշխատանքի բովանդակությանը, նյութական և սոցիալական միջավայրի պայմաններին, աշխատանքի և հանգստի ռեժիմին, զարգացման հեռանկարներին, սովորելու ժամկետին և պայմաններին: Մասնագիտական կողմնորոշման միջոցառումները կատարում են ոչ միայն պասսիվ-տեղեկացնող, այլ նաև ակտիվ-դաստիարակչական ֆունկցիա: Այդ պատճառով այս շարքում կարևոր տեղ է գրավում ոչ միայն մասնագիտությունների մասին տրվող ինֆորմացիան, այլև նրանցից ոմանց պրոպագանդումը:

*Մասնագիտական պրոպագանդան* գործ ունի այն մասնագիտությունների հետ, որոնցում դիտվում է կադրերի սղություն կամ ընդլայնվում է աշխատատեղերի շրջանակները՝ կապված տվյալ ոլորտի զարգացման, աշխատաշուկայում ավելացման հետ: Մասնագիտական պրոպագանդան ճիշտ իրականացման պարագայում նպաստում է տվյալ ժամանակի մասնագիտական ընտրության հետ ակտիվ հարաբերությունների ձևավորմանը՝ ընտրություն կատարելու ձգտման ուժեղացմամբ:

Այսօր այս խնդիրներն իրականացվում են մի շարք այլ ճանապարհներով: Կան հատուկ կազմակերպություններ, ամբիոններ, որոնք զբաղվում են այդ հարցերով, ինչպես նաև հեռուստատեսությամբ ցուցադրվող գովազդային հոլովակ-



ները, թերթերը, որոնք նաև ուսումնական հաստատությունների պրոպագանդա կարող են լինել:

Հասարակական կյանքի լայն համակարգչայնացումը թույլ է տալիս այդ աշխատանքին համակցել նաև ԻՆՏԵՐՆԵՏ համակարգի ռեսուրսները: Մրա հետ մեկտեղ լուսավորչական աշխատանքի էֆեկտիվությունը կախված է ինֆորմացիան տրամադրելու որակից և ձևից [3, էջ 22]:

Աշխատանքի այս տեսակում սխալներից խուսափելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել պահաջների մի ամբողջ շարք: Այսպիսով՝ ինֆորմացիան պետք է լինի.

- *Բազմակողմանի* - մասնագիտության մասին գիտելիքների խորքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մասնագիտական կյանքի բոլոր ոլորտներին. Հատկապես՝ տվյալ մասնագիտության ոլորտում հեռանկարների աճը:

- *Հուսալի* - մասնագիտությունների մասին տվյալները պետք է ստացված լինեն վստահելի և ճիշտ սկզբնաղբյուրներից, որոնց շարքում կարող են լինել տպագրական կառույցները, հայտարարությունները՝ տրված մասնագետների կողմից և այլն:

- *Օբյեկտիվ* - անհրաժեշտ է տալ մասնագիտության ռեալ պատկերը՝ իր առավելություններով, թերություններով ու դժվարություններով: Չի թույլատրվում այս կամ այն կողմերի, գոյություն չունեցող առավելությունների ավելորդ, ոչ ճիշտ գովազդումը:

Մասնագիտական ինֆորմացիան կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ մասնագիտության գրավիչ լինելը տարբեր կերպ է ընկալվում տարբեր մարդկանց կողմից: Որն էլ կախված է նրա խառնվածքից, հետաքրքրությունների շրջանակներից, սկզբունքներից: ՌԻստի միևնույն ինֆորմացիան խիստ սուբյեկտիվորեն է ընկալվում յուրաքանչյուր անհատականության կողմից: Այս և մի շարք այլ նրբություններ պետք է հաշվի առնել ինֆորմացիան կառուցելիս:

Մասնագիտական խորհրդատվություն - հիմնական նպատակը հանդիսանում է հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների, տարբեր իրավիճակներում նրա վարքի ուսումնասիրությունը: Այն իրականացնում է մի շարք ֆունկցիաներ, որոնք մի կողմից համարվում են նրա գլխավոր նպատակի արտացոլումը, իսկ մյուս կողմից ցույց են տալիս նրա գործունեության հիմնական ուղղությունները: Առանձնացնում են մասնագիտական խորհրդատվության 3 հիմնական ֆունկցիաներ՝ ինֆորմացիոն, դիագնոստիկ, կորեկցիոն:

*Ինֆորմացիոն* - ինֆորմացիա է տալիս դպրոցականին մասնագիտության կոնկրետ յուրահատկությունների, ուղիների և սեփական մասնագիտական պլանները իրականացնելու մասին:

*Դիագնոստիկ* - ենթադրում է անձի հոգեբանական բնութագրերի և առողջական վիճակի ուսումնասիրում՝ համաձայն մասնագիտական պահաջների:

*Կորեկցիոն* - կայանում է օպտանտի խորհրդատվության հետ՝ համապատասխան մասնագիտական ոլորտում և նրա մեջ եղած կանկրետ մասնագիտությունների հետ, ինչպես նաև ներկայացվող պահանջների և անձի յուրահատկությունների անհամապատասխանության դեպքում մասնագիտական շտկողական պլանների իրականացում:

Մասնագիտական խորհրդատվությունը հատուկ գործընթաց է, որն իրականացվում է խորհրդատուի կողմից: Վերջինս պետք է օժտված լինի համապա-

տասխան ունակություններով, մասնագիտական որակներով և հաշվի առնի վերը նշված նրբությունները՝ գիտակցելով, որ գործ ունի դեռահասների կամ ավագ դպրոցականների հետ, որոնք կարող են ամենատարբեր կերպ արձագանքել նրա կողմից իրականացվող աշխատանքներին: Ուստի խորհրդատվությունը կազմըվում է՝ նախապես հաշվի առնելով բոլոր այդ բարդություններն ու խանգարիչ հանգամանքները:

Այսպիսով մասնագիտական խորհրդատուի կոնկրետ աշխատանքը անձի հետ անց է կացվում անհատականորեն և ընդգրկում է մի շարք պարտադիր փուլեր [5, էջ 18].

Շաղորդակցական՝ ենթադրում է օպտանտի հետ կոնտակտի ստեղծում և նրա մոտ խորհրդատվական գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում: Այս փուլի էֆեկտիվությունը կախված է մի կողմից դպրոցականների դիրքից և ընկալումից, մյուս կողմից՝ խորհրդատուի հաղորդակցական կարողություններից և հոգեբանական տակտի մակարդակից:

Շոգեդիագնոստիկ՝ երբ շեշտվածությունը դրվում է անձի հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրության վրա: Ուսումնասիրության ենթարկվում են.

- անձի դրդապատճառային ոլորտը, որտեղ տրվում է հետաքրքրությունների բնույթը, արժեքային կողմնորոշիչները և օպտանտի ընտրության մյուս դրդապատճառները, նրանց բաղադրությունը, խորությունը և կայունությունը,

- սուբյեկտի ընդունակությունը և անձի առանձնահատկությունները: Կարգավորում է հիմնական հոգեբանական գործընթացների (հիշողություն, ուշադրություն, մտածողություն) արտահայտվածության մակարդակը,

- անձի պատրաստվածությունը: Գնահատման ենթարկվում են գիտելիքները, հմտությունները և կարողությունները՝ գիտության և պրակտիկայի կոնկրետ ոլորտներից ելնելով: Հատուկ ուշադրություն դարձվում է ոչ միայն գիտելիքների վերարտադրման վրա, այլ նաև կոնկրետ իրավիճակներում դրանց կիրառման վրա խնդիրները լուծելիս,

- ինքնագնահատական և մասնագիտական պլանների ձևակերպման յուրահատկություններ: Այս դեպքում որոշվում է ինքնագնահատականի ռեալությունը, կենսական պլանների բովանդակությունը, հիմնավորությունը և ինքնուրույնության աստիճանը դրանց իրագործման մեջ:

Կորեկցիոն (շտկողական)՝ ենթադրում է օպտանտի հետ իր մասնագիտական ոլորտի փնտրողական աշխատանքների պլանի կազմում՝ համաձայն նրա անձնային առանձնահատկությունների: Այս փուլի հիմնական պահը հանդիսանում է ակտիվության սկզբունքի ուսումնասիրությունը, որի համաձայն մասնագիտության ընտրության որոշումը պետք է կատարվի հենց օպտանտի կողմից, իսկ խորհրդատուի խնդիրն է հասցնել նրան այդտեղ: Այստեղ մեծ նշանակություն ունի մասնագիտությունների դասակարգումը: Այդ կարևորությունը ընդգծում են հետևյալ պատճառները. թույլ է տալիս համակարգել մասնագիտությունների աշխարհի մասին եղած ինֆորմացիան և նշել նրանում կողմնորոշվելու հիմնական ուղիները, ցույց է տալիս նրանց զարգացման հիմնական ճանապարհները և պատմությունը, հնարավորություն է տալիս գործնական աշխատանքներ իրականացնողին հնարավորինս նվազեցնել մասնագիտական խորհրդատվության վրա ծախսվող ջանքերը. օրինակ՝ տեսնելով, որ չեն համընկնում օպտանտի կարողությունները իր ընտրած մասնագիտության պահանջների հետ՝

խորհրդատուն կարող է առաջարկել նրան նմանատիպ պրոֆեսիա՝ առանց նոր հոգեդիագնոստիկ աշխատանքներ իրականացնելու: Այսպիսով, մասնագետ – խորհրդատուն՝ համապատասխան վերը նշված փուլերի, նրանց առանձնահատկությունների, կառուցում է խորհրդատվությունը դպրոցականի հետաքրքրությունների, անձնային և անհատական առանձնահատկությունների, ընտանեկան կարգավիճակի, նրա պահեստային ունակությունների, հոգեֆիզիոլոգիական յուրահատկությունների հաշվառման շրջանակներում:

Մասնագետ – խորհրդատուն առավել արդյունավետ և նպատակային աշխատանք իրականացնելու համար պետք է հաշվի առնի մի շարք սկզբունքներ՝ դիտարկելով մարդուն որպես սուբյեկտ:

Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ուսումնասիրությունների մեջ ընդգրկվել են մի շարք մեթոդներ ու մեթոդիկաներ, թեստեր, խաղային մեթոդներ, որոնք ուղղված էին բացահայտելու դպրոցականների հետաքրքրությունների, կարողությունների, ունակությունների, պատկերացումների մակարդակը այս կամ այն ոլորտում:

Սակայն, ի նկատի ունենալով, որ ընտրված մեթոդները բավարար չեն աշակերտների կողմնորոշման համար, ընդհանուր գործընթացի մեջ ընդգրկեցինք նաև լուսավորչական աշխատանքներ, քանի որ մեր նպատակը ոչ միայն արդյունքների հիման վրա ուսումնասիրություններ կատարելն է, այլ նաև աշակերտներին կողմնորոշման մեջ օգնություն ցուցաբերելը: Կողմնորոշիչ աշխատանքներն իրենցից ներկայացնում էին տեղեկատվական և փորձնական աշխատանքներ, որոնք ուղղված էին կյանքի ուղու ընտրության գործընթացում օպտանտների գործողությունների հստակեցմանը:

Թեստավորման ժամանակ մարդ - բնություն ոլորտում փորձարարական խումբը հավաքել էր 29 միավոր, իսկ լուսավորչական աշխատանքներից հետո թիվը ենթարկվեց բավականին մեծ փոփոխությունների՝ աճելով մինչև 38: Գրտնում ենք, որ այստեղ մեծ դեր են ունեցել կողմնորոշիչ աշխատանքները, սեփական հետաքրքրությունների, կարողությունների բացահայտումը, մասնագիտությունների հետ ավելի մոտիկից ծանոթանալը: Դիտումների ընթացքում հայտնաբերեցինք, որ բնության հանդեպ ունեցած հետաքրքրություններն ու տիրապետելու ունակությունները առավել պարզ դրսևորվեցին «Կղզի» խաղի ընթացքում, որտեղ աշակերտները ունենալով միայն «բնական» հնարավորություններ՝ պետք է կարողանային գոյատևել ու զարգանալ անմարդաբնակ կղզում: Այստեղ գտնվեցին աշակերտներ, որոնք չէին պատրաստվում միայն որսորդությամբ ու հավաքչությամբ ապահովել գոյությունը, նրանք առաջարկեցին մեղու պահելու, ոչ թունավոր բույսերը հավաքելու և աճեցնելու, կենդանիներին ընտելացնելու, ուտելիքն ավելի երկար պահելու և բազմաթիվ այլ բնության հետ կապված գաղափարներ և դրանց կազմակերպման ու իրականացման ճանապարհները: Նրանք զգացին իրենց սերն այդ աշխատանքների հանդեպ և առավել մեծ հաջողությունների հեռանկարը՝ թողնելով հեղինակավոր կամ մոդայիկ մասնագիտությունները (արդյունքները ներկայացված են աղյուսակ N1-ում): Մտուզիչ խումբը ստացել է 36 միավոր. ի սկզբանե այնտեղ կային աշակերտներ, որոնց նախընտրություններին ավելի համապատասխան էր այդ ոլորտը (որը արտահայտվեց նաև մյուս մեթոդներում) և գիտակցվում էր իրենց իսկ կողմից: Ի տարբերություն փորձարարական խմբի՝ ստուգիչ խմբում ավելի քիչ էին ուշադրություն դարձնում մասնագիտությունների հեղինակավորությանը, «հնչեղությանը», որն էլ ապագա դիմոր-

դի ուշադրությունը կենտրոնացնում էր սեփական նախընտրությունների վրա և ավելի կոնկրետացնում հնարավորությունների, կարողությունների մակարդակը:

Մարդ - տեխնիկա ոլորտում թեստի արդյունքում խումբը հավաքեց 33 միավոր, իսկ կրկնակի թեստավորումից հետո այն նվազեց՝ 23-ի: Կողմնորոշիչ աշխատանքների ընթացքում որոշ դպրոցականներ գիտակցեցին, որ կան այլ մասնագիտություններ, որոնք առավել համապատասխան են իրենց հետաքրքրությունների մակարդակին, քան տեխնիկան ուստի այլ ոլորտում նույն աշակերտը ռեթեստի ժամանակ հավաքեց ավելի բարձր միավոր, քան առաջ էր: Նույն ոլորտից ստուգիչ խումբը հավաքեց 39 միավոր, ինչը բնութագրական էր տվյալ խմբին և բավականին համապատասխան. այդ ամենը դրսևորվեց նաև մյուս մեթոդների ընթացքում:

Մարդ - ազդանշանային համակարգեր ոլորտում խումբը հավաքեց 30 միավոր, որը թեստի համար թերևս ամենացածր միավորն է, սակայն ռեթեստի ժամանակ այն ավելի նվազեց՝ հասնելով 25-ի: Փոխարենը միավորներն աճեցին այլ ոլորտներում, որը, գտնում ենք ավելի բնութագրական է խմբին, նրանց հետաքրքրություններին, սոցիալական, հոգեբանական և այլ կողմերին:

Այլ է իրավիճակը Մարդ - արվեստ ոլորտում: Սկզբնական շրջանում, որքան էլ մեծ տեղեկատվություն ունենք այդ ոլորտի ու մասնագիտությունների վերաբերյալ, այնուամենայնիվ, աշակերտները դեռևս լիարժեք պատկերացում չունեին և ոչ ճիշտ ձևով էին ընկալում ու գնահատում արվեստը՝ չդասելով այն մասնագիտությունների շարքին: Այն կարծրատիպը, որ արվեստով զբաղվում են միայն նրանք, ովքեր չեն կարողանում սովորել, կարողացանք հաղթահարել, նույնիսկ բացահայտել մի շարք «արվեստագետներ» երգի, պարի, նկարչության ոլորտում

Մարդ - մարդ ոլորտում փոփոխությունները մեծ չեն. այն նվազել է ընդամենը 2 միավորով, սակայն կային աշակերտներ, որոնք ռեթեստավորման ընթացքում այս ոլորտին ավելի շատ միավորներ տվեցին, քան թեստավորման ժամանակ: Այս ոլորտի մասնագիտությունները՝ բժիշկ, մանկավարժ, հոգեբան, իրավաբան և այլն, Ելիսեևի թեստի և հարցաթերթի մեջ ևս ենթարկվեցին որոշակի փոփոխությունների՝ կապված նախապատվությունների փոփոխման հետ:

*Աղյուսակ 1.*

<b>Թեստ «Մասնագիտական գործունեության նախընտրելի տեսակները» (Կլիմով)</b>			
	<i>Փորձարարական խումբ</i>		<i>Ստուգիչ խումբ</i>
	<i>թեստ</i>	<i>ռեթեստ</i>	
մարդ-բնություն	29	38	36
մարդ-տեխնիկա	33	23	39
մարդ-ազդ. համ.	30	25	52
մարդ-արվեստ	32	40	42
մարդ-մարդ	67	65	53

Ելիսեևի մեթոդիկան՝ «Չետաքրքրությունների քարտը», որոշում է 24 մասնագիտություն: Այս շարքում են գտնվում այն հիմնական մասնագիտությունները, որոնք կազմում են փորձարկվողների նախընտրությունների համակարգը: Այս մեթոդիկայում և փորձարարական, և ստուգիչ խմբերի մոտ գերակշռում են մարդ

- մարդ փոխհարաբերությունների միավորները, որը դրսևորվեց նաև Կլիմովի մեթոդիկայում: Այդ մասնագիտությունների թվին են պատկանում մանկավարժությունը, ծառայությունը, իրավաբանությունը, բժշկությունը և այլ մասնագիտություններ: Խաղերի և լուսավորչական աշխատանքների ժամանակ դպրոցականների ակտիվությունը համապատասխան ոլորտներում ևս նկատելի էր: Թեև փորձարարական խմբում թեստի ժամանակ ծառայությունը եղել է 39 միավոր, իսկ ռեթեստավորման արդյունքում այն նվազել է մինչև 28, այնուամենայնիվ հավաքած միավորների շարքում այն շարունակում է մնալ առաջին տեղերում: Ինչը չի կարելի ասել ստուգիչ խմբի մասին՝ նրանք հիմնականում նախընտրում են այլ ոլորտի ու բնույթի մասնագիտություններ, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, մաթեմատիկան, բանասիրությունը, պատմությունը և այլն (միավորները պատկերված են աղյուսակ 2-ում): Փորձարարական խմբի արդյունքների վերլուծության ընթացքում գրեթե փոփոխություններ չեն նկատվել ժուռնալիստիկայի, գյուղատնտեսության, մանկավարժության ոլորտներում, ինչը, գտնում ենք, որ կապված է արմատացած համոզմունքների, կայուն հետաքրքրությունների, կարողությունների հետ: Եվ չնայած լուսավորչական աշխատանքներին ընդհանրապես միավորներ չեն հավաքել շինարարության, էլեկտրատեխնիկայի, քիմիայի, անտառագիտության և այլ ոլորտներում:

Կտրուկ աճ նկատվել է նաև հասարակական աշխատանքի ոլորտում, սակայն այն չի գտնվում հետաքրքրությունների առաջին շարքերում: Այնուամենայնիվ մինչև ռեթեստավորումն ընկած ժամանակահատվածում աշակերտները իրենց իսկ առաջարկներով, պահանջարկներով, ակտիվությամբ կազմակերպված աշխատանքներում եկան այն համոզման, որ հասարակական ակտիվությունը հսկայական նշանակություն ունի աշխարհընկալման, աշխարհաճանաչման, ինքնաբացահայտման, ինքնադրսևորման և ինքնահաստատման ճանապարհին:

Այսպիսով, լուսավորչական աշխատանքները, ըստ Ելիսեևի մեթոդիկայի, բավականին արդյունավետ կերպով ուղղակի, թե անուղղակի ձևերով ներազդել են դպրոցականների մասնագիտական կողմնորոշման վրա:

Աղյուսակ 2.

<b>Թեստ «Հետաքրքրությունների քարտ» (Ելիսեև)</b>			
	Փորձարարական խումբ		Ստուգիչ խումբ
	թեստ	ռեթեստ	
1.ծառայություն	39	28	9
2.բանասիրություն	19	13	18
3.մաթեմատիկա	4	5	19
4.ժուռնալիստիկա	37	37	11
5.աշխարհագրություն	0	4	10
6.աստղագիտություն	19	15	7
7.գյուղատնտեսություն	14	15	23
8.երկրաչափություն	7	0	12
9.տրանսպորտ	10	11	11
10.մանկավարժություն	31	30	18
11.բժշկություն	13	19	12
12.ֆիզիկա	0	5	7

13. իրավունք	15	9	10
14. պատմություն	12	8	39
15. կենսաբանություն	4	7	9
16. քիմիա	0	0	11
17. անտառագիտություն	0	0	0
18. արվեստ	2	22	10
19. էլեկտրատեխնիկա	0	0	16
20. հասարակական աշխ.	0	10	23
21. աշխատ. յուր.	0	0	0
22. շինարարություն	0	0	13
23. թեթև արդյունաբ.	0	0	0
24. տեխնիկա	0	0	7

Հարցաթերթը ևս իրականացրինք թեստավորման և ռեթեստավորման ճանապարհներով: Կտրուկ փոփոխություններ չեն նկատվել, քանի որ աշակերտներից շատ քչերն էին, որ դեռևս վերջնական ընտրություն չէին կայացրել, իսկ մյուսները ամենատարբեր ազդեցությունների տակ արդեն վաղուց որոշել էին իրենց մասնագիտությունը:

Չնայած, որ դպրոցականները ակտիվ և ինքնուրույն են սեփական ընտրության մեջ, այնուամենայնիվ գոյություն ունեն որոշակի խանգարող հանգամանքներ, որոնք հետ են պահում նրանց նպատակներն իրականացնելու ճանապարհից:

Այսօր մասնագիտական կողմնորոշման գործընթացում աշակերտներին թյուրիմացության մեջ զգող հանգամանքներից հանդիսանում է նաև այս կամ այն մասնագիտությունների հեղինակավորությունը կամ նորաձև լինելը: Անկախ նրանից, թե ունեն այդ կարողություններն ու հնարավորությունները, թե՛ ոչ, համապատասխանում է իրենց տվյալ ոլորտը, թե՛ ոչ, ընտրում են այդ բաժինը զուտ այն պատճառով, որ «հնչեղ» է: Մեր խնդիրների մեջ մտնում էր նաև փորձել աշակերտի գիտակցական մակարդակից հանել այդ շարժում ու անհեռանկարային մտածելակերպը: Հարցաթերթում ընդգրկել էինք հետևյալ հարցը՝ արդյո՞ք որևէ մասնագիտության հեղինակավորություն ազդում է Ձեր ընտրության վրա: Թեստի ժամանակ 10 աշակերտ պատասխանել էին այո, իսկ 2-ը՝ ոչ: Ռեթեստավորման ժամանակ, կարելի է ասել, հասել էինք մեր նպատակին. արդյունքները կտրուկ փոփոխության էին ենթարկվել՝ 8 աշակերտ պատասխանել էր ոչ, 4-ը՝ այո:

Կողմնորոշիչ աշխատանքների ընթացքում հիմնական շեշտը դնում էինք սեփական ցանկությունների, կարողությունների ու հետաքրքրությունների բացահայտման ու նախընտրելի մասնագիտության հետ դրանց համեմատության վրա: Աշակերտները հասկացան, որ կարող են հեղինակավոր, առաջատար և հաջողակ լինել ցանկացած մասնագիտության մեջ, եթե ձգտեն ու աշխատեն:

Ավագ դպրոցական տարիքում հաճախ երեխաներին գրավում է համադասարանցիների հետ միևնույն կուրսում սովորելու գաղափարը, ըստ որի էլ ընտրություն են կայացնում՝ հաշվի չառնելով հիմնական և կարևոր հանգամանքները:

Այնուհետև փորձեցինք պարզել, թե որքանով են աշակերտները պատկերացնում իրենց ընտրած մասնագիտությունն ապագայում: Հարցը տրվել էր ա-

ռանց տարբերակների, բայց ելնելով տրված պատասխաններից՝ առանձնացրինք հետևյալ խմբերում. Հետաքրքիր արդյունքներ ստացվեցին տրված պատասխաններում՝ որպես զարգացման ու կայացման հիմք. թեստավորման ժամանակ այս մասին ոչ-ոք չէր խոսել, իսկ ռեթեստավորման արդյունքում՝ այս խնդիրը գիտակցել էին 3 աշակերտ: Եթե մինչ այդ անհանգստանում էին եկամտի, պաշտոնի համար, ապա վերջում այդ կարծիքը զիջեց՝ առաջ քաշելով ավելի լուրջ հարցեր: Տարվող աշխատանքների ընթացքում եկանք այն կարծիքին, որ յուրաքանչյուր ուղրտ իրենից ներկայացնում է զարգացող համակարգ, սանդղակ, որի հետ զուգահեռ զարգանում է նաև անձը, իր մասնագիտական որակները, հմտություններն ու կարողությունները, որը ենթադրում է հաեռանկարային աշխատանք և մասնագիտական հաջողություններ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3.

9.Ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր մասնագիտությունն ապագայում	թեստ	ռեթեստ
որպես եկամտի աղբյուր	3	2
աշխատատեղի խնդիր	3	4
սոց.-հաս. դիրք՝ պաշտոն	4	3
որպես զարգացման ու կայացման հիմք	----	3
չի պատկերացնում	2	----

Բացի հարցաթերթից ու վերը նշված թեստերից, ինչպես արդեն նշել ենք, լուսավորչական աշխատանքների ընթացքում անց ենք կացրել նաև խաղեր, քըննարկումներ և այլ տարբերակներ՝ մասնագիտություններն ավելի պարզ ու հասանելի ձևով ներկայացնելու համար:

Տեսական վերլուծության, լուսավորչական և փորձարարական աշխատանքների արդյունքում մենք հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

Իրենց մասնագիտության մասին հստակ պատկերացում ունեցող աշակերտները կայացնում են ավելի արդյունավետ ընտրություն: Լուսավորչական աշխատանքները մեծապես նպաստում են աշակերտների սեփական հետաքրքրությունների ու հնարավորությունների, ինչպես նաև ընտրվող մասնագիտության մասին գիտելիքների, տեղեկատվության մակարդակի զգալիորեն բարձրացմանը:

Հոգեբանական աջակցության շնորհիվ աշակերտներն ինքնուրույնաբար կարողանում են կատարել համեմատություն սեփական հնարավորությունների և նախընտրելի մասնագիտության պահանջների միջև: Եթե նախքան լուսավորչական աշխատանքները աշակերտների մոտ մասնագիտական կողմնորոշման մեջ մեծ էր այս կամ այն մասնագիտության հեղինակավորության սկզբունքի դերը, ապա վերջում այն զիջեց աշակերտների կողմից սեփական իրական և պոտենցիալ հնարավորությունների հաշվառմանը:

Ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման գործընթացում իրականացվող հոգեբանական աջակցությունը մեծապես նպաստում է աշակերտների մասնագիտական հետաքրքրությունների բավարարմանը, անհանգստացնող խնդիրների պարզաբանմանը, ոչ համապատասխան ընտրության հետագա բարդությունների կանխատեսմանն ու գիտակցմանը, սեփական ներքին հնարավորությունների բացահայտմանը, ինչպես նաև ճիշտ և արդյունավետ որոշման ընդունմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Драгунов Т. В., *Подросток*. Москва-Знание 1988г.
2. Дружинин В. Н., *Структура и логика психологического исследования*. Москва 1994 г.
3. Зеер Э. Ф., *Профориентология. Теория и практика*. Москва 2004 г.
4. Зинченко В. П., *Аффект и интеллект в образовании*. Москва 1995г.
5. *Изучение личности школьника учителем* / Под ред. З. И. Васильевой, Т. В. Ахаян и др. – М.: Педагогика, 1991.
6. Карпова А. В., *Психология труда*. Москва 2004г.
7. Климов Е. А., *Как выбирать профессию*. Москва 1990г.
8. Климов Е. А., *Школа... а дальше?*. Москва 2004г.
9. Климов Е.А., *Психология профессионального самоопределения*. Ростов н/Д, 1996.
10. Кон И. С., *Психология старшеклассника*. Москва 2000г.
11. Маркова А. К., *Психология профессионализма*. Москва 1996г.
12. Пряхников Н.С., *Методы активизации профессионального определения*. Москва 2002г.

**Ануш Восканян – Роль и особенности психологической поддержки в процессе профессиональной ориентации.** – Психология профориентации составляет важное звено в структуре мероприятий по обеспечению полноценной деятельности человека. Проблемы несовершенства и неустойчивости системы в современной профессиональной деятельности невозможно решать только инженерными методами.

Мировой и отечественный опыт свидетельствует, что от 60 до 80% травм в быту и на производстве происходит по вине самих пострадавших. Это связано с низким уровнем профессиональной подготовки по вопросам безопасности, недостаточным профессиональным воспитанием, слабой установкой специалиста по соблюдению мер безопасности, пребыванием людей в состоянии утомления или других стрессовых состояниях, снижающих безопасность деятельности специалиста.

В данной статье мы представляем вашему вниманию возможность избежать эти проблемы и воспитать человека образованного, психологически подготовленного и представляющего свою цель и роль в профессиональной жизни.

**Anush Voskanyan – Roles and features of psychological support in the professional orientations.** – Psychology of professional orientation is an important element in the structure of measures to ensure humans activity. Imperfections and problems of modern professional system can't be solved only by engineering methods. International and domestic experience shows that 60 to 80% of injuries at work is the fault of victims. This is due with low level of professional security training, insufficient professional education, poor installation specialist safety precautions, people stay in a state of fatigue of other stress conditions, reduce the safety of technician's activity.

In this article we present to you the opportunity to avoid these problems and bring an educated person, psychologically prepared and presents its purpose and role un professional life.



## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

#### *ԱՇՈՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ, ՖԵՂԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ*

Կարո Սասունու տեղը հայ ազատագրական պայքարում և հայկական պետականության արարման գործում (Օննոյան 125 - ամյակի առիթով)..... 3

#### *ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

1885 – 1908 թվականների հայ ազգային ազատագրական պայքարը Միքայել Վարանդյանի գնահատմամբ..... 7

#### *ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

1863–64թթ. լեհական ապստամբության արձագանքները արևելահայ իրականության մեջ..... 23

#### *ԶԱՎԱՀԻՐ ԹՈՐՈՍՅԱՆ*

Հայաստանի Հանրապետության սահմաններն ըստ Սևրի պայմանագրի..... 31

#### *ԴԱՎԻԹ ԱՓԻՆՅԱՆ*

ՌԴ արտաքին քաղաքականությունը գաղափարական հայեցակարգերի համատեքստում ..... 38

#### *ՀԱՍՄԻԿ ՄԻՄՈՆՅԱՆ*

Արևմտահայ քաղաքական միտքը Հայկական հարցի վերաբացման շրջանում (1912 - 1914թթ.)..... 44

#### *ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ*

Ազգակցական համակարգի, վրիժառության և քաղաքական պատժի որոշ սովորությունների արտացոլումը Փ. Բուզանդի «Հայոց պատմություն» երկում..... 50

#### *ВАЛЕРИ ТУНЯН*

Дифференцирование подхода П.А. Столыпина к армянскому радикализму 1908 - 1909 гг..... 57

### Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

#### *ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ*

Երվանդ Քոչարի տարածության մեջ..... 74

#### *ԱՆՆԱ ԱՍՍՏՐՅԱՆ*

Շուշին՝ “Անդրկովկասի կոնսերվատորիա”..... 91

#### *ԱՆՆԱ ԱԴԱՍՅԱՆ*

Տիգրան Զուխաճյանի կատարողական և մանկավարժական գործունեությունը ..... 101

#### *ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

Արտո Չաքմաքչյան ..... 107

## ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### *ԳՐԻԳՈՐ ԱՍՍՏՐՅԱՆ*

Արդի համաշխարհային հումանիստական շարժումը.  
“Հումանիստական մանիֆեստ - 2000. Նոր պլանետար  
հումանիզմի կոչ” (հոդված առաջին)..... 114

### *ՌԱԶՄԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆ*

Գիտական տեսությունների օբյեկտիվության հիմնախնդրի  
վերաբերյալ գիտական ռեալիզմի դիրքորոշումը ..... 120

### *ԳՐԻԳՈՐ ԱՍՍՏՐՅԱՆ*

Ժամանակակից հումանիզմի տարատեսակները.  
Նոոսֆերային հումանիզմ..... 129

### *ԱՐԹՈՒՐ ԿՈՔԵԼՅԱՆ*

ԶԼՄ-ների ներազդման առանձնահատկությունները  
երիտասարդության արժեհամակարգի վրա ..... 134

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### *ԼՈՒՄԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ*

Հոդերի գործածությունն Ավ. Բասիակյանի արձակում..... 140

### *ТАГУИ ХОДЖАЯН*

Современные подходы к исследованию путей понимания метафоры..... 146

### *ՆԵԼԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ*

Имя собственное как лингвистическая проблема ..... 154

### *ԱՆՋԵԼԱ ԱՅԴԻՆՅԱՆ*

По страницам армянских русскоязычных газет..... 160

### *AIDA MARDANYAN*

Le cœur dans les cultures populaires..... 165

### *ANZHELA VANESYAN*

Les phénomènes qui relève la polyphonie dans le discours..... 169

### *AIDA MARDANYAN, ANZHELA VANESYAN*

Proverbe comme la source de la polyphonie..... 173

### *ANAHIT LALABEKYAN, LUSINE MIRZOYAN*

Neuro-linguistic programming (NLP) in English language teaching..... 175

### *ԱՐՄԻՆԵ ԱՂԱՄՅԱՆ*

Սայաթնովյան ստեղծագործության մի քանի դիտարկումներ  
20-րդ դարասկզբի արևելահայ քննադատության համապատկերում ..... 180

**ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, ՎԱՀԱՆ ՊՈՏՈՍՅԱՆ*

ՀՀ գյուղական բնակավայրերի համալիրային տիպայնացումը  
որպես դրանց հեռանկարային զարգացման հիմք..... 193

**ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ**

*ՎԱՆԴՈՍ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ, ԱՆՆԱ ՆԱՍԻԼՅԱՆ*

Մովորողների առողջ ապրելակերպը ձևավորող և զարգացնող  
մանկավարժական տեխնոլոգիաների օգտագործումը ֆիզիկական  
դաստիարակության ուսումնական գործընթացում ..... 204

*ԱՆՈՒՇ ՈՍԿԱՆՅԱՆ*

Հոգեբանական աջակցության դերն ու առանձնահատկությունները  
մասնագիտական կողմնորոշման գործընթացում ..... 211

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱԿՈՒՆՔ» ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունք» հոդվածների ժողովածուում տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը:
- Հոդվածի վերջում գրականության ցանկի առկայության դեպքում հղումների համարների հերթականությունը պետք է համընկնի տեքստում դրանց հանդիպման հերթականության հետ: Գրականության ցանկում նշել գրքի/հոդվածի հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը), հոդվածների դեպքում՝ հոդվածի առաջին և վերջին էջերի համարները: Օրինակ՝

1. Harary F., *Graph Theory*. Addison-Wesley, Reading, MA, 1969.
2. Давтян Н.Н., *О наименьшем и наибольшем возможных числах вершин с интервальным спектром на множестве правильных реберных раскрасок дерева*. Математические вопросы кибернетики и вычислительной техники, т. 32, Ереван, 2009, с. 107–111.

- Հոդվածի վերջում գրել համառոտ ամփոփումներ. հայերենով գրված հոդվածների համար՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով, ռուսերենով գրված հոդվածների համար՝ հայերեն և անգլերեն լեզուներով, անգլերենով գրված հոդվածների համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով
  - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, բնագիտական ֆակուլտետի մասնաշենք՝ Նարինե Դավթյանին, կամ
  - ուղարկել [akunq.yusib@gmail.com](mailto:akunq.yusib@gmail.com) և [banber\\_ib@ysu.am](mailto:banber_ib@ysu.am) էլեկտրոնային հասցեներով:

# Ա Կ Ո Ւ Ն Ք

## ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(7)

Չամարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Չամակարգչային ձևավորումը՝ Ն.Ն. ԴԱՎԹՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 03.06.2013 թ.:

Չափսը՝ 70x100<sup>1/16</sup> :

Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 57:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

---

Երևանի պետական համալսարանի  
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում  
Երևան, Ալ. Մանուկյան 1: